



28
Φ-41





2004

1811-1812

1813-1814

1815-1816

1817-1818

ԼՈՒՍԸՆԻԻՊ,

ՅՕՐԻՆԵԱԼ,

ՊԵՏՈՒԵԼԻ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԺԱՊԵՏԻ

ՓԷՆՏԵՄԱԼՃԵԱՆ



1982 28
Փ-41 W

1605-ԱԳ

200

399-ՓԿ ԼՈՒՍԱՇԱԽԻՎ

ՈՐ Է ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՆԿԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ ՈՐ ՊԱՇՏ
ՅԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՍ ԲԵՐԱՏՈՒՆԵՐ

ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԵԱՄԲ ՊԱՏՈՒԵԼԻ ԳՐԻԳՈՐ ԳՊՐԻ
ՓԷՇՏԱՄԱԼՃԵԱՆ

Ի ՀԱՅԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ.Տ.ՆԵՐՍԵՍԻ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ.ԿԻՐԱԿՈՍԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ ԱՄԵՆԱՊԱՏԻ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ԹԱԿԱՒՈՐԵԱԼ ՄԱՅՐԱՔԱՂԱՎԵՍ Տ. ՄԱՏԹԷՈՍԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ


ԱՐԴԵԱՄԲԲ ԳԵՐԱՄԵԾԱՐ ՄԻՔԱՅԷԼ ԱՄԻՐԱՅԻ
ՓԷՇՄԻՇԵԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՄՈՒՍՆՈՑ
ԲԱՐԵՊԱՇՏՈՒՅԻ ՓԷՐՈՒՇ ՏԻԿՆՈՋ

Ի ԿՈՍՏԱՆԻՆՆՈՒՊՈԼԻՒ

ՅՕՐԹԱԳԻՒՂ Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂԱՍԻ ԱՐԱՊԵԱՆ
ԱՊՈՒՉԵԽՑԻՈՑ

1848



19356

ՈՒՂԵՐԶ ՍԻՐԱԼՐԱՍԱՆ

ՈՂ, շիւրք քեզ քարեպարեմս ի պատի Ձերո՛ստ
նախնայելի ի ստորագանց՝ առ յանձանն Տրնայելնա՛նրոն թիւն
անուան քարեյիլաբայի Աճո՛ւնոյր՝ այս յիւր յարճարա՛նր շար
ի սաւլթրագոյն վայել քո՛ստ Հարեմնեաց, ի հոգեպարար
գրեհորդիսն անտի սեւանոյ ի՛րոյ, շէնն իրիւրեւել ի՛սա
նալեա՛ն Ձեւ Տարախարբե առ Տեղ հանգո՛յնեալ Գրիգոր
արդիւնա՛նր Տեճաննա՛ն վարժապետն Փելլիսա՛լճեան Կարան
Կանապօլսեցի, ըստ ջահայայտ լոսա՛նրոն թեան նի՛նոյն ըս
ԼՈՒՍԱՇԱՒԻՂԷ Քրտա՛նրոն ի ճանապ նորին յարճարա
գրեալ (Յորո՛ս գեղեցիկ է ուղտի՛նս քայտարո՛ք Հանգանալի
Նիկիտիան սորբ ծոլը՛լան, արանեք լո՛ւել լոսա՛նր՝ Աւգի
ի՛րոյ քանայ առաջի:

Ինչո՛ւ ապա՛նն որ ուղտի՛նս Ջարագո՛ւլք ես սփիճ
Կանանն թեան սորբ Եկեղեցոյ՝ ըստ Ուղեցի՛ն Բարեմնա
իանց Երկրոյ՝ շարեւելանն քարեպարեմս Ձերք յօճարո՛ն
թեան. որոյ անպարտ լոսոյն ծառալը՛ն Ձերո՛ստ հայ ըս
նորհաց յաւգոյնն առ Կնիլ ալմանի, օգտախարո՛ն ըն
թերցանեկեացն Լիկիլ Տարախարբ: Որո՛ւ լոսախարոնն որ
Կնիլ է Ձերք գո՛ւնիկ ըլլալանն թեան ի պատի յանգա
նրեալ, երիւսանելի՛րոյր ինի քրտարո՛ք քարեպարար Պօլսո՛ւ
պիկեցն է Ապօլսո՛ւ սորգանեկայն օրինալի յերկնս Ձեւ յան
ցեցա՛նրն լոսարան լոսա՛նրեցին:

Ձերք Մեծապարո՛նն քարեպարար

“Լժէ որ գնայ ՚ի տունըեան , ոչ գայթակղի ”
(Յովնանոս . Ժա , 9) :

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ըստ կարգաւորեալ նախախնամութեանն աստուծոյ՝ ոչ որ կարէ ինքեամբ ճանաչել զխորհուրդս հաւատոյ՝ և ՚ի նոյն յարիլ, բայց եթէ միջնորդութեամբ քարոզութեան և ուսմանս Արդ՝ եթէ հովիւք անփոյթ լիցին ՚ի քարոզել, և դաստիարակք ՚ի յուսուցանել, որով օրինակաւ կարիցեն անտեղեակք ճանաչել զհարկաւորսն հաւատոյ, և գործել անձանց զփրկութիւն. ըստ այնմ՝ « Զիւրդ հաւատացեն որում ոչ լուան, և զիւրդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ » (Հովհայտ. Գ, 14)։ Չի որպէս սուրբ լուսաւորիչն ասէ՝ « լսելիք դրունք են հաւատոց ՚ի մուտս զգուշութեան անարատ վարուց » (Յաճախագործ. 5)։

Ապա որպէս ամենայն չափահասք՝ որք ունին զկարողութիւն ուսանելոյ զվարդապետութիւնս հաւատոյ, և ոչ գուն գործեն, յանցաւոր օրինաց դատին. զի չէ՛ նոցա բաւական ՚ի փրկութիւն՝ չթմամբ լոկով բարբառիլ զհանգանակն. այլ մանաւանդ ճանաչել և գիտել զոր ՚ի նմա են բովանդակեալ կարևոր մասունք հաւատոյ։

Այսպէս և հովիւք հոգւոց և դաստիարակք՝ որք ունին զկարողութիւն ուսուցանելոյ՝ և յանհոգս կան, ոչ զերծանին ՚ի մեղադրանաց. իբր զի պարտաւոր համարին ըստ պաշտաման իւրեանց՝ քարոզել և ուսուցանել. ըստ այնմ՝ « զայ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ » (Մարկ. 16)։

Այն զի պատուէրն՝ զոր ընկալաք ՚ի տեառնէ, սիրել զընկերս, ոչ կատարի միայն մատակարարութեամբ պիտոյից, տուչութեամբ դրամոց, կարեկցութեամբ վնասաց, միսկեարութեամբ բանից. զի մարմնաւոր են սորա՝ առօրեայք և անցաւորք։ Այլ պահանջի ևս յայնցանէ՝ որք կարողք են ըստ ժամանակին, ուսուցանել զընկերն վարդապետութեամբ հաւատոց՝ ՚ի պէտս սնդեան հոգևոր կենաց. և բարեկարգութեամբ վարուց՝ ՚ի կատարելութիւն զգայական կարողութեանց. միով բանիս՝ սասցից, առնել զնա այր կատարեալ՝ սիրող աստուծոյ յամենայն սրտէ, յամենայն մտաց, և յամենայն զօրութենէ իւրմէ։

Եւ քանզի կամի աստուած, « Զի ամենայն մարդիկ կեցցեն, և ՚ի գիտութիւն ճշմարտութեան եկեցեն » (Մատթ. 23)։ Անդադար շարժէ զմեզ ներքին շարժութեամբ շնորհաց իւրոց, քարոզութեամբ հոգևոր հովուաց, վարդապետութեամբ իմաստուն դաստիարակաց ճանաչել զխորհուրդս հաւատոյ, որ իցէ հաստատեալ յուսով խոստացելոցն բարեաց, և յաջողեալ սիրով ՚ի ժառանգութիւն անկեան երանութեան։

Ապա պարտիմք ուսանիլ նախ զհաւատոյն բան, որ է հիմն և արմատ ամենայն աստուածային և մարդկային աւարքնութեանց. և յետոյ զայլմն մի ըստ միոյն. զի աստուծոյ « Առանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել » (Եբր. 11)։

Բայց քանզի վարդապետութիւնը հաւատոյ են խորք խորոց, և անոր քան զհասումն մտաց, խորիմբ ուրեմն եթէ մարդկայն տրամաբանութեամբ կամիցիցի լինել հասու, կամ հետաքրքիր զննութիւն ծածկեցելոցն 'ի նմա խելամուտ. " Զի ո՞վ գիտաց զմիտս անտուն, կամ ո՞վ խորհրդակցից լինիցի նմա" (Հովհաննէս 7-րդ, ժ. 38)։ Այլ պարտիմբ բաւական համարիլ զոր հոգեւունը բանք սուրբ գրոց առաջադրեն մեզ 'ի հաւատալ. ըստ այնմ՝ "Մի՛ ինչ առաւել քան զգրեալն իմանալ" (= Կորնթ. 2-րդ, 7, 6)։ Ուստի ասէ սուրբ Ներսէս շնորհալին "Հնար իմանալոյ զանխնանալն ո՛չ այլ ինչ է, բայց հաւատալ սասցելոցն 'ի սուրբ գիրս, և ո՛չ ընդ քննութեամբ արհանել զանքնելին"։

Քանզի յանդգնութիւն մեծ է նախամեծար ընտրել զտեսութիւն մտաց, քան զայնտեսութիւնն աստուծոյ գրովք սրբովք, ըստ այնմ՝ "Հաւատար ակբ մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ աստուծոյ" (= Կորնթ. 2-րդ, 4, 5)։ Ուստի ասէ սուրբ Լուսաւորիլն "Դաշարեցուք 'ի դատարկ և 'ի վայրապար քննութենէ, և զհետ երթիցուք խրատուց գրոց սրբոց հնոյն և նորոյս. զի ես եմ ասէ աստուած, և չիք այլ որ, որ պատմէ զիրաւունս" (Յճախագրութիւն)։

Յայնմ համառօտութեան մեկնողօրէն առաջի դնին զլիաւոր մասունք հաւատոյ՝ հարկաւոր ամենայն և խրաբանչիւր շահահաս քրիստոնէի. ըստ այնմ՝ "Հաւատացէ՛ք յաստուած, և յիս հաւատացէ՛ք" (Յճախագրութիւն. ժ. 1)։ Գտանին և բացատրութիւնք ինչ շուրջ զբրիտանական կրօնիք՝ 'ի պէտս այնոցիկ որք ունին զպաշտօն ուսուցանելոյ։

Ապաքէն չէր մեզ կամք 'ի գործ այսպիսի ծանր և գժուարին՝ սակաւածեռն զօրութեամբ զանձն ընծայել, և խեղճառես ակամբ իրբն արծուի կորովաբեր յարեգանային ճառագայթան աշտ արձակել. որ արդարև մեծի յանդգնութեան է ցոյցք, և բիւր սոցաւանաց արժանաւոր. քանզի կատարելոց մտաց է և յաստուածայինն մերձ եղելոց՝ զաստուածայնոցն ճառել։

Բայց քանզի հնազանդ լինել ուսաք առաջնորդաց մերոց, և պատկառ և հպատակ կալ, զի նորա առաւել հոգան վանն հոգւոց մերոց. որն զի համարս տալոց իցեն աստուծոյ, քանի՞ մեք վանն փրկութեան մերոյ։

Ուստի իրբն անհրաժեշտ հրաման աստուածաբաւ հօր մերոյ Տեառն Պօղոսի գեբահոյակ Պատրիարքի՝ հարկեցոյց զմեզ ձեռնամուխ լինել 'ի սոյն, բազում ակնածութեամբ յանձն առար. և այն՝ ո՛չ յայլ իրի աղագոս, բայց եթէ բառնալ զտարապարտ գայթակղութիւնն 'ի բազմաց, որք կարծէին զմեզ գայթակղեալ 'ի հաւատս, և մոլորամիտ դատելն նախ քան զձանաչելն զմեզ։

Աւանիկ զճնարիտ հաւատն զոր ունիմ ծննդեամբ սուրբ աւագանին Գրովք սրբովք, և զողջամիտ վարդապետութիւնն զոր ուսայ 'ի սրբոյ Լուսաւորիլն յեկեղեցին հայաստանեայց, հրատարակեմ 'ի լուր ամենեցուն հեռաւորաց և մերձաւորաց. մանաւանդ զի և սուրբ առարեան Պետրոս

Իսկ թէ հարկաւոր է յեկեղեցւոյ լինել գիտութիւնն ո՛չ միայն գլխաւոր մասանց հաւատոյ , այլ և պիտանի է քաջ հմտութիւն աստուածային և մարդկային իրողութեանց 'ի հաստատութիւն ողջամիտ վարդապետութեան , և 'ի չեքրումն ընդդիմաբանութեան հակառակորդաց , յայտ առնէ Առաքեալն յասելն՝ « Վերակացու լինել , հաստարիմ բանին վարդապետութեան . զի կարող իցէ և միտեմարել ողջմտութեամբ վարդապետութեան , և զհակառակորդան կշտամբել » (Տիմոթ. Բ , Գ) :

Յայսմ ամենայնի ուչ 'ի կարծիս արարաբ յխառնել մտացածին ինչ զրոյցս 'ի վարդապետութիւնս հաւատոյ , այլ միայն երկրորդել զբանս հարց և վարդապետաց հաստատեալ աստուածաշունչ զբովքս : Իսկ թէ որ ասիցէ . ահա գտանին բազում այսպիսի գրուածք , և զի՞ պիտոյ էր այդ :

Ապարէն գտանին ո՛չ սակաւ գրուածք . բայց ոմանք 'ի նոցանէ են կարի իմն համառօտ . մինչև պատճառս առին ասել , թէ զկարենորքն զանց առնեն . և կէսք ընդարձակ յոյժ , մինչև ասել՝ թէ աւելորդօք բանից ձանձրոյթ արկանեն :

Ապա մեր այս գործ՝ զմիջինն ունելով շաւիղ ընդ բազմաբանն և ընդ կրճատախօսան , զհարկաւորն ամենայնի՝ և զպիտանիսն ոմանց՝ չափաւոր դրութեամբ առաջի առնէ . մինչև իրաւունս տալ աշխատասիրութե մերում , և շարկանել սոգիւտ :

Բայց այսու ամենայնիւ եթէ տակաւին անպիտան ումէք թուեցի , մի՞ իսպառ անգոսնեցէ , գուցէ այլոց դացի պիտանի . զի թէ և կերակուր ինչ չիցէ ումէք ակործելի , ո՛չ վասն այնորիկ լինի գլխովն արհամարհելի :

Նուսկ ապա ինդրեմ 'ի բարեսիրտ վերծանողացդ , զի ծանուցեալ զողջմտութիւն մեր յուզղափառ վարդապետութե հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ , յիշատակեալիք զմեզ 'ի բարինս :

ԳՐԻԳՈՐ ԴՊԻՐ

ՓԷՇՏԸՄԱՆՃԵԱՆ



Faint, illegible text at the top of the page, possibly a header or title.

Second block of faint, illegible text, appearing as several lines of a letter or document.

Third block of faint, illegible text, continuing the document's content.

Fourth block of faint, illegible text, possibly a signature or a specific section.

Fifth block of faint, illegible text at the bottom of the page.



ՋԻՆՉ ՀԱՐԿԱՒՈՐ Է ՉԱՓԱՀԱՍ ՔՐԻՍՏՈՆԷՒՆ Ի ԳՏԱ
ՆԵԼ ՉՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՉԿԵԱՆՍ ՅԱՒԻՏԵՆՆԻՑ

Պիսաւորաբար երկու ինչ են հարկաւոր, ճշմարիտ հաւատք, և բարի գործք: Ո՛ր ան հաւատոյ ասէ՛.
«Որ հաւատոյ ՚ի նա՛՝ ո՛չ դատապարտեցի» (Յովհն. ֆ, 18): Լու վասն բարի գործոց քարոզէր Մկրտիչն Յովհաննէս՝ «Ամենայն ծառ՝ որ ո՛չ առնիցէ զպտուղ բարի, հատանի և ՚ի հուր արկանի» (Մատ. ֆ, 10):

ՋԻՆՉ ԵՆ ՀԱՒԱՏՔ

Հաւատքն է լոյս մտաց պարզեւեալ յաստուծոյ, որով աներկբայ հաւատամք ճշմարտութեց յայտնեցելոց առ յաստուծոյ: Ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն.
«Ճշմարտութի հաւատոյ լոյս է աչաց մտացն շարժմանց՝ խորհրդոցն յիշատակաց» (Յովհն. ֆ, 17):

ՔԱՆՈՒ ԵՆ ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՈՒՆՔ ՀԱՒԱՏՑ

Լրկու. հաւատալ յաստուած, և հաւատալ բանիցն աստուծոյ:

Հաւատալն յաստուած՝ է դաւանիլ զմի աստուածութի յերիս անձինս, ՚ի հայր և յորդի և ՚ի սուրբ հոգին. և զորդին աստուած՝ մարմնացեալ, չարչարեալ, մեռեալ վասն փրկութեան մարդոյ:

Հաւատայն բանիցն աստուծոյ՝ է ընդունել զայն ամենայն, զոր ուսոյց որդին աստուծոյ աւետարանական վարդապետութեամբ. և սե զոր խօսեցան օրէնք և մարդարէք և առաքեալք ազգմամբ հոգւոյն սրբոյ, որք պարունակին ՚ի հին և ՚ի նոր կտակարանս: Եւ զայս ամենայն ըստ նիկիական հանգանակին առաջի դնէ մեզ ՚ի հաւատալ և խոստովանել հանգանակն լուսաւորչեան՝ և կեղեցւոյս հայաստանեայց:

ՈՐՈՎ. ԲԱՆԻԻ Բ ԱՒԱՆԴԷ ՄԵՁ ՁԵՐԿԱ-ԲԱՆՉԻՐ ՄԱՍՈՒՅՍ
ՀԱՒԱՏՈՅ

Առաջին և գլխաւոր մասն հաւատոյ՝ է միութի աստուածութեան. և զայն ուսուցանէ յասելն « Հաւատամք ՚ի մի աստուած »:

Ետք ընդ նմին և զդաւանութիւն երկոց անձնաւորութեց ՚ի մի աստուածութեւ: Օ հայր խոստովանի՛ յասելն « Հայր ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և աներևութից »: Օ որդի դաւանի՛ յասելն « Եւ ՚ի մի տէր յս. քս. որդին աստուծոյ ծնեալն յաստուծոյ հօրէ միածին, այսինքն՝ յեութենէ հօր. ւնձ յաստուծոյ, լոյս ՚ի լուսոյ, աստուած ճշմարիտ յաստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած. նոյն ինքն ՚ի բնութենէ՝ հօր. որով ւնի ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի՝ երեւելիք և աներևոյթ »: Օ հոգին սուրբ խոստովանի՛ յասելն « Հաւատամք և ՚ի սուրբ հոգին յանեղն և ՚ի կատարեալն »: Եւ յարէ առ նմին « Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարդարէս և յաւետարանս. որ էջն ՚ի յորդանան. քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ ՚ի սքան »:

Դաւանի և զխորհուրդ մարդեղութեան որդւոյն աստուծոյ՝ յասելն « Որ յազադս մեր մարդկան՝ և վասն

մերոյ վրկութն, իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդ աշաւ, ծնաւ կատարեալապէս ՚ի մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով: Որով էառ զմարմին՝ զհոգի՝ և զմիտ, և զիմ որ ինչ է ՚ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յաւրուցեալ, ելեալ ՚ի յերկնկս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ հօր: Գալոց է նովին մարմնովն և վառօք հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թաղաւորութեանն ոչ գոյ վախճանս:

Երկրորդ մասն հաւատոյ՝ է հաւատալ յայտնեցելոցն առ յաստուծոյ. և զայն խոստովանի՝ յասելն « Հաւատաալք և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքեալական եկեղեցի, ՚ի մի մկրտութի, յապաշխարութի, ՚ի քաւութիւն և ՚ի թողութի մեղաց. ՚ի յարութիւն մեռելոց, ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ՚ի կեանն յաւիտենականս »:

ՎԱՍՆ Է՞Ր Ի ՍՎԻՋԵՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՆ ԴՆԻ « ՀԱՒԱՏԱՄՔ Ի ՄԻԱՏՈՒԱՑ »:

Միութիւն աստուածութեն է առաջին և զլիսաւոր հիմն հաւատոյ. և դնի աստ ընդ դէմ մոլորութե կռապաշտից, որք բազում աստուածս խոստովանէին. և ընդ դէմ Մանիքեցւոց, որք երկուս աստուածս զնէին. մին արարիչ բարւոյ՝ և միւսն չարի:

Եւ այսօրիկ կրկին մոլորութիւնքս յանդիմանին բնական բանիւ. նախ՝ բազմաստուածիցն մոլորութիւն Քանդի եթէ էին բազում աստուածք, կամ էին հաւատարք ՚ի զօրութեան և յիշխանութեան, և կամ անհաւատարք, այսինքն մի քան զմի առաւել զօրաւոր:

Եւրդ՝ եթէ էին հաւատարք, հետեւի՝ թէ և ոչ

մի 'ի նոցանէ էր ծայրագոյն և ամենակատար . ապա ոչ որ 'ի նոցանէ էր ճշմարիտ անձ : Իսկ եթէ էին անհաւասարք , այսինքն մի քան զմի զօրաւոր և կատարեալ , հետեւէր՝ զի որ ծայրագոյնն է 'ի նոսա զօրութեամբ և իշխանութեամբ , նա միայն է ճշմարիտ աստուած , և ոչ բնաւ այլքն ամենեքին . ապա անհնար է լինել բազում աստուածոց . և մնայ ասել՝ թէ մի միայն է ճշմարիտ անձ ամենազօր , որում հաւատամք և երկիրպագանեմք : Աւստի և հեթանոսք՝ որ բազում անձս գնէին , զմին 'ի նոցանէ գեր 'ի մերոց դասէին . այն է Արամաշտ՝ հայր աստուածոց անուանեալ ըստ հայրուան :

Իսկ ընդ դէմ մոլորութեանն Մանիքեցւոց՝ ասելն է , եթէ ոչ կարեն լինել երկու արարիչք , մին բարւոյ և միւսն չարի : Վանզի չարն՝ կամ էակ ինչ է , և կամ ոչ էակ . եթէ է էակ , ապա է բարի . զի էակ և բարի են նոյն : Իսկ եթէ ոչ է էակ , հետեւի՝ եթէ ոչ բնաւ զըտանի չար . և ոչ այլ անձ արարիչ չարեաց : Ապա մի է աստուած ամենարարի և հաստիչ բարւոյ . իսկ չարն է միայն պակասութիւն բարւոյ , յառաջ եկեալ 'ի թիւբութենէ անձնիշխան կամաց :

Դարձեալ՝ յամենայն գործողութիւնս դասնի իբ և Դիոսորոսի . զոր օրինակ « շանել զիմն յուժեքէ՝ կամաւ , կամ բռնի » իրն՝ որ է էակութիւն գործոյ , նոյն է յերկոսին . բայց ոչ է նոյն դիտաւորութիւն . զի թէ 'ի բաց հանումն է կամաւ՝ որոյ իղեն ինչք , գործն է օրինաւոր և բարի . իսկ եթէ ակամայ՝ է անիրաւ և չար : Ապա չէք չար ըստ էակութեան , այլ ըստ դիտաւորութեան , որ կռիւ արատ գործոյ՝ կամ պակասութիւն . զի պակասի յուղիղ բանէ :

Իսկ եթէ որ ընդ դէմ առարկիցէ , թէ անսաւ

պականուծիւնն է չար . ասելի է , թէ ասպականուծիւնն
նչ է բնաւ չար , զի է ծննդադործուծի . որպէս ասպա-
կանուծիւն ձուոյ է ծնունդ թռչնոյ . և ասպականուծի
մարմնոյ է ծնունդ որդանց . արդ՝ եթէ ասպականուծի
միոյն է լինելուծիւն միւսոյն , ասպա բարի եղիցի :

Կարծեալ կամ չարն ՚ի բարւոյ յառաջ գայ , կամ
բարին ՚ի չարէն . եթէ չարն ՚ի բարւոյ յառաջ գայ ,
ասպա նչ է չար , զի որ ՚ի բարւոյ յառաջ գայ , ամենայն
իրօք բարի եղիցի . զի հուրն նչ ցրտացուցանէ , այլ ջե-
ռուցանէ . ՚ի դէպ եկեալ առաքելական բանին . « Եթէ
սկիզբն սուրբ է , և զանգուածն , և արմատն , ասպա և
ուտքն » (Հոռվ. Ժա , 16) :

Իսկ եթէ բարին ՚ի չարէն յառաջ գայ , ասպա չիբ
չար բնաւ . զի յառաջածօղն բարւոյ՝ ՚ի հարկէ և ինքն
բարի եղիցի . ասպա թէ ոչ՝ բարին , ըստ որում է չար՝
է չար , որ է անհնարին : Օ այս և տէրն օրինակաւ
յայտ առնէ յասելն՝ « Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ
չար առնել , և նչ ծառ չար՝ պտուղ բարի առնել . . .
ասպա ՚ի պտղոյ նոցա ծանիցիք զնոսա » (Մատ . է , 18) :

Եւս ամենայն էքս ՚ի միոյ բարւոյ արարչէ յա-
ռաջ եկին , և բարի են , և չիբ չար պարզապէս . քանզի
և խորագխուծիւն և թունաւորուծիւն ՚ի յօձն՝ ըստ
ինքեան նչ է չար . զի է կացուցիչ բնութեան օձին :
Իստ այսմ են և ցանկական և դասմնական բնաւորու-
ծիւնք կենդանեաց . զորս եթէ բառնաս ՚ի նոցանէ ,
եղծանես զբնութիւնս կենդանեաց : Ի այց այս ամ էքս
համեմատեալ իրերաց , մի քան զմի յաւեւ և նուազ
ասին բարութեամբ . որպէս էչն ըստ ինքեան է պար-
զապէս բարի . բայց նկատմամբ ջրւոյ՝ է նուազ և ըստ
իմբ բարի , ջրին նկատմամբ իշոյ՝ է յաւեւ բարի .

բայց բաղդատու թիւ ձիոյ՝ է նուազ և ըստ խմբ բարիս
 Ապա չիք չար պարզաբար և ըստ բնութեան իւրում .
 զի ամենայն էակք են բարի . ուստի ասէ սուրբն Գիտ
 նեսիտս՝ «Եւ էիցս է ինչ՝ որ ամ բարւոյն հաղորդ է ,
 և է ինչ՝ որ յաւէտ կամ նուազ զբկի ՚ի նմանէ . և է
 ինչ՝ որ աղօտագոյն ունի զհաղորդութիւն բարւոյն»
 (ԱՊՊԻՏԻՆ . ԳԼ Դ . Բան , ԺԷ) :

Արդ՝ մի է ան . որպէս և հաւատամք , ըստ այնմ՝
 «Լճեր Իսրայէլ՝ զի տէր աստուած քո տէր մի է»
 (Բ , Օրէնսոյ . Է , 4) : Իսկ հայր , որդի , և հոգի սուրբ ոչ
 են երեք աստուածք , այլ երեք անձինք ՚ի միում պարզ
 և եզական բնութիւն աստուածութեան :

ՎԱՍՆ ԷՐ ԶՕՐԷ ՄԻԱՅՆ ԱՍԷ «ՀԱՅՐ ԱՄԵՆԱԿԱԼ ՅԱՐԱՐԶՆ
 ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԵՐԵՒԵԼԵԱՅ ԵՒ ԱՆԵՐԵՒՈՒԹԻՅ» :

Հասարակ օրինակք այսպէս ունին Ոմանք «Հայրն ամենակալ յա-
 բարօղն երկնի և երկրի» : Օրինակն մեր ընթեռնու «Ի հայր ամենա-
 կալ , յարարօղն երկնի և երկրի» :

Որովհետև հայր է սկիզբն յերրորդութեան . իսկ
 որդի և հոգի են ՚ի հօրէ իբրև ՚ի պատճառէ . ապա յա-
 սեւն՝ «Հայր ամենակալ արարօղ , և այն» անշուշտ ի-
 մացեալ լինին ՚ի միասին ընդ հօր նաև որդի և սուրբ
 հոգի՝ ամենակալ և արարիչ . զի արտաքին դորձ երրոր-
 դութեան է անբաժանելի :

Այսպէս իմանի և ասելն քի զհօրէ . «Այս են
 յաւիտենական կեանք , զի ծանիցեն զքեզ միայն ճշմա
 բիտ անձ» (ՅՊԼՄԱՆԷՍ . ԺԷ , 3) : Եւ յասելն առաքելոյն՝
 «Որ միայն ունի զանմահութիւն , բնակեալ ՚ի լոյս ան-
 մատոյց» (Ա , ՏԻՏԻՆՆՈՍ . Է , 16) : Եւ յասելն Պետրոսի՝
 «Զնա անձ յարոյց յերրորդ աւուր . և ետ նմա յայտնի

լինել » (Գործք. Ժ, 40) : Հայտարիկ բնութեան մասին, ոչ ՚ի բաց հանկ զորդի և զհոգի ՚ի լինելոյ ճշմարիտ ան, այլ զսուտ աստուածս հեթանոսաց :

Քանզի հայր՝ այնու զի է ծնող, ընդ իւր փակէ զորդի . և այնու զի է բողոքող՝ զամենասուրբ հոգին : Լույս յանձն, հայր միայն է ճշմարիտ ան . հայր միայն ունի զանմահութիւն . աստուած հայր յարոյց զլիսուս . հարկաւ իմանին ընդ նմա որդի և հոգի . զի մի թուով աստուածութի է յերիս անձնաւորութիւնս, որք առնչութեամբ միայն զանազանեալ . իսկ էութեամբ՝ բնութեամբ և ան կատարելութեամբ են մի ամենեւին, ըստ այնմ՝ « Ես և հայր իմ մի եմք » (Յովհաննէս . Ժ, 30) :

Ստորդին իմն երևի , թէ այն անուանք՝ որք ստորոգին զաստուծոյ և զստեղծուածոց, որպէս՝ էակ , բարի , մի , իմաստուն , քաղցր , և այլն . ոչ ստորոգին իբրև մատանուն , այլ իբրև համեմատանուն . զի ան է էակ յիւրմէ . ըստ այնմ՝ « Որ էնն առաքեաց զիս առ ձեզ » (Եւէյ . Գ .) : Իսկ ստեղծուածք էակ յայլմէ , ըստ այնմ՝ « Ես արար զմեզ՝ և ոչ մեք էաք » (Սաղմոս , 137) :

Ըստուած է բարի էական . ըստ այնմ՝ « Չիք որ բարի , բայց մի ան » (Գովհաննէս . ԺԷ , 19) : Իսկ ստեղծուածք բարի հաղորդական , զի յոյ ունին զբարութիւն իւրեանց . ըստ այնմ՝ « Եւ ետես աստուած՝ զի բարի են » (Տննորոյ . ա) :

Ըստուած է մի , գոյացական և ըստ ինքեան միութեամբ , ուստի և ամենեւին պարզ . մինչ զի չէ՛ հնար մտածել ՚ի նմա զբաղադրութիւն բանի , զի է գերամարդը ներգործութիւն անմասն յամ կարողականութեան . և ոչ զանազանի ՚ի նմա որն և որպէն , զի ինքն է

իւր դուրս ըստ այնմ՝ «Մի է ինձ , և մի միջնորդ ինչ և մարդկան , մարդ յա քս» (* , Տիմոթեոս . Բ , 5) : Իսկ ստեղծուածք են մի , իրական կամ նիւթական կամ թուական միութեամբ . և զանազանին զօրութեամբ , կամ բաժանին տարբեր գոյացութեամբ . զի որոշին ՚ի յէութի և ՚ի գոյութի . կամ ՚ի սեռ և ՚ի տարբերութի . կամ ՚ի նիւթ և ՚ի տեսակ : կամ ՚ի գոյացութիս պարզ և նախկին տարբաց բաղկացուցչայ բնական էակաց :

Ըստուած է իմաստուն՝ ամենակատար և անփոփոխ իմաստութիւն . ըստ այնմ՝ «Ըստ հրամանի մշտնջենաւորին ինչ , ՚ի հնազանդութիւն հաւատոց , յիմ հեթանոսս ծանուցելոյ , միայնոյ իմաստնոյն աստուծոյ» (Հռովմայեցոց . ԺԷ , 25) : Իսկ ստեղծուածք են իմաստուն՝ մթին , շփոթ , փոփոխական , և անկատար իմաստութիւն . ըստ այնմ՝ «Իմաստութի աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի աստուծոյ» (* , Արմեալեաց . Գ , 19) :

Ըստուած է քաղցր՝ քաղցրութեամբ որ նոյն է ընդ էութեան իւրում . որով նախասնամէ զարարածս ըստ իւրաքանչիւր փիճակի և յարմարութե՛ն՝ իբրև արարիչ բնութեան . ըստ այնմ՝ «Զգտի ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս օգտակար առողջութեամբ , և դարմանել զամենայն քաղցրութիւն» (Իմաստութեան . Ը , 1) : Իւ տայ զբաւական շնորհս ամենեցուն , և զգործունեայ նպատարս սիրողաց իւրոց , որք խնդրեն ՚ի նմանէ . և երկայնմտութիւն զյանցաւորսն յապաշխարութիւն ածէ իբրև հեղինակ շնորհաց . ըստ այնմ՝ «Եթէ՛ զմեծութեամբ քաղցրութե՛ն նորա , և զներելոյն և զերկայնմտութիւն արհամարհիցես . չգիտիցես զի քաղցրութիւն աստուծոյ զքեզ յապաշխարութիւն ւծէ» (Հռովմայեցոց . Բ , 4) : Իսկ քաղցրութիւնն՝ զոր ունին մարդիկ , է որակութիւն .

պատահական . և թէպէտ յամանս երևի զոչ բնաւորա-
կան . բայց և այն է նիւթապէս միայն , և ոչ ներգոր-
ծաբար , զգոյցական՝ և ոչ հողեօր . և լինի արդիւնուօր՝
յորժամ տեսակաւորի ՚ի գերբնական սիրոյ՝ որ հեղանկի
յաստուծոյ . ապա թէ ոչ՝ արդիւնաւոր թերեւս գտա-
նէր և քաղցրութիւնն՝ զոր յազդեցութենէ բնութե-
ունին աղանին , տատրակն , դառն , և այլք . ուստի յոր-
զորէ առաքեալն՝ « \ Էրո՛ւք ընդ միմեանս քաղցունք՝
զթածք . շնորհել միմեանց » (Եփէսոսց . Գ , 32) :

Ըստ սմին օրինակի և առնչութիւնս հայր և որդի ,
և ս և ծանօթականքս Բըլ՝օղ և Բըլ՝տալ , իրբև համե-
մատանուն ստորոգին զաստուծոյ և զստեղծուածոց .
վասն զի հայրութի , որդիութի , և բղխումն անային ,
ոչ է իբրև ստեղծականաց , զի նորայն է գոյացութիւն
և մերս պատահումն :

Այն զի գոյութիւն առնչականաց՝ է նոյն ինքն
մի միայն բացարձակ գոյութին անային , զօրութեամբ
միայն զանազանեալ . զի նոյն գոյութին՝ է բացարձակ
՚ի յած , և առնչական՝ յանձինս . և ըստ սյամ՝ անոր ինչ
է ՚ի յած , է գոյացական ինչ՝ նոյնացեալ ընդ անային
բնութե , և թէ բացարձակ ստորոգելիք , կամ որ նոյն
է՝ յատկութիւն իցեն , և թէ առնչական կամ ծանօթա-
կան . միայն զի բացարձակք՝ են նոյն ամենեկին . զի ոչ
զանազանին ՚ի միմեանց , և ոչ յածային բնութենէ՝ ոչ
բանիւ և ոչ իրօք . բայց առնչականք կամ ծանօթա-
կանք՝ զանազանին ՚ի միմեանց իրապէս , իսկ յածային
բնութենէ՝ զօրութեամբ միայն :

բանի, ցուցանի: Ապաքէն աշխարհս կամ արտադրեալ է յիւրմէ, և կամ յայլմէ. իսկ արդ՝ ոչ կարէ արտադրիլ յիւրմէ. վասն զի արտադրութիւնն է եղանութի յոչնչէ. իսկ այն՝ որ ոչն է, ոչ կարէ զիմն յառաջ ածել ՚ի գոյ. զի գոյ և ոչ գոյ են հակասականք. ուրեմն մնայ ասել, թէ աշխարհս է արտադրեալ և ՚ի գոյ ածեալ յայլմէ:

Եւ այսմ չէ՛ հնար յառաջանալ առ անհուն արտադրեալ արտադրօղս, զի նոյն բան է յամենեւին. ապա հարկ է զիմել առ մին, որ ինքն չիցէ արտադրեալ յայլմէ, այլ ամենեքին առ ՚ի նմանէ. և այն է Իժժ. ըստ այնմ՝ «Իսկզբանէ արար Իժժ զերկինս և զերկիր» (Ճննդ. 1. 1):

ԱՐԻԵՕ՛Ք ՄԱՐԹ Է ԱՍԵԼ, ԹԷ ԱՇԽԱՐՀՍ Է ՅԱՆԵՏԱԿԻՑ ԱՍՏՈՒԾՈՅ

Աստուած մինչև ՚ի գոյ ածեալ էր զարարածս, գիտութիւն տեսութե՛ն ունէր նկարեալ յածական միտազգաղափար կազմութե՛ն աշխարհի. և զի ունէր զբաւական կարողութի՛ն արտադրելոյ, և զգործունեայ կամս. այնու իսկ ՚ի կողմանէ նոյ ՚ի յաւիտենից էր արարեալ աշխարհս. ոչ միայն գաղափարապէս, այլ և պատճառաբար, զի կամքն նոյ է պատճառ գոյոյ իրաց. ըստ այնմ՝ «Քանզի զիսորդ կայր ինչ՝ եթէ գու ոչ կամէիր» (Իմաստութեան, Ժ, 26): Որպէս և Իժժ արանն ասէ՝ «Աստուծոյ կամելն գործ է. այլազգ մարդ առնէ, և այլազգ ամենեցուն տէրն և Իժժ» (Յոս. 1. 10, յաղագհ. հասարկ): Ապա աշխարհս գորով յաւիտենից ՚ի յԻժժ, ըստ այնմ ասի նաև յաւեւակից աստուծոյ:

ԸՆԴԷ՛Ր ԱՍՏՈՒԱՑ ԵԱՌԱՋԻՒՆ ԵԱՒԻՏԵԱՆՆՍ Ո՛Չ ԱՐԱՐ ԶԱՇՈՒԱՐԶՍ

Ապաքէն չիք տկարութի ՚ի յած ՚ի գործել ինչ, զի կամք նորա է գործ կատարելալ. և չիք ազխութի, զի պէտա ունիցի յերկար խորհելոյ զհանդամանայն. կամ խորհուրդ ինչ յումեքէ առնլոյ, զի մի յետոյ զըզ ջանայցէ. այլ կանուխ գխութեամբն գխուէ զձով:

Արա յարմարական պատճառ այամ ՚ի դէպ պատկանի նշանակել զայս. իբր զի եթէ ՚ի սկզբան յախուեանցն ՚ի գոյ ամեալ էր նոյ զաշխարհս, կարծիս ՚ի մտի գնէին մարդիկ, թէ աշխարհս իբր յաւետակից և մըշանջնակից նոյ իցէ. որպէս և ոմանք իմաստաւորացն Յունաց ՚ի դոյն մտորեցան. և թէ կարի յապաղէր, զամենագոր կարողութե նորա չառնուին զչափ, համարելով թէ զոր խորհեալն էր, չկարէր վաղ կատարել, կարօտ զոլով միջոցի արդեամբ զնոյն ամեալ ՚ի կատար: **Օ** այս պատճառ. ՚ի մէջ բերէ երանելին Եզնակ՝ յասին՝ «Արօղ էր ևս վաղ յառաջին յախտեանս առնել զաշխարհ, այլ այնպէս կամեցաւ, զի ոչ կարի վաղ առնիցէ, և ոչ յոթ անագան. այլ յորժամ դէպ և պատշաճ իցէ: Զի մի վաղն առնելով՝ լեալքն վնասիցին, կարծելով թէ մշանջնակից նորա իցեն. և մի գարծեալ անագան առնելով՝ կարծիք տկարութե լինիցին» (ՃՊ, 17):

ՊԱՄԵ Է՛Ր ԴՆԻ «ԵՐԵՒԵԼԵԱՑ ԵՒ ԱՆՆԵԼԵՒՈՒԹԻՑ»

Արովհետե Մովսէս ՚ի պատմելն զարարչագործութենէ աշխարհի՝ զերեւելեաց միայն ճառեաց, այսինքն զերկնէ և զերկրէ, և զձով եզելոց ՚ի նոսա զկենդանե-

եաց և զմարդոց . բայց զհրեշտակաց՝ որք գերադոյն են
 քան զայլ իմ արարածս ինչ , ինչ ոչ ճառեաց . ուստի
 և մոլորամիտ ոմանք՝ ըստ նմանութեան սաղուկեցւոց
 ուրանային՝ թէ չիղէ հրեշտակ . ապա յոյժ վայելչա-
 բար դաւանիմք , թէ ի՞նչ ոչ միայն է արարիչ երևելչ-
 եաց , այսինքն նիւթական արարածոց , այլ և աներևու-
 թից , այսինքն աննիւթականաց որպիսի են հրեշտակք :

Վանզի ՚ի ստորասութենէ , այսինքն ՚ի հաստա-
 տական բանէ եղելութե նիւթական և երևելի արա-
 րածոց , անմտութի է հետեւեցուցանել չեղանութիւն
 հոգեղէն և աներևոյթ գոյացութեց : Օ ի թէ Մովսէս
 ինչ ոչ յիշատակէ զարարչութենէ հրեշտակաց , սակայն
 Դաւիթ նովին հոգւովն յայտնի աւանդէ , յասելն՝
 « Ո՞րք զհրեշտակս իւր յողիս » (ճգ) : Ուր չգրելն
 Մովսէսի է պակասական ընդդիմութի հակառակոր-
 դացն ճշմարտութե . և Դաւթայն՝ գրական վկայութի :

Եւ զի՞ խոստովանելովն զի՞նչ արարիչ աներևու-
 թից , հերքէ զմոլորութի ոմանց , որք համարելին զհոգին
 բանական յեութենէն իննել , և ոչ թէ արարեալ
 յոյ . թիւր իմանալով՝ զոր ասեն սուրբ գիրք « Փչեաց
 յերեսս նորա շունչ կենդանի , և եղև մարդն հոգի
 կենդանի » : Վանզի յայտ է ՚ի վկայութենէն ինչ՝ թէ
 ի՞նչ շունչ կենդանի արարաւ յոյ . ըստ այնմ՝ « Ամենայն
 հոգի յինէն ելցէ , և ի՞նչ շունչ ես արարի » :

ԱՐԴԵՕ՝ Բ ՄԱՐԹ Է ՅՈՒՅԱՆԵԼ ԲԱՆԻ ԶԴՈՅՈՒԹԻՒՆ ՎՐԵՏՏԱԿԱՅ

Չոյն հրեշտակաց՝ որ է ՚ի հաւատոց , կարէ ևս
 ցուցանիլ բանիւ : Որովհետեւ տեսանեմք , զի ի՞նչ գոյք
 ՚ի ստորէ ՚ի վեր կարգաւ իմն յառաջացեալ , նուազ

կատարեալք ընդ առաւել կատարեալս միջական ինն
գոյացութիւն բնաւորեցան հաղորդիլ . և իբրև ընդ առ-
տիճանս վերելութեամբ հասանել մինչև առ մարդ և
առ աստուած , որ է աղբիւր գոյոյ :

Վ) ասն զի ՚ի մէջ սոսկ անզգայ գոյացութեանց և
՚ի մէջ զգայնոց՝ գտանի միջական ինչ՝ որպիսի է կեն-
սաւորն . և ՚ի մէջ զգայնոց և ՚ի մէջ մարդոց բանականի՝
գտանի միջական ինչ , որպիսի է կենդանին . ապա ՚ի մէջ
մարդոց և ՚ի մէջ նոյ ՚ի դէպ էր լինել գոյացութեան ինչ ,
որպէս զի ՚ի վեր իցէ քան զմարդ , և ՚ի վայր քան զնո՞՞ .
և ահա այն է հրեշտակական բնութիւն՝ զոր ինդրեմբ
սոսկ հոգեղէն , լրացեալ , և իմացական :

ՎԱՍՆ Է՞Ր ԱՐԱՐ ԱՍՏՈՒԱԾ ԶԱՇՆԱՐԷՍ

Աստուած յունչէ յինչութիւն ած զէնն , զի ցուցցէ
զանսահման կարողութիւն , զիմաստութիւն , և զբարութիւն իւր :

Ամենակարողութիւն նորա ցուցանի ՚ի մեծութենէ
անհամար էակաց՝ զորս յուշից գոյացոյց . ըստ այնմ՝
“ Զոր ինչ կամեցաւ և արար տէր ” : Եւ ըստ այսմ՝ նո՞՞
է գերագոյն տէր՝ և ամենակալ իշխան նո՞՞ արարածոց :
Աստուած պիտի մեզ հաւատք՝ ճանաչել զնա տէր և
արարիչ , և սրտի մտքք ծառայել իբրև տեառն , և գո-
հանալ զնմանէ :

Իմաստութիւն նորա երևի ՚ի զանազան զօրութենէ
և ՚ի սքանչելի յատկութենէ էակաց , զորս բազմահան-
ձար արուեստիւ պատրաստեալ կազմեաց ըստ իւրա-
քանչիւր յարարութեան , ըստ այնմ՝ “ Զնո՞՞ ինչ իմաս-
տութիւն արարեր ” (Սալ . ճգ , 24) : Եւ ըստ այսմ՝ նո՞՞
է ամենիմաստ կառաւար և նախախնամող տիեզիբիս : Աս

այս պարտէ մեզ իբրև իմաստուն ծառայս խորհիլ յօրէնս նորա ՚ի տուէ և ՚ի գիշերի, ճանաչել զկամս նորա և պատրաստել . նմա միայնոյ յուսալ իբրև առ քաւիչ մեղաց և պարգևիչ շնորհաց ՚ի կեանս յայս . և վարձաւորիչ փառաց ՚ի հանդերձեալ յաւիտենին . հաստատուիչ եղեալ ՚ի մտի, թէ «Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ» (Հոովհայեցոց . Ե, 5):

Բարութիւնն նորա յայանի լինի ՚ի կարգելոյ զձմտտեղծուածս նախախնամութիւն իւրով առ իւրաքանչիւր վախճան . ըստ այնմ՝ «Զձմ ինչ զործէ տէր վասն իւր» (Առաք . Ժ, 4): Իւր ըստ այնմ՝ ան է ծայրագոյն բարին և երանութիւն մեր և վերջին վախճան . վասն զի արար զձմ արարածս վասն մարդոյ, և մարդ վասն իւր, հաղորդս առնել բարերարութե իւրոյ: Առ այս պիտոյ է մեզ սէր, սիրել զնա յձմ զօրութենէ մերմէ, առ նա միայն զիմել, և յօղիլ յանդամս նորա . քանզի «Աստուած սէր է» ապա սիրով կարեմք անձեղէն բնութե նորա լինել հաղորդակից, և միաւորիլ ընդ նմա: Ուստի ասէ սուրբն Գիտնեսիոս՝ «Գերագոյնն էութիւն անպետութիւն՝ բարերարութիւն զձմ էից էութի գոյացուցեալ՝ յէութիւն էած . քանզի այս է ամենեցուն պատճառին և գերագոյնի բարերարութեանն յատկութիւն, առ ՚ի հաղորդութի իւր զէսս կոչել» (Առաք . Գիտնեսիոս . Գ, Դ . Բան, Գ):

Այն զի արար անձ զաշխարհս, զի ցուցցէ զմեծ փրօշնչութի իւր և զնախախնամութիւն առ իւր արարածս . զի եթէ չէին արարածք, ոչ երևէր փառք նր, և ոչ որ էր՝ որ ճանաչէր զնա . յոր միտ ասէ սուրբ Լուսաւորիչն՝ «Սէր արարչութեանն ստիպեաց զինքն առնել զարարածս անձ՝ որ երևին և որ ոչն երևին»:

Ո՛չ ՚ի պէտս ինչ իւրոյ յոճութեանն արարեալ . այլ զի երևեսցին նորա փառքն , որ արարած տէրս իմացեալ տեսանի անմարմնոց և մարմնաւորաց» (Յաճախապարտմ . Ճսռ . Բ) :

ԵՒՆՉ ՄԻՏՍ ԱՍԻ ԶԱՍՏՈՒԺՈՅ ԱՄԵՆԱԿԱԲՈՂ .

Ըստուած ասի ամենակարօղ՝ ո՛չ միայն նկատմամբ գոյաւոր արարածոց , կամ ապագայից , որք եղին , կամ են , և կամ լինելոց են յիմիք մասին ժամանակի , զորս գիտութեամբ տեսութե՛ն ճանաչէ . այլ ձգի ևս ՚ի սոսկ կարելիս , որք ո՛չ եղին , և ո՛չ ևս լինիցին , զորս գիտութեամբ պարզ իմացութեան ճանաչէ :

Ըրդ՝ ամենակարօղ է՛ յոճ , զի կարէ առնել զսոյ բազում ինչ , զորս ո՛չ արար և ո՛չ առնէ . իսկ ո՛չ լինէր ամենակարօղ , եթէ՛ զկոյ առնոյր ՚ի գոյաւոր արարածըս , որ եզերեալք են և հունաւորք . ըստ այնմ՝ « Ո՛չ տկարացի առ յոյ ամենայն բան» (ՂԼ . 1 . 37) :

ԶԻՆՉ Է՛ ՈՐ ԱՍԻ՝ «ԵՒ Ի ՄԻ ՏԵՐ ԵՒՍՈՒՍ ԲԵՐԻՍՏՈՍ»

Հասարակ օրինակք զօրութեամբ թողուն զբայս՝ « Հաւատամք» : Օրինակն մեր ընդ այլ հնագոյն օրինակս ներգործութեամբ ունի այսպէս՝ « Հաւատամք և ՚ի մի տէր յիսուս քրիստոս , յորդին աստուծոյ» :

Մին է սկիզբն յոճ բազմութեանն , և չիք էակ՝ որ չիդէ հաշորդեալ միոյ . զի յոճ բազմութի՛ն ունին յինքեանս զմիութի՛ն ինչ . ուստի ըստ տեսակաց բազմութե՛ն , և միութիւնն է՛ բազմապատիկ :

Ղախ միութիւն գոյացականն , կամ միութի՛ն ինքնութեանն . և սա է՛ պարզ ամենն ին և անբաղադրելի .

չիբ ՚ի նմա բաժանու մն իրական, զի չիբ բաղադրութի մասանց : քանզի բոլորն է ՚ի միում, և մին ՚ի բոլորում . և ոչ զանազանութի բանի, զի բոլոր գոլն է համանգամայն : Լ, և որպէս սուրբն Հռեթէոս ասէ՝ «Ո՛ր մասն է և ոչ բոլոր . և բոլոր է և մասն , զի զամ և զբոլոր և զմասն ՚ի յինքեան պարունակէ» (ա-Պի-նէ-սի-ոսի . Ի Լու-ւ-ն . ա-Տի-մ-Լէ-ոս . ԳԼ, Ի . Բան , Ժ) :


Լ, և զի ոչ ՚ի կարողականութենէ յառաջացեալ է ՚ի ներգործականութիւն, և ոչ ՚ի սեռէ և ՚ի տարբերութենէ ունի զլրութի, այլ է գերամարուր ներգործութիւն, ծայրագոյնս իմացական, և յանսահմանս կատարեալ . և ըստ այսմ ասի՝ «Աստուած է մի» :

Վանզի ՚ի սմին նախադասութե՝ անութիւն և միութի այնչափ է նոյն , մինչ զի միով ներգործութիւ մտաց ըմբռնի . և ոչ եթէ նախ ըմբռնի անութիւնն, և ապա իբրև յատկութի ինչ առատրի նմա միութիւն . և այս յաղագս բոլորովին պարզ և ներգործական գոյց անութեանն անխառն յամ կարողականութենէ :

Երկրորդ՝ միութի առատրական . և է անանջատելի յատկութի ինչ առատրեալ էակի՝ ըստ որում է էակ . զի թէպէտ իրապէս նոյն է ընդ նմա, այլ զանազանի ըստ իմացման . զի ոչ միով ներգործութիւ մտաց ըմբռնի էակն և մին . այլ յառաջնում ներգործութե ըմբռնի էակն, և յերկրորդում ներգործութեան միութիւնն՝ իբրև դատումն ինչ զէակէ, և այնու բացասի ՚ի բազմութենէ . ապա թէ ոչ՝ լինէր բազմութիւն էակաց, և ոչ էակ ինչ :

Սմին իրի եզրս՝ Դ , ստորոգեալ զոյ և զստեղծուածոց՝ ոչ թուի իբրև փաղանուն , այլ իբրև համեմատանուն . զի միութիւնն ՚ի յամ՝ ցուցանէ զդրական

92561
1001



ինչ որդ , և ոչ երբէք զբացասութիւն բաժանման , զի անմահութ է ասել , ի՞նչ է մի՛ այնու , զի ոչ է բազմութիւն ի՞նչոց : Իսկ միութիւնն ՚ի ստեղծուածս , յայտ առնէ զբացասութիւն բաժանման . ուստի ՚ի դէպ գայ ասել . էակն է մի՛ այնու , զի չէ՛ բազմութիւն էակաց : Հայացանէ յայտնի երևի , թէ՛ գոյացական միութիւնն է բացարձակ ինչ , զի ոչ ունի հայեցումն առ եզր . իսկ առատրական միութիւն է առնչական ինչ , զի հայի առ բազմութիւնն իբրև առ իւր եզր :

Արրորդ՝ միութի՛ իրական , և է նոյնութիւն էութեան . որոյ տարբեր են տեսականութի՛ք . որպէս հրեշտակն էութի՛ է մի . բայց զանազանի ՚ի նմա կրկին տեսականութի՛ , կարողականութե՛ և ներդրականութե՛ , կամ էութե՛ և գոյութե՛ . և հոգին բանական ըստ էութեան է մի , բայց զանազանին ՚ի նմա զօրութեանական աստիճանք՝ բանականութեան , զգայականութեան , և ածողականութեան :

Չորրորդ՝ միութիւնն նիւթական . և է նոյնութի՛ պարզ էութեան ըստ նոյն տեսականութե՛ . որպիսի են սկզբնատարերբ բնական էակաց , յորոյ բազաղրին ի՞նչ էակք և հուսկ յետոյ ՚ի նոսա լուծանին . զորօրինակ՝ աղ , իւղ , ծծումբ , կիր , աղակի , և այլն : Առբա ունին զմիութի՛ , զի ոչ բաժանին ՚ի տարասեռ մասունս . բայց կարեն բաժանիլ ՚ի հոմասեռ մասունս մինչև ցանհունըս , գննէ կարողաբար :

Հինգերորդ՝ միութիւն սեռական . և է ընդհանուր գաղափար ինչ ենթակայացեալ ՚ի միտս , հիմն ունենլով յիրում . և ասի զայնց՝ որք են ընդ միով սեռիւ , որպէս մարդ և առիւծ :

Վ) Երկրորդ՝ միութիւն տեսականական . և է ընդհան-

նուր գաղափար ինչ արմատաբար յիրս, և տեսականապէս պէս ՚ի միտս . և ասի զայնց՝ որք են ընդ միտլ տեսական . որպէս այս մարդ, և այն մարդ, և այլ իմ անհատք:

Եթեմերորդ՝ միութիւն թուական . և է որոշակի ենթակայացեալն յինքեան, որ ունի զամբողջական մութի էութեան, բայց բաժանի ՚ի նիւթ և ՚ի տեսակ կամ ՚ի զանազան գոյացութիւնս . որպէս սմն մարդ, կամ պետրոս, է մի միայն անհատն մարդկային բնութե, բայց բաժանի ՚ի նիւթ և ՚ի տեսակ, այսինքն ՚ի հոգի և ՚ի մարմին: Եւ այս քար, այս տունի, այս կենդանի, են մի ինչ, բայց բաժանին ՚ի զանազան և ՚ի տարբեր գոյացութիւնս ըստ բնազննից, այսինքն յաղ, յիւղ, ՚ի հող, և ՚ի ծծումբ, և այլն:

Եթեմերորդ՝ միութիւն այլայլական . և է զանգուած ինչ՝ կամ բոլոր միացեալ ՚ի բազմաց, որոյ մասունքն շփոթեալ են զբացորոշ էութիւն իւրեանց ՚ի կացուցանել զմի ինչ երրորդ, կամ փոխեալ առ այս . որպէս ալիւր և իւղ . անազ և պղինձ . կամ մելան և ջուր, և այլն:

Եթեմերորդ՝ միութիւն բարոյական . և է հաւաքումն բազմաց թուով տարբերելոց, որք ունին զմութիւն ինչ քաղաքական, կամ կրօնի, կամ սիրոյ, և այլն . որպէս այր և կին ասին մի մարմին . բայց բաժանին յանհատական և ՚ի թուական մութիւնս:

Եւ այս իմ միութեց նախնի հարք ուրեք երբէք ՚ի մէջ բերեն զմիաւորութիւնն հոգւոյ և մարմնոյ ըստ եթեմերորդ եղանակին, ՚ի ցուցանել զմիաւորութիւն տեսան մերոյ . բայց այն է պիտակաբար, և ոչ տիրապէս խօսելով:

Վանգի հոգի և մարմին՝ յորոց է մարդս, չունին զկատարեալ էախութի, և ճշդիւ խօսելով անուղղակի:

ստորոգին զըողորէն . որպէս՝ մարդն է՝ ՚ի հողւոյ և ՚ի մարմնոյ . Իսկ քն յերկուց կատարելոց ունի զմիութիւն , զի է կատարեալ իձ՝ և կատարեալ մարդ , որպէս ուսուցանեն հաւատք . և ուղղակի ստորոգի զըողորէն . որպէս՝ քրիստոս է իձ և մարդ : Աստի ասէ սուրբ Լուսաւորին մեր՝ « Առաքեցաւ իձ յոյ սուրբ հոգին , և մարդազարդեաց զկոյնն . առ մարմինն ՚ի կուսէն , որդին իձ մարդ կատարեալ՝ կատարեալ իձութիւնն . զինձութեանն զորութի յայտ արար . և զմարմնոյ տկարութիւնն ցուցանէր » (Ագաթանգեղոս) : Գրէ և սուրբն Աիւրեղ . « Մի գողով և միայն որդի քրիստոս . նոյն ինքն իձ և մարդ . որից յինձութենն կատարեալ , այսպէս և ՚ի մարդկութենն » (Առ սեկունդ . պարտա) : Եւ սուրբն Ներսէս շնորհալին , « Եղև յերկուց կատարեալ բնութեց յինձայնոյ և ՚ի մարդկայնոյ մի անձնաւորութիւն կատարեալ անայլայլելի և անբաժանելի բնութիւն » (Ընդհանրական) :

Պիղծն Նեստոր՝ մի ասէր զքրիստոս բարոյական միութիւն ըստ իննբորդ եղանակին . վասն որոյ և ՚ի բաց բառնայր զիրական և զբնութիւն միաւորութիւնն բանին և մարմնոյն , յումն և յումն տրոհելով . այլ ասելով զորդին նոյ ծնեալ ՚ի հօրէ . յաւիտենից . և այլ զորդին մարդոյ ծնեալ ՚ի կուսէն ՚ի ժամանակի :

Դանտն Եւաթէս՝ մի ասէր զքրիստոս այլայլական միութիւն ըստ ութերորդ եղանակին , յինձութենն և ՚ի մարդկութենն երրորդ իմն եղեալ շփոթմամբ , և կամ մարդկութիւնն ծախեալ յինձութեննն :

Ըպա ՚ի ճահ պատկանի մեզ յաւելլուլ աստանօր զտասներորդ եղանակ . իբր զի մի ասին երկու կատարեալ էակութիւնք՝ անշփոթաբար և անկորուստ խառնեալք ՚ի մի ենթակայութիւն . և ըստ այսմ ասի՝ « Մի

տէր, մի քնն . որ արդարեւ այս միութիւն է նոր և հրաշափառագոյն : Աւստի ասէ Աճաբանն՝ «Ո՛վ նոր խառնմանս . ո՛վ սքանչելի խառնուածոյս» : Աւրեմն խորհրդով և յոյժ վայելչապէս թուի եղեալ ՚ի հանդանակի , « Հաւատամք և ՚ի մի տէր յս քնն » . ըստ որում ասէ և Առաքեալն «Մի է տէր, մի հաւատք , մի մկրտութի» (Եփեսոսցոց . Դ , 5) :

Իսկ յասացելոցս աստի, եթէ ուշ դիպուք մտաց յածագդեաց հարց սրբոյ ժողովոյն Նիկիոյ, զայլ ևս պատճառ գտանեմք . յոյր սակս կարեւոր դատեցին արձանագրել ՚ի հանդանակիս զայս հատուած բանի . « Հաւատամք և ՚ի մի տէր յիսուս քրիստոս » :

Օ ի որովհետեւ Արիոս հերետիկոսապետ չարաչար ուսուցանէր , թէ այլ է բանն յաւիտեանական՝ որ ՚ի հայր, և այլ է բանն ստացական՝ որ ՚ի հօրէ, որ մարդ եղեալ անուանեցաւ , տէր , յս , քնն Վ ասն որոյ և ո՛չ խոստովանէր, մի տէր՝ մի քրիստոս՝ զբանն յաւիտեանական՝ որ առ ձեռ . և նոյնն ՚ի ժամանակի մարդ եղեալ : Օ որոյ զձեռնդդէմ հայհոյութիան հերքեալ՝ դաւանեցին ասելով « Հաւատամք և ՚ի մի տէր յիսուս քրիստոս՝ յորդին աստուծոյ » :

Եւ քանզի գլխաւոր դիտումն ժողովոյն էր դաւանել զձեռութիւն բանին մարմնացելոյ, զոր ուրանայր Արիոս . ամին իրի իբրև հիմն ճշմարիտ խոստովանութե եդ նախ զմիաւորական անուանս , «Տէր , յս , քնն» , որք նշանակենն ո՛չ սոսկ զձեռութիւնն, և ո՛չ լոկ զմարդկութիւնն , այլ զմիաւորեալն յերկոցունց . յարէ ապա զդաւանութիւն ձեռութե բանին ընդ դէմ մոլորութեն Արիոսի, և յետ այնորիկ զմարդեղութեան նորա . զորոց խօսեցուք յառաջիկայդ :

Տէր ասի նախ՝ զի արարչութիւնն ՚ի յաւիտենից զփրական իրաւունս ՚ի վերայ մեր , և ՚ի վերայ ամենայն արարածոց իւրոց , ըստ այնմ՝ « Ամենայն ինչ նովաւ եղև » (Յովնանն . ա , 3) :

Երկրորդ՝ զի յաւուրս մարմնոց իւրոց զնեաց ըզմեզ ՚ի ծառայութենէ մեղաց՝ արեամբ իւրով . ըստ այնմ՝ « Ո՛չ ապականացու արծաթեղինօք՝ և ոսկեղինօքն փրկեցարուք ՚ի ձերոց ունայնութիւն հայրենաստուր գնացիցն . այլ պատուական արեամբն քրիստոսի , իբրև անբիծ և անարատ գառին » (* , Պետրոս . ա , 18) :

Երրորդ՝ զի մահուամբ իւրով էառ ՚ի հօրէ զտէրութի ՚ի վերայ մեր . ըստ այնմ՝ « Լեալ հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի . վասն որոյ և Եձ զնա առաւել բարձրացոյց . . . զի յանուն յի . բի՛ Եձ ծուներ կրկնեսցի , երկնաւորաց և երկրաւորաց , և սանդարամետականաց . և Եձ լեզու խոստովան լիցի , թէ՛ տէր է յս քի՛ ՚ի փառս աստուծոյ հօր » (Փիլիպպեոց . Բ , 8) :

Չորրորդ՝ զի դատողական իշխանութիւն կացուցաւ տէր ՚ի վերայ Եձ մարդկան . ըստ այնմ՝ « Աս է սահմանեալն յեջ , դատաւոր կենդանեաց և մեռելոց » (Գործոց . Ժ , 42) :

Յխուան ՚ի մեր լեզու փրկիչ թարգմանի . արդ փրկել զքք ՚ի ծառայութենէ կամ ՚ի բանտէ աղաչանօք կամ բռնի , առանց հատուցանելոյ զգինն՝ կամ զպարտսրն՝ կամ զվնասն , յիրաւի է ազատել , այլ ո՛չ փրկել :

ՎԱՍՆ ԷՐ ՅԱՒԵԼՈՒ «ՅՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ»:

Եւ յառ յայտ առնէ, թէ ք՛ս ոչ էր որդեգրական կամ շնորհօք որդի իջ, այլ ճշմարիտ և խականան. ըստ այնմ՝ «Դ՛ա է որդի իմ սիրելի՛ ընդ որ հաճեցայ» (Մատթէոսի. Գ, 17):

Եւ քանզի յառաջագոյն եղ զայստսիկ երիս անուանա «Տէր, յիսուս, բրիստոս» որ ցուցանեն զբանն հօր՝ մարմնացեալ և մարդացեալ, ապա յարելովն անդէն «Որդին իջ» անշուշտ տայ մեզ խմանալ, թէ նոյն ինքն մարդացեալ տէր յիսուս բրիստոս՝ ճշմարիտ որդին մարդոյ՝ է խականան որդի իջ. ըստ այնմ՝ «Հայր ՚ի վերուստ վկայեալ՝ կրկնակի ծննդեամբ դա է որդի իմ սիրելի» (Շարախան Ժնդէան. «-Լէրորդ առ-») . այսինքն՝ թէ դա է որդի իմ, թէ ըստ աստուածային ծննդեանն ՚ի հօրէ, և թէ ըստ մարդկայնոյն ՚ի կուսէն: Օ սոյն երկբորդէ եկեղեցի սուրբ՝ յասելն «Այսօր հայր յամօրոյն վկայեալ էական բանիդ՝ միացեալ ընդ կուսածին մարմննոյդ» (Շարախան Վարդավառի):

ԶԻՆՉ Է ԱՍԵԼՆ «ԾՆԵԱԼ ԵԱՍՏՈՒԾՈՅ ՀՕՐԷ ՄԻԱԾԻՆ . ԱՅՍԻՆՔՆ ՅԵՌԹԵՆԷ ՀՕՐ»:

Հասարակ օրինակք այսպէս ունին . օրինակն մեր ընդ հին օրինակս յաւելլու զյօդս՝ ք, այսպէս . «Ծնեալն յաստուծոյ հօրէս»:

Յամենայն արտադրութիւնս բնութիւն՝ ծնունդն է որ զօրութեամբ իւրով նմանեցուցանէ. սմին իրի և բանն յաւիտենական՝ որդի անուանի . զի է ճշմարիտ ծնունդ յառաջ եկեալ ՚ի բեղմնաւոր մտաց հօր . վասն որոյ և ամենայնիւ նման է հօրս . Քանզի ասէ և սուրբն Արարիչ՝ «Հարկ է պարզաբար իմ բնութիւն ծննդաւ»:

կանի նման ինքեան ունել իմ իրօք՝ զոր յինքենէն ,
թէ պէտ և ծնանելովն պատճառ իցէ բնութիւն յինքե-
նէն ծնիցելոյն» (Գանձ. ԳԼ Ժ)։ Ուստի իբրև սեպհա-
կանեալ անուամբ կոչի՝ Կերպարան այ հօր . ըստ այնմ՝
«Որ ՚ի կերպարանս աստուծոյ է» (Փիլիպոսեցոց . Բ , 6)։
Պատկեր , ըստ այնմ՝ «Որ է պատկեր աներևութին այ»
(Վոլոսացոց . ա , 15)։ Կնիք , ըստ այնմ՝ «Չնա հայր կրնք
եաց իմ» (Յովնաննո . շ , 27)։ Կարագիր , ըստ այնմ՝
«Որ է լոյս փառաց՝ և նկարագիր էութեան նորաս»
(Եֆրայեցոց . ա , 3)։ Ուստի երդէ եկեղեցի՝ «Որ կեր-
պարան և կնիք հօր առեալ վասն մեր ծառայի կերպ ՚ի
կուսէն» (Շարախն ծննդեան , ա , առոր)։ Յայր սակս ունի
զիմ կատարելութիւնս հօր՝ բաց ՚ի հայրութեն . որպէս
ասէ և սուրբն Կիւրեղ . «Եղև մարդ միածինն այ բանն .
եկաց մնաց և այնպէս իմ յէութեան իւրում որպէս
և հայր , բայց միայն ՚ի հայրութենէն» (Պարսպ)։

Իսկ Բանն անուն առաւել սեպհականեալ է որդ-
ւոյ . զի որպէս բան մեր՝ իբր եզր կրաւորական յառաջ
եկեալ ՚ի ստեղծական մտաց յար և նման իւրում ըս-
կզբան՝ ասի ծնեալ . այսպէս և բանն յաւիտենական յա-
ռաջ եկեալ ՚ի բացարձակ և ՚ի հարկաւոր ճանաչմանէ
այ հօր՝ ասացաւ ծնանիլ . յոր միտ գրէ և Շնորհային .
«Իսկ օրինակ անօրինակ ծննդեան որդւոյ , բայց որ ՚ի
մեզ մտաց ծնունդ զբանն»։

Ուստի կոչի Իմաստութի , զի է եզր ամենակատար
ճանաչմանն հօր , ըստ այնմ՝ «Չքն այ զօրութի և այ
իմաստութիւն» (ա , Կորնթացոց . ա , 24)։

Նա զի՝ ասելովն «Ծնեալ յայ հօրէ» նախ ա-
ռաջին հերքէ զմտորութիւն Սաբէլի , որ զնէր ՚ի յիմ
վասն միութե բնութեն՝ և զմիութի անձնաւորութե .

և զի գաւանկիմք՝ թէ: զոյ ծնունդ ՚ի յնձ . ապա զոյ և զանազանութի անձանց . զի ծնող և ծնեալ հակադրին առնչապէս . իսկ առնչականք հարկիւ պահանջեն զերկուս իրական եզերս , այսինքն Եւր յորձէ , և Եւր աոր , զի առնչութին է այն՝ որոյ բոլոր գոյն է առ այլ . ապա հայր և որդի որպէս գոն առնչութիւն , նոյնպէս և զանազանին առնչութիւն . ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն .
 “ Հայր չծնեալ՝ և ծնող է , և որդի չծնող , և ծնունդո ”
 (Ագաթանգեղոս):

Երկրորդ՝ հերքէ զմոլորութին Արիտսի , որ վասն զանազանութեան անձանց , եղ ՚ի յնձ զանազանութիւն բնութեան : Օ ի թէ ՚ի ստեղծականս՝ հայր ՚ի ծնանկ իւր որդի՝ հաղորդէ նմա զբնութի իւր . ապա և հայրն աւնեղ և յախտենական ՚ի ծնանկն զորդի՝ հաղորդեաց նմա զբնութի իւր . վասն որոյ որդին աստուծոյ էակից է հօր և համազոյ :

Միածին ասէ ըստ ձայնի աւետարանչին . “ Այնպէս սիրեաց նձ զաշխարհ , մինչև զորդին իւր միածին ետ ” (Յովհաննոս . Գ , 16) : Իբր զի միոյ հօր ինքն է միայն որդի . և չիք այլ որ ծնեալ յառաջ կամ զկնի . որպէս սուրբն Արարեղ ասէ՝ “ Միածին դարձեալ նոյն ինքն , որպէս միայն ՚ի միայնոյ ծնեալ յաստուծոյ և ՚ի հօրէ ” (Վարդայ):

ԵԹԷ ՌԷ ԱՍԻՅԷ . ՄԻ ԹԷ ՉՈՒՆԻ՞ ՀԱՅՐ ԶԱՆՐՈՂՈՒԹԻՒՆ ԾՆԱՆԵ-
 ԼՈՅ ԶԱՅԼ ԵՒՍ ՈՐԴԻՍ

Ասելի է , թէ նձ հայր լրապէս ճանաչելով զեւութիւն իւր՝ ծնանի զորդին . իբր եզր անհուն՝ հաւասար անհուն բեղմնաւորութի իւրոյ . մինչև այնուհետև ոչ ևս կարող գոլ յառաջ ածել զայլ ինչ եզր . ապա թէ:

որ՝ հայրն էլ լրացէս ճանաչէր զէութիւն իւր . ապա մի է նորա որդի միածին:

ՎԱՍՆ Է՛Ր ԱՍԷ՝ «ԱՅՍԻՆՔՆ ԵՒՈՒԹԵՆԷՆ ԷՕՐ»

Իբր զի որդին չէ՛ օտար յէութենէ հօր , կամ ծնեալ ըստ շնորհաց , որպէս մեք ծննդեամբ սուրբ աւազանին որդիքն այ կոչիմք . ըստ այնմ՝ «ՈՂքն է յաբենէ , և նէ ՚ի կամաց մարմնոյ , և նէ ՚ի կամաց առն , այլ յայ ծնանն» (Յ՝Չ՝աննո . . . , 13): Լւթէ՛ «Ամենեքին որդիքն այ էք՝ հաւատովք ՚ի քս յս» (Գաղաթոս . . . , 26): Լ՛յսպէս և ազգն իսրայէլի որդի աստուծոյ կոչեցաւ . ըստ այնմ՝ «Որդի անդրանիկ է իմ իսրայէլ» : Լւթէ՛ «Որդիս ծնայ և բարձրացուցի , և նորա զիս անարդեցինն» (Եսայ . . . , 2): Լ՛յլ ցուցանէ՛ թէ յս քս է բնական որդի հօր՝ յէութենէ՛ նորա ծնեալ , և նէ թէ որդեգրական և շնորհօք :

ԶԻ՛ՆՉ Է՛ ՈՐ ԱՍԷ՝ «ՆՈՅՆ ԻՆՔՆ Ի ԲՆՈՒԹԵՆԷՆ ԷՕՐ»

Նանդանակն մեր ըստ իմաստին թարգմանէ զյու նական ձայնս Օճոսսիոն՝ որ ըստ բառական նշանակութեան դնելի էր համադոյակից , որ զնոյն նշանակէ : Լւթանդի երկու գլխաւոր մոլորութիք երևեցան յեկեղեցւոյ ՚ի վերայ միոյ աստուածային բնութեան յերկա անձինս ենթակայացելոյ :

Լ՛ռայինն Սաբէլի , որ խոստովանէր զմիութիւն բնութեան աստուածութեան , և ուրանայր զերրորդութի անձանց : Լ՛րկորդն Արիոսի , որ խոստովանէր զերրորդութիւն անձանց , և ուրանայր զմիութիւն բնութեան : Սուրբ Ժողովն Նիկիոյ՝ ձայնիւս « Համադոյակից հօր »

կամ «Նոյն ինքն 'ի բնութենէ հօր» , իբրև երկայրի սրով վարեցաւ ընդդէմ երկուց ներհական մտորուեցոյ :

Օ ի որովհետև համադոյութիւնն աստուածային է նոյնութի մի թուով բնութեան 'ի զանազան անձինս , որոց մին հաղորդեալ իցէ միւսոյն :

'Նախ՝ ցուցանէ զբազմութիւն անձանց ընդ դէմ Սարէլի . զի 'ի մէջ բերէ զհայեցումն առ այլ . զի ոչ որ իւրոյ ինքեան ասի համադոյակից . այլ հարկաւ պահանջին երկու եզերք հաղորդականք միմեանց 'ի գոյն :

Արկրորդ՝ ցուցանէ զմիութիւն բնութեան ընդ դէմ Արիտի . զի 'ի ներքս ամէ զհիմն՝ որով հաղորդին երկոքին ծայրքն . կամ զպատճառն՝ որով ունին զանդրադարձ հայեցուածս . զի ոչ որ օտարի բնութեան ասի համադոյ , այլ այնմ՝ որ ունի զնոյն թուով բնութիւն :

Աւ քանզի որդին իոյ յաւիտենական ծննդեամբ իւրով 'ի հօրէ , էակից և համադոյ է հօր , ապա իբրև հիմն ուղղափառ հաւատոյ ունիմք զայս դաւանութի . թէ է «Նոյն ինքն 'ի բնութենէ հօր» : Ուստի ասէ եկեղեցի սուրբ . «Տեսի ես յայնմ ատենի բանն ծագեալ 'ի հօրէ , դաւանի ծնունդ և ոչ արարած . միշտ համադոյակից ընդ հօր և որդւոյ» (Շարկիան) :

ԱՐԴԵՕՔ ԷՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԻՑԷ՝ ՄԿԻԶԲՆ ԾՆՆԴԵԱՆ ՈՐԴԻՈՅ . ԵՒ ԶԻ՝ԱՐԴ ԱՍԵՄՔ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԾՆԵԱԼ ՅԷՈՒԹԵՆԷ ԿԱՄ Ի ԲՆՈՒԹԵՆԷ ՀՕՐ

Սկիզբն կրկնակի առեալ լինի . մի՛ իբրև սկիզբն ո՞ր , և միւս՝ իբրև սկիզբն ո՞րով : Իսկ արդ՝ սկիզբն ո՞ր ծննդեան որդւոյ՝ է անձն հօր . սկիզբն ո՞րով է էութիւն իծային : Ապա մինչ ասի՝ «Թէ էութիւնն ոչ ծնանի , և ոչ ծնեալ լինի» իմանի իբրև սկիզբն ո՞ր , և իբրև եզր

որ . զի առնելու թիւնք և կրելու թիւք ևն ևն թարբերոց .
և ճշմարտու է , թէ էութիւնն բացարձակապէս իմաց-
եալ վերառմամբ յառնչական ևն թակայութեանց , ոչ
ծնանի և ոչ ծնեալ լինի :

Ըստ էութիւնն աստուածային եղանակաւ որեալ
հայրութեամբ՝ կամ իբրև սկիզբն որով , և և ասի սկիզբն
ծննդեան որդւոյ ՚ի ձեռն մտաց . վասն որոյ և ոչ զնի
ուղղակի՝ այլ կողմնակի , այսինքն ՚ի բացառական հոլովի :

Օ ի թէ էութիւնն իբրև սկիզբն որ լինէր յա-
ռաջ անօղ անձին որդւոյ . հարկ էր նմա իրապէս զա-
նազանիլ յաստուածային էութենէն . և ըստ այսմ՝ բազ-
մապատկէր միութիւն աստուածային էութեանն : Ըստ
այսմ իմանի . « Որ յանձառելի ծոցոյ հօր էութենէ ծա-
ղեցար » (Շարական ֆննրէն , է , ա-ո-ր) : Եւ սուրբն Ալի-
բեղ . « Ասեմք զնա յէութենէն աստուծոյ և հօր ան-
ձառաբար ծնեալ » (Պարսպ) : Եւ գարձեալ՝ « Իսկ որդի
ստացուած ծնողին ոչ վայելաբար ասի , այլ յէութէն
նորա յառաջ եկեալ խոստովանի » (Գանձ . ԳԼ , ԺԻ) : Եւ
երանելին Եզնակ ասէ զնոյ . « Չունի որ զովողակից
իբրև զեղբայր կամ իբրև զընկեր , կամ իբրև զօտար որ
գործակից , այլ միայն զիւր զօրութիւնն և զիմաստու-
թիւնն , որ իւրոյ էութեանն ծնունդ է և մշտնջենա-
ւորակից » (Ճառ , Կ) :

Ըստպէս ևն և զերմանէն հոգւոյն սրբոյ ասաց-
եալքն , այսինքն՝ իբրև սկիզբն որով . և ոչ երբէք իբրև
սկիզբն որ : Ըստ այսմ ասէ երանելին Գրիգոր . « Հոգին
սուրբ բղխումն ՚ի հօրէ անձառաբար , ոչ ըստ մարմնոյ
ծննդեամբ այլ ելումն յէութենէն . ըստ այսմ՝ հոգին
ճշմարտութեան՝ որ ՚ի հօրէ ելանէ » (Ի իբրսք վարդն) :

Եւ քանզի ազանդապեան Արիոս՝ զընութի որդ-

ւոյ այլա՞նոյ ասէր ՚ի հօրէ . և Սխարխոսեանք՝ նմանա՞նոյ .
 հարք սուրբք պինդ կալան զձայնդ համա՞նոյ . որ ՚ի մեզ
 մեկնողաբար եղաւ “Նոյն ինքն ՚ի բնութիւն հօր” իբրև
 զօրաւոր դեղթափ ընդ դէմ մահաբեր թուակց նոցա .
 իբր զի “Համադոյութիւն” նշանակէ զզանազա-
 նութի ստուածային անձանց, միանգամայն և զմիու-
 թիւն բնութեան . ըստ այնմ՝ “Ես և հայր իմ մի եմք”
 (Յովնանոս . Ժ , 30) : Ուր ասելովն մի , յայտ առնէ ըզ-
 միութիւն բնութեան . և ասելովն եմք՝ զզանազանու-
 թիւնն անձանց :

ԶԻՆՉԷ՝ ՈՐ ԱՍԻ : “ԱՍՏՈՒԱԹ ԵԱՍՏՈՒԹՈՅ , ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ”

Աստուած յաստուծոյ ասելովն ցուցանէ , թէ
 բանն հօր յս քս՝ որ երևեցաւ մարմնով ՚ի կերպարանս
 ծառայի , ո՛չ է կոչմամբ միայն աստուած վասն արդա-
 բութեան իւրոյ և հնազանդութե՛ն՝ ըստ օրինակին Մով-
 սէսի , որում ասացաւ՝ “Ահա ետու զքեզ աստուած
 Փարաւօնի” (Եւէյ . Է , 1) : Այլ է ան ըստ բնութեան .
 ըստ այնմ՝ “Եւ աստուած էր բանն” (Յովնանոս . Գ , 1) :

ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ

Երս ասի աստուած վասն լուսաւորելոյն զբանա-
 կան բնութիւնս մեր . ըստ այնմ՝ “Աստուած լոյս է , և
 խաւար ՚ի նմա չիք և ո՛չ մի” (Սաղմոս Լիւկայ . Գ , Յովնան-
 ոս . Գ , 5) : Բայց ո՛չ է որպէս զգալի լոյսս այս տարրա-
 կան՝ ենթակից աչաց զանազանութեան . այլ՝ “Լոյս է
 անմատոյց ահեղ և զարմանալի” որպէս ասէ Լուսաւոր-
 ըիչ . (Յաճախապարոմ . Ծառ . Գ , Գ) :

Լոյս է և որդի . ըստ այնմ՝ “Ես եմ լոյս աշխար-
 հի , որ գայ զկեի իմ ընդ խաւար մի գնացի .” (Յովն

Հաննոս . Ը, 12) : Ուստի ճահողագոյն թուեցաւ սուրբ
հարց՝ զճաղու մն լուսոյն յարացոյց առնուլ մշտնջենա-
ւոր ճննդեան որդւոյն վասն անպատ ծաւալմանն . զի
որպէս լոյսն միշտ ճառագայթէ յարեղակնէ , և ոչ սպա-
ռի , նոյնպէս և որդի միշտ ճնանի 'ի հօրէ , և ոչ դադարի :

Օ ի ոչ եթէ ըստ նմանութե արարածական ճնրն
դոցս միանգամ ճնեալ 'ի հօրէ , և յետ այնորիկ եկաց .
այլ ճնեալ է 'ի յաւիտենից , և ճնանի 'ի յաւիտեանս .
ոչ ունելով սկիզբն աւուրց , և ոչ վախճան ժամանակաց .
զի արարչն ժամանակաց ոչ անկանի ընդ ժամանակաւ :

Եւ թէ որ ասիցէ , որդի չէր ուրեմն յաւիտենից
ճնունդ կատարեալ , զի ճնանիցի այժմ և 'ի յաւիտեանս :

Եւ պարէն ճառագայթն միշտ ծագեալ յարեղակ-
նէ , ոչ 'ի թերութենէ գայ 'ի լրութիւն , այլ կայ հանա-
պազ յիւրում լրութեան . ապա և որդի ճնեալ 'ի հօրէ
'ի յաւիտենից , ճնանի անդադար յամենայն յաւիտեա-
նքս . և այսու ոչ յանկատարութենէ ժամանէ 'ի կատարե-
լութիւն , այլ կայ և մնայ միշտ անպակաս և անյաւել-
ուած յիւրում աստուածային կատարելութեան . որպէս
սուրբ Լուսաւորիչն ասէ . « Կատարեալ է որդի՝ անձամբ
և զօրութեամբ , գիտութեամբ և իմաստութեամբ , ա-
բարչութեամբ և բարեբարութեամբ , և զամենայն իւր
անսկիզբն էութեամբն ունի » (Յաճախապարտմ) :

ՁԻՆՉԷ՝ ՈՐ ԱՍԻ՝ « ԱՍՏՈՒԱԾ ԶԸՄԱՐԻՏ ՅԱՍՏՈՒԹՈՅ ԶԸՄԱՐՏԷ՝
ԺՆՈՒՆԴ , ԵՒ Ո՛Չ ԱՐԱՐԵԱԾ »

Հասարակք օրինակք համաձայն մերումս այսպէս ունին . իսկ ոմն 'ի
Հին օրինակաց գրէ՝ « Ճնեալ և ոչ արարեալ » :

Եւ քանզի Արիոս զհայր միայն ճշմարիտ նոճ
ասէր , իսկ զորդի արարած 'ի հօրէ 'ի յաւիտենից , և

օտար ՚ի նորուն բնութենէ . չարաչար մեկնելով զբանն քի՛ որ ասէ . « Զի ծանկցեն զքեզ միայն ճշմարիտ ւած » (Յովնանն . Ժէ , 3) : Ապա սուրբ հարբ դաւանելովն զորդի ծնունդ հօր , յայտ արարին՝ թէ ւած ճշմարիտ է , և ոչ արարած ինչ նորա : Ուստի դաւանի եկեղեցիս հայաստանեայց ըստ ուղղափառ վարդապետութե սրբոյ Լուսաւորչին . « Զբանն աստուած որդի ծնունդ ՚ի հօրէ յառաջ քան զյաւիտեանս , առանց սկզբան ժամանակի » (Ագաթանգեղոս) :

Իսկ եղանակ ծննդեան նորա ՚ի հօրէ , որպէս և ելման հոգւոյն սրբոյ , է գաղտնիք գաղտնեաց , և անհաս յարարածոց : Քանզի ասէ սուրբ Լուսաւորչին՝ « Ոչ արարածք կարեն քննել զարարչն . և ոչ զանդուած զզանգիչն գիտէ » (Ագաթանգեղոս) : Գրէ և աստուածաբանն՝ « Լսես ծնունդ , զորպէսն մի քններ . լսես՝ եթէ հոգի յառաջ եկեալ ՚ի հօրէ , զորպէսն մի հարցափորձեր » (Յատորս , ՚ի Բանն յաշագո հատարոյ) : Լրանելի վարդապետն մեր Եղնակ . « Քանզի մի այլ էութիւնն անքնին է և անհաս բնութեամբ . առ նորա անքննութիւնն՝ ընծայութի անքննութեան մատուցանելի է , և առ էութիւն նորին դաւանութիւնը գիտութեան՝ և ոչ քննութեան » (Ճատ , ա) :

ԶԻՆՉ Է ԱՍԵԼՆ «ՈՐՈՎ ԱՄԵՆԱՏՆ ԻՆՉ ԵՂԵԻ ՏԵՐԿԻՆՍ ԻԵ Ի ՎԵՐԱՏ ԵՐԿՐԻ՝ ԵՐԵԻԵԼԻԷ ԵՒ ԱՆԵՐԵԻՈՏԹՔ»

Օրինակն մեր ընդ հին օրինակն ընթեռնու «Յերկինս և յերկրի» :

Որպէս ՚ի սկզբանն դաւանեաց զհայր՝ աստուած արարչագործ երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից . ըստ նմին օրինակի և աստ խոստովանի զորդի արարչագործ ամենայնի այնոցիկ , ըստ այնմ՝ « Ամենայն

ինչ նովաւ եղև» (Յ՝ շննո . ա , 2) : Լա թէ՛ «Նովաւ հաստատեցաւ իմ , որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի , որ երևին , և որ սչն երևին» (Սղոսացոց . ա , 16) :

Իսկ արդ՝ իմ էական և արտաքին գործողութեան աստուծոյ հօր՝ որպէս համագործ և համիշխան է որդի , նոյնպէս և ամենասուրբ հոգին . զի մի կամք , մի զօրութիւն , և մի իշխանութիւն է յերեսին . ազա և արարչութեան աշխարհի՝ որ է գործողութիւն էական և արտաքին , արարչակից և համագործ է հոգին սուրբ . ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն՝ « Հաւատով ճշմարտեցուք ՚ի մի աստուած հայր և տէր և արարիչ ամենայնի . և ՚ի միածին որդին՝ որ ՚ի հօրէ , և առ հօր , և ընդ հօր . և ՚ի սուրբ հոգին՝ որ ՚ի նոյն էութենէ . և նովաւ արար զամենայն արարածս» (Աճառեմնիք) :

ՎԱՍՆ Է՛Ր ԵԱՌԱՋԱԳՈՅՆ ԴԱՍԻ ՀԱՅՐ ՔԱՆ ԶՈՐԴԻ ԵՒ ԶՈՐԻՆ ՍՈՒՐԸ

Ամենայն էական և բացարձակ կատարելութիւնք հասարակ են երկոց աստուածային անձանց . և չիք ՚ի նոսա մեծութիւն կամ յառաջնութի ըստ բնութեան կամ ըստ զօրութեան , կամ ըստ այլ կատարելութեան , վասն որոյ նախաթուեցի հայր , այլ ամենայնիւ են հարթ և հաւասար . մի տէրութիւն , մի մեծութի , և մի աստուածութի է յերեսին : Իայց քանզի զոյ կարգ սկզբան կամ պատճառի . զի հայր է պատճառ համագոյոյն , որդւոյ ծննդեամբ , և հոգւոյն սրբոյ բոլմամբ . սմին իրի յառաջագոյն դասի հայր : Օ այս կարգ պատճառի , որ է ՚ի ներքս ՚ի յիւժ՝ նշանակեաց տէրն մեր , յասելն՝ «Մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ» (Մատթեոսի . իւր , 19) : Լա քանզի սչ է հայր մեծ .

ըստ բնութեան քան զորդի, այլ հաւասար նմին. զի թէ մեծ իցէ հօր բնութիւն, ահա զնոյն առնելով զբնութի որդի և հօգի, ամենայն իրօք են մեծ և նորին:

Այս միայն ըստ կարգի պատճառին մեծ ասի հայր Ուստի ասէ Աստուածաբանն՝ «Բայց թերևս դիպիցէ և յուսումնասիրաց ումեքէ յաղագս այսոցիկ բան՝ խուզել. զիմորդ և մեծ հայր քան զորդի. և հաւասար որդի հօր. քանզի թուին ոչ իմն հանդիպել իրերաց այսորիկ. . . վասն զի նոյն նմին նմանապէս մեծ և հաւասար գոյ անկարելի է. արդ՝ ոչ է յայտ, զի մեծն է պատճառին, և հաւասար՝ բնութեանն» (Ի Բանն՝ յաղագս հասարոյ, և ՚ի Բանն որդոյ: Ե-ի Տէրմո-լիւն՝ «Բայն Գիտնէ-տիտի, ՚ի Լո-շէ առ Տիմո-լիւն. ա, Բան. գլ, է.) թէ՛ «Ոչ թիւ է, և ոչ կարգ. . . ոչ որդիութիւն և ոչ հայրութիւն, և ոչ այլ ինչ յորոց ՚ի մեղս են, կամ այլ ումեք յէիցս գիտելի եղեալ»: Ասէ մեծն Մաքսիմոս՝ «Արդ լինի ՚ի մէջ զանազանից. իսկ աստուած կատարելապէս մի և նոյն աստուած. մինչ զի յաստուածային անձնաւորութիւնան, և ոչ մի՛ ոչ է կարգ պատուոյ, բայց միայն սկզբան և երման»: Գրէ և Շնորհալին առ Մանուէլ կայսր. «Զի թէպէտ և մեծ ասացաւ հայր. յաղագս պատճառին է մեծ և ոչ ըստ բնութեանն»: Այս յայտ է, թէ միայն վասն կարգի պատճառի՝ կամ սկզբան հայր յառաջագոյն դասի քան զորդի և զհօգին սուրբ. զի այլով ամենայն կատարելութեամբ են նոյն:

Յայս վայր զաստուածութենէ որդւոյն. յետ այսորիկ կարգի դաւանութիւն վասն մարդեղութե նորա այսու օրինակաւ:

ՈՐ ՅԱՂԱԳՍ ՄԵՐ ՄԱՐԴԿԱՆ ԵՒ ՉԱՄՆ ՄԵՐՈՅ ՓՐԿՈՒԹԵԱՆ
Ի ԶԵԱԼ ՅԵՐԿՆԻՑ ՄԱՐՄՆԱՅԱՒ

Մինչդեռ առաջի կայր սուրբ հարց զչարչարա-
նայց և զմահուանէ որդւոյն աստուծոյ կարգել զխոս-
տովանութի, զմարմնանայն և զմարդանայն եղին հիմն
ամենայն մարդավայելուչ կրից. զի ոչ որ զչարչարանս և
զմահ յաստուածութիւն անդր ՚ի վեր տանկցի, այլ այ
մարդացելոյ տնօրինաբար կրել հաւատասցէ:

ԶԻ՞ՆՉ ԵՐ ՀԱՐԺԱՌԻԹ ԵՒ ՉԱՏՃԱՌ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԻՆ

Փրկութիւն մարդկայինս բնութեան, եղև շար-
ժառիթ մարդեղութեան բանին, զի այսպէս առաջադ-
րէ մեզ եկեղեցի սուրբ ՚ի հաւատալ. «Որ յաղագս մեր
մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից
մարմնացաւ». ըստ այնմ՝ «Եկն որդի մարդոյ խնդրել և
կեցուցանել զկորուսեալն» (Ղ՝-իսսն. ԺԷ, 10):

Իւանզի բնութիւնն մարդոյ ապականեալ սկզբնա-
կան մեղօք՝ պէտս ունէր նորոգութեան. զի եթէ չէր
ապականեալ, չէր հարկ մարմնանայոյ բանին. ըստ որում
ասէ և Առաքեալն՝ «Հաւատարիմ է բանս և ամենայն
ընդունելութեան արժանի, զի յիսուս քրիստոս եկն
յաշխարհ փրկել զմեղաւորս» (Մ, Տիմոթէոսի. Մ, 15):

Արդ՝ ոչ ցուցանեն դիրք, թէ մարմնանայր քե
վասն ներդործական մեղաց մարդկան՝ եթէ աղամ չէր
մեղուցեալ. կամ առ ՚ի պատուել զբնութիւնս մեր:

Ապա ջնջումն սկզբնական մեղաց եղև գլխաւոր
շարժառիթ մարմնառիկ տնօրէնութեան փրկչին. ըստ
այնմ՝ «Տնջել փութայր հայրն փառաց, զգիր պարա-
եաց մեր յանցանաց. որով (այսինքն վասն որոյ) զգեցաւ

որդին գթած՝ ՚ի վեց դարուն զմարմին մեղաց» (Եր 7, 2, «—ր)։

Այս էր ասելն սրբոյ Մկրտչին՝ «Ահա՛նախկ գառն նոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (ՅՎՀճՆՆՈՒՄ, 29)։ Ս՛եծն Գրիգոր տաթե՛ ասելն «Յաղագս մեր մարդկան» վերաբերէ առ մարդեղութիւնն. իսկ ասելն «Որ վասն մերոյ փրկութեան» առ չարչարանն և մահ. զի ասէ՛ «Վասն մեր մարդկան մարմնացաւ, և վասն մերոյ փրկութեան խաչեցաւ» (Լճ. Պարսոյ)։

ԱՐԴԵՕ՛Ք Ո՛Չ ԿԱՐԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԱՌԱՆՑ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ՈՐԴԻՈՅՆ ԱՅԱԼՁԻ ՓՐԿԵԼ ՁՄԱՐԴՆ

Արցարձակ կարողութի՛ն աստուծոյ ո՛չ ամփոփի առ եզր ինչ, այլ ձգի յամենայն կարելիս, որք ո՛չ բերեն զհակասութիւն. քանզի կարելի էր նոյ ներել ըզյանցանս աշխարհի, որ ընդ գէմ իւր էր մեղուցեալ. կամ այլով եղանակաւ փրկել, որպէս և հաճոյ ինքեան թուէր։ Ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն՝ «Ո՛չ եթէ առանց իւրոյ մահուանն՝ կենդանութիւն տալ մեզ ո՛չ կարէր. այլ զի մեծացուցէ զարարածս իւր՝ իւրով յանարդութիւն իջանելովն. զի զանարգս բարձրացուցէ՛ իւրով իբրև զմեզ լինելովն» (ԱԳՄԻՆՓԷՂՈՍ)։

Ն,ա զի՛ փրկութիւնն աշխարհի, վասն զի է սրտաբին գործ նոյ, ո՛չ է գործողութիւն հարկաւոր, այլ ազատ և կամաւոր. իսկ ազատ գործողութեանն հնար է լինել այլազգ քան զոր եղևն, կամ բնաւ իսկ ո՛չ առնել։

ԱՄՆ Է՛Ր ՊԻՏՈՅ ԵՂԵՒ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆՆ

Պիտոյ եղև բանին մարմնանալ, զի ցուցցէ զբարեբարութիւն, զզօրութիւն, և զարդարութիւն իւր։

Լ, ցոյց զբարերարութիւն իւր, զի իձ զորդին իւր առաքեաց յաշխարհ վասն փրկութեան մերոյ . ո՛չ յազազս բարւոյ գործոյ մերոյ շարժելով ՚ի փրկել . այլ միայն վասն բարեգութեան և մարդասիրութեան իւրոյ . ըստ որում «Այնպէս սիրեաց իձ զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ» (Յովհաննոս . Գ , 16) : Եւ թէ՛ «Ճանեան՝ եթէ դու առաքեցեր զիս» (Յովհաննոս . Ժէ , 25) :

Լ, ցոյց զկարօղ զօրութիւն իւր, որ զարարածական ստորանկեալ բնութիւնս մեր ընդ անեղական բնութիւն աստուածութեանն միաւորեաց, ըստ այնմ՝ «Առաքեաց իձ զորդի իւր, որ եղև ՚ի կնոջէ» (Գաղատացոց . Դ , 4) : Սինչ զի ինչ մարդանալ, և մարդոյն աստուածանալ, և միով երկրպագութեամբ երկրպագիլ յերկնաւորաց և յերկրաւորաց . ըստ այնմ՝ «Յանուն յիսուսի քրիստոսի ամենայն ծուներ կրկնեսցի» (Փիլիպոյեցոց . Բ , 10) :

Լ, ցոյց զարդարութիւն իւր կատարեալ հատուցմամբ . զի որովհետև սոսկ մարդն՝ ըստ որում արարած, որչափ և լինէր արդար, ո՛չ էր կարօղ վճարել ըստ արժանեաց՝ ներգործութեամբ ապաշխարութեան և սիրոյ, փոխանակ անարգանացն զոր հասուցեալ էր իշ մահու չափ մեղօք . ապա պատշաճ եղև ինչ մարդանալ . որպէս զի ըստ աստուածութեանն՝ ունիցի զկարողութիւն վճարելոյ զգինսն . և ըստ մարդկութեանն՝ ըզպարտս հատուցանելոյ, ըստ որում՝ «Եղբայր ո՛չ փրկէ, և ո՛չ փրկէ մարդ, և ո՛չ տայ աստուծոյ զփրկանս իւր, և զգինս փրկանաց անձին իւրոյ» (Սաղմոս . Խը , 8) :

Իսկ քրիստոս՝ վասն զի էր արդար անարատ զստեալ ՚ի մեղաւորաց՝ և բարձրացեալ քան զերկինս, կարաց վճարել ըստ ճիշդ արդարութեան . զարբւն իւր

սուրբ՝ որ վասն միաւորութեան ընդ բանին ունէր անհուն արժողութիւն , տալով փրկանս վասն մեր . ըստ այնմ՝ « Զոր յառաջ եղ աստուած ՚ի քառութիւն ՚ի ձեռն հաւատաց արեամբ նորա ՚ի հանդէս արդարութե նորա , վասն թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց » (Հոովճայեցոց . Գ , 25) : Ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն՝ « Եւ զի՛նչ այն իցէ՝ որ ասնն , թէ կատարեաց զկամս հօր իւրոյ . եթէ ոչ զի իւրով մարմնովն բարձրացուցէ զանուն յաղթութեան կատարման արդարութեան » (Ափսեանգեղոս) :

Եպաբէն կամքն հօր աստուծոյ էր մահուամբն քրիստոսի փրկել զմարդիկ , որպէս և պատուիրեալ էր նմա . բայց ըստ իրաւանց արդարութեան պարտ էր քի , որ երաջխաւոր եղև մեղաց մարդկան , արդար վճաւրումն առնել . և քրիստոս կատարեաց զկամս հօր՝ ըմպելով զբաժակ մահուն ՚ի խաչին . և արդար իրաւամբ շահեցաւ զփրկութիւն մարդկան . ըստ այնմ՝ « Ռահիւլուսոյ պատուիրանին , արդարութեան ճանապարհին , բարձրանալով քո ՚ի խաչին , բարձրացուցեր զմեզ ՚ի յերկինս » (Շնորհաւի , Ժամագիրք) : Եւ թէ՛ « Ի խաչին մեղս սպաներ , և զդատակնիք մահու լուծեր » (Շնորհաւի , Ժամագիրք) :

ՎԱՍՆ Է՛Ր ՔՐԻՍՏՈՍ Ո՛Չ ՎԱՂԱՂԱՅԻ ՅԵՏ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՅՆ ՄԱՐՄԻՆԱՅԱՒ

Օ որորինակ ճնօղք ըստ մարմնոյ զգեռածին որդիս իւրեանց յառաջագոյն կաթամբ սնուցանեն մինչև փոքր մի զարդանալ . և սպա զհաստատուն կերակրոյ մատուցանեն նոցա զդարման : Եւ մանկածուբ նախ զխաղառութեանցն հեղենայս՝ և զընթեբցուածոցն վաք

ժուժիւն աշտկերտելոցն ուսուցանեն , և ապա զպէս պէս գիտութեանցն աւանդեն նոցա զգաստ : Օ ի և բնութիւնն իսկ ոչ առ ժամայն տայ մարդոց զարգանալ ըստ դործարանայն կիրառութեան և ըստ բանին տրամախոհութեան . այլ կարգաւ իմն առաջնորդէ տակաւ առ տակաւ իբր ընդ աստիճանս :

Այսպէս և աստուածային իմաստութիւնն պարտ վարկաւ , զի մարդկայինս ազգ առ ժամանակ մի ՚ի բնական և ՚ի դրաւոր օրէնս դաստիարակեսցի , և ապա բարձրագունիցն և անհաս խորհրդոց մարդեղութեանն լինիցի իրազգաձ . ըստ որում՝ « Ապա օրէնքն դաստիարակիք եղեն մեզ ՚ի քս յս , զի ՚ի հաւատոցն արդարասցուք . այլ իբրև և կին հաւատքն , ոչ ևս ընդ դաստիարակաւեմք » (Գաղաթաղոց . գ , 24) :

Այս դարձեալ զի որք ընական օրինօքն վարին , ծանկիցեն եթէ գործք բարիք սոսկ զօրութեամբ բնութեան գործեալք , ոչ կարեն արժանաւորել զմարդ յաւիտենական կենաց , և խոհական խորհրդով պատրաստ զանձինս յարդարեսցեն ընդունելութեւ աստուածային շնորհաց , որ յանպարտական բարերարութենէ իւրմհանդերձեալէր ՚ի թիկունս հասուցանել մարդկայինս տկարութեան ՚ի դէպ ժամանակի օգնականութեան մարդեղութեամբն քրիստոսի : Այսոց միջի խրայէլեան ազնիք՝ խրատեալք գրաւոր պատուիրանաւ , զգործ առեալ գիտացեն , եթէ ՚ի գործոց օրինաց ոչ արդարանայ որ առաջի նոյ , այլ հաւատովքն քրիստոսի , զոր առաքելոց է աստուած ՚ի լրման ժամանակի . զի և Աբրահամ ոչ ՚ի գործոց օրինաց՝ այլ ՚ի հաւատոցն արդարացաւ : Առանկիցին ևս ՚ի կանխասացութենէ՝ մարդարէից զժամանակ դալատեան նորա . զձնունդն կուսա-

կան ՚ի Բէթղէէ՛մ Հրէաստանի յազդէն Յուդայ . զկտտու
րածն մանկանց . զփախուսոն յԵգիպտոս . զվաճառիլն
ընդ երեսուն արծաթոյ . զանարգաբար չարչարաննն . զան
պարտական մահն կախեալ զփայտէ . զինքնազօր յարու-
թիւնն . զնձապէս համբարձումն . զգալուստ նորա ՚ի
դատաստան . զայս ան և զոր այլ ևս են փրկագործ անօ-
րէնութեան նորա սքանչելի խորհուրդք , կենդանի բար
բառով լուեալ , և ՚ի դիրս հանապազօր ընթերցեալ ,
ակնապիշ լինիցին նմա որպէս առ փրկիչ և բարերար .
որպէս զի ՚ի դալստեան նորա յաշխարհ՝ մի օտարացին
՚ի նմանէ . այլ իբրև վաղածանօթ ընկալցին զնա սիրով ,
՚ի նա հաւատասցեն , և նմա ծառայեսցեն . հաստատ-
եալ ՚ի միտս՝ թէ նա է միջնորդն ան և մարդկան , որ
կարէ փրկել զտիեզերս ՚ի մեղաց , և տալ զկեանս յա-
ւիտենականս : Աստի ասէ սուրբ Առսաւորիչն՝ « Ընդէ՛ր
արդեօք յերկայրեալ միտմինն՝ այնչափ ներշնթիւն ա-
բարածոյն հասուցանէր . եթէ ոչ նախ ազդ արարեալ
յառաջագոյն ընդերկանս առնիցէ , զի մի յանկարծ
երևեալ անծանօթ՝ անընկալ լիցի . այլ իբրև հայցողաց
և սպասողաց՝ եկեալ ծանօթս տայցէ » (Ագալեանգեղոս) :

Թող զայս . զայլ ևս յարմարական պատճառս յա-
մենայոյ մարդեղութեանն տեսանեմք ՚ի լինելն մտա-
խոհ . իբր զի եթէ որ յախտ լերդացաւութեան իցե-
անկեալ . և քաջարուեստ որ բժիշկ տեսեալ զայն ՚ի
գութ շարժիցի . և ՚ի վերայ հասեալ վաղվաղակի ՚ի լա-
ւութիւն անցէ . ոչ անբժշկելի զհիւանդութիւն իբր
վարկանի բժշկեալն , և ոչ բժիշկն ճարտար . կարծիս
առեալ՝ եթէ դիւրագին և թեթեալոյն գեղով որոց
մերձն կան՝ դառնալ ունել առողջութիւնս : Իսկ եթէ
թողուցու զամս բազումս ՚ի նոյն ջերանիլ , մինչև անցոյս

լինել նմա 'ի կենաց . և ապա եկեալ առողջացուցէ , այն՝ ցուցանի բժիշկ քաջահմուտ՝ այլ ոչ բազմագութ . զի բժշկեայն հասեալ 'ի ծերութիւն , չունի այնուհետեւ ընդ երկար վայելել 'ի կենդանութեան . ապա եթէ 'ի դէպ ժամանակի եկեալ՝ առողջացուցէ , հմուտութիւն նորա և բարեգթութիւն երևի միանգամայն :

Եւ յպէս և տէրն մեր՝ եթէ խկ և խկ յանկանել մարդոյն յապականութիւն մահու՝ եկեալ էր յաշխարհ , և մարդեղութեամբ իւրով վերածեալ էր յառողջութիւն . մարթ էր 'ի կարծիս լինել , թէ թեթեալ գոյն դեղովք բնական կամ գրաւոր օրինաց չէր գրծուարին նմա գտանել զբժշկութիւն : Եւ թէ մերձ 'ի կատարած աշխարհի եկեալ , սակաւք գտանէին վայելողք 'ի կենսածիր շնորհ մարդեղութեանն . սմին իրի ոչ վաղվաղակի և ոչ յոյժ անաղան եկն յաշխարհ փրկիչն մեր , այլ 'ի դէպ ժամանակի օգնականութեան :

Եւ յու օրինակաւ խօսի և երանելին Եզնակ , առտէ՝ « Զգարուստ որդւոյն իւրոյ յայնմ ժամանակի պատշաճեաց (նծ) . յորում գիտէր թէ օգուտ լինելոց է : Եւ թէ բժիշկք ըստ պէսպէս հիւանդութեանցն ազգի ազգի դեղս ատաղցելոցն մատուցանեն . զի որ 'ի սկզբն բան ցաւոցն դէպ իցէ , զայն 'ի սկզբանն մատուցանեն . և որ յընդմիջելն՝ զայն 'ի միջոցին . և որ 'ի պառաւել ցաւոյն , զայն հուսկ յետոյ . ո՞րչափ ևս առաւել ամենահնարն , յորմէ ամենայն հանգամանք կարողութեան բաշխեալ են , 'ի դէպ ժամանակի առնէ՝ զոր առնէ : » (Ճառ , 17) :

Իստ սմին սարասի մարթ էր և զայլ պատճառս 'ի մէջ մատուցանել . բայց ամենեքին 'ի տոյն վերածին , եթէ նծ կանխադէտ իմաստութեամբն այնպէս սահ-

մանեալ էր զժամանակ մարդեղութեանն ՚ի յաւիտե-
նից . որպէս և եղևն ՚ի ժամանակի . ըստ որում՝ «Իբրև
եկն լրումն ժամանակին , առաքեաց Ինձ զորդին իւր ,
որ եղև ՚ի կնոջէ , և եմուտ ընդ օրինօք , զի զնոսա որք
ընդ օրինօքն իցեն , գնեսցէ :» (Գաղաթայց . Գ , 4) :

ՎԱՍՆ Է՞Ր ՈՐԴԻՆ ՄԱՐԾՆԱՅԱԻ

Արկին է գործողութիւնն ՚ի յաստուած . էական՝
և ծանօթական : Աականն է առնելութիւնն անցանօղ և
արտաքին . և վերաբերի անխտիր առ հայր և յորդի և
՚ի սուրբ հոգին : Ծանօթականն է առնելութիւնն մնա-
ցօղ և ներքին . և վերաբերի յատկապէս առ մի ոմն
յաստուածային անձանց :

Եւ քանզի մարդեղութիւնն է առնելութիւնն ար-
տաքին , ներգործաբար առեալ՝ վերաբերի անխտիր առ
հայր և յորդի և ՚ի սուրբ հոգին : Առ հայր , ըստ այնմ՝
«Աստուած զորդին իւր առաքեաց ՚ի նմանութի մարմ-
նոյ մեղաց» (Հովհայեց . Գ , 3) : Առ որդին , ըստ
այնմ՝ «Ելի ՚ի հօրէ , և եկի յաշխարհ» (Յովհաննո .
ԺԴ , 28) : Առ հոգին , ըստ այնմ՝ «Որ ՚ի նմայն ծնեալ
է , ՚ի հոգւոյն սրբոյ է» (Մատթէոս . Գ , 21) : Ի այց կրա-
ւորաբար առեալ՝ վերաբերի առ որդին . զի նա միայն
մարմնացաւ :

Արդ՝ որպէս արարչութիւնն աշխարհի էր գործ
ամենակալ կարողութեան . այսպէս և նորողութիւնն
աշխարհի էր գործ ամենադէտ իմաստութեան . իսկ
իմաստութիւնն ինչ հօր՝ է որդի . ըստ այնմ՝ «Բրիատոս
աստուծոյ զօրութիւնն և ինչ իմաստութիւնն» (Ս , Արմ-
Իաց . Գ , 24) :

Ապա կարի դէպ և պատշաճ եղև որդւոյ , «Յո-

բում ամենայն դանձք խմաստութեան և դիտութեան ծածկեալ կան՝ ըստ առաքելոյ (Սղոսացոց, Բ. 3) . մարմինն զդեմուռ և մահու չափ չարչարանօք նորոգել զաշխարհ յապականութենէ մեղաց . և միջնորդութեամբ սրբարար խորհրդոց՝ ժառանգս առնել զմարդիկ յաւիտենիցն կենաց:

Ապա եկն յաշխարհ որդին միածին ոչ միայն որպէս բժիշկ ամենարուեստ առողջացուցանել զազգ մարդկան , տալով դեղ ապաքինիչ զմարմին իւր , և օշարակ կենդանութեան զարիւն իւր սուրբ . այլև որպէս խմաստուն դաստիարակ խրատել և ուսուցանել զճանապարհն կենաց և փրկութեան . ըստ այնմ՝ «Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք . ոչ որ դայ առհայր , եթէ ոչ ինե » (Յովհաննոս . ԺԴ , 6) :

ՁԻՆՁ Է՝ ՈՐ ԱՍԷ . ԻՋԵԱԼ ՅԵՐԿԵՒՅ ՄԱՐԲՐԱՅԱԻ ՄԱՐԿԱՅԱԻ

Աջանէն՝ ոչ է աստ ըստ սեպհական նշանակութե իւրում առեալ . այսինքն լինել յայնմ տեղւոյ՝ ուր ոչն էր յառաջագոյն . որ յասուկ է ստեղծուածոց , զի Են հունարբ . քանզի ասի աստ զաստուածութենէն՝ քրիստի քս ըստ որում անձ է յամենայն տեղիս . վասն զի է անսահման . ըստ այնմ՝ «Մի՛ թէ զերկինս և զերկիր ես ոչ ընում , ասէ տէր » (Երեմիայ . ԻԳ , 24) : Ապա առեալ լինի անցատուկ նշանակութեամբ , այսինքն փոխանակ յայտնի լինելոյ ՚ի տեղւոյ ուրեք նոր ներգործութիւն . ըստ այնմ ասի՝ «Եկայք իջցուք և խառնակեցուք անդ զլեզուս նոցա » (Ճննդոց . Ժ , 7) : Ուր խառնակութիւն լեզուաց ցուցաւ ամենարաւական զօրութիւնն այն : Եւ թէ՛ «Եջ տէր ՚ի լեառն Սինա ՚ի գլուխ լեբին » (Եւեյ . ԺԲ , 20) : Ուր աստուածահրաշ փառօք հրատա-

րակեալ եղև օրէնքն այն՝ Ուստի և իջանել ասի հոգւոյն սրբոյ ՚ի դասս առաքելոց . այս է՝ յայտնի լինել ՚ի նոսա ներգործութեամբ պէտպէս շնորհաց : Եւ դալ ասի այն՝ մինչ լուսաւորէ զմիտս խնդրողաց յայանութի գաղանի խորհրդոց , ըստ այնմ՝ « Եթէ որ սիրէ զիս՝ զբանն իմ պահեսցէ , և հայր իմ սիրեսցէ զնա , և առնա եկեսցուք » (Յովհաննու . ԺԴ , 23) :

Եւստի յասելն՝ « Իջեալ յերկնից » ցուցանէ ըզ- յայտնի լինելն որդւոյն աստուծոյ ՚ի յերկրի , նոր և սքանչելի ներգործութեամբ : Եւ զի՛նչ քան զայս նոր և սքանչելի , քան զմիաւորութիւնն այն ընդ մարդկու- թեանս . արարչին՝ ընդ արարածս . կերպարանին այն՝ ընդ ծառայի կերպին : Եւ և ինքն տէրն . « Իջի ես յերկ- նից , սչ զի զկամս իմ արարից , այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս » (Յովհաննու . Է , 38) : Ուր գեղեցիկ խորհրդածէ սուրբ Լուսաւորիչն , յասելն՝ « Եւ զի՛նչ իցեն կամք հօր նորա . եթէ ոչ՝ զի որդիս մարդկան զմերթեալսն ընկալցի միւսանգամ յարքայութիւն , և զանկեալսն ՚ի ներքոյ մահու , կանգնեսցէ ՚ի կենդանու- թիւն » (Ագաթանգեղոս) :

Իարձեալ իջանելն յերկնից՝ ՚ի դէմս ածէ մեզ զխոնարհիլն որդւոյ ՚ի հայրական փառաց անձութեանն ՚ի ծառայական պատկեր . ըստ այնմ՝ « Որ ՚ի կերպարանս այն է , ոչինչ յախշտակութի համարեցաւ զլինելն հա- ռասար այն . այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծա- ռայի առեալ » (Փիլիպոսի . Բ , 6) :

Հասելն՝ « Մարմնացաւ » այսչափ ինչ յայտ առ- նէ , թէ էառ մարմին զգալի . որ անխտիր կարէ նշանակել զնորրն կամ զօրեղէն , և զթանձրն կամ զմեղէն . նա զի՛ սչ որոշակի նշանակէ զմարմինն բանական հոգւոյ

ունակ . այլ տարածութիւն ինչ կամ զանդուած ան-
տարբեր և սեռական:

Իսկ զի սատ առեալ ՚ի բանից աւերտարանչին ,
Թէ՛ « Բանն մարմին եղև » (Յ՝Վ՛անն՝ . . . , 14): Օ որ
ոմանք չարաչար խմացեալ , ասացին նուրբ և օղեղէն
մարմին առնուլ . հայեցեալ ևս՝ զի ՚ի վերայ ծովուն ան-
թաց ոտիւք ընթանայր , և յԱրտեան լերինն ՚ի վերայ
օդոյ ճանսոյարհ հատանէր , առաջօր ինչ համարեցին
զլինել նորա ճշմարիտ մարդ: Առ որս ասէ սուրբն Ալի-
րեղ . « Զի՛նչ օրինակաւ մեռանի ստուեր . աղէ ասս
ինձ: Զի՛արդ արդեօք յարոյց զբրիստոս հայր զբա-
ւերն և զառաջօրն և զմահու կապանաց ո՛չ ըմբռնելին »
(Պարսպ):

Իսկ այլք ոմանք յաղանդաւորաց ասացին , Թէ՛
բանն մարմին մարդկային միայն էառ , այլ ո՛չ զհոգի
բանական . ուսուցանելով Թէ՛ բանն աստուած եմուտ
՚ի տեղի բանական հոգւոյ և մտաց . և այսու օրինակաւ
Ժխտէին զլինելն նորա կատարեալ մարդ: Ուստի ասէ
սուրբն Ալիւրեղ . « Ո՛չ մարմին միայն զգեցաւ առանց
հոգւոյ բանականի , այլ ծնաւ ըստ ճշմարտութեան ՚ի
կնոջէ , և երեւեցաւ մարդ կենդանին և էն և մշտնջենա-
ւորակիցն հօր աստուածն բան , զկերպարանս ծառայի
առեալ: Եւ է որպէս լծութեամբն կատարեալ , այս-
պէս և մարդկութեամբն կատարեալ » (Պարսպ):

Ուստի առ Տարճաշառն յարէ իբրև բացայայտիչ
զՏարճաշառն . զի մի դուցէ դք ՚ի կարծիս անկցի , Թէ՛
զմարմին առանց հոգւոյ էառ , այլ զմարմինն հոգւոր .
զի աստուած գորով բանն՝ հաւատասցի մարդ կատար-
եալ ճշմարտապէս:

Իսկ սուրբն Ալիւրեղ զերկաքանչիւր ձայնրս Տարճ

նաչաւ և Տարգաչաւ ՚ի նոյն միտս խմանայ . իբր զի Տարճաչաւն ՚ի մասնէ առեալ զանուն՝ խելամտական ձեռով դնի փոխանակ ձայնիս Տարգաչաւ ըստ սովորական սծոյ սուրբ գրոց . ասէ , « Օ խաբոյ եղև մարմին բանն , կարևոր է տեսանել . արդ նախ աստուածայինն գիր յարմարի մարմին անուանէ զմարդ . և որպէս ՚ի մասնէ առեալ՝ ամենայն կենդանւոյն առնէ յայտնումն . ոչինչ պակաս և ՚ի հոգւոյ միայնոյ է երբէք զի առնէ : Արդ՝ գրեալ է՝ թէ տեսցէ ամենայն մարմին զփրկութի աստուծոյ : Օ որ և ինքն անուանին Պօղոս , ոչինչ զգացուցի մարմնոյ և արեան . գոչէ առ Իսրայէլ և անուանին Մովսէս . եօթա նասուն և հինգ հոգի իջին հարբն քո Յեզիպոտս . և ոչ որ ուրեք արդեօք , թէ մերկք և առանց մարմնոյ հոգիքն առնէին զիջանելն Յեզիպոտս . այլ և ոչ առանց հոգւոյ՝ մարմնոյն բաշխէր ան առատապէս զփրկութին :

Արդ՝ յորժամ լսիցեմք ՚ի մարմին լինել զբանն . մարդ խմասցուք ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ . և ան գորով բանն՝ եղև կատարեալ մարդ . մարմին առեալ անձնաւոր և մտաւոր » (Պարսպ) :

Անձնաւոր խմս աստ զհոգւորն . զի անձն է հոմանունն , և դնի փոխանակ բանական հոգւոյ եթէ աստ , և եթէ յայլ բազում գիրս :

Օ այս հարևանցի յուշ արարաք , զի մի որ ընթերցեալ զբանս սրբոյն Արարիչ և այլոց հարց՝ որք ըզհոգին բանական անձն կոչեն . մոլորաբար խմասցի զայն փոխանակ անհատ գոյացութեան կամ ենթակայութեան . և համարեսցի ՚ի քս կրկին անձն դո՛ւ աստուածային և մարդկային , ըստ աղանդելոյն՝ Անտորի , որ նշովեալն է յեկեղեցւոյ :



Barth. 1774. 1774.

Viviani 1774.

Великий Царь и все народы
слава и слава твоя

ԶԻՆՉ Է՝ ՈՐ ԵՍԷ՛, «ԾՆԱԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳԷՍ Ի ՄԵՐԻՄՍԱՅ ՍՐԲՈՅ
ԿՈՒՄԷՆ, ՀՈԳՒՈՒՆ ՍՐԲՈՒՆ»

Ըսելովն ծնաւ, զճշմարիտ մարդեղութիւնն ապա-
ցուցանէ. զի մի որ ըստ մոլորութեան երևութական ա-
զանդաւորաց առ աջօր զմարմինն քրիստոսի վարկանի-
ցի. որք ՚ի թիւր միտս իմանալով զբանս տեսաւն՝ որ
ասէ, «Որ էջն յերկնից որդին մարդոյ» (Յովհաննոս. Գ,
13): «Ես եմ հացն կենդանի՝ որ յերկնից իջեալ»
(Յովհաննոս. Է, 51): «Յառաջ քան զլինելն Աբրահա-
մու եմ ես» (Յովհաննոս. Է, 58): «Տեսանիցէք զորդի
մարդոյ, զի ելանիցէ՝ ուր էր զառաջինն» (Յովհաննոս.
Է, 63). և այլն: Ըսէին անպատկառապէս, թէ բանն
յերկնից երբևր զմարմինն, և միայն անց ընդ կուսին իբ-
րև ջուր ընդ խողովակ. ուստի ասէ սուրբն Աթանաս,
«Գաբրիէլ իսկ զգուշութեամբ աւետարանեաց նմա,
ասելով՝ ոչ պարզաբար որ ծնանելոցն է ՚ի քեզ. զի մի
արտաքուստ մտեալ ՚ի նա մարմինն կարծիցի. այլ ՚ի
քէն, զի ՚ի նմանէն բնութեամբ ծնեալ լինիլ հաւա-
տասցի» (առ Եպիփանէն, ՚ի Պարապ):

Օ այս ցնորումն խառնէր ընդ մոլորութեան իւ-
րում և անմիտն Եւտիբէս, ըստ գրեցոյ Շնորհալուոյն,
«Որպէս ասաց՝ ժանան Եւտիբէս, թէ ոչ մարմին՝ առ
խկապէս, այլ առ աջօր՝ անց ընդ կուսին, խողովակի՝
նմանապէս»:

Ըսելովն «կատարելապէս» ցուցանէ թէ նոյն ինքն
բանն հօր՝ որ ՚ի հօրէ ծնեալ էր ՚ի յաւիտենից լոծ
կատարեալ, ծնաւ ՚ի կուսէն ՚ի ժամանակի մարդ կա-
տարեալ: Մարմինն կուսական ոչ անմիտ և անհոգի՝
ըստ անմիտ մոլորութեանն Ապողինարի, այլ հանդերձ

հոգւով և մտօք եզերեաց զճնունդն սքանչելի , ըստ ուղղափառ հարցն դաւանութեան :

Ի ՄԱՐԻԱՄԱՅ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԷՆ

Որովհետեւ բանն լծ միայն յարենէ սրբոյ կուսին էառ նիւթ մարմնոյ իւրոյ՝ անմասն ամենեկին ՚ի գործակցութենէ հօր . սմին իրի անուն մօրն միայն յիշատակի ՚ի հանդանակիս . որով և միշտ կուսութիւն անարատ ճնողին քարոզի ընդ տիեզերս . զի եթէ կարաց կուսութեամբ ճնանիլ , ապա կարաց կոյս մնալ զկնի ճննդեան . և այսու ճնեայն ըստ մարմնոյ՝ անխախտ ըզկուսութի մօրն պահելով լծ գոլ հաւատասցի : Ուստի երգէ եկեղեցի . “Երիս խորհուրդս ստակալիս ՚ի քեզ տեսանի լծածին . յղութիւն անսերմնական . ճնունդ անարատ . կուսութիւն յետ ճննդեան մնալով անապահան” (Շարիան) :

ԱՐԴԵՕ՛Ք ԱՐԺԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԷՆ ԵՂԵՒ ՊԱՏՃԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՅ

Արժանաւորութիւնն է կրկին . ըստ արդարութեան , և ըստ վայելչականութե : Արժանաւորութիւնն ըստ արդարութեան՝ է արդիւնք զուղակ շիռ վարձուց :

Արդ՝ անձնաւորական միաւորութիւնն , որով որդին աստուծոյ առեալ մարմին ՚ի կուսէն , եղև որդի կուսին , է անչափօրէն յարգի , և ոչ որ ստեղծուած կարէ ունիլ զհամաչափ արդիւնս , զի շահեսցի զայն ըստ արդարութեան իրրև վարձ : Ապա և արժանաւորութիւն սրբոյ կուսին՝ ոչ կարաց շահիլ ըստ արդարութեան զաստուածամայրութիւնն :

Վարձեալ՝ արժանաւորութիւն և արդիւնք սրբոց կուսին , որպէս և ամենայն նախահարց յորոց ազգէ ծնաւ քրիստոս , էր ՚ի շնորհաց ապագայ մարդեղութեանն քրիստոսի . զի մարդեղութիւն բանին է սկիզբն ամենայն արդեանց :

Արդ՝ եթէ արժանաւորութիւն կուսին պատճառեղև , զի որդին աստուծոյ միաւորեացի ընդ մարդկութեանս , և ընկիցի իւր որդի . արդիւնք աստուածամայրութեան նորա առաւել լինէր քան զարդիւնս մարդեղութեան . և սկիզբն արդեանց անկանէր ընդ արդեամբ , որ է ընդ դէմ :

Արժանաւորութիւն ըստ վայելչականութեան՝ է շնորհք ձրի պարզեալ յողորմութենէն աստուծոյ . որով որ ոչ միայն անհակառակ դռանի վարձուց , այլ և արժանաւորի՝ այսինքն բարեյարմար լինի շահիլ զվարձքս . և զայս արժանաւորութիւն ունէր սուրբ կոյան . որպէս զի յայլ ամենայն կուսից ինքն միայն ընտրեացի յաստուածամայրութիւն . ըստ որում՝ «Իբրև եկն լուսմին ժամանակի՝ առաքեաց աստուած զորդի իւր , որ եղև ՚ի կնոջէ» (Գաղաթացոց . Գ , 4) : Յայտ առնէ ևս . եթէ ոչ արժանաւորութիւն ստեղծուածոյ արդիւնաւորեցաւ զայն անգին շնորհ , այսինքն մարմնանայն բանին , որ սկիզբն է ամենայն շնորհաց . այլ յողորմութենէն աստուծոյ ձրի տուաւ մարդկութեանս . ուստի ասէ՝ «Ոչ ՚ի գործոց արդարութեան զոր արարաք մեք . այլ ըստ իւրում ողորմութեանն ապրեցոյց զմեզ» (Տիմոթի . Գ , 5) : Ուստի ասէ երանելին Իգնատիոս . «Ամենայն ինչ ՚ի գթութենէ և ՚ի խնամոց ողորմութեանն աստուծոյ վճարեցաւ . քանզի չունի այլ որ ինչ ցուցանել պատճառս այսքան խնամոցս , բայց միայն զբաղջրու-

Թիւն կամացն աստուծոյ» (Ի Տէրն-Թեան Ղա-խասու .
է , 58) :

ՋԻՆՉ Է ԱՍԵԼՆ «ՀՈԳԻՌՈՎ ՍՐԲՈՎ»

Ասելովն՝ «Հոգւով սրբով» յայտ առնել , թէ որովհետեւ անսերմն յղութեամբ ծնանելոց էր տէրն մեր , ըստ կանխաձայնութեան մարդարեւին Եսայեաց (է , 14) : Իսկոյն ընդ ասել հրեշտակապետին՝ «Հոգին նբ եկեացէ ՚ի քեզ» (Ղա-խասու . ա , 35) : Իկն հոգին սուրբ և ելից զպակասութիւն սերմնական զօրութեան . և յարենէ սրբոյ կուսին կազմեաց զմարմինն տէրունական ամենայն մասամբ կատարեալ . և նոյն կէտայն անձն բանին աստուծոյ միաւորեցաւ ընդ մարմնոյն . և զոր բնութիւնն ՚ի բազում աւուրս առնէր , հոգին սուրբ վաղվազակի կատարեաց . ըստ այնմ՝ «Որ ՚ի նմայն ծընեալ է , ՚ի հոգւոյն սրբոյ է » (Մաթթէոս . ա , 20) :

ՋԻՆՉ Է՝ ՈՐ ԱՍԷ՝ «ՈՐՈՎ ԷԱՌ ԶՄԱՐՄԻՆ . ԶՀՈԳԻ ԵՒ ԶՄԻՏ , ԵՒ ԶԱՄԵՆԱՅՆ ՈՐ ԻՆՉ Է Ի ՄԱՐԴ ՃՄԱՐՏԱԿԵՍ ԵՒ Ո՛Չ ԿԱՐԾԵՕՔ»

Հասարակ օրինակք գրեթէ համեմատ գրեցելու մն ունին այսպէս , «Որով էառ մարմին , հոգի և միտք , և զամե» : Օրինակն մեր , և այլք ՚ի հին օրինակաց ընթեռնուն «Որով էառ մարմին , հոգի և միտք , և զամենայն որ ինչ է մարդ ճմարտապէս և ոչ կարծիս ունեւրով» :

Որովն յարաբերէ և ցուցանէ զհոգին սուրբ . զի միոխանակ զնելոյ հոգւով սրբով էառ , եղեալ է՝ «ՐՈ՛Ղ էառ» :

Ապաքէն նոյն է ասելն՝ Տարհապա- և Տարգապա- , որպէս ՚ի վերագոյնիդ դաւանեաց . և ասելն «Էառ մարմին , հոգի և միտք» :

Ի այց մի որ վայրապար կրկնութիւնն համարեցի . այլ հարկաւոր յոյժ ընդ դէմ մոլար դաւանութեանն Ապողինարի , որ ասէր թէ բանն ոչ էառ հոգի բանական :

Պնդիցէ որ , թէ ընդէր յաւելու ասել , թէ էառ « Եւ միտք » . ոչ ապաքէն նոյն է իրօք հոգի և միտք , զօրութեամբ միայն զանաղանեալ . ապա յասելն՝ էառ զհոգի , հարկաւ իմացեալ լինէր , թէ էառ նաև զմիտս . որպէս մինչ ասեմք , թէ էառ մարմին մարդկային , անշուշտ իմացեալ լինի առնուլ նաև զարիւն :

Ի այց քանզի Ապողինար իբրև յանդիմանեցաւ յանժխտելի վկայութեանց նորին տեսան՝ որ ասէ , « Տրտում է ոգի իմ մինչև 'ի մահ » (Մատթէոս . Իւ , 38) : Եւ թէ , « Հայր 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ » (Ղուկասոս . Իգ , 46) : Սկսաւ ասել , թէ էառ զհոգի , այլ ոչ զմիտս . մոլորաբար ուսուցանելով , թէ 'ի տեղի մտաց եղև բանն աստուած . սմին իրի կարևոր դատեցին սուրբ հարբ , իբրև բացատրութիւն յարել առ նմին , թէ էառ և զմիտս :

Երգ՝ որովհետև էառ բանն զկատարեալ մարդկութիւն , յայտ է թէ էառ ընդ մարմնոյն և զհոգի . զի մարդկութիւնն յիրում է բաղկացեալ ինչ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ : Եւ թէ էառ զհոգի , ապա ուրեմն և ըզմիտս . զի միտքն է իմացական կարողութիւն բանական հոգւոյ . քանզի զի՛նչ արդեօք իցէ հոգի , եթէ ոչ իմացական միտք , և անձնիշխան կամք :

Ի այց յայն յետին անմտութիւնն եհաս . Ապողինար . մինչ զի անմիտ հոգի ասաց լինել 'ի քրիստոս : Եւ թէ որ ասէր ցնա , թէ քրիստոս ոչ ունի զակն 'ի տեսանել , կամ զունկն 'ի լսել , կամ զլեզու 'ի խօսիլ . գուցէ զսյրանայր նմա և յանդիմանէր . իսկ ինքն զիսորդ յան

զգնեցաւ ասել, թէ քրիստոս ոչ ունի զհոգի բանա-
կան, կամ զմիտս իմացական. յորմէ զհետ գայր ժխտել
նմա զլինելն քրիստոսի կատարեալ մարդ, ընդ դէմ
յայտնի և անսուտ ականդից ատուածաշունչ զբոց .
ըստ որում՝ « Զոր յառաջ խոստացաւ ՚ի ձեռն մարգա-
րէից իւրոց զբովք սրբովք վասն որդւոյ իւրոյ եղելոյ ՚ի
զաւակէ դաւթի ըստ մարմնոյ » (Հովհայէցոց . ա , 2) :

ԶԻՆՉ Է՝ ՈՐ ԱՍԷՆ ԵՆԻ ԶԱՄԵՆԱՅՆ ՈՐ ԻՆՉ Է ՄԱՐԴ՝

Այս կրկնութիւն՝ բացատրութիւն է առաջ-
նոցն . բայց յաւելլու առ ՚ի զգուշութիւն . զի մի գուցէ
յաղանդաւորաց որք, զայս դրական խոստովանութիւն՝
թէ էառ մարմին, և հոգի և միտք, բացասութիւն կար-
ծեսցէ այնմ ամենայնի՝ որոց վերաբերին առ ամբողջու-
թիւն մարդոց և ասիցէ թէ միայն զմարմին էառ, այլ
ոչ զարիւն և զմաղձ և զքերթան, և այլն . Առ միայն
զհոգի և զմիտս, այլ ոչ զկամս և զյիշողութիւնս, ոչ
զկիրս ցնծութեան և արամութեան, վստահութեան և
երկիւզի, և այլն . Սմին իրի յաւելլուածոն նշանակ-
եաց, թէ էառ զամենայն ինչ, որք վերաբերին առ ամ-
բողջութիւն և կատարելութիւն մարդոց :

Կամ ըստ նոր օրինակաց, « Որ ինչ է ՚ի մարդ » .
որ ՚ի նոյն գլխի . Քանզի մարմին և հոգի այլովք հան-
դերձ՝ որով է մարդ, են նաև ՚ի մարդ, այսինքն յեն-
թակայութեան մարդոց . այլ ոչ ամենայն որ ինչ է ՚ի
մարդ, է մարդ :

Ուստի ասելն ՏարԴ՝ ՚ի գէւլ ինձ թուի քան ա-
սելն ՚ի ՏարԴ . զի մարդն է ուղղակի և նշանակէ զկա-
ցուցիչս բնութեան մարդոց և թէ ՚ի բնարանական, և
և թէ ՚ի համարենաբանական կարգի : Եւ ՚ի մարդն է հո-

լովակի , որ նշանակէ նաև զներքնդուենական պատահւմունսն , որք գտանին յոմանս , այլ ոչ յամենեւին . զի չեն այն ինչ՝ որով է մարդ . այլ յետամուտ և օտար ՚ի բնութենէ մարդոյ . իսկ քրիստոս էառ զայն ամենայն՝ որ ինչ է մարդ , այսինքն կացուցիչ բնութեան մարդոյ . այլ ոչ զյետամուտն որք ներքնդուենակաբար պատահին մարդոյ որպիսի հիւանդութիւնն , և այլն :

Այլ էառ նաև զծորումն կերակրոյ , որ է ՚ի մարդ , ըստ վարդապետութեան սուրբ հարցն մերոց , զի այն ոչ է կացուցիչ մարդկութեան , այլ հետեւումն ապականութեան մեղաց . և զի ոչ ունէր զմեղս , ապա և ոչ զհոսումն կամ զծորումն կերակրոյ , որպէս բազմօք ցուցանէ Շնորհալինս Աւ սուրբն Աիւրեղ , “Նախ քան զյաւիտեանս գորով բանն՝ ՚ի նմանէ՝ ծնանիլ ասի ըստ մարմնոյ . քանզի նորա իւր էր մարմինն , առանց մեղաց և հոսանուտ զազրութեանց” (Պարսպ) :

ԶԻՆՉ Ե ԱՍԵԼՆ “ՃԸՄԱՐՏԱՊԷՍ ԵՒ Ո՛Չ ԿԱՐԾԵՕՒՔ”

Օրինակն մեր որպէս ասացաք , ընթեռնու՝ “Ճշմարտապէս և ոչ կարծիս ունելովն” :

Իբր զի բանն աստուած ճշմարտապէս առ զմարմին՝ զհոգի և զմիտս ևս և զամենայն ինչ՝ որք են ամբողջացուցիչ մարդկութեան ՚ի բնական կարգի , այսինքն՝ արիւն , ջուր , մաղձ , մաղաս , մորթ , մազ , եղունդն , ատամունք , և այլն . և եղև մարդ ճշմարիտ և ամբողջ , ըստ սյնմ՝ “Շօշափեցէք զիս և տեսէք . զի ողի՝ մարմին և ոսկերս ոչ ունի , որպէս զիսս տեսանէք՝ զի ունիմ” (Գ՛-իսսո- . ԻԴ , 39) :

Ամի ասել, թէ ոչ առերևոյթս էր մարդեղու-
 թիւն նորա, այլ իսկութիք . և ոչ եթէ յարտաբին կեր-
 պարաննացն խաբեալ՝ մարդիկ կարծիս ունէին և վար-
 կանէին՝ թէ իցէ մարդ . կամ բանն աստուած փոխէր
 զերևակայութիւն նոցա, և տայր նոցա կարծիս ունել՝
 թէ երևեալն մարմնով իցէ մարդ ճշմարիտս Արպէս Ի
 հնուսն Աբրահամ, Յակոբ, Ղովտ, Տօբիթ . և այլք Ի
 նահագետաց կամ Ի մարդարէից՝ զհրեշտակս աստու-
 ծոյ կարծէին լինել մարդիկ . որք կամ մարմնն յողոյ
 կազմեալ, ամենեցուն միօրինակ երևէին իբրև մարդ .
 կամ ինքեանք անփոփոխ կալով յէութեան իւրեանց,
 փոխէին զերևակայութիւնս մարդկան . մինչև կարծիս
 ունել նոցա՝ թէ մարդիկ իցեն . և ուտեն և ըմպեն, և
 խօսինս Աւստի ասաց Ռափայէլ հրեշտակ. « Չամենայն
 զաւուրսն զոր յայտնէի ես ձեզ, ոչ կերայ և ոչ արբի,
 այլ իբրև տեսիլ տեսանէիք » (ՏՂԷԻ՛. ԺԲ, 19) :

Եւ քանզի աղանդաւորք ոմանք յառաջին ժամա-
 նակս առաջօք լինել համբաւէին զմարդեղութիւնն
 քրիստոսի . սորին վասն պարտ վարկաւ եկեղեցի սուրբ
 խոստովանիլ զնա ճշմարիտ մարդ . զի մի ընդ կարծեօք
 և ըստ վարկման հասարակաց՝ մարդ գոլ ծանկցի ըստ
 երևութական աղանդաւորաց . ըստ որոց և սուրբ կոյսն
 Մարիամ ոչ լինի մայր քրիստոսի և աստուածածին, այլ
 ստուերածին :

Ի այց զլինել նորա ծնող ճշմարիտ՝ բանին մարմ-
 նացելոյ, յայտնի աւանդեն աստուածաշունչ զիբք . ըստ
 այնմ՝ « Ո՛չ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ . այլ
 զլաւակէն Աբրահամու բուռն հարկանէ . ուստի պարտ

խի էր նմա ամենայնիւ եղբարց նմանել” (Եբրայեց-
-ոց . Բ , 16) :

ՎԱՍՆ Է՞Ր ՀՈԳԻՆ ՍՈՒՐՐ՝ ՈՐ ԵԼԻՑ ՁՏԵՂԻ ՀՕՐ , Ո՛Չ ԱՍԻ ՀԱՅՐ
ՔՐԻՍՏՈՍԻ

Յատուկ է բնական հօր՝ հաղորդել որդւոյն յէ-
ռութենէ իւրմէ . որպէս և աստուած հայր ՚ի յաւիտե-
նական ծննդեան իւրում հաղորդեաց որդւոյ , ըստ
այնմ “Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի հօրէ իմմէ” (Մատ-
թէոս . Ժ , 27) :

Իսկ ՚ի մարդեղութեան բանին աստուծոյ՝ հոգին
սուրբ ո՛չ ետ ինչ նմա յէռութենէ իւրմէ , այլ միայն
մաքրազարդեաց զարգանդ սուրբ կուսին . և ՚ի մաքուր
արեւնէ նորա կազմեաց զմարմինն տէրունական : Ուստի
ասէ երանելի վարդապետն Իգնատիոս . “Որպէս ՚ի ըս-
կզբան անդ գործակցէր հոգին յառնել զարարածս , և
շրջէր զրգայր և տայր զօրութիւն մասանց արարածոց
երկնել և ծնանիլ . ըստ նմին և աստ գործակից լինի որդ-
ւոյ յարարչագործութիւն աստուածային մարմնոյն”
(Ի Տէկնո-լեան Ղո-խսոս . 38) :

Իւ քանզի հոգին սուրբ իւրով աստուածային զօ-
րութեամբն գործակից միայն եղև ՚ի կազմութի մարմ-
նոյն , և ո՛չ հաղորդեաց ինչ նմա ՚ի բնութենէ իւրմէ ՚ի
գոյացութիւն տէրունական մարմնոյն . վասն որոյ ո՛չ ասի
հայր քրիստոսի :

ՋԻՆՉ Է ԱՍԵԼՆ «ԶԱՐԶԱՐԵԱԼ, ԽԱԶԵԱԼ, ԹԱՂԵԱԼ»

Օրինակն մեր շարժապաւ ընթեանու այսպէս . «Զարչարեալ, այսինքն՝ խաչեալ, թաղեալ» :

Ապարէն ամենայն դառն վիշտք և չարչարանք խաչ ասին , ըստ այնմ՝ «Որ ոչ առնու զխաչ իւր , և ևկեացէ զկնի իմ՝ չէ՛ ինձ արժանի» (Մատթէոս . Ժ , 38) : Լւթէ՛ «Որ քրիստոսեանքն են զմարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կարեօքն և ցանկութեամբքն հանդերձ» (Գաղաթայց . Է , 24) : Լւթէ՛ «Այլ ինձ քաւ լիցի պարծել բայց միայն ՚ի խաչն տեառն մերոյ յիսուսի քրիստոսի , որով ինձ աշխարհ ՚ի խաչ ելեալ է , և ես աշխարհի» (Գաղաթայց . Կ , 14) :

Այս ամենայն աւուրք՝ զոր եկեաց տէրն մեր , էին չարչարանք և խաչ . որպէս ազքատօրէն ծնանիլն յայրին . պատիլն ՚ի խանձարուրս . դնիլն ՚ի մսուր . փախչիլն յԵգիպտոս . պահելն քառասնօրեայ . փորձիլն ՚ի սատանայէ . խուսելն յանապատ տեղի . հալածիլն և արհամարհիլն յազգէն իւրմէ , որք կոչէին զնա մոլեղներալ , դիւահար , օրինազանց , մոլորեցուցիչ , և այլն . էին իբրև նախընթաց պարագայք չարչարանաց խաչին :

Ուստի եթէ տէրն մեր մինչ վասն իւր ասէր , թէ «Պարտ է չարչարիլ քրիստոսի և յառնել ՚ի մեռելոց յաւուր երկորդի» (Գովհաստ . ԻԳ , 46) : Լւթէ՛ մարդարէք վասն տեառն մերոյ ասէին . ըստ այնմ՝ «Զոր մարդարէքն և Մովսէս խօսեցան զհանդերձելոցն լինելոյ , թէ չարչարելոց է քրիստոսն» (Գործոց . ԻԿ , 22) : Լւթէ՛ աւաբեալք քարոզէին , թէ «Պարտ է քրիստոսի չարչարել , և յառնել ՚ի մեռելոց» (Գործոց . Ժէ , 3) :

Յայս ամենայն և յայլ սոյնպիսի բանս՝ ասելովն չարչարիլ, նշանակի բովանդակութիւն տանջանաց՝ որք զուզընթաց եղեն խաչի և մահու նորա . սկզբնաւորեալ ՚ի պարտիզէն՝ ուր հոսէին քրտունքն ոլոռն ոլոռն իբրև զկայլակս արեան մինչև ցաւանդել զհոգին և ցբանալ կողին, և ցպատիլն և դնիլ ՚ի գերեզմանի: Յորս պարունակի կապիլն, կռփիլն, սպտակիլն, դանածեծն լինիլ, հարկանիլն եղեգամբ ընդ զլուխս, բառնալն խաչափայտին, ըմպելն զլեղին . և որ սոսկալին է յոյժ՝ բեւեռակապ պրկիլն ՚ի վերայ խաչին:

Եւս էր և ասելն փրկչին առ Աղէովպանսն . «Ո՞չ զնոյնս պարտ էր չարչարիլ քրիստոսի, և մտանել ՚ի փառս իւր» (Դև-կատ . ԻԴ, 26): Եւ Առաքեալն՝ «Տեւսանեմք զյիսուս վասն չարչարանաց մահուն փառօք և պատուով պսակեալ» (Եբբ․ Եղ․ Բ, 9): Յայս միտ և ՚ի հանգանակի մերում ՚ի դաւանելն զքրիստոս չարչարեալ, յարէ առ նմին մեկնողական շողկապաւ իբրև բացայայտիչ, այսինքն խաչեալ . որով խմանի և մահն իբրև լրումն չարչարանաց նորա՝ այլովքն հանդերձ:

Օ ի եթէ ձայնիւս չարչարեալ՝ ոչ իմացեալ լինելին ամենայն տանջանք և ցաւ, որք զուզընթաց եղեն մեռանելոյ նորա ՚ի վերայ խաչին . պարտ էր ապա ՚ի հանգանակին զամենայն կիրս վշտաց նորա յականէ յանուանէ նշանակել կարգաւ . իսկ եթէ յիշատակ մահու նորա այսպէս, ապա և ճառ մարդեղութեան նորա և տնօրէնութեան ըստ սմին օրինակի: Եւ յայնժամ ոչ ևս լինէր հանգանակ հաւատոյ, այսինքն ըստ մասնեայ հաւարումն հարկաւոր մասանց հաւատոյ, այլ նորոգ գրութիւն բովանդակ աւետարանին:

Ոմն ՚ի հին օրինակաց յաւելուածով ունի զայս

հատուած բանի, զի գրէ՝ «Չարչարեալ, այսինքն խաչեալ, մեռեալ, թաղեալ»։ Իսկ նոր օրինակք, առանց մեկնողական շողկապիս ընթեռնուն այսպէս՝ «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»։ Բայց ընտրելի ևս է ընթերցուած մերուսն օրինակի, որպէս յայտ է ասացելոցս։

ԱՐԴԵՕ՝ Բ ՌԻՂՈՒԹԵԱՄԲ ԱՄԻՅԻ՝ ԱՍՏՈՒԱԾ ՉԱՐՉԱՐԵԱԼ,
ԽԱՉԵԱԼ, ԹԵՌԵԱԼ

Արտիկեալե զործողութիւնք անձին ևն սեպհական. իսկ ՚ի քրիստոս է մի միայն անձն աստուածային, որ ընու զտեղի մարդկային անձին. ապա ամենայն զործողութիւնք եթէ աստուածավայելուչք իցեն և եթէ մարդավայելուչք, նմին աստուածայնոյ անձին վերաբերին. ուստի ուղիղ է ասելն, աստուած չարչարեցաւ, խաչեցաւ, մեռաւ։

Եւ այսմանէ հետեի, թէ սուրբ կոյսն Մարիամ է իսկապէս ծնող աստուծոյ և աստուածածին. զի ծնունդըն եղերի առ անձն. իսկ անձն ծնեալ ՚ի կուսէն էր Ճմարիտ աստուած. ապա և սուրբ կոյսն Մարիամ է Ճմարտապէս աստուածածին և աստուածամայր. ըստ այնմ՝ «Ահա՛ կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանունն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ աստուած» (Եսայեայ. է, 14)։ Աստուած, այսինքն որդի աստուծոյ. ընդ մեզ՝ այսինքն որդի մարդոյ. ըստ այնմ՝ «Առաքեսաց աստուած զորդի իւր՝ որ եղև ՚ի կնոջէ» (Գալաթացոց. Գ, 4)։ Աւստի ասէ սուրբն Աիւրելդ. «Զիսորդ յարոյց զնա աստուած ՚ի մեռելոց՝ եթէ ոչ մեռաւ. և զիսորդ մեռաւ՝ եթէ ոչ ծնաւ ըստ մարմնոյ» (Պարսպ)։

Եւ զարձեալ, զոյ ՚ի քրիստոս Ճմարիտ և իրապէս

հաղորդութիւն յատկութեանց , և փոփոխակի ստորուգումն զմիմեանց աստուածային և մարդկային բնութեանց՝ անշփոթ և անբաժանելի միաւորելոց: Ուստի երբեմն յատուկքն աստուծոյ ստորոգին զմարդոյ , ըստ այնմ՝ «Ո՛չ որ ել յերկինս , եթէ ոչ որ էջն յերկնից որդին մարդոյ՝ որ էն յերկինս» (Յովհաննոս . 4 , 13): Լւթէ՛ «Յառաջ քան զինն Նբրահամու եմ ես» (Յովհաննոս . 2 , 58): Լւթ երբեմն յատուկքն մարդոյ ստորոգին զաստուծոյ , ըստ այնմ՝ «Զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զտէրն փառաց , (այսինքն զաստուած) ՚ի խաչ հանէին» (, Սրբն[եաց]ոց . Բ , 8): Լւթէ՛ «Զեռք մեր շոշափեցին ՚ի վերայ բանին կենաց» : (, Յովհաննոս . 3 , 1):

Օ ի որովհետեւ ենթակայացեալն է աստուած միանգամայն և մարդ . կարէ ասիլ զաստուծոյ՝ որ ինչ անկ է մարդոյ՝ իբրև զենթակայութենէ մարդկայնոյ բնութեան . և փոխադարձաբար՝ կարէ ասիլ զմարդոյ , որ ինչ անկ է աստուծոյ՝ իբրև զենթակայութենէ աստուածայնոյ բնութեան: Ուստի Գաւթթ գորով թագաւոր և մարգարէ . կամ թագաւորն է մարգարէ , կամ մարգարէն է թագաւոր:

Ըյսպէս ճշմարիտ է ասելն , աստուած է մարդ , մարդն է աստուած: Ըստուած է մահկանացու , ժամանակաւոր , և չարչարելի . մարդն է անմահ , յաւիտենական և անչարչարելի: Կամ մահկանացուն է անմահ . անմահն է մահկանացու , և այլն:

Ըյսպ չարչարելի և անչարչարելի , մեռեալ և անմահ , է մի և նոյն անձն . և նմա վերաբերին անարգանք և փառք . զի ոչ այլ ոմն էր՝ որ պայծառանայր փառք , և ոչ այլ ոմն՝ որ ախտակրիւր չարչարանօք , այլ նոյն:

որդին աստուծոյ , որ էր միանգամայն և որդի մարդոյ . որպէս ասէ Շնորհալին . « Ո՛չ ոմն ուժեղ և զօրաւոր , և ոմն անզօր մտանդաւոր . այլ մի և նոյն գոլ միաւոր , կրէր զկիրան կամաւոր » (Ի Ժամագիրն) :

Արդ՝ որպէս յասելն « Տեսանէ Պետրոս , ընթաց նայ Պետրոս , և այլն » . իմացեալ լինի թէ տեսանէ աչօք , ընթանայ ոտիւք . և չէ՛ հարկ միշտ զնել ներգործաբար զգործխականքս աչօք կամ ոտիւք . այսպէս և յասելն՝ « Աստուած չարչարեցաւ , խաչեցաւ , մեռաւ » . միշտ իմացեալ լինի , թէ աստուած չարչարեցաւ մարմնով , խաչեցաւ մարմնով , մեռաւ մարմնով կամ մարդկութեամբ : Ի այց ո՛չ երբէք կարէ ասիլ , թէ « Մարդն չարչարեցաւ , խաչեցաւ , մեռաւ » . զի ՚ի մէջ բերէ զանձն մարդկային , որ է մուրումն Նեստորի :

Եւ ո՛չ եթէ բանն աստուած՝ որ տէրն է վառաց , յիւր աստուածային բնութեանն չարչարէր և մեռանէր . զի աստուած անչարչարելի է և անմահ . որպէս ասէ սուրբն Սիւրեղ . « Ի վերայ աստուծոյն բանին զգայակից լինել տանջանացն՝ անտեղի է ասելն . քանզի անչարչարելի է աստուածութիւնն » (Պարսպ) :

Այլ զչարչարանն և զմահ՝ զոր մարմնովն կրէր , իւրացուցանէր . ո՛չ պիտակաբար և անյատկապէս իւրոյ ինքեան համարելով ըստ Նեստորի , այլ փրաբար և յատկապէս Սուտի ասէ սուրբն Սիւրեղ՝ « Մի քրիստոս նոյն ինքն գոյով ՚ի նոյնութեան աստուած համանգամայն և մարդ , և իւրացուցանէ որպէս և ասացաք՝ բանն զորս իւրոյն մարմնոյն էր . զի իւր մարմին՝ և ո՛չ այլոյ ուրուք էր » (Պարսպ) :

Եւ դարձեալ՝ « Քանզի միաւորեալ անձառապէս ընդ մարդկութեանն աստուած՝ պահեաց զնա զոր ինչ

էրն . և եկաց մնաց և ինքն որ ինչ էրն . և միաւորեալ միանգամ որպէս մի համարեալ ընդ նմա , իւրացուցանէր զնորա» (Պարսպ) : Եւ սուրբն Աթանաս՝ « Չոր ինչ մարդկեղէնն չարչարիւր մարմին բանին , զայս ընդ նմին գորով բանն , իւր համարէր և խօս յինքն վերաբերէր» (Ի Լուչին , առ Եպիփանն) : Եւ դարձեալ՝ « Չոր ինչ մարմին նորա չարչարեցաւ , զայս որպէս իւր ինքեանն բանն ասի չարչարիլ» (Առ նոյնն) :

ԸՆԴԷՐ Ո՛Չ ԱՍԵՄՔ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ ԶԱՐԶԱՐԵՑԱՒ , ԽԱԶԵ
ՑԱՒ , ՄԵՌԱՒ , ԱՅԼ ԹԷ ԱՍՏՈՒԱԾ ԶԱՐԶԱՐԵՑԱՒ , ԽԱԶԵՑԱՒ ,
ԵՒ ԱՅԼՆ

Ապարէն աստուածութիւնն՝ է եզր վերացեալ , և նշանակէ զտեսակն հրաժարեցուցեալ յենթակայն . ապա յասելն՝ աստուածութիւնն չարչարեցաւ և այլն , ոչ որոշակի ցուցանէ զանձն բանին , այլ զբնութիւնն աստուածային : Բայց թանձրացեալ անունս աստուած՝ նշանակէ զտեսակն և զենթակայն . ապա յասելն՝ « Աստուած չարչարեցաւ , և այլն» յայտ առնէ թէ՛ անձն բանին՝ որ ունի զաստուածային բնութիւն , չարչարեցաւ , խաչեցաւ . բայց միշտ իմանի մարմնով , և ոչ պարզ աստուածութեամբ : Ուստի գրէ սուրբն Ալիբեղ . « Եթէ որ ոչ խոստովանեցի զբանն որ յաստուածոյ՝ չարչարեալ մարմնով , և խաչեալ մարմնով , և զմահ ճաշակեալ մարմնով , որ եղև անդրանիկ մեռելոց , որ կենդանին է և կենդանարար , նզովեալ եղիցի» (Պարսպ) :

ԱՐԴԵՕՔ ՄԱՐԹ Է ՅՈՒՂԻՂ ՄԻՏՍ ԱՍԵԼԹԷ ԱՍՏՈՒԱՅՈՒԹԻՒՆՆ
ԲԱՆԻՆ ԾՆԱՒ . ՄԵԱՒ : ՉԱՐՉԱՐԵՑԱՒ : ԻԱՉԵՑԱՒ : ՄԵՌԱՒ

Որովհետեւ ՚ի յաստուած անձն և բնութիւնն են նոյն . զի ոչ զանազանին իրօք այլ միայն զօրութեամբ . սմին իրի վերացեալ եզրս սարո-սո-ն-ի-ն՝ ստանց մտլորութեան կարէ զնիլ ՚ի տեղի թանձրացեալ ձայնիս սարո-սո-ն . ըստ այսմ առնու և սուրբն Գիտնէսիոս յասելն՝ «Ի սրբազան ասացելոցն առաք , զի հայր է աղբիւրեղէն աստուածութիւն . իսկ որդի և հոգի աստուածածնոց աստուածութեանն (իմա ՚ի թանձրացեալն) թէ այսպէս պիտոյ է ասել , բողբոջք աստուածատունկք , և որպէս ծաղիկք , և գերադոյն լոյսք» (ԱՍՏԻՏՆԻՆՍ . ԳԼ , Բ . ԲՄԱՆ , Է) : Եւ սուրբ Լուսաւորիչն . «Իսկ աստուածութիւն ՚ի վեր քան զերկինս , և քան զանկէտ և քան զանասման բնութիւն տարրեղէն արարածոց բովանդակեալ և բեռեալ ՚ի խաչափայտին» (ԱԳՄԵԼՄԱՆԳԷՂՈՍ) : Եւ սուրբն Սիւրեղ . «Աստուածութիւնն մարմին եղև , հոգի ունելով բանական» (ՊԵՐՊԵՂ) : Եւ սուրբ Գրիգոր Նարեկացի . «Արարչութեանն իսկութեան՝ ՚ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վշտացեալ» : (ՀԷ . 7) :

Եւ զայս յուղիղ միտս մարթ է ասել , աստուածութիւնն ծնաւ , խաչեցաւ , մեռաւ , և այլն . որպէս և Շնորհալին ասէ՝ «Անմահ բնութիւնն աստուածային , մեռաւ մարմնով մահկանացունին» : Ըստ այսմ ասի և ՚ի Շարականին՝ «Ծնար ՚ի հօրէ անձառ միութիւն» : Ուր փոխանակ ասելոյ՝ Թ , զնի թի-ն-ի-ն : Օ այս ոճ՝ վարելոյ զվերացեալն ՚ի տեղի թանձրացելոյ յի և իցէ նիւ-

Թրս՝ բազում ուրեք գտանի ՚ի գիրս . զորմէ՝ ոչ է
տեղւոյս ՚ի խնդիր լինելւ

ԱՐԴԵ՛Օ-Բ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ-Բ ԱՆՁԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ՛ ԱՍԻՑԻՆ ԵՒՍ
ՅՈՒՂԻՂ ՄԻՏՍ ՋԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲՆՈՒԹԵՆԷՆ ԿԱՄ ՋՄԱՐՄՆՈՅՆ

Բազում ուրեք ՚ի գիրս ազատ կիրառութեամբ
զգործիքական պատճառն՝ որ պարտ էր դնիլ հոլովակի
իրբև պատճառ «րո՛վ», դնի ուղղակի իբրև արարչական
պատճառ, կամ իբրև պատճառ «ր»: Աստի փոխանակ
ասելոյ՝ «Ես տեսից աչօք», ասի «Աչք իմ տեսցեն ՚ի
նա» . և փոխանակ ասելոյ՝ «Մէք շոշափեցաք ձեռօք»
ասի «Չեոք մեր շոշափեցին ՚ի վերայ բանին կենաց»: Իստ այսմ է և այն՝ «Միտք զբանս քննեն, և քիմք ըզ-
կերակուրս ճաշակեն» (ՅԻԲայ . ԺԲ, 11): Օ ի եթէ իւ-
րաբանելւր գործողք պարտ էին լինել անձին . ապա մի
միայն անձն մարդոյ լինէր բաժանեալ ՚ի բազում ան-
ձինս: Եւ և տէրն իսկ ասաց «Հոգիս յօժար է, բայց
մարմինս տկար» (Մատթէ՛ւո՛ւի . ԻԿ, 41): Եւ առաքեալն՝
«Արիւնն յիսուսի որդւոյ նորա սրբեսցէ զմեզ յամե-
նայն մեղաց (ա, Յովնաննո՛ւ . ա, 7):

Եւրդ՝ եթէ տէր գործողութեան իմացի մար-
մին, հոգին և արիւնն քրիստոսի, իբրև պատճառ «ր»,
բազմապատիկ անձինս դնելի էր ՚ի քրիստոս, այլ՝ ողջ-
մտութեամբ իմանի ՚ի գործիական հոլովի՛ իբրև պատ-
ճառ «րո՛վ» . այսինքն հոգւոյն, մարմնոյն, արեամբն . ըստ
այսմ ասի՝ «Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, և հոգի
հակառակ մարմնոյ» (Գաղաթաղոց . Ե, 17): Իբր թէ
ասէր, մարմնոյն ցանկամ հակառակ հոգւոյս, և հոգ-
ւոյն հակառակ մարմնոյս: Գրէ և սուրբն Աթանաս .
«Աստուած և տէր փառաց գորով որդի գոյր յանար-

գութեան և յանպատուութեան բեռեւեալ ՚ի խաչին ,
 և մարմինն (խնա՛ մարմնոյն) չարչարիւր ձգեալ ՚ի վերայ
 փայտին» (Պարսպ) : Եւ սուրբն Սիւրբեղ՝ «Յորժամ եւ
 բեւեցի զանդիտեալ ՚ի մահուանէ՛ և ասացեալ , եթէ
 կարողութիւն է անցցէ բաժակս , զմտաւ ամ դարձեալ՝
 թէ զանդիտեալ ՚ի մահուանէ՛ մարմինն , (այսինքն մարմ-
 նոյն կամ ըստ մարմնոյն) . քանզի ո՛չ երկնչէր , ըստ այնմ
 բանն է և աստուած ՚ի մահուանէ՛ ինքն , այլ ՚ի գլուխ
 հանել զանօրէնութիւնն փութայր» (Գանձ) : Երբէ և
 եկեղեցի սուրբ . «Եկայք լուսազգեացք յօրհնութիւն
 նոր օրհնեացուք զտէր . քանզի մարմինն (այսինքն մարմ-
 նոյն) որ ՚ի մէնջ է առ՝ ՚ի հրեշտակաց երկրպագութիւն
 առնու ՚ի սրովբէից և՛ ՚ի քրովբէից» :

Ուստի մինչ ՚ի դիրս հարց և վարդապետաց աստ-
 ուածային բնութիւնն կամ մարմինն երեւիցին եղեալ
 ուղղակի՝ իբր տէր գործողութեան կամ կրողութեան
 իբրև պատճառ որ , իմացեալ լինին ո՛չ ճշտիւ՝ այլ լայ-
 նաբար եղեալ փոխանակ գործիականի կամ իբրև
 պատճառ որ՝ . քանզի գործողութիւնք անձին են և
 ո՛չ բնութեան . զի ըստ հասարակաց առածին , «Անձն է՛
 որ գործէ , և բնութիւնն որով գործէ» :

Եւ այս միտ ասի զաստուածային բնութենէն քրիս-
 տոսի , թէ աստուածացոյց զմարմինն . ըստ այնմ՝ աստ-
 ուածաբանն գրէ , «Եկեալ աստուած հանդերձ առեւ-
 ջելովն , մի յերկուց ընդդիմակցաց ՚ի հոգւոյ (այսինքն
 յաստուածութենէն) ասեմ և ՚ի մարմնոյ , յորոց մին
 աստուածացոյց , և միւսն աստուածացաւ» :

Ըստ ամին օրինակի և զմարդկային բնութենէն
 քրիստոսի , կամ զմարմնոյն ասի մեռանիլ . զի գրէ մեծն
 Խոսրով , «Պէտք եղեն անբիծ արեանն առ ՚ի քաւու-

Թիւն Աղամայ և ծննդոց նորա . և մեռանելոյ անարատ մարմնոյն քրիստոսի՝ որով մեռաւ մահ՝ (Ի Տէկն-Թեան Ժ. Ժ. Գրքի) : Լ, և մեծն Գրիգոր տաթևացի . « Որպէս զե նաւ ուլն , և կենդանի էր Յովսէփ , նոյնպէս և տեառն մերոյ յիսուօսի քրիստոսի մարմինն մեռաւ բաժանմամբ հոգւոյն , և միշտ կենդանի էր աստուածութեամբն » (Ի Տէկն-Թեան Արարածոց) :

Լ, և կամ ասի զնիլ 'ի գերեզմանի . ըստ այնմ՝ « Մարմինն եղեալ 'ի գերեզմանի անբաժանելի աստուածութեամբն » . զի ոչ եթէ մարմինն եղաւ , այլ բանն աստուած , կամ քրիստոս մարմնովն . որպէս և յաջորդ բանիւքն յայտ առնէ՝ յասելն , « Եւ հոգւովն իջեալ 'ի դժոխս » (Ի Ժ. Ժ. Գրքի) : Կամ ասի յառնել 'ի մեռելոց . ըստ այնմ՝ զոր գրէ սուրբն Աթանաս . « Նոյն ինքն մարմինն ունելով բնութիւն մահկանացու՝ յարեաւ 'ի վեր քան զբնութիւն , 'ի ձեռն որ 'ի նմա բանին » (Պարսպ) : Ուր փոխադրութեամբ հոլովի իմանալի է , այսինքն՝ նոյն ինքն բանն յարեաւ մարմնով : Կամ ասի բարձրանալ փառօք . ըստ այնմ՝ զոր ասէ սուրբն Աթանաս . « Յորժամ ասէ , աստուած զնա առաւել բարձրացոց , և շնորհեաց նմա անուն , որ 'ի վեր է քան զամենայն անուն , և որ 'ի կարգին . վասն տաճարին ասէ , որ է մարմին նորա . զի ոչ եթէ բարձրեալն բարձրանայ , այլ մարմին բարձրելոյն բարձրանայ » . այսինքն թէ քրիստոս ոչ ըստ աստուածային բնութեանն բարձրացաւ , այլ ըստ մարդկային բնութեանն՝ կամ մարմնովն բարձրացաւ , և ընկալաւ զանուն՝ որ 'ի վեր է քան զամենայն անուն » :

Օ այս ամենայն գեղեցիկ մեկնէ սուրբն Աիւրեղ օրինակաւ մարդոյ՝ յասելն , « Մինչ 'ի մարդում ասիցի

բնակիլ իւր հոգի . ոչ այլ որ քան զնա , այլ ՚ի վերայ միոյ դիմի յուրակի մեզ ՚ի ներքս բերի երկդիմի բանի ձև . և ոչ ըստ իրիք եղանակի վնասէ զճշմարտութիւն . . . Ասէ ուրեմն և երանելին Դաւիթ , ՚ի դիշերի ՚ի սրտի իմում հոգայի , և տառապէր յիս հոգի իմ Արդ՝ ո՞վ էր որ յիւր սրտի հոգայր , և տառապէր իւրն հոգի . պիտոյ է զբանիցն ձև ոչ յոյժ ցեղընտիր առնել . այլ տեսանել ՚ի նոսա յաւէտ զբանիցն բնութիւն , և ՚ի նոցանէ մանաւանդ առաջնորդեալ ՚ի ճշմարտութիւնն ելանելոյ (Պարսոյ) :

Տէս զի ոչ այլ որ էր Դաւիթ՝ որ հոգայր ՚ի սրտի , և այլ որ հոգի նորա որ տառապէր . այլ մի և նոյն անձն . սմին իրի խրատէ սուրբ հայրս մեր՝ թէ չէ պարտ զձև բանիցն ցեղընտիր առնել՝ և ըստ թուոյ գործողաց զանձինս բաժանել . այլ յիմաստն հայիլ և միոյ դիմի տալ . և անմոլար ՚ի ճշմարտութիւնն ժամանել :

Ապա յուղիղ միտս մարթ է իմանալ զգործողութիւնս ընծայեալ յածային բնութեանն կամ մարմնոյն , վերաբերելով ՚ի մի դէմ և ՚ի մի անձնաւորութիւն քրիստոսի . ըստ այնմ՝ « Անձն է որ գործէ , և բնութիւնն որով գործէ » :

Օ ի դրական ոճիւ և արձակաբար ասացեալքն ՚ի հարցն առաջնոց ոչ է ՚ի դէպ ընդ կարակնաչափ կանոնիւ տրամաբանական ձևոյ , և կամ դասական ոճոյ արդի աստուածաբանից արկանել , և մանր կրկտել . ապա թէ ոչ՝ բազում նորանոր մոլորութիւնք ՚ի վեր երևին . սմին սակս խրատէ Առաքեալն՝ « Հաւատք ձեր մի իցեն իմաստութեամբ մարդկան , այլ զօրութեամբն աստուծոյ » (« Արեւիւոյ-ոյ . Բ , 5 ») :

ՎԱՍՆ Է՛Ր ՅԱՒԵԼՈՒ ԱՍԵԼ «ԹԱՂԵԱԼ»

Այսու յայտ առնէ , թէ քրիստոս ո՛չ առ աչօք
և ՚ի ցոյցս մարդկան երեւեցաւ մեռեալ , որպէս ցարդ
բանդադուշեն ոմանք , այլ իսկապէս և ճշմարտութիւն .
որպէս և Շնորհալին ասէ՝ «Անշնչանայն ՚ի վերայ խա-
չին , և պատիլն և դնիլն ՚ի գերեզմանի զմահ ճշմարտէ »
(Ընդհանրական) :

Օ ՚ի թէպէտ մահուամբն բաժանեցաւ հոգին ՚ի
մարմնոյն , այլ աստուածութեամբն անբաժանելի էր
յերկոցունց . զի միաւորեալ էր ընդ մարմնոյն ՚ի գերեզ-
մանի , և ընդ հոգւոյն ՚ի դժոխս . ուստի ասէ Շնորհա-
լին՝ «Յորժամ էջն առ հոգիան որ ՚ի դժոխան , և էր ան-
մեկնելի ՚ի մեռեալ մարմնոյն » (Ընդհանրական) :

ԱՐԴԵՕ՛Ք ՀԱՐԿԱՒՈՐ ԵՂԵՒ Ի ԷԱՆԵԼ ԲՐԻՍՏՈՍԻ Ի ԴՅՈՒՍ ԱՌ Ի
ՓՐԿԵԼ ԶՅՈԳԻՍ

Քրիստոս թէ ըստ որում աստուած , և թէ ըստ
որում մարդ ունէր զամենակարօղ զօրութիւն . զի ըստ
որում աստուած կարէր առնել զամենայն կարելիս ա-
մենայն կարելի եղանակաւ կատարման , զի ունի զգոյ
անսահման . և գործելն զհետ երթայ գոյոյ . և ըստ որում
մարդ կարէր առնել զամենայն կարելիս նկատմամբ առ
ամենայն կարելի գործս . զի իրապէս միաւորեալ էր ընդ
աստուածային բնութեան , որոյ գոյն է անսահման :

Ապա առանց իջանելոյ ՚ի դժոխս կարօղ էր փրկա-
գործել զհոգիան . սմին իրի բացարձակապէս ո՛չ էր հար-
կաւորս . Այլ ՚ի դէպ էր և պատշաճ ինքնին յայց ելա-
նել . զի որպէս մարմնաւորացն փրկութիւն իւրով մարմ-

նովն հաճեցաւ կատարել . սոյնպէս և հոգւոցն ազատութիւն՝ հոգւովն իւրով:

Աւելցոց զարդիւնս չարչարանաց և մահու խաչի իւրոյ, խորտակելով զնիգս դժոխոց, և կոխելով զգորութիւն մահու . քանզի հոգւոցն՝ որ սկզբնական մեղօք արգելեալ էին ՚ի դժոխային բանդի, և պակասեալ էր յոյս ազատութեան, և նորոգման մարմնոց, երթեալ քարոզեաց և ծանոց զկենդանարար գալուստ իւր յաշխարհ որում սպասէին, և զվրկութիւնն մահուամբ իւրով, որում փափաքէին . և ընդ իւր ՚ի կեանս վերածեաց . ըստ այնմ՝ «Եւ դու արեամբ ուխտի քո արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ» (Չասարիւս . Է, 11): Յորոց բազումք զգեցեալ անդրէն զմարմինս իւրեանց, յարեան, և յետ յարութեան նորա մտին ՚ի քաղաքն սուրբ, և երևեցան բազմաց» (Մատթէոսի . Ի, 53): Արով և մահն քրիստոսի ետ յոյս յարութեան ամենայն մարդկան . ըստ այնմ՝ «Որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն կենաց» (Հովնայեցոց . Է, 18): Աւստի ասէ մեծն խոսքով . «Չարգելումն մարդկային հոգւոց ՚ի մարմնոց՝ խափանեաց մեռելութիւնն քրիստոսի, և հոգւոց նորա առ հոգիս մարդկան գնացումն . որ և վերածեաց զնոսս ընդ իւր, և անխափան գործեաց զմուտ անդրէն իւրաքանչիւր ոգւոց յանձնիւր մարմինս» (Ի Յինո-Ւեան Ժասագրի): Գրէ և Առաքեալն՝ «Որ ելն զնեչ է, և թէ ոչ՝ զի էջ նախ ՚ի ստորին կողմ երկրի» (Եփեսացոց . Գ, 9):

ԱՐԴԵՕ՛Ք ԶԱՄԵՆԱՅՆ ՀՈԳԻՄՆ ՓՐԿԵԱ՞Յ Ի ԴԺՈՒՈՑ . ԵԹԷ
 ԶԱՐԴԱՐՄՆ ՄԻԱՅՆ

Սուրբ առաքեալն Պետրոս զգժոխան՝ յոր էջ քրիստոս հոգւովն և ազատեաց , բանտ անուանէ . և այսու խնացեալ լինի ոչ տանջանարանն անհաւատից՝ անօրինաց՝ և անսրբոց , ուր մեծատոււնն ՚ի տանջանս էր . այլ արդեւարանն հաւատացելոց՝ նահապետաց և մարդարեւից , ուր Ղազարոսն էր հանդուցեալ ՚ի գողն Աբրահամու . զի որպէս ՚ի վերայ երկրի ոչ զանհաւատսն և զխտասիրտան կեցոյց կենարար փրկիչն . այլ զորս հաւատացին ՚ի նա , և պահեցին զպատուիրանս նորա : Այսպէս և ՚ի ստորինս երկրի՝ ոչ զհեթանոսան և զամբարիշտան , և զլիան ամենայն անօրէնութեամբ ազատեաց , որպիսի որ Ներբովթն էր և Փարաւոն , և Աքաաբ և Յեզարէլ , և այլ ամենայն կռապարիշտք և չարք . այլ զնախահարս և մարդարէս , զարդարս և զառաքինիս , որք կենդանարար գալստեան նորա սպասէին յուսով , փրկեաց զնոսա արեամբ խաչի իւրոյ : Աւ կարի յիրաւունս . զի որք յառաջագոյն հաւատացին ՚ի նա իրբև առ փրկիչ և բարերար , և յերկս առաքինական գործոց մեծաւ յուսով աշխատեղեն , յառաջագոյն վայելեացեն ՚ի փառան և յերանութիւն : Ի սոյն միտս յօժարի և երանելին Իգնատիոս՝ յասելն « Զի ոչ միայն հաւատացելոց եղև փրկութիւն մարդանայն աստուծոյ և մեռանելն . այլև այնոցիկ որոց յայտնեաց հոգին , և լուան ՚ի մարդարեւիցն , և հաւատացին գալստեան նորա » (Ի Վեկոնտէան Ղոյսսոս) : Սովին մտք երգէ և եկեղեցի սուրբ՝ « Որ զմահ գերի առեալ մահուամբ զմահ կու խեցեր , արձակելով զերանս մարդարեւից յանստուեր

քո հանգիստ» (Շարական)։ Լ,ւ թէ՛ «Որ լուծեր կենարար մահուամբ քո զերկունս մահու , իջանելով 'ի դժոխս վերածեր ընդ քեզ գհոգիս արգարոց մարդարէիցն 'ի լոյսն անստուեր» (Շարական)։ Լ,ւ թէ՛ «Չխաւորեալ ոչ միայն 'ի վերայ բուսաբեր արմատոյն , այլ քրոբէական կառօքն ստորիջեալ 'ի դժոխս , կենադործեաց հզօրեղապէս զերամս արգարոց» (Շարական)։

ԶԻՆՉ Ե՛ ՈՐ ԱՍԷ «ՅԵՐԲՐԴ ԱՒՈՒՐ ՅԱՐՈՒՑԵԱԼ»

Կենարարն մեր քրիստոս՝ որպէս մահուամբն 'ի խաչին իբրև զտկար որ և արհամարհեալ, եցոյց զլինել իւր մարդ ճմարիտ , նոյնպէս և յարութեամբն իւրով 'ի դերեզմանէն ինքնիշխան կարողութեամբ յայտնեաց զլինել իւր աստուած ճմարիտ . վասն որոյ իբրև զմարդ և որդի մարդոյ զաստուած յօգնութիւն իւր կոչելով աղաղակեաց . «Աստուած իմ աստուած իմ ընդէ՛ր թողեր զիս» (Մաթիէոս . ԻԷ , 46)։ Լ,ւ իբրև զաստուած և որդի աստուծոյ յորժամ կամեցաւ աւանդեաց գհոգին ասելով «Հայր 'ի ձեռս քո աւանդեմ գհոգի իմ» (Ղուկաս . ԻԳ , 46)։ Ուստի և սուրբ դիրք զառնելն քրիստոսի 'ի մեռելոց երբեմն առ հայր վերաբերեն 'ի ցուցանել զմարդկային տկարութիւն նորա . և երբեմն առ որդի՝ 'ի յայտ առնել զաստուածային զօրութիւն նորա։ Ըստ այնմ՝ «Զառաջնորդ կենացն սպանիք , զոր աստուած յարոյց 'ի մեռելոց» (Գործոց . Գ , 15)։ Լ,ւ թէ՛ «Զայս յիսուս՝ յարոյց աստուած , որում ամենեքին մեք վկայ եմք» (Գործոց . Բ , 32)։ Ըստ որդին . ըստ այնմ՝ «Իշխանութի ունիմ դնել զնա . և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա» (Յովհանն . Ժ , 18)։ Լ,ւ թէ՛ «Բակեցէ՛ք զտաճարդ զայդ՝

և զերիս աւուրս կանգնեցից զդա» (Յ՝Հ՝անճո՝ . Բ , 19) :
 Ուստի ասէ սուրբն Աթանաս . « Չի թէպէտ և դրէ
 առաքեալ զբանն՝ ասելով , որ յարոյց զյիսուս քրիստոս
 և զձեզ ընդ յիսուսի յարուսցէ . մի ամօթ վարկանիր աւ
 սելով , ոչ կարէ տէր զիւր ինքեան յարուցանել զմար
 մինն , եթէ ոչ հայր զնա յարոյց . քանզի զայս ամենայն
 ասեն թշնամիքն տեսուն Չի թէ ՚ի խաչին դողով
 զառաջագոյն լուծեալ սրբոց մարմինս մեռեալս յա
 րոյց . որչափ ևս առաւել կարող էր յարուցանել՝ զոր
 զգեցաւ զմարմին» (Ի Լ՝ո՝չԼ՝ . * - Անփոք) :

Լիւ զի արտաքին և բացարձակ գործքն աստուծոյ
 հաւասար են երից անձանց . վասն որոյ եթէ հայր յա
 րուցանիցէ զտէրունական մարմինն , ընդ նմա է որդի և
 հոգի . և եթէ որդի՝ ընդ նմա է հայր և հոգի . զի ան
 բաժանելի է սուրբ երրորդութիւն : Ուստի ասէ սուրբն
 Սիւրբի . « Սատարի ամենայն առ ՚ի յաստուծոյ և ՚ի հօրէ
 ՚ի ձեռն որդւոյ հոգւով սրբով : Որպէս զի և ասի կե
 նադործել հայր , ներգործէ ամենայն իրօք ՚ի ձեռն
 որդւոյ հոգւովն սրբով Ապա ուրեմն ասի հայր
 յարուցանել զքրիստոս ՚ի մեռելոց . բայց ոչ գտանեմք
 զորդի անգործ առ յարութիւն մարմնոյն իւրոյ , որ և
 ասաց ցշրէայսն , լուծէք զտաճարս զայս , և յերիս ա
 ւուրս կանգնեցից զսա» (Պարսոյ) :

ՋԻՆՉ ԸԱԿԵՑԱԻ ԲԲԻՍՏՈՍ ՎԱՍՆ ՄԵՐ՝ ՅԱՐՈՒԹԵԱՄԲ ԻՒՐՈՎ .

Ապաքէն զյաւիտենական փրկութիւնն մեր շա
 հեցաւ չարչարանօք իւրովք . զի զոր միանգամ շահե
 ցաւ քրիստոս՝ շահեցաւ իբրև ճանապարհորդ , որ դա
 դարեցաւ մահուամբ , որպէս և ինքն ասաց՝ « Ամենայն
 ինչ կատարեալ է » (Յ՝Հ՝անճո՝ . ԺԼ՝ , 30) :

Բայց որովհետև քրիստոս է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ մարդեղութեամբ իւրով, հրաշափառ յարութիւն նորա եղև պատճառ յարութեան անդամոց յերանաւէտ կեանս, Օ ի որպէս մահ նորա վասն մեր մեռող զկեանս մեղաց, նոյնպէս և յարութիւն նորա շահեցաւ վասն մեր զկեանս փառաց. զի որպէս չարչարանք նորա և մահ՝ նոյնպէս և փառաւոր յարութիւն նորա էր վասն մեր: Օ ի ասէ սուրբն Ալեքեղ՝ «Որից եղև վասն մեր կրեւն նորա իւրով մարմնով զմահ, զի տկարացի այնուհետև մահու իշխանութիւն. և յարեաւ դարձեալ վասն մեր, նորոգելով մեզ զոր յանպականութիւնն վերստին ճանապարհ» (Պարսպ): Օ այս և տէրն նշանակեաց յասեւն՝ «Ոչ գնոյնս պարտ էր չարչարիլ քի (վասն մեղաց մարդկան), և մտանել ՚ի փառս իւր (վասն փառաց մարդկան)» (Ղուխսո. ԻԴ, 26):

Եւրդ՝ գլուխն մեր քրիստոս փառաւորեալ էր ՚ի յաւիտենից աստուածային փառօք, ըստ որում և ինքն ասէր՝ «Եւթմ փառաւորեան զիս հայր առ ՚ի.բէն, փառօքն, զոր ունէի յառաջ քան զլինկն աշխարհի առ ՚ի.բէն» (Յովնանո. ԺԷ, 5):

Եւպա փառաւոր յարութեամբ իւրով՝ շահեցաւ վասն անդամոց իւրոց յառնել փառօք յանեղծ և յանվախճան կեանս նորոգութեամբ մարմնոյ՝ ըստ նմանութեան իւրոյ. ըստ այնմ՝ «Նորոգեցեղ զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց նորա» (Փիլիպպեց. Գ, 21):

ՎԱՍՆ Է՛Ր ԲԲԻՍՏՈՍ ՅԵՏ ԵՐԻՑ ԱՒՈՒՐՑ ՅԱՐԵԱՒ . ԵՒ Ո՛Չ ԻՍԿՈՅՆ
 ՎԱՄ ԱՆԱԳԱՆ

Ի ցուցակութիւն մարդկութեանն քրիստոսի բաւական էր չարչարանքն և մահն և թաղումն , և վկայութիւնք սպանողացն . իսկ ՚ի յայտարարութիւն աստուածութեան նորա , հարկաւոր եղև քրիստոսի յետ երկցաւուրց յառնել ՚ի մեռելոց . որպէս ասացեալ էր յառաջագոյն , թէ « Որդի մարդոյ մատնելոց է ՚ի ձեռս մարդկան , և սպանցեն զնա . և իբրև սպանցի՝ յերկր աւուր յառնէ » (Մարկոսի . Է , 30) : Տալով նոցա նշան , թէ « Որպէս էր Յովնան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս , նոյնպէս եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս » (Մատթէոսի . ԺԲ , 40) :

Եւ թէպէտ ամենայն աշակերտքն և հաւատացեալք՝ տեսանելով զնա կալեալ կապանօք , և մեռեալ անարգանօք , տկարացեալ էին ՚ի հաւատս . բայց վասն նախազեկոց ազդարարութեան նորա՝ ոչ էին յուսահատք իսպառ , այլ ՚ի լրումն երկցաւուրց ակնապիշ կային , երկց իրացն սպասելով : Որպէս և Սղէովպաս բարեմտութեամբ իմն ասէր առ փրկիչն . « Մեք ակնունէպք՝ թէ նա է որ փրկելոցն է Չիսրայէլ . այլև հանդերձ այսու ամենայնիւ՝ այս երրորդ օր է յորմէհետէ այն գործեցաւ » (Ղուկասոս . ԷԴ , 24) : Պատմէր ևս և զկանխելն կանանց ՚ի գերեզմանն , և զասելն հրեշտակաց թէ կենդանի է՝ այլովքն հանդերձ :

Ապա թէ աւելի քան զերիս աւուրսն յամեցուցանէր զյարութիւն իւր , գայթակղեալքն յառաջագոյն , և խարբալեալքն իբրև զցորեան՝ դուցէ զխտովն անկանէին ՚ի հաւատոց . տեսանելով եթէ զիւր ինքն

չկարէ յարուցանել, ապա չէ՛ նա փրկիչ Խորայէլի և յարուցիչ մեռելոց:

Աստի յարութիւնն քրիստոսի եղև արարչական պատճառ հաստատութեան հաւատոց ՚ի ստացումն յաւիտենական կենաց. զի եթէ չէր յարուցեալ, ո՛չ որ հաւատայր ՚ի նա՝ թէ որդի է աստուծոյ, և ո՛չ որ կարէր փրկիլ: Այս էր ասելն առաքելոյն՝ «Եթէ քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր (», Արնիւնոյ. Ժէ, 14): Աւ քանզի արդարութիւն մեր և փրկութիւն և անթառամ փառացն ժառանգութի է ՚ի հաւատոցն յիսուսի. «Զի և ո՛չ անուն այլ գոյ ՚ի ներքոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ որով արժան իցէ կեալ մեզ» (Գործոյ. Դ, 12):

Ապա պատճառ այսմ արդարացուցիչ հաւատոյ ՚ի մարդիկ՝ եղև սքանչելի յարութիւնն քրիստոսի, որով ծանուցաւ ընդ տիեզերս ճշմարիտ իսկութիւն բանին մարմնացելոյ. նմին իրի ասէ Առաքելոյն՝ «Յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ» (Հովնայէցոյ. Դ, 25):

Քանզի հզօրեղապէս յառնելն քրիստոսի փառօք հօր՝ յայտնեաց աշխարհի զլինելն նորա աստուած և որդի աստուծոյ՝ հզօր և ամենակար. որպէս ասէ Առաքելոյն՝ «Սահմանելոյ որդւոյն աստուծոյ՝ զօրութեամբ ըստ հօգւոյն սրբութեան՝ ՚ի յարութենէ մեռելոց յիսուսի քրիստոսի» (Հովնայէցոյ. ւ, 4): Հաւել ևս ՚ի հաւատացեալս զոյս հաստատուն վերստին նորոգման, և յարութեան ամենայն մարդկան. ըստ այնմ՝ «Ճնու զմեզ վերստին ՚ի յոյսն կենդանի, ՚ի ձեռն յարութեանն յիսուսի քրիստոսի ՚ի մեռելոց, յանեղծ և յանարատ և յանթառամ ժառանգութիւնն, որ պահեալ է յերկնս ՚ի ձեզ» (», Պետրոսի. ւ, 3):

ՋԵՄԵՆԻ ԱՍԻ ԲՐԻՍՏՈՍ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԵՌԵԼՈՅ . ՄԻՆՉ ՅԱՌԱՋ
 ԲԱՆ ԶՆԱ ՅԱՐԵԱՆ ԲԱԶՈՒՄԲ

Քաջայայտ իսկ է, զի անմահ յարութիւն գլխոյն
 քրիստոսի եղև պատճառ անմահ յարութեան անդա-
 մոց իւրոց. զի ամենայն արդիւնք զորս շահեցաւ քրիս-
 տոս ըստ որում մարդ միաւորեալ ընդ բանին՝ եթէ
 չարչարանօք մահուն, որպէս արդարութիւն մեր և փր-
 կութիւն, և եթէ վերաբերմամբ չարչարանացն՝ որպէս
 փառաւոր յարութիւն մեր զայն ամենայն մասնաւոր-
 եաց բոլորի մարմնոյն. զի եթէ չէր յարուցեալ քրիս-
 տոս անմահական փառօք, ո՛չ որ յարգարոց ունէր յառ-
 նել անմահ և փառաւոր. ըստ այնմ՝ «Նախ քրիստոսն,
 և ապա քրիստոսեանք ՚ի գալստեան նորա» (* , 11^{րէ}-
 1^{այ} . ԺԵ , 23) :

Ապա որք յարեան յառաջ քան զչարչարանան
 քրիստոսի , որպէս միամօր որդի այրւոյն՝ որ ՚ի Նային
 քաղաք . (Ղ^{ու}-1^ա . 11) : Լ, և զուստր Յայրոս իշխա-
 նին . (Մ^ա ք^ի 1^ա . 18) : Լ, և Ղազարոս բարեկամն
 քրիստոսի . (Յ^ո 1^ա . 1) : Լ, և թերևս այլք բա-
 զումք զորոց զանց առնեն յիշել աւետարանիչք : Լ, և
 որք ՚ի ժամու չարչարանաց նորա յարեան, և մտին յե-
 բուսաղէմ յետ յարութեան նորա, և երևեցան բազ-
 մաց . (Մ^ա ք^ի 1^ա . 52) : Նոյնպէս և որք յառաջ քան
 զքրիստոս յարեան ՚ի ձեռն սրբոց մարգարէից : թ^ող
 և զՄամուէլ՝ որ յարեաւ առ աչօք . (* , թ^ա 7^ա - որ^ա .
 14) : Լ, և Մովսէս՝ որ երևեցաւ յարուցեալ ՚ի մե-
 ռելոց . (Մ^ա ք^ի 1^ա . 3) :

Արդ՝ ամենեքին սոքա անդրէն ննջեցին ՚ի մահ,
 զի յարեան մահկանացու մարմնով. և սպասեն միւսան-

գամ գալստեանն և կատարածի աշխարհի յառնել ան-
մահուութեամբ: Ապա ուրեմն միայն քրիստոս եղև անդ-
րանիկ ՚ի մեռելոց . (Որդոսոց-ոց . 3 , 18): Եւ առաջին
պտուղ ննջեցելոց . (3 , Որն՛խոց-ոց . 3 է , 20): Որ միան-
գամ մեռեալ և յարուցեալ , մնայ կենդանի ՚ի մշտնջե-
նաւոր յաւիտեանս . ըստ այնմ՝ «Գիտեմք եթէ քրիս-
տոս յարուցեալ է ՚ի մեռելոց , այսուհետև ո՛չ մեռանի ,
և մահ նմա ո՛չ ևս տիրէ » (Հովմայեց-ոց , 2 , 9):

ԶԻՆՉ Է ԱՍԵԼՆ «ԵԼԵԱԼ ՅԵՐԿԻՆՍ ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎ ՆՍՏԱԻ
ԸՆԴԱՋՄԷ ՀՕՐ»

Այլանեղն յերկինս ո՛չ ասի զքրիստոսէ ըստ որում
է աստուած . զի չիք տեղի՝ որ չիցէ աստուած . այլ ասի
զնմանէ՝ ըստ որում է մարդ : Վրանգի գրէ և սուրբն
Որեւել . «Ելանել ասի և մարմնով յաստուածութեանն
փառս , որ լին ունէր զայն որպէս զիւր հանապազ . սա-
կայն եղանակաւ ելեալ ՚ի նա վասն մարդկութեանն »
(Պարսոց):

Ապաքէն տէրն մեր յետ յարութեան իւրոյ զա-
ւուրս քառասուն ստեպ ստեպ երևէր աշակերտացն ,
երբեմն «Քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն »
(3 , Որն՛խոց-ոց . 3 է , 6): Վարողէր վասն արքայութեանն
աստուծոյ , և ուսուցանէր զվարդապետութիւնս հաւա-
տոյ : Իսկ ՚ի լրումն քառասուն աւուրց գնաց ՚ի լեառն
ձիթենեաց , և տարածեալ զբազուկս իւր՝ օրհնէր զա-
շակերտան . և վերանայր յերկինս ՚ի տեսիլ ամենայն
բազմութեան : Ի նթացակից էին և բանակք հրեշտա-
կաց , ո՛չ իրրև զօրավիզն նմա , այլ իրրև սպասահար-
կութ երկնաչու ճանապարհին : Օ ի որք յառաջ քան
զյարութիւնն փոքր մի խոնարհեալ տեսանելով ըզ-

յիսուս վասն չարչարանացն երկիրդին , զօրացուցանելն
զնա մինչ աղօթելն ՚ի պարտիզին . այժմ զարհուրեալ
դողան յահեղ փառաց նորա , իբրև ՚ի տեսլենէ անմահ
Թագաւորի երկնի և երկրի :

Իսկ արդ՝ յիսուս քրիստոս որ յառաջ քան զմար-
դեղուԹիւն իւր աստուածախայելուչ անուամբ կոչէր
յաստուածաշունչ գիրս , Աստուած , Բան , Միածին ,
Ճշմարտութիւն , Անսահման , Լոյս , Իմաստութիւն ,
Զօրութիւն , Ճատագայլ , Արարչական , Պարիւր , Անսահման ,
Անսահման , Գաւազան շքութեան , Գաւազան Լուսաւորութեան :
Իբրև մարդ եղեալ մարմնացաւ ՚ի կուսէն . և կատար-
եալ զամենայն անօրինական կիրս՝ համարձաւ յերկինս ,
կոչեցաւ ևս անտեսական անուամբ , մանաւանդ Թա-
գաւոր , Տէր , Օրէնսդիր , Գաւազան , Գլուխ եկեղեցոյ ,
Քահանայ , Միջնորդ , Բարեխօս : Վրանզի քրիստոս՝ որ ըստ
աստուածութեանն էր Թագաւոր ՚ի յաւիտենից , եղև
Թագաւոր ըստ մարդկութեանն ոչ յաջորդական և ժա-
մանակաւոր . որպէս և ինքն ասէր , Թէ « Իմ արքայու-
Թիւն չէ յայս աշխարհէ » (Յովհաննոս . ԺԷ , 36) : Այլ
անմահ և մշտնջենաւոր . զի ասէ սուրբն Աբրահմ « Թա-
գաւորեաց մեզ մարմնով , որ և էր նախ քան զայն
Թագաւոր (Պարսոյ) : Վրանզի աստուած հայր արկ ըզ-
Թշնամիան ընդ ոտիւք նորա . և կացոյց Թագաւոր մշտն-
ջենաւոր ՚ի վերայ հնազանդելոց , իշխել նոցա յաստի
կեանս շնորհօք , և ՚ի հանդերձեայն փառօք . ըստ այնմ՝
« Տայէ նմա տէր աստուած զաթոսն Դաւթի հօրն
նորա , և Թագաւորեսցէ ՚ի վերայ տանն Յակոբայ ՚ի յա-
ւիտեանս » (Ղուկասոս . ա , 32) :

Իդև Տէր , զի առանձին իրաւամբ գնոց և փրկա-
նաց ընկալաւ զտէրուԹիւն ՚ի վերայ ամենայն մարդ-

կան՝ մեռելոց և կենդանեաց . զհոգիս մեռելոց որք յուսացեալ էին ՚ի նա , փրկելով ՚ի բանտէ դժոխոց . և զկենդանիան՝ որք հաղորդ եղեն փրկագործութեան նորա , պահելով ընդ օրինօք և ընդ խնամովք իւրովք . ըստ այնմ՝ «Յանուն յիսուսի բրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց , և ամենայն լեզու խոստովան լիցի , թէ տէր է յիսուս բրիստոս ՚ի փառս աստուծոյ հօր» (Փիլիպպեցոց . Բ , 10) :

Եւ զի օրէնսդիր , զի որովհետեւ ամենեքին են ըստացուածք և ծառայք բրիստոսի , և կան ընդ խնամովք նորա , ապա տուեալ է նմա իշխանութիւն զնել ՚ի վերայ նոցա օրէնս , որում պարտին հնազանդիլ կամակար մտօք իբրև տեսուն բարերարի . ըստ այնմ՝ «Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ» (Մատթէիս . ԻԷ , 20) : Եւ թէ՛ «Պատուիրան նոր տամ ձեզ» (Յովհաննէս . ԺԳ , 34) : Եւ թէ՛ «Մի է օրէնսդիր և դատաւոր , որ կարօղ է փրկել և կորուսանել (Յովհ . Բ . Գ , 12) :

Եւ զի Դատաւոր , զի որ ետ զօրէնս արդարս զհաւատոց և բարի վարուց , հարկաւ պահանջէ զկատարումն ամենայնի այնորիկ . ապա յորժամ նստցի յաթոս փառաց իւրոց , և քննեսցէ զգաղտնիս մարդկան , դատեսցէ զամենեսին ըստ իւրաքանչիւր գործոց , և արդարացուցէ զդատաստան իւր , պսակելով զայնոսիկ՝ որք զհաւատան պահեսցին , և զպատուիրանս նորա կատարեցին . և զատապարտելով զայնոսիկ՝ որք հետեսցին օրէնաց և պատուիրանաց նորա . ըստ այնմ՝ «Նա է սահմանեալն յաստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց» (Գրք ընդ . Ժ , 42) :

Լիլե Գլուխ եկեղեցւոյ, զի որպէս գլուխն առաջին է ՚ի մարմնի ըստ կարգի անդամոց, և առաջին ըստ կատարելութեան վասն ներքին և արտաքին ՚ի նմա եղելոց զգայարանաց . յորմէ ամենայն անդամք ընդունին զկենդանական ողիս և զգորութիւն . այսպէս և քրիստոս է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, զի է առաջին ըստ կարգի արժանապատուութե ՚ի մեջ անդամոց մարմնոյ իւրոյ . և առաջին ըստ լրութեան շնորհաց, զոր անդադար հոսէ յանդամս իւր . ըստ այնմ՝ « ջնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ » (Եփեսոսցւոց . ա . 22) :

Լիլե Քահանայ, զի մատուցանէ զխոստովանութիւն հաւատոյ մերոյ, և զաղօթս և զաղաչանս մեր աստուծոյ և հօր իւրոյ . զի ասէ սուրբն Ալիբեղ, թէ « Քահանայադորձէ զմեր խոստովանութիւն, այսինքն զհաւատս՝ զոր և ուղղակի սովորեցաք առնել ասելով հաւատալք ՚ի մի աստուած հայր ամենակալ, և ՚ի մի տէր յիսուս քրիստոս որդի նորա և ՚ի հօգին սուրբ » (Պարսպ) : Քահանայադորձէ ևս զանձն իւր նուիրելով աստուծոյ պատարագ ՚ի հոտ անուշից վասն մեր . արդ ինքն է՝ որ մատուցանէ մարդկօրէն, և ինքն ընդունի յօծաբար . զի է յօծ և մարդ . ըստ այնմ՝ « Ունիմք այսուհետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս զյիսուս որդին աստուծոյ » (Եփեսոսցւոց . Գ . 14) :

Լիլե Միջնորդ, քանզի քրիստոս ոչ միայն երաշխաւոր եղև առ աստուած վասն վնասուն զոր պարտեալք նմա, այլ և ըստ արժանեաց հատուցումն արար արդեամբ իւրով . որով եղև միջնորդ հաշտութեան ընդ աստուած և ընդ մարդիկ . ըստ այնմ՝ « Մի է միջնորդն աստուծոյ և մարդկան մարդ յիսուս քրիստոս » (ա . Տիմոթէական . Բ . 5) :

Եղև Բարեխօս , քանզի քրիստոս մարմնովն յանդիման եղևալ աստուծոյ՝ մատուցանէ զինդուածս վասն փրկութեան մերոյ , ոչ աղաղակաւ շրթանց՝ այլ հայցուածովք կամաց : Եւ յսպէս ներքին ատրժակօք նուիրէր զբաղձանս իւր՝ և բարեխօսէր առ հայր , զի զբարեխօս հոգին առաքեսցէ յաշխարհ . ըստ այնմ՝ «Եւ ես աղաչեցից զհայր , և այլ մխիթարիչ տացէ ձեզ» (Յովհաննոս . ԺԳ , 16) : Եւ դարձեալ՝ «Եթէ ես ոչ երթայց , մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ» (Յովհաննոս . ԺԷ , 7) :

Եւրդ՝ քահանայագործել , բարեխօսել , աղաչել , և աղօթել , պատշաճի քրիստոսի ըստ մարդկութեանն , զի ըստ որում է աստուած՝ ընդունի զաղաչանս և կատարէ ընդ հօր իւրում , ուստի ասէ Շնորհալին՝ «Աղօթէր ընդ մեր և վասն մեր որպէս զմարդ . և ընդունէր ընդ հօր իւրում զաղօթս ամենեցուն որպէս զաստուած» (սուրբ Մանուէլ Կարապետ) : Եւ սուրբն Արարիչը՝ «Քահանայագործել ասի մարդկօրէն . այլ ընդունի զպատարագն ինքն աստուածաբար» (Պարտիկ) :

Օ ի որովհետև կարգեցաւ ՚ի հօրէ քահանայապետ յաւիտենից , վայելէ իսկ նմա զաղօթս և զպաղատանս մատուցանել վասն մեր . ոչ միայն մինչ էր ՚ի վերայ երկրի , այլև ՚ի յերկինս և յամենայն ժամանակի :

Բայց որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղաղակաւ և արտասուօք մատուցանէր , այժմ զբաղձանս փրկութեան մերոյ առ աստուած նուիրէ անմեռունչ բարբառով . այն է ասելն Առաքելոյն՝ «Քրիստոս յիսուս՝ որ մեռաւն , մանաւանդ թէ յարուցեալ իսկ է , և է ընդ աջմէ աստուծոյ . որ և բարեխօս իսկ է վասն մեր» (Հովհաննոս . Է , 34) :

Արդ՝ մի քրիստոս և մի տէր խոստովանիմք զնոյն ինքն զմարմնացեալն բան , որ մարդավայելուչ և աստուածավայելուչ անուամբքն կոչի . և ոչ եթէ ըստ բարձրագոյն և ըստ նուաստագոյն կոչմանցն և յերկուս դէմս և յերկուս բնութիւնս բաժանեմք զմի տէր մեր յիսուս քրիստոս : Աւստի ասէ սուրբն Արևելի . «Մի է ուրեմն նախ քան զմարմնանայն անուանեալ ՚ի ձեռն աստուածաշունչ գրոց , միածին՝ և բան , և աստուած , պատկեր և ճառագայթ , և նկարագիր էութեան հօր , կեանք , փառք , լոյս , իմաստութիւն , զօրութիւն , բազուկ , աջ , բարձրեալ , մեծ վայելչութիւն , տէր սաբաւովթ . և այլովք այսպիսեօք անուամբք ճշմարտապէս աստուածավայելչիւք : Իսկ յետ մարդանայն , մարդ , յիսուս քրիստոս , քառութիւն միջնորդ , պտուղ ննջեցելոց , անդրանիկ ՚ի մեռելոց , երկրորդ Ադամ , գլուխ մարմնոց եկեղեցւոյ . հետեցեցելոցն նմա և որոց ՚ի սկզբանէ անուանցն » (Պարսպ) :

Ապա ՚ի բարձրագունիցն ձայնից զաստուածութիւն որդւոյ քարոզեն աստուածաշունչ գիրք , և ՚ի նուաստագունիցն կոչմանցն զմարդանայն նորա վարդապետեն : Այսպէս խօսի և Աստուածաբանն . ասէ՝ «Ո՛չ զամենեւին զուգապատիւս գիտեմ զաւետարանական զձայնս , որք միանգամ վասն որդւոյ վարդապետեն , և ոչ ՚ի նոցունց յայտնեալս յարժանաւորութեանց . վասն զի ոմանք զբարձրութիւն աստուածութեան որդւոյն աստուծոյ մեծաձայնութեամբ քարոզեն . և կէսք աս նուաստութիւն մարդկային բնութեան զիջանեն » (Ի Բանն , որ ասեն զհայր մէջ քան զորդ) : Եւ եթէ՝ «Բան մտացն՝ զբարձրագոյնսն և զաստուածավայելուչ ձայնսն որոշելով աստուածութեանն : Իսկ զնուաստագոյնսն

և զմարդկան պատշաճն, նորոյ և յաղագոս մեր Աղամայ
և աստուծոյ չարչարեցելոյ ընդ գէմ մեղացն» (Ի Բանն,
յաշագոս «ԲԴ-ոյ»)։

ՋԻՆՉ Է ԱՍԵԼՆ «ՆՍՏԱԻ ԸՆԴԱՋՄԷ ԶՕՐ»

ՎՔ. րիստոս ըստ որում աստուած՝ նստի ընդ աջմէ
հօր, այսինքն ՚ի հաւասարութիւն մեծութեան . և զայս
ունի ՚ի յաւիտենական ծննդեան իւրումս Լ, և ըստ այսմ
«ջն նշանակէ զտիրական իշխանութիւնն, որպէս և ձախն
զձառայական հպատակութիւնն։ Սովին մտօք իմանայ և
մեծն Վարդան զբան Սաղմոսին՝ որ ասէ, «Եւ տէր ընդ
աջմէ քումմէ» . ուր ասէ, «Որդի ընդ աջմէ հօր, և
հոգի ընդ աջմէ որդւոյ . զի հոգին տէր է և բնաւն աջ
է անդ, և ոչ գոյ ձախ» (Ի Տէկնո-լեան Սաղմոսոյ)։

ՎԲ. րիստոս ըստ որում մարդ՝ նստի ընդ աջմէ հօր,
այսինքն ՚ի բարձրութիւն փառաց . և զայս ընկալաւ ՚ի
հօրէ ՚ի վարձ հնազանդութեան իւրոյ։ Սովին մտօք դնի
՚ի հանգանակի, զի ասէ «Նովին մարմնով» այս է թէ՛
ըստ որում մարդ։ Լ, յս է և ասելն առաքելոյն՝ «Աստ-
ուած յարոյց զնա ՚ի մեռելոց, և նստոյց ընդ աջմէ իւր-
մէ յերկնաւորս . ՚ի վերայ ամենայն իշխանութեան և
պետութեան» (Եփեսոսաց-ոյ . ա, 20)։ Նստելն նշանակէ
հանգչիլ . և արդարեւ կենարարն մեր յիսուս ՚ի բազում
աշխատութեանց իւրոց յոր աշխատ եղև յամենայն ՚ի
կեանս իւր ՚ի վերայ երկրի . հանգիստ է առ յամենայնէ՛
համբառնարովն առ հայր։

Իսկ արդ՝ եւ յերկինս գլուխն եկեղեցւոյ, զի ա-
մենայն անդամս մարմնոյ իւրոյ առ ինքն Ժողովեացէ։

Ընդրանիկն մեռելոց . զի ինքն եղիցի առաջին ՚ի
մէջ եղբարց բազմաց յարուցելոց ՚ի կեանս անմահ։

Երկրորդն Ադամ . զի կենդանացուցէ սրբարար խորհրդովք՝ զորս յառաջնոյն Ադամայ մեռեալք էին ՚ի մեղս :

Հովիւն քաջ . զի առաջնորդ եղեալ հօտին՝ զոր ստացաւ արեամբ իւրով, գումարեցէ ՚ի դաւիթն անքոյթ օթեանացն պատրաստութեան :

Փեռայն անմահ . զի եկեղեցի իւր սուրբ իբրև զկոյս մի անբիծ և անարատ՝ պսակազարդեալ փառօք մուծցէ յառագաստն լուսոյ երկնաւոր հարսնարանին :

Տէրն և թագաւորն , զի զհաւատարիմ հպատակս իւր և զկամարար ծառայս՝ որք փառաւորեցին զնա յառժամանակեայ կեանս , առ ինքն կոչեալ փառաւորեցէ զնոսա անկէան երանութեամբ , որպէս և ասացն՝ թէ « Ուր եսն եմ , անդ և պաշտօնեայն իմ եղիցի » (Յո՛ւհաննոս . ԺԲ , 26) :

ԶԻՆՉ Է՝ ՈՐ ԱՍԷ « ԳԱԼՈՅ Է ՆՈՎՆ ՄԱՐՄԵՆՈՎՆ ԵՒ ՓԱՌՕՔ ԸՕՐ Ի ԴԱՏԵԼ ԶԿԵՆԴԱՆԻՍ ԵՒ ԶՄԵՌԵԱԼԱՍ »

Օրինակն մեր , և այլք ամենայն գրեն « Գատել զկեն » :

Որովհետև ոչ որ զգոյ իւր ունի ՚ի յաւիտենից քանզի հանապազ փորձիւ տեսանեմք , զի էր երբեմն յորժամ ոչ էաք : Եւ ոչ որ զիւր ինքն էացոյց և ՚ի գոյ էած . քանզի չգոյն չկարէ ումեք շնորհել զգոյ : Ապա ամենայն էքս ՚ի միոյ յինքնագոյ էակէ՝ որ է աստուած , ունիմք զէանալն և զգոյ . և եմք նորա արարած :

Յայսմանէ ունիմք իմաստասիրել , զի աստուած՝ որ արար և ստացաւ զամենայն , ունի զտիրական իրաւունս ՚ի վերայ ամենայն արարածոց իւրոց . դատել ըստ բանից և ըստ գործոց , և հատուցանել իւրաքանչիւր ումեք ըստ արժանեաց , հպատակաց իւրոց և օրինապա-

Հից՝ զփառս ՚ի վարձ , և ասպտամբողաց և օրինազան-
ցից՝ զտանջանս ՚ի պատիժ :

Ապա ինքնագոյ էակն աստուած , այսինքն ամե-
նասուրբ երրորդութիւնն՝ Հայր և Որդի և սուրբ Հո-
գի , իբրև արարչապետ բոլորեցուն ունին իշխանու-
թիւն դատելոյ , և դատեն իսկ զկենդանիս և զմեռեալս .
Ուստի ասէ երանելի վարդապետն մեր Իգնատիոս .
«Յորժամ երկնից թագաւորութիւնն յերկիր իջանէ . և
ատեանն ուղղի . և երեքանձնեայ տէրութիւնն նստի
դատել . և ամենայն բնութիւնք անդր գումարեալ լի-
նին» (Ի Տէմո-թէան Ղո-կասոս) :

ԻՍԿ ԸՆԴԴԵՐ Ի ԿԱՏԱՐԱԾԻ ԱՇԽԱՐՀԻՍ ՄԻԱՅՆ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ
ՆՍՏԻՑԻ ԴԱՏԱՒՈՐ , ԵՒ Ո՛Չ ՀԱՅՐ ԿԱՄ ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Որպէս առ փրկութիւն մարդկային ազգի համբն-
թաց եղեն երեք աստուածային անձինք , բայց եզե-
րաբար անձն որդւոյ միայն մարմնացաւ . այսպէս և
յաւուրն դատաստանի երեք աստուածային անձինքն
հաւասարապէս են դատաւորք տիեզերաց , բայց գործ
դատաստանի մասնաւորապէս առ որդին վերաբերի :

Օ ի որովհետև դատողութիւնն է արտաքին գործ
աստուածային , միապէս պատշաճի սրբոյ երրորդու-
թեան . բայց ենթադրեալ զմարդեղութիւնն , պատշա-
ճի միայն որդւոյն աստուծոյ :

Ա . Օ ի յիսուս բրիստոս ոչ միայն արարչութիւն
ունի զիրաւունս տէրութեան ՚ի վերայ ամենայն մարդ-
կան՝ հաւասար հօր և սուրբ հոգւոյն . այլև փրկագոր-
ծութեամբն ունի զյատկական իրաւունս տէրութեան .
զի տուեալ զանձն փրկանս , դնեաց զմեզ ՚ի ծառայ-
ութեան : Սկզբոյ Ապա բրիստոս իբրև արարիչ և փր-
-

կիչ աշխարհի նստիցի դատաւոր ՚ի կատարածի աշխարհի վարձատրել զկամարար ծառայս իւր և պատուհասել զպատամբսն . ըստ այսմ՝ « Չամենայն դատաստան ետ որդւոյ իւրում » (Յովհաննոս . Է , 22) :

Բ . Որովհետեւ դատաստանն լինելոց է ՚ի մէջ աստուծոյ և մարդկան . կարեւոր է զի դատաւորն լինիցի քաջամուտ աստուածային իրաւանցն և արժանապատուութեան , և մարդկային յանցանացն և տկարութեան . ապա քրիստոսի պատշաճի դատողութիւնն . զի եղիցի իբրև զաստուած արդար , և իբրև զմարդ ողորմած ՚ի պակել զբարին , և ՚ի պատժել զչարսն . ըստ այնմ՝ « Աս է սահմանեալն յաստուծոյ դատաւոր կենդանեաց և մեռելոց » (Գործոց . Ժ , 42) :

Գ . Քանզի քրիստոս եղև միջնորդ հաշտութեան և բարեկամութեան մարդկան ընդ աստուծոյ , բառնալով զպատճառն թշնամութեան՝ զմեղսն , և արդարացուցանելով ձրի շնորհք . ապա քրիստոսի միջնորդին վայելէ դատել զմարդիկ . զի որք պահեցին զարդարութիւն իւր և զբարեկամութիւնն ընդ աստուծոյ՝ փառաւորեսցէ . և որք կորուսին զարդարութիւն իւր , և անդրէն բարկացուցին զսօճ՝ անարգեսցէ . ըստ այնմ՝ « Տայցեն պատասխանի այնմ , որ ՚ի պատրաստին ունի դատել զկենդանիս և զմեռեալս (* , Պիտրոս . Դ , 5) :

Դ . Եւ քանզի ամենայն ազգ մարդկան կենդանիք և մեռեալք՝ հանդերձեալ են մտանել ՚ի դատաստան , այնպիսոյն է անկ դատել , որ ունիցի զսեպհական իրաւունս տէրութեան ՚ի վերայ կենդանեաց և մեռելոց . իսկ « Տրիստոս մեռաւ՝ և եկեաց , զի մեռելոց և կենդանեաց առ հասարակ տիրեսցէ » (Հովհայեցոց . ԺԴ , 9) : Ապա քրիստոսի պատշաճի դատաստան առնել .

ըստ այնմ՝ « Չայս վկայութիւն դնեմ առաջի աստուծոյ
և յիսուսի քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս և ըզ-
մեռեալս » (Բ, Տէ՛մէ՛նի՛ . Դ, 1) :

Ե . Բանզի թագաւորն արարածոց քրիստոս՝ ետ
զտաղանդ պատուիրանին ՚ի մարդիկ շահեցուցանել
զնա . ապա նմա արժան է պահանջել զհամար յաւուրն
դատաստանի . զի որք շահեցուցին զաւանդն՝ վարձատ-
րեսցէ . և որք անփոյթ եղեն շահեցուցանել՝ դատա-
պարտեսցէ . ըստ այնմ՝ « Ամենեցուն մեզ յանդիման
լինել կայ առաջի ատենին քրիստոսի , զի ընկալցի իւ-
րաքանչիւր իւրով մարմնով՝ զոր ինչ դորձեաց յա-
ռաջ , եթէ բարի և եթէ չար » (Բ, Արե՛նի՛ացոց . Ե , 10) :

ԵՒ ԸՆԴԷ՛Ր ՅԱՐԷ «ՆՈՎԻՆ ՄԱՐՄՆՈՎ»

Որպէս զի ծանկցուք թէ մարմինն՝ զոր ՚ի մէնջ
էառ , անբաժանելի է յաստուածային բնութենէն . և
զի անշուշտ հաւատասցուք՝ թէ որով մարմնով ծնաւ՝
նովին համբարձաւ , և նոյն մարմնովն զալոց է ՚ի դա-
տաստան : Որպէս զի ամենայն աւանդապահ հաւատաց-
եալք զգալի աչօք տեսանկցեն զաստուածաճրայ՝ փառսն
նորա , և ականջօք լուիցեն զերանաւէտ կոչումն նորա ,
և ուրախասցին յուրախութիւն յաւիտենական : Իսկ
անհաւատք և ուխտադրուժք՝ հայեսցին ՚ի տեսիլն ա-
հաւոր , և զարհուրեսցին . և լուիցեն սպառնալիսն ան-
կենդան մահուն՝ և անդնդասոյց կորիցեն :

ԶԻՆՉ Է ԱՍԵԼՆ «ՓԱՌՌՌ ԶՕՐ»

Այսու ո՛չ միայն իմացեալ լինի աստուածային
փառքն քրիստոսի զոր ունի ՚ի հօրէ յաւիտենական

ծննդեամբ . այլ և փառքն աստուածացեալ մարմնոյն՝ զոր ընկալաւ 'ի հօրէ՛ յաւուրս մարմնոյ իւրոյ հնազան- ղութեամբ խաչի և մահու . ըստ այնմ՝ « Լեալ հնա- զանդ մահու չափ և մահու խաչի , վասն որոյ և աստուած զնա առաւել բարձրացոյց » (Փիլիպոյէց-ոց . Բ , 8) :

Այս ամենայն փառք որդւոյն աստուծոյ՝ ասի « չօր » կամ « Հայրական » , զի եթէ ըստ աստուածու- թեանն , և եթէ ըստ մարդկութեանն տուեալ է նմա յաստուծոյ հօրէ : Ի սոյն միտս վերածի և բանքն աստ- ուածային , որ ասէ՝ « Հայր՝ փառաւորեալ զորդի քու Եկն բարբառ յերկնից , և փառաւոր արարի (ըստ աստ- ուածութեանդ ,) և դարձեալ փառաւոր արարից (ըստ մարդկութեանդ) » (Յովհաննոս . ԺԲ , 28) : Այս հայրա- կան փառքն քրիստոսի՝ որով զալոց է 'ի դատաստան , է հրաշափառ տեսիլ կերպարանաց նորա՝ քաղցրահայ- եաց յընտրեալս , և ահագնատեսիլ յանարգեալս . և ճառագայթաւէտ փայլումն սրբոյ խաչին , և մարմնական նմանութեամբ երևումն հրեշտակական զօրաց , և մե- ծախայելուչ հանդէս առաքելոց և մարգարէից և ամե- նայն սրբոց , զանազանեալք դասիւ և փառօք ըստ իւ- րաքանչիւր արժանաւորութեան , որք նստիցին յաշխաբ- հաժողով ատենի անդ իբրև աթոռակիցք և սպասա- հարկուք թագաւորին երկնի և երկրի : Այս է ասելն քրիստոսի . « Յորժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք , և ամենայն հրեշտակք ընդ նմա » (Մատթէոսի . ԻԷ , 31) : Եւ թէ՛ « Յորժամ նստցի որդի մարդոյ յա- թոռ . փառաց իւրոց , նստցիք և դուք յերկոտասան ա- թոռ , դատել զերկոտասան ազգն Իսրայէլի » (Մատթէո- սի . ԺԷ , 28) : Եւ Առաքեալն՝ « Ոչ գիտէք , զի սուրբք զաշխարհ գատին » (Խ , Սրբնէաց-ոց . Է , 2) :

ՋԻՆՉԷ՝ ՈՐ ԱՍԷ. «ՈՐՈՅ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԵԱՆՆ Ո՛Չ ԳՈՅ ՎԱՆՃԱՆՆ»

Այլ օրինակք «Որոյ Թագաւորութեանն: Օրինակն մեր յաւելուածով ունի այսպէս. «Որոյ սուրբ և անմահ Թագաւորութեանն ոչ գոյ վախճանն»:

ՎՔրիստոս է Թագաւոր ամենայն արարածոց՝ իբրև տէր և նախախնամօղ նոցա. ըստ այնմ՝ «Տիրելդ ամենեցուն, խնայել տայ քեզ յամենայն» (Իճասպոս- լէան. ԺԲ, 16): Լիւ ըստ այսմ է անվախճան Թագաւորութիւն նորա ՚ի վերայ եղելոց՝ երևելեաց և աներևուութից. զի միշտ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյն պահէ և նախախնամէ զեղեալքս ամենայն ըստ իւրաքանչիւր յարմարութեան, և այսու ցուցանի ամենակարողութիւն նորա:

ՎՔրիստոս է Թագաւոր ազգի մարդկան իբրև փրկիչ և բարերար. ըստ այնմ՝ «Փոխեաց զմեզ յարքայութիւն որդւոյն իւրոյ սիրելւոյ, որով ունինք ըզփրկութիւն արեամբն նորա» (Սողոսացոց. ա, 13): Լիւ ըստ այսմ է անվախճան Թագաւորութիւն նորա ՚ի վերայ հաւատացելոց և անհաւատից, ընտրելոց և անտրտելոց, զի հաւատացելոց և ընտրելոց տայ զյաւիտենական փառս ՚ի յերկինս. և անհաւատից և անտրտելոց տայ զյաւիտենական տանջանս ՚ի դժոխս, և այսու երևի արդարութիւն նորա:

ՎՔրիստոս է Թագաւոր իմ ուղղափառ քրիստոնէից՝ իբրև գլուխ եկեղեցւոյ. ըստ այնմ՝ «Որպէս մարմին մի է, և անդամս բազումս ունի, և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մարմին է, նոյնպէս և քրիստոս» (ա, Սոլոնիացոց. ԺԲ, 12): «Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ» (Սողոսացոց. ա, 18):

Լիւ ըստ այսմ է անվախճան Թագաւորութիւն նորա

ի վերայ արդարոց և մեղաւորաց . զի հանապազ հոսե-
զարդարացուցիչ շնորհս իւր յանդամս մարմնոյ իւրոյ՝
եթէ յառողջս և եթէ յախտացեալս . և այսու յայտնի
լինի ողորմութիւն նորա:

Ապա թագաւորութիւնն քրիստոսի է սուրբ , զի
սրբէ զեկեղեցի իւր միջնորդութեամբ սրբարար խոր-
հրդոց . և անմահ՝ զի անձն , որ ունի ղթագաւորու-
թիւնն , է աստուած անմահ: Աւ վասն զի թագաւո-
րութիւնն քրիստոսի է անմահ , հարկաւ հետեւի՝ զի
իցէ ևս անխաճան և անեղծանելի . ըստ այնմ՝ « Իշխա-
նութիւն նորա իշխանութիւն յաւիտենական , որ ոչ
անցանէ , և թագաւորութիւն նորա ոչ եղծանիցի »
(Դանիէլի . Է , 14):

Ապաքէն յայտ եղև յասացելոցս ցայս վայր , զի
յետ դաւանելոյ զամենասուրբ երրորդութիւնն , հար-
կաւոր է հաւատացելոց խոստովանիլ զխորհուրդ մար-
դեղութեան բանին աստուծոյ , այսինքն է՝ հաւատալ
զմի տէր մեր յիսուս քրիստոս աստուած կատարեալ և
մարդ կատարեալ , և զնոյն չարչարեալ և յարուցեալ
վասն յաւիտենական փրկութեան մերոյ:

Իայց առ սքանչելի խորհրդոյս այսմիկ տեսութի՝
չարաչար մոլորեցան բազումք . քանզի ոմանք միայն ի
մարդկեղէն մտաց դատաստան եղեալ ապաստան՝ կա-
մեցան բացատրել . որպէս Նեստոր և նորուն համա-
միտք . և ոմանք թերակատար տեղեկութեամբ աստուա-
ծեղէն մատենից և վարդապետութեան հարցն սրբոց
համարձակեցան ճառել . որպէս անմիտն Եւտիքէս և
նմանիք իւր:

Թող զայստմիկ չարագրդիտ աղանդապետք , որ
զբազում ժամանակս խռովեցուցին զեկեղեցին քրիս-

տոսի, և յարուցին աղմուկ մեծ և շփոթութիւն ՚ի մէջ
զանազան ազգաց և թագաւորութեանց: Վանդի և
եղեն ոմանք, որք արձակաբար խօսելով զմեծէ խոր-
հրդոյս՝ պատճառս ետուն զայթակղութեան բազմաց,
և կէսք ոչ ըստ արժանւոյն ուշադիր եղեալ բողբոսկան
խմաստից և մտաց հեղինակին, պատճառս առին զայ-
թակղութեան. և յափշտակեալ ՚ի թափոյ կրից՝ անկան
յանօգուտ խնդիրս, և ՚ի տարապարտ վէճս:

Իսկոյ քանզի այս ամենայն հակառակութեան ա-
ռիթ այն էր, զի ասէին ոմանք՝ թէ քրիստոս ունի զեր-
կուս բնութիւնս, և ոմանք թէ զմի. յայն սակս կարե-
ւոր թուեցաւ մեզ բաւական բանիւ բազատրել աս-
տանօր զնշանակութիւն և զիմացուած հոմաձայն եզերս
Քնո-թիւն. յորոյ վերայ մանաւանդ հիմնեալ կայ ամե-
նայն դժուարութիւն:

Իւր պարտ և արժան է մեզ ոչ հարեանցի տե-
սութեամբ, կամ նախանձու և հակառակաբանութիւ.
այլ մանրագին խուզողութեամբ և խաղաղասէր մտօք
զիրացն ճշմարտութիւն ամենեցուն առաջի դնել, և
ըստ տանելոյ նիւթոյն դիւրիմաց և հեշտրնկալ ընթեր-
ցանելեաց ընծայեցուցանել. քանզի ՚ի պարզաբանիլ
նորուն, թերևս ինքնին լուծանին ամենայն անլուծա-
նելի կարծեցեալ կնճիռք:

ՁԻՆՉ ՆՇԱՆԱԿԷ ԶԱՅՆՍ “ԲՆՈՒԹԻՒՆ”

Երբս Քնո-թիւն՝ ըստ կազմութեանն ելանէ ՚ի
բառէս Բն, որ է ձայն բազմանշան. զի նշանակէ եր-
բեմն զբնութիւն. ըստ այնմ՝ “Ճառայելք այնոցիկ՝
որ ոչն էին ՚ի բնէ աստուածք” (Գաղաթայոց. Դ, 8):
Երբեմն զձնունդ կամ զսկիզբն. ըստ այնմ՝ “Որոց

դատաստանն 'ի բնէ՝ ոչ դատարկանայ" (Բ , ՊԵՊՐՈՒԻ . Բ , 3) : Լորբեմն զիսկականն . ըստ այնմ՝ "Աղքատն 'ի բուն բարեկամէ անտի քակի" (ԱՌՊՈՒՆ . ԺԷ , 4) : Լորբեմն զհաստադիտակն ծառոյ , այսինքն զստուար մասն ծառոյն , որ անմիջապէս ելանէ յարմատոյ , և լինի յենարան այլ ամենայն ճիւղոց . ըստ այնմ՝ "Եթէ ծերացի յերկրի արմատ նորա , և 'ի քարի վախճանեացի բուն նորա" (ՅՈՒԲՐԱ . ԺԴ , 8) : Լու զայլ նշանակութիւն նորա մարթ է տեսանել 'ի գիրս : Ուստի և նշանակութիւն ձայնիս Բնո-լի-ն է հոմ . զի երբեմն նշանակէ զքաղաքական օրէնսն . ըստ այնմ՝ "Ոչ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ , զի այր եթէ գիտաւոր է՝ անարգանք են նմա (* , ՈՐՆԻՍԱՅՈՅ . Ժ * , 14) : Լորբեմն զդատումն մտաց . ըստ այնմ՝ "Բնութեամբ զօրինացն զործիցեն" (ՀՈՒՎՏԱՅԵՅՈՅ . Բ , 14) : Լորբեմն զիսկականն . ըստ այնմ՝ "Միացեալ 'ի մարմնի բնութեամբ" (ՊՊՐԱՊ) : Լորբեմն զսովորութիւնն հնացեալ , որ և կոչի երկրորդ բնութիւն

Ի այց իմաստասիրաբար առեալ , այնպիսի նշանակութեամբ վարի 'ի մեր լեզուս , որպէս հիփոսպստիսն 'ի բարբառ յունաց . և ըստ այսմ ձայնս Բնո-լի-ն սովորաբար նշանակէ զզինչութիւն կամ զլեութիւն իրին հրաժարեցուցեալ յենթակայութենէ . որ և է սկիզբն և արմատ ամենայն յատկութեանց էակի Լորբեմն ըզգոյացութիւնն լրացեալ և թանձրացեալ , այսինքն նոյնացեալ ընդ ենթակայութեան կամ ընդ անձինս : Ուստի ըստ երկրպատիկ նշանակութեան եզերս Բնո-լի-ն , ուղլութեամբ ասի , թէ 'ի քրիստոս է երկու բնութիւն . կամ 'ի քրիստոս է մի բնութիւն : Լորի-ն՝ յաղաղս կրկին զոյացութեանցն՝ աստուածայնոյն և մարդկայնոյն , որով է . և զն՝ վասն միոյ ենթակայութեանն կամ անձին՝ որ է :

Քանզի և Ճմարիտ է ասելն , թէ ՚ի Պետրոս է երկու գոյացութի , կամ մի ինչ գոյացութիւն : Արկուն՝ վասն հոգւոյն և մարմնոյն , որով է . և մի՛ վասն անձին , որ է : Աւայտ ոչ է պարզ հակասական . զի թէպէտ է զնոյնոյ , այլ ոչ ըստ նոյնոյ . քանզի լինէր հակասական և սուտ , եթէ զերկուն և զմին ասէպք ըստ նոյնոյ : Աստ սմին սարասի ասի զՊետրոսէ , մահկանացու գոլ և անմահ . այլ ոչ ըստ այնմ որով է մահկանացու՝ է ևս անմահ . այլ ըստ այլոյ . զի ըստ մարմնոյն է մահկանացու , և ըստ հոգւոյն՝ անմահ :

Աս զի յայսմ է հաստատեալ քրիստոնէական հաւատոյս մերոյ Ճմարտութիւն . զի դաւանեցուք յաստուած միութիւն և երրորդութիւն : Այց եթէ աստուածութիւնն ըստ որոյ ունի զմիութիւն , ըստ այնմ ունիցի և զերրորդութիւն , Արիսին յայնժամ ՚ի վեր երեւի ամբարշտութիւն . զի միութիւնն բնութեան արոհի յերկս ըստ երրորդութեան անձանց : Աւ եթէ ըստ որոյ ունի զերրորդութիւն՝ ըստ այնմ ունիցի զմիութիւն , հրէամիտն Սաբէլի անդրէն նորոգի աղանդ . զի երրորդութիւն անձանց ՚ի մի ժողովի անձնաւորութիւն ըստ միութեան բնութեան . կամ որպէս հայհոյէին Սաբէլեանք՝ լինի որդեհայրութի , և աստուածութիւնն չարչարեալ . զի որպէս գրէ սուրբն Աթանաս . « Սաբէլեանք՝ որ միանձնական ասէին զերրորդութիւնն սուրբ , զմարգեղութիւնն և զչարչարանսն և զմահ յած հայր տարեալ մերձեցուցանէին » (Յաւագս երրորդութեան) :

Այց եթէ մի ըստ բնութեան , և երրորդութեան ըստ զանազանութեան անձանց ասացուք , բարեպաշտութեանն գտանիմք առ աստուած ճանապարհին հետեօք : Աստ այսմ օրինակի Ճմարիտ է ասել ՚ի քրիստ

տոս՝ մի բնութիւն , կամ երկու բնութիւն . երկու-ն՝ վասն կրկին գոյացութեանցն աստուածայնոյն և մարդկայնոյն . որք անշիտթ և անբաժանելի միաւորութեամբ՝ իրապէս միաւորեալք են ընդ միմեանս ՚ի միութեան անձին որդւոյն աստուծոյ . և յին՝ վասն միութեան անձին աստուածայնոյ , որ ընու ևս զտեղի մարդկային անձին . որով և մարդկային բնութիւնն ՚ի քրիստոս՝ երանազոյն ևս է վասն գոյաւորելոյ գոյութեամբն աստուածայնով՝ քան իւրովն սեպհական գոյութեամբ :

ՁԻՆՉ ԷՐ ՄԱԼՈՐՈՒԹԻՒՆՆ ՆԵՍՏՈՐԻ

Վեստոր հերետիկոսապետ պատրիարզ Աստանդնուպօլսոյ՝ զնէր ՚ի քրիստոս երկու բնութիւն և երկու անձնաւորութիւն . զի թէպէտ բացարձակապէս ոչ ասէր երկուս անձինս , բայց իրօք զնոյն հաստատէր . զի ոչ խոստովանէր զերկուց բնութեանց իրական և անձնաւորական միաւորութիւն ընդ միմեանց , այլ միայն ըստ յարակցութեան և ըստ բնակութեան որով ոչ ևս լինէր մի որդի և մի քրիստոս , այլ երկու որդի և երկու քրիստոս . այլ որդին աստուծոյ որ ՚ի հօրէ՛ ծնեալ ՚ի յաւիտենից , և այլ որդին մարդոյ ծնեալ ՚ի կուսէն ՚ի ժամանակի . որով և ոչ դաւանէր զսուրբ կոյսն Մարիամ աստուածածին , այլ քրիստոսածին և մարդածին . ուր և յասելն քրիստոսածին , իմանայր մարդածին . քանզի ասէր՝ թէ կոյսն Մարիամ ոչ ծնաւ զաստուածութիւն , այլ զմարդն քրիստոս . և չկամէր առնուլ ՚ի միտ , թէ աստուած և աստուածութի իրօք է նոյն , զօրութեամբ միայն զանազանեալ . և այսպիսի չարաչար վարդապետութեամբ հնարէր տապալել զհիմն քրիստոնէական

կրօնիս աստուածապաշտութեան, և ՚ի մոլորութիւն մարդապաշտութեան ձգել:

Քանզի գրէ սուրբն Ալեքեղ, թէ Նեստոր «Պատճառի մի քրիստոս և որդի և տէր խոստովանիլ, բայց բաժանէ: և սա յերկուս զմին և զանբաժանելին, մարդ յարակցեալ ասելով ընդ աստուծոյ բանին հոմանունութեամբ, համապատուութեամբ իշխանութեան. . . վասն այսորիկ զսուրբ կոյսն ո՛չ աստուածածին լինել ասեն, այլ մարդածին յաւէտ» (Պարսպ):
 Որ և իրաւամբ դատապարտեցու ինքն և համախոհք իւր ՚ի հարց անտի սրբոյ ժողովոյն Եփեսոսի, որ եղև յամի 431:

ԵՒ ԶԻՆՉ ՄՈՆՈՐՈՒԹԻՒՆ ԵՒՏԻՔԵԱՅ

Աւտիբէս աղանդապետ՝ վանահայր Սու կղզոյն, ընդ հակառակն Նեստորի՝ գնէր ՚ի քրիստոս մի անձնաւորութիւն և մի բնութիւն. զի շփոթէր զյատկութիւնս երկուց բնութեանց ՚ի միաւորութեան անդ, իբր այն թէ՛ յաստուածային և ՚ի մարդկային բնութենէ: Երրորդին ձուլեալ, և մի բնութիւն եղեալ: Այսպէս գրէ և մեծն Զովհան որոտնեցի՝ յասելն. «Աւտիբէս որ ասաց շփոթեալ զաստուածութիւնն և զմարդկութիւնն, և շփոթմամբ կոչէր մի բնութիւն յերկուց շփոթմանէ: զոր ՚ի դաւանութիւն սուրբ հարցն քարոզեցին զտէր մեր յիսուս քրիստոս աստուած կատարեալ, զնոյն և մարդ կատարեալ անշփոթ միաւորութեամբ, անայլայլելի անխոփոխելի բանն մարմին եղեալ» (Ի բանն ՚ի «Կլեմէնէ էր»):

Այսպէս աղանդաբանէր և չարախառն Մանի, ասելով՝ «Մշտնջենաւոր լուսոյն որդի զիւրական գոյա-

ցութիւնն յայանեաց ՚ի լերին, ոչ զերկու ունելով բնութիւն, այլ զմի յերևելին և յաներևոյթնո (Ի Լուսինս առ Սիւն-Լիանոս)։

Լրդ որչափ մոլորութիւնն Նեստորի էր խորամանկական, նոյնչափ Եւտիբեայն էր տգիտական. զի չկարէր առնուլ ՚ի միտ յետսամիտն, իբր զի եթէ յերկուց բնութեանց շփոթութեամբ մի բնութիւն ձուլեսցի, որպէս յանաբէ և ՚ի պղնձոյ ոսկեպղինձն. ապաքէն անփոփոխելի բնութիւնն նոյնին լինի փոփոխելի։

Իսկ եթէ մարդկային բնութիւնն ծախիցի յաստուածայնոյն. որպէս կաթիլ մի ջուր ՚ի մեծաբոց հրդեհէ, և մնասցէ մի բնութիւն աստուածային, յայնժամ քրիստոս նոյն մի բնութեամբն որով էակից և համագոյ է հօր, նովմբ եղիցի էակից և համագոյ մեզ. յորմէ զհետ գայ, զի աստուածութիւնն և մարդիկ լինիցին միմեանց էակից և համագոյ. և ըստ այսմ՝ կամ մարդիկ իցեն իբրև զաստուած անեղ և յաւիտենական, կամ աստուած իցէ իբրև մարդիկ եղական և ժամանակաւոր։

Ուստի և եկեղեցիք քրիստոնէից նշովիւք դատապարտեցին զսա ինքն աղանդապետն և զմոլորութիւն իւր չար. որպէս և եկեղեցիս հայաստանեայց ՚ի սկզբանէ մինչև ցայսօր ժամանակի դատապարտեաց և դատապարտէ։ Ուստի և երանելին Գրիգորիս կաթուղիկոս տղայ մականուանեալ՝ համաձայնութեամբ եպիսկոպոսայն Հայոց գրէ այսպէս. «Նշովմբ և զամբարիչտն Եւտիբէս՝ որ զմիութիւն աստուածութեանն և մարմնոյն շփոթմամբ դաւանէր, և ոչ յատկութեամբ ՚ի հայեցողութիւն բնութեանցն։

Պօղոս Սամստացի իբրև յերրորդ դարու չարաչար ուսուցանէր, թէ քրիստոս յառաջ քան զյաւիտեանս նախասահմանութեամբ միայն որդի էր աստուծոյ. իսկ զիրական որդիութիւնն ծննդեամբն ՚ի կուսէն ստացաւ. և բանն յաւիտեանական ոչ եթէ սքանչելի խառնմամբ միաւորեալ ասէր ընդ մարմնոյ, այլ հաճութեամբ միայն. որով և սոսկ մարդ դաւանէր զքրիստոս, և շնորհօք որդի եղեալ աստուծոյ:

Էջմիածնէ զսա սուրբն Աթանաս ընդ այլ հերձուածօղսն՝ յասելն՝ «Պօղոս Սամստացի աստուած ՚ի կուսէն խոստովանի. աստուած ՚ի Նազարեթէ երևեալ, և անտուտ զգոյութեան սկիզբն ունել, և սկիզբն թագաւորութեան առեալ: Բանն ներդարձօցն յերկնից և իմաստութիւն ՚ի նմա խոստովանի. նախասահմանութեամբ յառաջ քան զյաւիտեանս գոյով. իսկ էութեամբ ՚ի նազարեթէ ցուցեալ» (Յաշմգո յայբնո-լիւանն Գեառն): Լ, և երանելին Գրիգորիս կաթողիկոս. «Նշուիլեմբ. . . զՊօղոս Շամշտացին, և զՆեստոր նորուն հերձուածոյն նորոգիչ, որ մարդ դուզնաբեայ ասացին զաստուածն մեր, և զտէր մեր յիսուս քրիստոս յարակցութեամբ և հաճութեամբ շարայարեալ յաստուած, և ոչ անճառ և սքանչելի միաւորութեամբ»:

Թէոդորոս Մոպսուեստացի, այն է՝ Մամեստացի, չարաչար աղանդաբանէր. թէ քրիստոս որ ծնաւ ՚ի կուսէն, ոչ է բանն աստուծոյ ծնեալ ՚ի հօրէ ՚ի յաւիտենից, այլ մարդ ընկալուչ գործակցութեան բանին աստուծոյ. և այսպէս յերկուս բնութիւնս և յերկուս անձինս բաժանէր զմի քրիստոս: Գամբարիչտ վար-

դապետութիւն սորա հերքեալ դատապարտեաց սուրբն Սահակ պարթև հայրապետ հայոց Յաշտիշատ Տարօնոյ՝ ժողովով եպիսկոպոսաց աշխարհին Հայոց , յամի 435 :

Վիողորոս Տարօնացի վարդապետ 'Նեստորի' թէպէտ բանիւ մի ասէր զբրիստոս՝ այլ իրօք երկուս գաւանէր . և զի զերկաքանչիւր բնութիւնս 'ի բրիստոս' ըստ պատուոյ և ըստ իշխանութեան և ըստ կոչման միաւորեալ ասէր ընդ միմեանս , այսինքն բարոյական և հաւայքական միաւորութեամբ . և ոչ խոստովանէր զիրական և զանձնաւորական միաւորութիւնն բնութեամբ . ըստ որոյ լինէր երկու բնութիւն , երկու անձնաւորութիւն , երկու որդի , և երկու բրիստոս : Իստ այսմ ստորագրէ և սուրբն Սիւրբեղ Աղեքսանդրացի , ասէ՝ « Վիողորոս ոմն հոդեմարս՝ 'ի յերբեմն ժամանակի որպէս ասեն՝ հաղորդեցաւ ուղղափառաց եկեղեցւոյ : Սա 'ի բաց եղեալ որպէս և կարծեաց զՄակեդոնի աղանդոյն զպիս , յայլ անկաւ հիւանդութիւնս . քանզի խորհեցաւ և գրեաց , եթէ այլ որդի առանձին է , որ 'ի զաւակէն Դաւթի է ծնեալ 'ի սրբոյ կուսէն , և այլ գարծեալ առանձնապէս որդի , որ յաստուծոյ հօրէ է բանն : Եւ որպէս մորթով ոչխարի զգայլ ծածկեալ պատճառի մի բրիստոս ասել , միայն վերաբերեալ զանուն՝ յաստուծոյ հօրէ ծնեալն բան՝ որդին միածին , և որպէս շնորհի կարգաւ հետեւեցուցեալ զայն . և որպէս զնոյն ինքն ասէ , և զոր 'ի զաւակէն Դաւթի որդի կոչեալ , որպէս միաւորեալ ասէ ընդ ճշմարիտ որդւոյն : Եւ միաւորեալ ոչ որպէս մեքս փառաւորեմք , այլ միայն ըստ պատուոյ , և ըստ իշխանութեան , և ըստ հաւասարապատուութեան » (Պարսպ) :

Այլք չարաչար մտօք մի բնութիւն ասեին աղանդաւորք՝ բազումք եղեն . զորս միտլ՝ բայց անհերքելի ձեռնարկութեամբ ըմբերանէ : մեծն Գրիգոր Տաթևացի , յիշատակելով զգլխաւորացն նոցա զանուանս և զմոլորութիւնս այսու օրինակաւ :

«Ար պարզապէս մի բնութիւն ասեն բանին և մարմնոյն , կատարեալ ամբարշտութիւն է . զի մարմինն է՝ ՚ի կուսէն , և կոյսն յազգէն Ադամայ , և Ադամ ՚ի հօղոյ պարսած . արդ հօղոյ արարածի՝ և նոյ արարչի մի և նոյն բնութիւն ասել ամբարշտութեան է կարծիք :

«Իսկ որք յերկուցն մի եղեալ բնութիւն ասեն , որպէս թէ յաստուծոյն և ՚ի մարդոյն եղեալ մի բնութիւն՝ ոչ աստուծոյ և ոչ մարդոյ . նորա ՚ի կիսակէշ նման զունօրէնութիւնն սուրբ համբաւեն . և կամ առաջօք և ունայնութիւն , որպէս Մանկրեցւոցն և Եւտիքի կարծիք :

«Գարձեալ մի բնութիւն ասէ Ապողինար . որ զհողի և զմիտս ուրացաւ , և միայն զմարմին ասէ առեալ , և ՚ի տեղի հողւոյ զբանն բնակեալ : Այլ և մի բնութիւն ասաց Եւտիքէս , շիտթեալ և խառնակեալ զտարբերութեան յատկութիւնս բնութեանց :

«Գարձեալ մի բնութիւն ասաց միւս Եւտիքէս . ոչինչ առեալ մարմին ՚ի կուսէն , այլ իբր ընդ խողովակ անցեալ : Գարձեալ մի բնութիւն ասեն , որք առաջօք և նմանութեամբ զճշմարիտ մարդեղութիւնն համբաւեն : Գարձեալ մի բնութիւն համբաւեն Մարկեղոս և Փատինոս , որք ասեն զսկիզբն բանին ՚ի կուսէն առեալ , և ոչ նախ բան զյաւխտեանս ՚ի հօրէ ծնեալ :

«Այլ և մի բնութիւն ասեն , որք միայն ստկ

մարդ խոստովանին զքրիստոս, և ոչ աստուած մարդաց-
եայ, (որպիսի ոմանք էին Վաղենտինոս, և Սոփրոնիոս,
և Յուզիանէ, որպէս գրէ Յոհան իմաստասէր):

«Վարդապետն չար աղանդաւորացն համբաւօղք
մի բնութիւն բանին և մարմնոյն . զորս զայսպիսի խոր-
հօղսն նզովէ եկեղեցի սուրբ» (Ի գիրք հարցմանց . 81):

ԶԻՆՈՒՆ ԴԱՒԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԶԱՅՍ ՄԵԾ ԵՒ
ՍՔԱՆՉԵԼԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Եկեղեցի հայաստանեայց ՚ի սկզբանէ լուսաւո-
րութեան իւրոյ ՚ի սրբոյ լուսաւորէն մինչև ցայսօր
ժամանակի՝ դաւանի ՚ի քրիստոս զերկուց բնութեանցն
իրական միաւորութիւն անշփոթ և անբաժանելի . և
զնոյն ինքն յիսուս քրիստոս՝ մի անձն մի դէմ և մի բնու-
թիւն մարմնացեալ և մարդացեալ . որպէս և խոստովանի
կաթողիկէ և առաքելական եկեղեցին քրիստոսի ընդ-
տիեզերս ամենայն . որով հեռի գտանի ՚ի Նեստորի
չարաչար բաժանմանէն, և յԵւտիքեայ շփոթմանէն:

Իսկ զբովանդակութիւն ճմարիտ խոստովանու-
թեան եկեղեցւոյ մերոյ կարէ ամենայն որ տեսանել ՚ի
թուղթան երանելի հայրապետին մերոյ սրբոյն Ներսէ-
սի շնորհալուոյ, գրեալ առ եկեղեցին Յունաց . յորմէ
զհաստուած ինչ բանից դիցուք աստանօր . « Հաւատամք՝
եթէ բանն որ եղև մարմին ըստ Յովհաննու՝ ոչ ՚ի մար-
մին փոխեցաւ զիւրն կորուսանելով բնութիւն . այլ ընդ
մարմնոյ միացեալ՝ եղև մարմին ճճմարտապէս, և մնաց
անմարմին որպէս էրն ՚ի սկզբանէ: »

«Վչ այլ ոմն մարմին և այլ ոմն անմարմին, այլ
մի և նոյն քրիստոս է մարմին, և է անմարմին . մարմին
ըստ մարդկութեանս զոր ան, և անմարմին՝ ըստ աստ-

ուածութեանն զոր ունէր: Աւ նոյն տեսանելի և անտեսանելի, շօշափելի և անշօշափելի. ժամանակեայ և առանց ժամանակի, որդի մարդոյ և որդի աստուծոյ. համազոյ հօր ըստ աստուածութեան, և համազոյ մեզ ըստ մարդկութեանն: Այլ ոմն և ոմն այսոքիկ, այլ մի էութիւն և մի անձնաւորութիւն 'ի յերկուց բնութեանց 'ի մի քրիստոս միացելոց՝ անշփոթելի և անբաժանելի միաւորութեամբ» (առ Մանուէլ Կայսր):

Աւ դարձեալ՝ «Այլ ըստ Աեստորի 'ի յերկուս բնութիւնս և 'ի յերկուս դէմն բաժանեմք զմին քրիստոս. և ոչ ըստ Եւտիքեայ և համախոհից նորին 'ի մի բնութիւն ժողովեմք շփոթմամբ և այլայլութեամբ: Այլ ունիմք ասել զերկու բնութիւնն ըստ մեծին Գրիգորի աստուածաբանի յառ Աղոդիոս թղթին դրեալ ընդ դէմ Ապողինարի և որոց ընդ նմա. եթէ բնութիւնք երկուք. յաւելլու ասել և զպատճառն. քանզի աստուած և մարդ. . . և այլուր ասէ. եթէ կրկին էր. յայտ է թէ բնութեամբ, և ոչ անձնաւորութեամբ: Իսկ զմի բնութեանն եղանակ զոր ասեմք մեք, մի որ յայլ դէմ կարծիցէ. բայց յաղագս 'ի յերկուց բնութեանց անբաժանելի միաւորութեանն, զոր ուսաք 'ի յուղղափառ վարդապետաց եկեղեցւոյ, մանաւանդ 'ի սրբոյն Ալեքիէ Աղեքսանդրացւոյ՝ որ ընդ դէմ Աեստորի. որպէս և գրէ յառաջին թուղթն առ Սեկունդոս, եթէ՝ Խոստովանիմք մի բնութիւն բանին մարմնացելոյ:

Աւ 'ի վախճանին կնքէ ասելով՝ «Արդ և մեք առաջնորդ ունելով զսոսա առ ճմարտութեան ճանապարհն՝ որ տանի առ աստուած, ուղղապէս և ազատաբար բերիմք 'ի կրկին տեսութիւնս բանից. մի ասելով՝ բնութիւն բանին մարմնացելոյ՝ ըստ սրբոյն Ալեքիի յա-

դագս անձառ միաւորութեանն . և երկուս՝ ըստ աստուածաբանին Գրիգորի վասն անկորուստ և անյեղլին գորոյ բնութեանցն աստուածայնոյն և մարդկայնոյն» :

Այսպէս խոստովանին ամենայն հարբ և վարդապետք համօրէն եկեղեցւոյ :

Սուրբն Դիոնէսիոս . « Մարդասէր առաւելապէս , զի մեզ ճշմարտութեամբ բողոքովիմբ միովն իւր անձնաւորութեամբն կցորդ եղև , ՚ի վեր կոչեցեալ առինքն և վերադրեալ զմարդկային յեանութիւնս . յորմէ անձառաբար պարզն յիտուս շարադրեցաւ . և մշտնջենաւորն՝ էառ զյարածդութիւն ժամանակաւոր . և ՚ի ներքս եղև ՚ի մերումս բնութեան . որ՝ քան զամենայն կարգ ամենայն բնութեան՝ գերազոյապէս է գերազանցեալ , անփոխադրելի և անշփոթ զյատկութիւնսն իւր պահելովոյ (« S^t Dⁿ Iⁿ C^o . ԳԼ Բ^aն , Գ) :

Սուրբն Սիւրբեղ Աղեքսանդրացի . « Ո՛չ ՚ի մարմնոյ բնութի փոխադրեցաւ բանին բնութիւնն , և ո՛չ մարմնոյն ՚ի նորայն . այլ յիւրում բնութեան իւրաքանչիւր ուրուք մարմնացելոյ , ըստ այժմու առ ՚ի մէնջ ասացելոց բանից՝ անձառելի և անապական միաւորութիւնն միեցոյց մեզ զորդւոյ բնութիւնն , սակայն որպէս ասացի՝ մարմնացելոյ » (Պարսպ) :

Եւ դարձեալ՝ « Չհաւասարութիւնն որդւոյ վրկայելով Պողոս զոր ունի առ հայր՝ ասէ ուրեմն հաւաստեաւ . Որ ՚ի կերպարանս աստուծոյ է , ո՛չ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար աստուծոյ : Ասէ զնա և նուաստանալ վասն չարչարանաց մահունչ : Արդ՝ ո՛չ հնար գորով ՚ի վերայ միոյ և նորին նշանակել զոյգ՝ մեծն և փոքրն բնաւորապէս : Խնդրելի է , թէ զիսորդ ՚ի վերայ աստուծոյ բանին՝ ամբողջ պահեսցուք :

զերկաբանչիւրան. և ՚ի մին միայն զերկոսին կալ տացուք:
Ապա ուրեմն ըստ որում է բնութեամբ աստուած,
հաւասար եղիցի ծնողին իւր աստուծոյ. և ըստ որում
եղևն մարդ՝ նուաստանալ ասի» (Գ. անկ. Գլ. Ժ. 5):

Սուրբն Ամբրոսիոս. «Առեցեն այսուհետև ՚ի
բանից նանիր խնդիրք. զի արքայութիւնն աստուծոյ
որպէս և գրեալ է, ոչ հաւանութեամբ բանից մարդ-
կայնոց է, այլ ցուցմամբ զօրութեան: Պահեսցուք
զննթերցումն աստուածութեանն և մարմնոյն. մի՛ եր-
կաբանչիւրիւն խօսի որդին աստուծոյ. զի ՚ի նմա եր-
կաբանչիւր բնութիւնն է. նոյն ինքն խօսի, և ոչ հանա-
պաղ միով օրինակաւ խօսի: Տէ՛ս ՚ի նմա երբեմն փառս
աստուծոյ, և երբեմն մարդոյ կիրս: Զի որպէս զաստ-
ուած՝ ուսուցանէ զաստուածայինն, վասն զի բան է.
և որպէս մարդ՝ խօսի զմարդկայինն, վասն զի խնով
բնութեամբ խօսի. սա է հացն կենդանի՝ որ էջն յերկ-
նից» (Պարտապ):

Սուրբն Աթանաս. «Խոստովանիմ զնա որդի աս-
տուծոյ և աստուած ըստ հոգւոյ, և որդի մարդոյ ըստ
մարմնոյ. ոչ երկուս բնութիւնս զմի որդին. մին երկրպա-
զերի և միւսն աներկրպազերի. այլ մի բնութիւն բա-
նին աստուծոյ մարմնացելոյ, և երկրպազերի հանդերձ
մարմնով իւրով միով երկրպազութեամբ» (Պարտապ):

Լուգարձեալ՝ «Արդ՝ եթէ լիցէք Պետրոսի որ
ասէ, զսա և օծեալ և տէր աստուած արար՝ զյիսուս
զոր գուքն խաչեցէք. յո՞յր վերայ զարարն առնուցուք.
՚ի վերայ բանին աստուածութեանն, և զի՞ ևս Զարիսս
պարսաւիցիք՝ զհաւասար նոցա խորհելով: Իսկ եթէ ՚ի
վերայ որ ՚ի բանին ծառայի կերպի, բնդէր ընդ անձանց
ձերոց մարտնչիք» (Յաղագս յայսնութեան):

Դարձեալ՝ «Որչափ խոնարհադոյն ճանք և դորձք՝ ՚ի նուաստագոյն մարմինն յխուսի գրեալ են՝ իմասցի . իսկ որչափ դարձեալ հրաշափառք՝ ՚ի բանին աստուածութեանն : Յորժամ քաղցենայ յետ պահելոյն՝ մարմնոյ նուազութիւն . իսկ յորժամ ՚ի հինգ հայցից հինգ հազարս առանց մանկոց և կանանց կերակրէ , և երկոտասան սակառի յաւելուած մնացորդացն հաւաքի , յծնութեանն բանին գործ :» (Որ առ Անդրիոս) :

Սուրբն Գրիգոր աստուածաբան . «Ոյ այ ևս այսուհետև յաղագս պատուիրելոյն , և պահելոյ զհրամանն , և զհաճոյսն յամենայն առնելոյ բուռն հարկանել մեզ . և ևս յաղագս կատարելութեանն և բարձրանալոյն , և ուսանելոյն յորոց չարչարեցան՝ զհնազանդութիւնն . և քահանայապետութեանն և պատարագին , և մատնելոյն , և պաղատանացն առ որ կարող էր զնա փրկել ՚ի մահուանէ , և անդիտանալոյն , և բրտնելոյն արիւն , և աղօթելոյն , և որ այլ ինչ այսպիսիք . եթէ ոչ ամենեցուն կանխաւ յայտնի էր , եթէ յաղագս չարչարելոյն այսոքիկ անուանք են , և ոչ անխփովսելի բնութեանն , և բարձրագոյն քան զչարչարելն» (Յաղագս որդւոց) :

Սուրբն Սեբերիանոս . «Պահեաց ասէ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր , և յետոյ քաղցեալ . և յայտ է թէ յորժամ կամեցաւ՝ քաղցեալ . տեսանե՞ս զի աստուածեղէն բնութիւնն առանց կարեաց է , և ըստ տեսչութեանն՝ մարմնով վաստակի և քաղցնու :» (Ճառ . 2) :

Սուրբն Եփրեմ խորի . «Չարչարելի և առանց չարչարանաց . աստուած և մարդ միաւորութեամբ կատարեալ . և ՚ի մին երկուս , և յերկուսն մի» (Ի ճառն այլախփելոցն) :

Սուրբն Լուսաւորիչ . «Միացաւ 'ի մարմնի անդ
բնութեամբ, և խառնեաց զմարմինն ընդ իւր աստուա-
ծութիւնն . որք հաւատացին 'ի նա՝ նորա վայելեցեն
յանպատում բարիսն» (Ագաթանգեղոս)։

Եւ դարձեալ՝ «Հին աւուրցն վասն մեր մարմնա-
ցաւ . և առ զկերպարանս մարմնոյ տկարութեանս մե-
րոյ , զի զմեզ փոխեցէ յանմահութիւն իւր . սակայն
թէ պէտ զգեցաւ մարմին , և էջ 'ի մեր նմանութիւն .
այլ կայ 'ի փառս հայրենի բնութեան աստուածութե-
իւրոյ , որպէս և էր իսկ . և է՝ և կայ յաւիտեան՝ ընդ
հօր իւրում 'ի բարձունս՝ յիւրում բնութեանն՝ հան-
դերձ մարմնովն զօր 'ի մէնջ զգեցաւ» (Ագաթանգեղոս)։

Եւ դարձեալ՝ «Ա՛ռ մարդկային կերպարանսն և
զգեցաւ մարմին , և էջ 'ի մեր նմանութիւն . այն՝ որ
անբաւն էր և անհաս՝ յամենայն լրութեան աստուա-
ծութեան . և վասն մեր էջ 'ի չափաւորութիւն , և ան-
փոփեցաւ 'ի մարմին . բովանդակեցաւ ճշմարտութեամբ
'ի մարմնին . և ճշմարիտ իսկ մարդ եղև, և էջ յանար-
դութիւն՝ զի զմեզ բարձրացուցէ . սակայն իւրոյ
աստուածութեամբն յերկինս էր և յերկրի՝ առ հօր, և
ընդ հօր . և ամենայն արարածք հրամանաւ նորա շար-
ժին ըստ իւրաքանչիւր կարգի կազմելոյ . սակայն թէ-
պէտ վասն մեր էջ յանարդութիւն . այլ կայ յիւրում
բնութեանն , որպէս և ինքն իսկ ասէ՝ թէ , Ես նոյն
եմ և ո՛չ փոխեցայ» (Ագաթանգեղոս)։

Սուրբն Յովհանն իմաստասէր . «Անպատկառացոյց
սուրբ հարբն երկուց բնութեանց քրիստոսի աստուա-
ծայնոյն և մարդկայնոյն լեալք . բնութիւնք երկու ա-
սելով, վասն զի աստուած և մարդ : Եւ եթէ 'ի միասին
եկին բնութիւնքն : Եւ եթէ հաւաստի զերկոսին ունէր

զանութիւնն քրիստոս: Եւ եթէ՛ կրկին էր քրիստոս մարդ էր՝ որ երևէր, և աստուած էր՝ որ ոչն երևէր: Եւ որ այլ ինչ սոյնպիսիք յայլոցն ասացեալ եղեն: Ոչ եթէ՛ զերկոցունցն ասելով՝ հրաժարէին ասել զմին. և կամ եթէ՛ զսորին հակառակն՝ զմին խոստովանելով՝ յամառէին յերկուցն գոլ խոստովանութիւն. այլ համարձակաբար երկոքումբքս այսոքիւք բարեփառութե՛ր դամբարօք փայլեալ պայծառանային, երկուս ըստ բնութեան, և մի ըստ միաւորութեան զքրիստոս քարոզելով: Ընդ ձեռն որոյ ցուցեալ լինէր աստուծոյն բանի բնութիւն անեղանելի և ՚ի հօրէ. իսկ մարմնոյ նորին գոյացութիւնն ՚ի կուսէն և արարածականն:

Երանելին Իգնատիոս. « Չորօրինակ մարմինն խառնեալ ընդ բանին՝ եղև որ ինչ էր բանն, և զմարմին լինելն ոչ կորոյս. այլ մնաց մարմին ըստ ձևոյն և ըստ թանձրութեան բնութեանն: Ըստ սմին օրինակի և աստուածութիւնն միացեալ ՚ի մարմնի՝ եղև մարդ առանց ապականացու կրից. և պահեաց զիւր իմանալի բնութին անպարագրելի և անխփփոխ» (Ի Տէլնո-Լեան Ղո-խսոս):

Սուրբն Ներսէս Լամբրոնացի. « Իսկ մէք հաւատամք զաստուած մարմնացեալ և մարդացեալ անյեղաչրջելի բնութեամբ. զի ես նոյն եմ ասէ և ոչ փոփոխիմ. և ոչ մարմին որդւոյ մարդոյ այլայլեցաւ ՚ի բնութիւն աստուծոյ. այլ նոր և սքանչելի խառնուածով միաւորեցան երկու բնութիւնքն ՚ի մի անձնաւորութիւն, պահելով և յետ միաւորութեան անշփոթ ըզտարբերութեան բնութեանցն յատկութիւն» (Ի Գերգայ Եկեղեցոյ):

Սեճն Գրիգոր Տաթևացի. « Խոստովանմբ ըզբանն անձ, ոչ մասամբ՝ այլ լրութեամբ իւր մարմնաց-

եալ և մարդացեալ , ըստ Պօղոսի՝ թէ՛ ՚ի նմա բնակե-
ամենայն լրումն աստուածութեանն մարմնապէս : Ո՛չ
հեղմամբ կամ շփոթմամբ , այլ անշփոթ միաւորութիւն
զբանն մարմին եղեալ . և միաւորեալ զբնութիւնս մեր
կատարելապէս ընդ իւրում աստուածութեանն : Եւ
երևեալ մարմնովն մի բնութիւն տեսակացեալ , և մի
անձնաւորութիւն , մի տէր , մի որդի , զսուրբ հարցն
ուղղափառութեանն (Հարցմանց) :

Եւ դարձեալ՝ « Անմարմինն մարմնացաւ , բանն
թանձրացաւ , և աստուածն մարդ եղև , մի անձնաւո-
րութեամբ , և միաւորեալ բնութեամբ՝ մի տէր , մի
քրիստոս , մի որդի նոյ և որդի կուսի » (Յոսիփորիկն) :

Եւ դարձեալ՝ « Թէպէտ բնութեամբ միաւորի ,
տարբերութիւն ո՛չ բաւնի . զի տարբերութեանցն մնալ
խափանումն ո՛չ առնէ միաւորութեանն , որպէս հոգւոյ
և մարմնոյ , ոսկւոյ և հրոյ » (Յոսիփորիկն) :

Եւ ՚ի բանն , (հոգիս յօժար է , և մարմինս տկար) ,
ասէ . « Բանին կամօք ախորժէր զմահ . և զգայական կա-
մօք մարմնոյն խորշէր ՚ի մահուանէ » (Ի չաղոսածն Մար-
իէոսի աւագարանին) :

Եւ ՚ի վերայ այնմ (լուղ և մեղը կերիցէ) ասէ .
« Զի ստուգապէս մարդ եղև , հաստատէ զայս կերակ-
րովն՝ որ տղայոցն է վայելչական . վասն զի ծնեալն իմ-
մանուէլ ո՛չ սոսկ մարդ էր , և ո՛չ միայն աստուած . այլ
աստուած մարդացեալ , և ՚ի մարմին ո՛չ փոփոխեալ :
Վասն այն երբեմն զաստուածայինսն ճառէ , որպէս ՚ի
կուսէ ծնաներն , և իմանուէլ կոչին . և երբեմն զմարդ-
կայինս , որպէս կերակրին , որ մեղ է վայելչական »
(Ի չաղոսածն Եսայեայ Տարգարէի) :

Արդ՝ եթէ զամենայն բանս հարց և վարդապե-

տաց 'ի մէջ մատուցուք՝ երկար իմն լինի . ապա կրն-
քեսցուք զբանս մեր բանիւք Հարականին , որ ասէ .
«Բանն թանճրանայ 'ի մարմնի , մարմնանայ անմարմինն ,
միացեալ բնութեամբ 'ի յերկուց , ախտակրեալ 'ի վերայ
քառաթե խաչին , և վերառեալ 'ի թաղմանէ : անապա-
կան . նզովեցին զՆեստոր , և զաղանդն իւր պիղծ » :

ՁԻՆՁ Է՝ ՈՐ ԱՍԷ : « ՀԱՒԱՏԱՄՔ ԵՒ Ի ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՅԱՆԵՆՆ
ԵՒ Ի ԿԱՏԱՐԵԱՆՆ »

Արիս հերեփկոս՝ զամենայն բանս աստուա-
ծաշունչ գրոց , որք խոնարհադոյնս զորդւոյ բարբա-
ռին , և զմարդկային տկարութիւնն ցուցանեն , զայնտիկ
առ աստուածութիւն որդւոյն վերաբերէր , և զառ 'ի
հօրէ ստացեալ ասէր զորդի . և մոլորամիտ ենթադրու-
թեամբն՝ թէ վասն զի որդի է ստացուած , մակարեբէր
հայհոյիչն , թէ ապա և հոգին՝ որ կոչի հոգի քրիստո-
սի , է ստացական :

Եւ զի հիմնական մոլորութիւն նորա էր ցուցա-
նել զորդի արարած . յորմէ զհետ գայր ըստ թիւր
դրութեան իւրոյ արարածական լինել և հոգին իբրև
'ի նմանէ եղեալ . ամին իրի հարք սուրբ ժողովոյն Նիկիոյ
բազում մասամբ քարոզեցին զաստուածութիւն որդ-
ւոյ . իսկ վասն հոգւոյն սրբոյ պսալտի ինչ միայն ասացին ,
« Եւ 'ի սուրբ հոգին » :

Քանզի 'ի դաւանելն զորդի ճշմարիտ աստուած
համադոյակից հօրն , անշուշտ դաւանեցին և զհոգին
սուրբ ճշմարիտ աստուած համաթուեալ ընդ հօր և
որդւոյ . ըստ որում ասաց և տէրն . « Մկրտեցէք զնոսս
յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ » (Մատթէոսի
Էւ , 19) :

Յետ Արիտի յարեալ Մակեդոն , որ անհաւան զինքն ցուցանէր մոլորութեանն Արիտի , բայց ոչ պակաս քան զնա երևեցաւ յամբարշտութեան . զի զանեղ հողին աստուծոյ արարած և ստացական լինել համբաւէր . և զբազումս ՚ի հաւատացելոց ժանտալից լեզուաւն կորուսանէր : Որ և դատապարտեցաւ ՚ի սուրբ Ժողովն Աոստանդնուպօլսոյ . յամի 381 :

Աւտի ասէ եկեղեցի . « Արմատ անիծից կրկին բնծիւղեալ , Մակեդոն հայհոյիչ դայլ ազականիչ , յարձակեալ խողխողէր զընտիրն ՚ի հօտէ դառանց , և դահալէժ ցնդմամբ խարդաւանեալ ՚ի վիհն , նզովեցին զՄակեդոն զհայհոյիչ լեզուն » :

Բանզի չարաչար մեկնելով զքան աւետարանչին՝ որ ասէ , « Ամենայն ինչ նովաւ եղև » (Յովհաննու . 4 , 2) : Ասէր մոլար մտօք , թէ ապա և հողին եղեալ է յորդւոյ : Աւ ոչ յայն հայէր , թէ « մենայն ինչն տարածի միայն առ էակն ստեղծական , և ոչ նաև առ անստեղծըն . որպէս յայտ է ՚ի հետեւեալ բանիցն՝ որ ասէ , « Որ ինչ եղևն » (Յովհաննու . 4 , 2) :

Ապա եթէ « մենայն ինչն՝ անխտիր փակէր յինքեան զէակն անստեղծ և ստեղծական , ոչ միայն հողին սուրբ՝ այլ և հայրն լինի արարած յորդւոյ , զոր և նա ինքն աղանդապետն չընդունէր : Աւտի յոյժ վայելչապէս ՚ի հանգանակի մերում առատրի հողւոյ ձայնս անէլ , ՚ի հերքումն հայհոյութեան հոգեմարտից , որք եղական ասելն զհողին սուրբ :

Աւ արդարև կարի շլամիտք եղևն հոգեմարտք քան զբրիստոսամարտս . զի նորա տեսանելով զորդի յեղական բնութեան մերում քաղաքախարեալ , և խկապէս մարմին եղեալ ժպրհեցան արարած զնա ասել :

խիկ հոգեմարտք չունելով ինչ այսպիսի նուաստագոյնս բարբառիլ զհոգւոյ , յանդգնեցան արարած ասել զնա և պաշտօնատար :

Օ ի թէպէտ յարարչութեան աշխարհի երեւէր հոգին սուրբ հոյմոյ օրինակաւ և խորայլեան բանակին՝ որպէս սուս լուսոյ , և ճարգարէիցն պարուտողի ազգի ցուցակութեամբ . և ՚ի Յորդանան գետ՝ ՚ի կերպարանս աղաւնոյ . և ՚ի լեառն թափորական՝ ՚ի նմանութիւն ամպոյ , և ՚ի վերնատունն՝ ՚ի հրեղէն լեզուս . բայց ոչ ուրեք ասացին զիբք , թէ հոգին սուրբ է իսկապէս հոյմն , կամ լոյս , կամ աղաւնի , կամ ամպ , կամ հրեղէն լեզու . որպէս ասի զորդւոյ , թէ որդին է իսկապէս մարդ . զի հոգին սուրբ ոչ ուրեք երբէք միաւորեցաւ անձնաւորապէս ընդ արարածական բնութեան :

Այս զի որդին աստուծոյ անօրինաբար խօսելով բազում անգամ նուաստացուցանէր զանձն , որպէս այն՝ զոր ասաց չրէից «Եթէ որդիք Աբրահամու էիք , զգործան Աբրահամու գործէիք . այլ այժմիկ ինդրէք սպանանել զիս՝ զայր մի որ ձեզ զճմարտութիւնն խօսեցայ , զոր լուսայ ՚ի հօրէ իմմէ » (Յովհաննու . Ը , 39) : Իսկ զաստուածութիւն հոգւոյն հաստատէր հանապազ . ըստ այնմ՝ «Որ ոք ասիցէ բան զորդւոյ մարդոյ թողցի նմա , բայց որ զհոգւոյն սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա . մի յայսմ աշխարհի , և մի ՚ի հանդերձելումն » (Մատթէոսի . ԺԲ , 32) :

Առարկէին հոգեմարտք , եթէ հոգին սուրբ է կատարեալ աստուած՝ ընդէր ոչ խօսի և ուսուցանէ որպէս ինքն կամի , այլ որպէս լսէ յաստուծոյ հօրէ . քանզի ասէ քրիստոս՝ «Ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիցի , այլ զոր լսիցէ՝ խօսիցի » (Յովհաննու . ԺԷ , 13) :

Ապագէն այս բանք ցուցանեն՝ ո՛չ զանկատարու թիւն ինչ, այլ զհամագոյութիւն հոգւոյն ընդ հօր և ընդ որդւոյ, և զկատարեալ աստուածութիւն նորա. զի եթէ զայն խօսի՝ զոր ինչ խօսի հայր և որդի. ապա է համագոյ նոցին և համակամ. ըստ այնմ՝ « Հոգին զամենայն քննէ, և զխորս աստուծոյ » (Պրնիւսոյ. Բ, 10)։

Ասէին հոգեմարտք, եթէ հոգին ունի զաստուածեղէն զօրութիւն, բայց ո՛չ զանձնաւորութիւն. զի զիկք հոգի զաստուածային շնորհս կոչեն, ըստ այնմ՝ « Լցան ամենեքին հոգւով սրբով » (Գործոյ. Բ, 4). այսինքն՝ շնորհօքն աստուծոյ։

Սակայն յայտ է ՚ի նմին գրոց, թէ անձնաւոր է հոգին, և ո՛չ սոսկ զօրութիւն ինչ աստուածական. զի ցուցանի անդանօր, թէ հոգին է տէր նոյն գործողութեան. քանզի ասէ՝ « Որպէս և հոգին տայր բարբառիլ նոցա » (Գործոյ. Բ, 4)։ Թող զայլ բազում վկայութիւնս սուրբ գրոց, որով յայտնի երևի անձնաւորութիւն հոգւոյն աստուծոյ։

ՎԱՍՆ Է՛Ր ՍՈՒՐԲ ԿՈՉԻ ՀՈԳԻՆ

Սառս հոգի՝ հոմանուն է ՚ի մեր լեզուս. զի երբեմն նշանակէ զհրեշտակս. ըստ այնմ՝ « Ո՛չ ապագէն ամենեքին հոգիք են հարկաւորք » (Եբրայեցոյ. Գ, 14)։

Երբեմն զբանական հոգին. ըստ այնմ՝ « Հայր ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ » (Գլխաստ. Իգ, 46)։

Երբեմն զմիտս. ըստ այնմ՝ « Աղօթս առնել յամենայն ժամանակի հոգւով » (Եփեսոցոյ. Զ, 18)։

Երբեմն զկամսն. ըստ այնմ՝ « Հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար » (Մատթիւսի. Իւ, 41)։

Երբեմն զուենն. ըստ այնմ՝ « Հոգին իմ կայ յաւ

ղօթս , այլ միտք իմ անպաուղ են” (* , Կորնթեացոց . ծԴ , 14) :

Երբեմն զսիրտս կամ զյօժարութիւն . ըստ այնմ՝ “ Հաստատուն կայցէք ՚ի մի հոգի ” (Փիլիպպեացոց . * , 27) :

Երբեմն զբանաւոր ատորժակն . ըստ այնմ՝ “ Չայբանայր հոգի նորա (այսինքն Պօղոսի) ՚ի նմա ” (Գործոց . ծԷ , 16) :

Երբեմն զզօրութիւն . ըստ այնմ՝ “ Արկցէ ըզձեռն իւր ՚ի վերայ գետոյն հոգւով սաստկութեան ” (Եսայեայ . ծ * , 45) :

Ըստ առ ՚ի որոշել զհոգին աստուծոյ յայսմ ամենայնէ՝ սովորաբար յարի նմա ձայնս առբէ . որպէս և աստ եղաւ , թէ “ Հաւատամք և ՚ի հոգին սուրբ ” և կարի վայելչաբար . զի սրբէ զմեզ ՚ի սկզբնական մեղաց ՚ի ձեռն մկրտութեան՝ և առնէ որդի աստուծոյ . ըստ այնմ՝ “ Չի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ ” (Եփեսացոց . Ե , 26) : Արբէ և ՚ի ներդորձական մեղաց ՚ի ձեռն ապաշխարութեան . ըստ այնմ՝ “ Փչեաց ՚ի նոսա և ասէ , առէք հոգի սուրբ . եթէ ումեք թողուցուք զմեզս , թողեալ լիցի նոցա ” (Յովհաննոս . Ե , 22) : Աւստի ասէ եկեղեցի՝ “ Եր միշտ ընդունող սրբօղ , և ըցուցիչ աստուածացուցիչ . և միշտ ընդ հօր և ընդ որդւոյ կարգեալ և թուեալ ” :

ՁԻՆՁ ԵՇԱՆԱԿՆ ԱՆԵՂՆ

Երբ անէլ՝ ըստ այնմ զի է բացասական ըստ ձայնին և ըստ իմացման . երբեմն նշանակէ զայն՝ որ չէ բնաւ եղեալ , և ոչ ևս եղիցի . կամ որ չունի զէութիւն ինչ , որպիսի է յարալեզն , ձխացունն , և այլ սոցին սակի

եղլերուարագք: Արբեմն նշանակէ զայն՝ որ չէ եղ-
եալ աստ և այժմ. բայց եղիցի յիմիք մասին ժամանա-
կի. կամ որ չունի զգոյութի ինչ, որպիսի են ասպաղայք:

Անէն՝ ըստ որում բացասական ըստ ձայնին, և
դրական ըստ իմացման, նշանակէ զինքնագոյութիւնն.
որ է կատարելութիւն ինչ սեպհական աստուծոյ, իրրև
ներքին եղանակ և կացուցիչ աստուածային էութեան.
և այս առաւել յատուկ է նմա՝ քան սսփոսփդ անուն:
Վանզի սսփոսփ ստուգաբանի ՚ի հասարոն ածօղ, սյ-
սինքն է արարչագործ. և ասի զաստուծոյ նկատմամբ
արարածոց, որպիսի են անուանքս՝ Ամենակարօղ, Մտտի-
նածօղ, Արդար, Ողորմած, և այլն:

Բայց անէն՝ ըստ որում նշանակէ դրականա-
պէս, ՚ի մէջ բերէ զներքին եղանակ կատարելութեան
կացուցիչ աստուածային էութեան:

Ամենայն անուանք դրականք ասացեալք զաս-
տուծոյ, եթէ բացարձակք իցեն, եթէ առնչականք
կամ ծանօթականք, որք թէպէտ իրօք նոյն են ընդ
աստուածային էութեան. բայց քանզի են դրական՝
ցուցանեն զնոյն կատարելութիւնս կամ զյատկութիս,
իրրև պատահական որակութիւն ինչ ՚ի յաստուած.
ըստ այսմ են, յաւիտենական, բարի, հայրութիւն, որ-
դիութիւն, ծնօղ, ծնեալ, բղիսօղ, բղիսեալ, և այլն:

Այլ ոչ ըստ սոցին օրինակի են բացասականք, զի
ըստ իմացմանն ցուցանեն զդրական կատարելութիւնս,
ոչ իրրև զպատահական որակութիւնս յեցեալ յեն-
թակայ, այլ իրրև ինքնագոյ գոյացութիւնս. ըստ այնմ
նշանակէ՝ անսկիւբն՝ զգոյն ՚ի յաւիտենից, անճան՝ ըզ-
յաւէժ կենդանութի, անսոճման՝ զլինելն ամենակալ,
անիփոփն՝ զգոյն յաւիտենական, այսպէս և այլք:

Ապա յասեղն անէլ զհոգին , ցուցանէ ըստ իմացմանն , թէ հոգին է ինքնագոյ : Աւ դարձեալ՝ բացասական անուանակոչութիւնք առաւել պատշաճին աստուծոյ քան զգրականս : Այսն՝ զի գրականք յետ էիցս են գտեալք ՚ի մարդկանէ . իսկ աստուած յառաջ է քան զամենայն յաւիտեանս : Արկրորդ՝ զի գրականք երևին իբրև պատահական որակութիւն ինչ յեութե . իսկ աստուած ՚ի վեր քան զամենայն էութիւնս է : Արրորդ՝ գրականք հնարեցան ՚ի յայտնել զբնութիւնս իրաց . իսկ բնութիւնն աստուծոյ անգիտելի է յարարածոց . ըստ այնմ՝ « Ո՛չ որ ճանաչէ զորդի , եթէ ոչ հայր . և ոչ զհայր որ ճանաչէ , եթէ ոչ որդի » (Մատթէոսի . Ժ . 27) :

Ուստի ասէ սուրբն Գիորնեսիոս՝ « Յորժամ աներևոյթ զնա , և անտեսանելի , և անբովանդակելի անուանակոչեն . և յորոց՝ ոչ որ ինչ էն , այլ որ ինչ ոչն է նշանակէ : Եւ այս իսկ որպէս վարկանիմ է յատկագոյն նմա , քանզի որպէս թաքուն և սրբազան քահանայական աւանդութիւն պատմեաց մեզ , Չի ճշգրտեմք զնա ոչ գոյ ըստ իրիք էիցս . թէպէտ անգիտանամք ըզգերագոյ և անիմացական և անձառելի անսահմանութիւն նորա : Արդ՝ եթէ բացասութիւնքն ՚ի վերայ աստուածայնոյն ճշմարիտք են . իսկ ստորասութիւնքն անպատշաճք » :

ԶԻԱՐԴ ԱՍԻ ԿԱՏԱՐԵԱԼ

Արտարեալ ասի Հոգին սուրբ ըստ էութեան և ըստ անձնաւորութեան . ոչ որպէս յերկուց կատարելութեանց ՚ի մի գերագոյն կատարելութիւն ժողովեալ . այլ է մի և նոյն անսահման կատարելութիւն , զոր ունի

ի միոյ պարզ էութենէ իւրով: և է այնչափ զերազանց ՚ի լրութեան և ամենակատար, մինչ զի չէ՛ հնար առաւել քան զայն խորհիլ անգամ, որ և զամենայն կատարեալսն իւրով ամենազեղուն կատարելութեամբն ընու: Աւ զայս կատարելութիւնն ո՛չ յայլմէ առեալ է հոգին սուրբ իբրև յարարչական կամ ՚ի տեսական պատճառէ: այլ անեղ էութեամբ իւրով ունի ՚ի յաւիտենից: ո՛չ ՚ի նուազութենէ առաւել, այլ բոլորն միանգամայն: մի որոյ և ո՛չ կարէ առաւելուլ կամ նուազիլ:

Օ ի զայն ամենայն կատարելութիւնսն՝ զոր միանգամ ունի հայր և որդի, զնոյն ունի և հոգին սուրբ: զի մի էութիւն և մի աստուածութիւն է յերեսին: ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն՝ «Վատարեալ է հայր՝ անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն իւր անձին իսկութեամբն ունի: Վատարեալ է որդի՝ անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ, և զամենայն հայրածին իսկութեամբն ունի: Վատարեալ է և սուրբ հոգին՝ անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ: և զամենայն իւր անսկիզբն էութեամբն ունի» (Յաճախապարտմ):

Արդ՝ ոչ եթէ երբեակ զանազան կատարելութիւնք են յաստուածային անձինս, որովք կացուցանի մի իմն զերագոյն կատարելութիւն աստուածային էութեան: զի ըստ այդմ՝ կատարելութիւնք աստուածային անձանց ո՛չ լինէին ինքնակատար, այլ նոյն ծայրագոյն կատարելութիւնն է երբեակ և մի ըստ այլ և այլ նկատման: երբեակ՝ ՚ի յանձինս, և մի՝ ՚ի յէութեան:

Քանզի ամենայն բացարձակ ստորագելիք; որպէս անեղութիւն, յաւիտենականութիւն, ամենակարողութիւն, սրբութիւն, անչափութիւն, և այլն. նոյն են ընդ աստուածային ենթակայութեան կամ ինքնութեան. իսկ ինքնութիւնն է մի իրօք կամ բացարձակապէս, և երբեակ զօրութեամբ կամ առնչապէս. ապա և այս ամենայն ստորագելիք լինին երբեք՝ զօրութեամբ, բազմապատկեալ ՚ի յանձինս. և Տ՛ իրօք, նոյնացեալ ընդ միմեանս և ընդ աստուածային էութեան:

Ի այց ոչ երբեք մարթ է ասել, որպէս զենթակայութենէ՝ նոյնպէս և զստորագելեաց, թէ բացարձակապէս է երբեակ, զի բազմապատկեն զէութիւնն և զաստուածութիւնն: Ուստի ասէ սուրբն Աթանաս՝ «Անբատեղծ հայրն, անստեղծ որդին, անստեղծ և հոգին սուրբ. անչափ հայրն, անչափ որդին, անչափ և հոգին սուրբ. յաւիտենական հայրն, յաւիտենական որդին, յաւիտենական և հոգին սուրբ. և սակայն ոչ երբեք յաւիտենականք՝ այլ մի յաւիտենական: Որպէս ոչ երբեք անստեղծք, և ոչ երբեք անչափք, այլ մի անստեղծ, մի անչափ. նմանապէս ամենակարող հայրն, ամենակարող որդին, ամենակարող և հոգին սուրբ. և սակայն ոչ երբեք ամենակարողք, այլ մի ամենակարող»:

Ապա հոգին սուրբ ոչ է արարած և պաշտօնատար ըստ հայհոյութեանն Մակեդոնի. այլ է անեղբնութեամբ. և ոչ անանձն զօրութիւն աստուածական ըստ հոգեմարտից, այլ է կատարեալ անձնաւորութիւն:

Ինդդէմ որոյ և սուրբ Ժողովն Սոստանդնուպօլսոյ՝ ՚ի նիկիական հանգանակն ուր եղեալ կայր միայն «Եւ հոգին սուրբ՝ (յաւել,) տէրն և կենդանարարն՝ ՚ի հօրէ ելողն, ընդ հօր և որդւոյ երկրպագակից և փառա-

էորակից» : Ուստի երդէ եկեղեցի «Որք անձնաւոր (և
 ո՛չ սոսկ զորութիւն աստուածեղէն) զէութիւն բղխե-
 ցելոյն ՚ի հօրէ հոգւոյն սրբոյ դաւանեցին . և նոյնադոյ
 բնութեամբ հօր և որդւոյ հաւասարեալ , անորիչ բա-
 ժանմամբ , համագոյ միութեամբ» :

Եւ զի կատարեալ ասէ զհոգին սուրբ . զի մի
 գուցէ որ կարծեսցէ , թէ հոգին սուբ բղխելովն ՚ի
 հօրէ նուազ քան զհայր գտանի աստուածութեամբ .
 զի ահա և որդի ծնանելովն ՚ի հօրէ , ո՛չ նուազ է աստ-
 ուած : Եւ դարձեալ՝ ասելովն կատարեալ , լռեցուցա-
 նէ զնոսա , որք զհոգին նուազ քան զորդի ասէին , այ-
 նու զի յետոյ դասի քան զորդի :

Քանզի զկնի միմեանց անուանիլն աստուածային
 անձանց , որպէս որդւոյ քան զհայր , և հոգւոյ քան
 զորդի՝ ո՛չ է վասն նուաստութեան բնութեան կամ
 աստուածութեան , այլ վասն երևմանն . կամ որ նոյն է՝
 վասն կարգի պատճառին . որով զանազանին անձինք ՚ի
 միմեանց՝ ծանօթական յատկութեամբ և անձնաւորու-
 թեամբ . զի անձինն , և ծնեալն , և բղխեալն , զհայր և
 զորդի և զսուրբ հոգին յայտ առնեն . անձին հայր , զի
 է անսկիզբն՝ և պատճառ համագոյիցն . որդի ծնեալ ,
 զի ՚ի հօրէ ելանէ ըստ նմանութեան բնութեան՝ որպէս
 բան ՚ի մտաց . հոգին բղխեալ կամ արտաքս առաքեալ ,
 զի ելանէ ՚ի հօրէ ըստ նմանութեան շնչոյ կամ ոգւոյ՝
 որպէս սէր ՚ի կամաց . զի բաց յառանձնաւորութեանց՝
 որով յատկանան և զանազանին անձինք , այլն իմ է
 հասարակ երկոց անձանց , զի նոյն են աստուածութիւն :

Ուստի ասէ սուրբն Գրիգոր աստուածաբան ,
 «Եւ զի՞նչ է ասեն , որով նուազեալ է հոգի առ ՚ի որդ
 որդի . զի եթէ ոչ՝ ո՛չ պակասեալ իւրք իցէ՝ որդի եղի-

ցի. ոչ նուազեալ իւրք ասեմք, զի ոչ նուազ է աստուած, բայց երեւմամբն զի այսպէս ասացից. կամ առ իրեարս ունելոյ զանազանութիւն զանազան նոցա և զկոչմունս արաւ. . . բայց ոչ նուազութեան են այսոքիկ, ուստի արդեօք և ոչ ըստ բնութեանն նուաստութիւն. այլ նոյն ինքն ոչ ծնանիլ, և ծնանիլ, և արտաբան գնալ. մին զհայր, և միւսն զորդի, և միւսն որ ասի հողի սուրբ կոչեացոյ:

ՋԻՆՁ Է՝ ՈՐ ԱՍԷ՝ «ՈՐ ԽՕՍԵՑԱԻ ԵՐԵՒՆ ԵՒ Ի ՄԱՐԳԱՐԷՍ ԵՒ ԵԱԻԵՏԱՐԱՆՍ»

Օրէնքն է կարգ և սահման եղեալ յօգուտ հասարակաց յայնմանէ, որ ունի իշխանութիւն ՚ի վերայ հասարակութեան: Այլ է կրկին, բնական և դրական:

Բնական օրէնքն է մի օրինակ և անխոփոխ կարգ ինչ՝ տպաւորեալ յաստուծոյ ՚ի միտս մարդկան՝ առաջ նորդիլ նովաւ ՚ի կատարելութիւն և յերջանկութիւն: Ուստի ասէ Առաքեալն՝ «Յորժամ հեթանոսք որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն. նոքա որ զօրէնս ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնք. որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւրեանց վկայութեամբ մտաց իւրեանց» (Հոմիլայեցոցոյ . Բ, 14):

Վրական օրէնքն է՝ հաստատուն սահմանադրութիւն ինչ յանձնառական կամ հրաժարական՝ յօգուտ հասարակաց յաւելեալ ՚ի վերայ բնական օրինաց յայնմանէ, որ ունի զինամ ՚ի վերայ հասարակութեան, դաշամբ հատուցանելոյ զվարձս որ պահեն, և զպատիժս որ անդոսնեն:

Վմենայն սկզբունք բնական օրինաց բովանդակին

Ի սոյն պատուիրան «Պահեա՛ զանձն քո» :

Պահպանութիւն անձին կայանայ յերկու զորաւոր կիրս, ՚ի ցաւ և ՚ի հեշտութիւն :

Օ գացմամբ ցաւոց խորշիմք յայնմ ամենայնէ, որ եղծանեն զկեանս կամ զգործարանս մեր :

Օ գացմամբ հեշտութեան զհետ լինիմք այնմ ամենայնի, որ նպաստեն պահպանութեան անձին մերոյ կամ զարգացման :

Եւ քանզի ո՛չ որ կամի կրել յումեքէ զչար կամ զվնաս, ինքն ևս ո՛չ կամեցի ումեք հասուցանել զչար կամ զվնաս : Եւ կամի՞ զի այլք արասցեն ինքեան զօգտակար ինչ ՚ի պահպանութիւն կենաց իւրոց և զարգացման, ինքն ևս զնոյն կամեցի առնել այլոց :

Եւ այսու բնական և աստուածագիր օրինօք ըսկիզբն առնէ մարդ խորշիլ ՚ի չարէն, որք եղծանեն ըզմարդ և զկարողութիւնս նորա. և զհետ լինել բարւոյ, որք վերաբերին ՚ի պահպանութիւն և ՚ի զարգացումն մարդոյ և կարողութեան նորա :

Օ այս պատուէրն իբրև սկիզբն և վախճան ամենայն բնական և բարոյական օրինաց աւանդեաց մեզ և տէրն մեր յասելն՝ «Չամենայն զոր միանգամ կամի ջիւք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են օրէնքն և մարդարէք» (Մատթ. Է, 12) :

Ուստի ասելովն «Որ խօսեցաւ յօրէնս» եկեղեցին առաջադրէ մեզ ՚ի հաւատալ, թէ հոգին սուրբ է հեղինակ թէ բնական օրինաց, որ գրեալ են յաստուծոյ ՚ի սիրտ և ՚ի միտս ամենայն մարդկան. և թէ դրական օրինաց, որ գրեալ են ՚ի Մովսիսէ ՚ի հինգ մատնանս : Քանզի ասէ զիր՝ «Պատմեաց ժողովրդեանն

զամենայն պատգամն աստուծոյ և զզամենայն իրաւունս . պատասխանի ետ ամենայն ժողովուրդն 'ի մի ձայն և ասեն . զզամենայն պատգամն զոր խօսեցաւ տէր՝ արասցուք" (Եւէյ·ԻԴ, 3):

Եւ քանզի եռակի էին պատուիրանք մովսիսական օրինաց: Առաջինն էր բարոյական, որ կոչի տասնաբանեայ: Այս օրէնք պարտաւորէին զզամենայն մարդ, զի էին օրէնք բնական՝ բաց 'ի շարաթապահութենէն . զի շարաթապահութիւնն ըստ մասին էր բնական, և ըստ մասին դրական . զի ըստ այնմ՝ որ պատուիրէր զաղաւրիլ 'ի ծառայական գործոց, և սրբազան պաշտամամբ ծառայել աստուծոյ, էր բնական . և ըստ այնմ՝ որ յատկացուցեալ որոշէր զօրն եօթներորդ՝ էր դրական:

Արրորդն էր խտրական, որ էր օրէնք զոհից և սրբութեանց, և պէս պէս լուացմանց մարմնոյ արդարութեան: Արրորդն էր դատաստանական, որ էր օրէնք քաղաքական կառավարութե 'ի պէտս հասարակութե:

Արդ՝ տէրն մեր ոչ ելոյժ զբնական օրէնս, այլ հաստատեաց . ըստ այնմ՝ «Եթէ կամիս 'ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեան զպատուիրանս» (Մատթ· Ժ, 17): Իսկ զխտրականս և զդատաստանականս կատարելագործեաց . զի որպէս ասէ Առաքեալն՝ «Չստուեր հանդերձելոց բարեացն ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարանս իրացն» (Եբբ·յէյ·ոյ· Ժ, 1):

Եւ որպէս 'ի սոյն աստուածային օրէնս խօսէր և ուսուցանէր հոգին սուրբ ըստ ժամանակին պիտոյից և ըստ տանելոյ լսելեաց . խօսի և ուսուցանէ այժմ և առ յապայ, նաև 'ի մարդկային օրէնս և 'ի սահմանադրութիւնս՝ համաձայնս բնական և աստուածային օրինաց, և եթէ եկեղեցական իցէ, և եթէ քաղաքական:

Օ ի որովհետև հովիւք եկեղեցւոյն քրիստոսի կարգեալ են ՚ի հոգւոյն սրբոյ տեսուչս՝ հովուել զժողովուրդ իւր, ունին իշխանութիւն կարգել զօրէնս յօգուտ հաւատացելոց. ըստ այնմ՝ « Զի թէ առաւել ևս պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ, զոր ետ մեզ տէր ՚ի շինել և ոչ ՚ի քակել » (Բ, Արհմատոյ. Ժ, 8) :

Այնպէս և քաղաքական իշխանք ունին իրաւունս դնել զօրէնս յօգուտ հասարակաց . ըստ այնմ՝ « Ոչ ուստեք է իշխանութիւն՝ եթէ ոչ յաստուծոյ . և որ ենն՝ յաստուծոյ կարգեալ են . այսուհետև որ հակառակ կայ իշխանութեան, աստուծոյ հրամանին հակառակ կայ . և որք հակառակն կան՝ անձանց դատաստանս ընդունին . զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց, այլ չարեաց » (Հոմմատոյ. ԺԳ, 1) :

Եւ զի այս ամենայն օրէնք են աստուածայինք, աստուած ուրեմն է հոգին՝ որ խօսի և ազդէ ՚ի սիրտս օրէնսդրաց :

ՋԻՆՁ Է ԱՍԵՆ «ՈՐ ԽՕՍԵՑԱՒ Ի ՄԱՐԳԱՐԷՍ»

Մարգարէութիւնն է պարզ և գուշակութեան կամ ծանօթութեան խորհրդոց անցելոց ներկայից և ապառնեաց ՚ի մասնաւոր յայտնութենէն աստուծոյ : Այս մարգարէք կամ տեսանօղք այնոքիկ էին, որ զհեռաւորս և զգաղտնիս առանձին յայտնութեամբն աստուծոյ ծանուցանէին :

Արպէս Մովսէս իբրև ականատես մի ըստ միոջ պատմէ զանցս անցեալս բաղում դարուք յառաջ, որպէս զարարութիւնն աշխարհի, զհամաշխարհական ջրհեղեղն, զշինութիւն աշտարակին, և զայլս բաղումս :

Եւ Եղիսէ յայտնի ծանոյց զճաճուկ նենդն, որ ՚ի

ներկոյ ժամանակի արարեալ էր Գէեզի, խաբէութիւն առնելով ՚ի Նէեմանայ իշխանէ զօրացն Ասուր՝ զերխա տաղանդս արծաթոյ, և զերկուս պատմուճանս հան զերձեալս (Դ, Թագաորաց. Է, 20):

Այս է ասելն և Առաքելոյն՝ «Եթէ ամենեքին մարդարէանայցէք և մտանկոյէ որ անդր անհաւատ կամ տղէտ, յանդիմանի յամենեցունց, և քննի յամենեցունց, և գաղանկք սրտի նորա յայտնի լինին» (Ս, Արնեխոյոց. ԺԴ, 24):

Աւ ամենայն մարդարէք կամ տեսանօղք յառաջագոյն գուշակէին զլինելոցսն, որպէս զաւերն Երուսաղէմի, զգերութիւն և զգարձն Իսրայէլի, զմարդեղութիւնն յիսուսի, և զերկրորդ գալուստ նորա:

Աւ քանզի ներընդունական ապառնիք, որք գործին ազատ կամօք և անձնիշխանութեամբ՝ աստուծոյէ յատուկ գիտել զնոսա. ըստ այնմ՝ «Պատմեցէք մեզ՝ որ ինչ ՚ի վախճանի լինիցի, և գիտասցուք. եթէ աստուածք իցէք՝ բարի արարէք, չար արարէք» (Եսայ. Խ, 23): Աստուած ուրեմն է հոգին նք՝ որ խօսէր ՚ի մարդարէս, և յայտնէր նոցա զլինելոցսն. զի «Ո՛չ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարդարէութիւն երբէք, այլ ՚ի հոգւոյն սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յաստուծոյ» (Բ, Պեպրոսի. Խ, 21):

ՎԱՍՆ Է՞Ր ԵԱՒԵԼՈՒ «ԵՒ ԵԱՒԵՏԱՐԱՆՍ»

Աւ քանզի կատարած օրինաց քրիստոս է, ապա աւետարանն քրիստոսի բազում մասամբ առաւելու քան զամենայն օրէնս և զմարդարէս. և հոգին սուրբ՝ որ խօսեցաւ ՚ի նոսա առ ժամանակեաց տեողութեամբ, խօսի յաւետարանն մինչև ՚ի կատարած աշխարհի: Օ ՚ի

որ տուեալէր մարգարէից զմասնաւոր պարզեւս զի-
տու թեան ապագայից . ետ առաքելոց զլրութիւն պար-
զեւաց պէսպէս շնորհօք և զօրութեամբ :

Ուստի և աւետարանիչք նորոյս կտակի լցեալք
հոգւով սրբով քարոզք եղեն ընդ փեղերս ամենայն .
նչ ճարտարութեամբ սեթևեթ խօսից՝ զոր 'ի կիր ար-
կանեն հռետորք . ոչ արուեստաբանութեամբ զուգա-
չափ ոտից , որովք բանաստեղծեն քերթօղք . ոչ ձեռ-
նարկութեամբ իմաստասիրական փաստից՝ որով արա-
մաբանեն փիլիսոփայք . այլ աստուածեղէն և երկնաւոր
վարդապետութեամբ . ըստ այնմ՝ « Որք աւետարանե-
ցինն ձեզ հոգւովն սրբով , որ առաքէին յերկնից » («
Պէտրոսի . » , 12) : Ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն՝ « Առ-
եալ հոգելից և աստուածամուխ աստուածատեսացն
զաստուածատուր աւետիսն , և գրով հաստատեալ , և
մի աւանդութիւնն չորս աւետարանս սահմանեալ , ոչ
օտարագոյնս 'ի միմեանց արուեստախօսեալս , այլ ամե-
նագէտ հոգւովն աստուծոյ զմիաւոր ճշմարտութիւնն
հրամանացն քրիստոսի պատմեալ » (Ագաթանգեղոս) :

Ապաքէն եկեղեցի սուրբ՝ ասելովն , « Որ խօսե-
ցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս » , երկու-
ինչ յուշ առնէ մեզ անշուշտ խոստովանիլ . մի՛ թէ
աստուած է հոգին՝ որ խօսէր զաստուածային օրէնս ,
և պատմէր զլինելոցսն , և հրատարակէր զաւետարանն
ճշմարտութեան ընդ փեղերս ամենայն , ոչ մարդկային
իմաստութեամբ , այլ աստուածեղէն զօրութեամբ :
Լուսաւորիչն թէ օրէնք և մարգարէք և աւետարանք են
աստուածաշունչ պատգամք , զի ազգմամբ հոգւոյն սրբոյ
տուան մարդկութեանս՝ առաջնորդիլ նորօք յերանու-
թիւն և 'ի կեանսն յաւիտենից : Ուստի ասէ Առաքեալն՝

«Այսուհետև օրէնքն սուրբ են և պատուիրանն, սուրբ և արդար և բարերար» (Հոովմայեցոյ . է , 12)։ Այս ձայնիւ ցնծութեամբ օրհնաբանեսցուք ընդ եկեղեցւոյն քրիստոսի . «Չելօղն 'ի հօրէ զառատարուղի աղբիւրն իմաստից , որ խօսեցաւ զհին և զնոր օրէնս ասուծոյ» (Շարական հոգեգալութեան)։

ՁԻՆՉ Է՝ ՈՐ ԱՍԷ «ՈՐ ԷՋՆ Ի ՅՈՐԴԱՆԱՆ»

Հոգին սուրբ գորով աստուած ճշմարիտ՝ է յամենայն տեղիս , էութեամբ՝ զի կատարեալ ունի զամենայն . ներկայութեամբ՝ զի տեսանէ զամենայն . և կարողութեամբ՝ զի ընու զամենայն . ըստ այնմ՝ «Հոգի տեառն ելից զտիեզերս» (Իմաստութեան . ա , 7)։

Այս իջաննն 'ի Յորդանան 'ի վերայ Էակցինիւրոյ՝ է յայտնի լինել անդ նոր ներգործութեամբ . իբր զի աղանակերպ երեւամբ վկայեաց քրիստոսի աստուածութեանն , որպէս և հայր ձայնիւն 'ի յերկնից։ Ուստի ասէ եկեղեցի «Մկրտեցար 'ի Յորդանան 'ի Յովհաննէ . աղանակերպ սուրբ հոգւոյն վկայեալ երկնային ձայնիւ» (Շարական)։ Իստայսմ՝ իջանել ասի հոգւոյն սրբոյ՝ նորանշան սքանչելեօք երևումն նորա՝ յառաջնորդութիւն ժողովրդեանն Իսրայէլի . քանզի 'ի տունջեան որպէս սիւն ամպոյ , և 'ի գիշերի որպէս սիւն բուսոյ երևեալ առաջնորդէր 'ի յանապատին . ըստ այնմ՝ «Էջ հոգի տեառն , և առաջնորդեաց նոցա» (Եսայեայ . 14)։

Դարձեալ՝ էջ հոգին սուրբ աղանակերպ 'ի Յորդանան՝ յայտնի առնել ընդ տիեզերս զլրութիւն շնորհացն քրիստոսի . զի գրեալ է , թէ «Յիսուս լի հոգւով սրբով դարձաւ 'ի Յորդանանէ» (Ղուկասոս . Դ , 1)։

Սակայն ո՛չ եթէ ՚ի մկրտութեան անդ լցաւ հոգւով սրբով . այլ միայն քարոզեցաւ և ծանուցաւ . զի անգրասին ՚ի կէտ յղութեան իւրոյ լցեալ խկէր ամենայն շնորհօք հոգւոյն . ըստ այնմ՝ «Որ ՚ի նմայն ծնեալ է ՚ի հոգւոյն սրբոյ է» (Մատթէոս . 3, 20) : Եւ թէ՛ «Տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ ՚ի հօրէ , ըի շնորհօք և ճմարտութեամբ» (Յովհաննոս . 3, 14) :

Իսկ արդ՝ քրիստոս ո՛չ կարօտ ինչ էր իջանելոյ հոգւոյն սրբոյ ՚ի վերայ իւր առ ՚ի յաստուծոյ և ՚ի հօրէ , քանզի որպէս աստուած բան՝ ունէր զէակից զիւր հոգին որպէս և հայր . ապա առաքեաց յերկնից աստուածաբար , և ընկալաւ տնօրինաբար , յայտ արարեալ թէ ճմարտապէս եղև մարմին . որպէս զի անդրէն դարձուսցէ ՚ի մեզ զհոգւոյն շնորհք , զոր կորուսեալ էաք սկզբնահօրն յանցանօք . որպէս և ասացեալ էր աստուած . «Մի մնացէ որդի իմ ՚ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան , վասն լինելոյ դոցա մարմին» (Ճննդոյ . 2, 2) : Ուստի ասէ սուրբն Վիւրեղ՝ «Զի՛նչ արդեօք ասիցեմք զիջանելն ՚ի վերայ նորա ՚ի յերկնից հոգւոյն սրբոյ և հանգչիլ . արդեօք կարօտ գողով վիճակի հոգւոյն սրբոյ զառ ՚ի յաստուծոյ հօրէ բանն իմասցուք , որ և զիարդ ո՛չ է ամենեւեմ անտեղի զայս խորհիլ և ասել . քանզի նորա իւր է հոգին որպէս և հօր . . . սակայն թէ և մարդկօրէն ընդունի վասն մեր . այլ տես՝ զի տայ աստուածաբար» (Պարսպ) :

ՎԱՍՆ Է՞Ր ԱՂԱՒՆԱԿԵՐՊ ԵՐԵՒԵՑԱՒ

Երևումն հոգւոյն սրբոյ ՚ի կերպարանս անմեղ աղաւնոյ՝ յայտ առնէր զանմեղութիւնն քրիստոսի . քանզի ո՛չ եթէ եկն ՚ի մկրտութիւն սրբիլ ՚ի մեղաց՝

որ սրբութեանցն էր սուրբ , այլ զի զԶուրնն սրբեսցէ
'ի մաքրութիւնն նորածնելոց սուրբ աւագանաւ . ըստ
այնմ՝ «Մաքրողական պարզեցան շնորհք աղանա-
կերպ իջմամբ՝ սբ հոգւոյն ջուրցն սրբութե՛ն» (Շարակն) :

Որով և ուսոյց հոգին սուրբ . թէ որ կամի մեր-
ձենալ առ քրիստոս՝ եղիցի նա անմեղ իբրև զաղա-
նի : Ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն՝ «Ընդէր 'ի նմա-
նութիւնն աղանոյ երևի հոգին սուրբ աստուծոյ . վասն
զի ուսուսցէ տեսողացն , թէ՛ ոչ այլ իւիք հնար է մատ-
չիլ առ աստուած որդին , թէ՛ ոչ անմեղութեամբ և
սրբութեամբ . յաղանակերպ նմանութենէ անտի առ-
եալ զկերպարանս՝ յանձին բերիցեն» (Ագաթակոթի) :

ԶԻՆՉԷ՝ ՈՐ ԱՍԷ «ԲԱՐՈՉԵՆՑ ՁԱՌԱՔԵԱԼՆ»

Հասարակ օրինակք եղանակապէս ունին , որպէս և եղաք Ոմանք
«Զառաքեալան» : Օրինակն մեր ընդ այլոց հին և նոր օրինակաց ընթեռնու-
«Յառաքեալան» :

Ոչ ուրեք 'ի գիրս սոսկապէս առաքեալ ձայնիւ
նշանակի քրիստոս , այլ յարարութեամբ այլոյ բացորոշ
բառի , որպէս «Առաքեալ 'ի հօրէ» ըստ այնմ՝ «Որպէս
առաքեաց զիս հայր» (Մատթէոսի . Իւ , 18) : Եւ թէ՛
«Որպէս զիս առաքեցեր յաշխարհ» (Յովհաննոս . Ժէ ,
18) : կամ «Առաքեալ և քահանայապետ խոստովա-
նութեան մերոյ» (Եբրայեցոց . Գ , 1) :

Լսպա աստանօր առաքելաւ անուն՝ եղեալ է 'ի
նշանակել զառաքեալն քրիստոսի : Ուստի առաջադրէ
մեզ հանգանակս 'ի հաւատալ . թէ որպէս հոգին սուրբ
էր՝ որ էջ աղանակերպ 'ի Յորդանան 'ի վկայութիւնն
աստուածութեանն քրիստոսի , նոյն հոգին էր՝ որ էջ
հրեղէն լեզուօք 'ի վերնատունն քարոզել յառաքեալ-

սրն , և ծանուցանել նոցա զդաղտնի խորհուրդս հաւատոցն քրիստոսի :

Քանզի տէրն մեր մինչդեռ յաշխարհի էր՝ մասնաւորօք բանիւք յուշ արար զխորհուրդս հաւատոյ , և զբազում ինչ ՚ի կարեւորացն լռեաց , զի տակաւին չէին բաւական լսելիք նոցա տանել . այլ խոստացաւ անօրինաբար աղաչել զհայր , և զմխիթարիչ սուրբ հոգին փոխանակ իւր առաքել յաշխարհ , աստուածեղէն իմաստութեամբ ուսուցանել զամենայն . ըստ այսմ՝ « Բազում ինչ ունիմ ասել ձեզ , այլ ոչ կարէք հանդարտել այժմիկ , յորժամ եկեսցէ նա հոգին ճշմարտութեան , առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ » (Յովհաննոս . ԺԷ, 21) : Որ և յաւուր պէնտեկոստէին հողմաձայն հնչմամբ էջ ՚ի վերնատունն , և քարոզեաց յառաքելալսն՝ լուսաւորելով զմիտս և զխորհուրդս նոցա բազմապատիկ շնորհօք և գիտութեամբ :

Նա զի յետ յիշատակելոյ հանգանակիս զիջումն հոգւոյն սրբոյ ՚ի Յորդանան , ոչ էր ՚ի գէպ անյիշատակ թողուլ զիջումն նորա ՚ի սուրբ վերնատունն . ուր հիմն եղաւ նորոյ օրինացս , և սկիզբն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ , և ճշմարիտ պաշտաման քրիստոնեական կրօնի : Մանաւանդ զի յաջորդ բանն՝ որ ասէ , « Եւ բնակեցաւ ՚ի սուրբսն » , ոչ վայելչաբար յարի առ յայտնելն հոգւոյն սրբոյ զքրիստոս ՚ի Յորդանան , այլ առ իջումն նորա ՚ի սուրբ վերնատունն , որպէս յայտնի երևի ՚ի բանիցն քրիստոսի՝ որ ասէ , « Ես աղաչեցից զհայր , և այլ մխիթարիչ տաղէ ձեզ , զի ընդ ձեզ բնակեսցի ՚ի յաւիտեան » (Յովհաննոս . ԺԷ, 16) :

Իսկ արդ՝ հոգին սուրբ հրեղէն լեզուօք իջեալ , քարոզեաց առաքելոյ , զի և նորա աւետարանութեամբ

ընդուաց լիցին քարոզք տիեզերաց . զի որպէս սուրբ
 Լուսաւորիչն ասէ՝ « Զամենայն ազգ ընդուացն բաժա-
 ներոց ընկալան զգիտութիւն ՚ի յառնուլ զօրութիւն
 հոգւոյն սրբոյ . զի ամենայն աշխարհաց որ ընդ ամենայն
 տիեզերս մարդիկ իցեն՝ բաւական լիցին ուսուցանել
 զհրաման աստուածութեան . և սէր արարչին առ իւր
 արարածս » (Ագաթիւնգեղոս) :

ԵՒ ԲՆԱԿԵՑԱԻ Ի ՍՈՒՐԲՍ

Սուրբ կոչէր ՚ի հին օրէնս , որ ինչ միանգամ
 նուիրեալ էր աստուծոյ , որպէս շաբաթն , իւզն , զգես-
 տըն , տեղին , և այլն : Սուրբ կոչէին և անդրանիկքն , զի
 սեպհականեալ էին աստուծոյ . ըստ այնմ՝ « Ամենայն
 արու որ բանայ զարդանդ , սուրբ տեսան կոչեսցի »
 (Եւէյ . ԺԳ , 2) :

Սուրբ կոչեցան ՚ի նոր օրէնս քրիստոնեայք , որ
 դաշամբք ճշմարիտ հաւատոյ , և կնքով մկրտութեան ,
 և շնորհօք հոգւոյն սրբոյ , և գործովք առաքինութեան
 նուիրեալ էին ՚ի պաշտօն միոյն աստուծոյ և փրկչին մե-
 ըոյ յիսուսի քրիստոսի . ըստ այնմ՝ « Ողջոյն տան ձեզ
 սուրբք ամենայն » (Բ , Սուրնիացոյ . ԺԳ , 12) : Եւ թէ՛
 « Պաշտօնն իմ որ յերուսաղէմ՝ ընդունելի լիցի սրբոցն »
 (Հոովմայեցոյ . ԺԵ , 13) : Եւ թէ՛ « Ամենայն սրբոց ՚ի
 քրիստոս յիսուս , որ են ՚ի կողմանս Փիլիպպեցւոց »
 (Փիլիպպեցոյ . Գ , 1) :

Եւ պա սանլովն՝ « Եւ բնակեցաւ ՚ի սուրբսն » , ան-
 շուշտ իմացեալ լինին աշակերտքն քրիստոսի՝ և ամե-
 նայն հաւատացեալք , որք ժողովեալ էին ՚ի վերնա-
 տունն , և սպասէին դալստեան հոգւոյն սրբոյ , որ եկն
 յաւուր մեծի պէնտէկոստէին , և հանգեաւ ՚ի վերայ

նոցաւ Օ ի ոչ միայն սրբեալք էին սոքա հաւատովք
և չարչարանօք և արեամբն քրիստոսի . այլ և սրբեցան
հրով հողւոյն , և եղևն որպէս ոսկի ընտիր՝ փորձեալ
ի քուրայս :

Ըրդ՝ կրկին եղանակաւ էջ հողին սուրբ . մի՛
երևելի . և միւս՝ աներևոյթ . երևելի էր , աղաւնակերպ
իջումն նորա ի Յորդանան , և ի հրեղէն լեզուս ի վեր-
նատունն : Ըներևոյթ էր իջումն նորա յայնժամ ի սիրտ
և ի հոգի միաբան բազմութեան ժողովելոց ի սուրբ
վերնատունն . և միշտ իջանէ ի հոգիս հաւատացելոց՝
որք սուրբ են սրտիւք , և բնակի ի նոսա ազգի ազգի
պարզեօք . ըստ այնմ՝ « Ոչ գիտէք՝ եթէ տաճար էք
աստուծոյ , և հոգի աստուծոյ բնակեալ է ի ձեզ » (* ,
Վրնէիւց-ոյ . 4 , 16) :

Իսկ որ հոգին բնակէ , անդ է և որդի . ըստ այնմ՝
« Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած
աշխարհի » (Մաթէի . 12 , 25) : Եւ ուր որդին է , անդ
է և հայր . ըստ այնմ ասաց տէրն՝ « Ես և հայր առ նա
եկեացուք , և օթեանս առ նմա արասցուք » (Յովհան-
նո . ԺԴ , 23) : Օ ի անբաժանելի է միասնական սուրբ
երրորդութիւնն :

Ըպաքէն եկեղեցի սուրբ յաւուրց անտի առա-
քելոց մինչև ցայսօր ժամանակի՝ ոչ սակաւ շինութու-
թիւնս կրեաց ի զանազան հերձուածողաց . զի էր եր-
բեմն՝ որք փրացեալ հողմով ամբարտաւանութեան
յարուցանէին զմեծամեծ խռովութիւնս , և ամբօխէին
զհաւատացեալս քրիստոսի . և էր երբեմն՝ զի ընդհար-
եալ ընդ վիմեղէն պնդութիւն քաջաջան հովուաց՝ խոր-
տակէին խպառ , և անհետ ի միջոյ լինէին :

Ըյսպիսի իմն աղմուկ խռովութեան ծագեցաւ

յառաջին դարս՝ յԱրիստեան և յԵւնոմեան և յաւելտ
 ՚ի Մակեդոնեան աղանդաւորաց վասն աստուածութե
 հոգւոյն սրբոյ և անձնաւորութեան նորա. բայց կուռն
 ջանիւ աստուածարեալ հարց սրբոյ ժողովոյն Արստան,
 դնուպօլսոյ, և յաւելտ սրբոյն Գրիգորի աստուածաբա
 նի՝ բարձաւ այն հերձուած, և եղև խաղաղութիւն:

Իսկ ՚ի միջին դարս յարեաւ այլ իմն ազմուկ՝ ոչ
 յաղազս աստուածութեան կամ անձնաւորութեան
 հոգւոյն սրբոյ, այլ զի ոմանք համաձայն սրբոյ աւետա
 բանին, և հարցն սրբոց աւանդութեան՝ ասէին պար
 զապէս, թէ հոգին սուրբ բղխի ՚ի հօրէ, կամ թէ բղխի
 ՚ի հօրէ և առնու յորդւոյ. այսպէս ամենայն արեւելեան
 եկեղեցիք քրիստոնէից:

Եւ ոմանք՝ թէ պարտ է ասել, եթէ հոգին սուրբ
 բղխի ՚ի հօրէ և յորդւոյ. և այսպէս նախ առաջին եկե
 ղեցին Ապանիական, և ապա ոմանք յերոսպական ազգաց
 հանդերձ եկեղեցեալ իւրեանց: Իսկ թէ նորա յի՛նչ
 միտս, կամ որով եղանակաւ առեալ ասեն զայս, չկա
 միւր լինել խուզարկու. զի ըստ առածին, չէ՛ ՚ի դէպ ՚ի
 հնձունս օտարի մանդաղ արկանել. բայց քանզի բա
 ղում ժամանակք են, զի ոմանք յազգէս մերմէ արք մո
 լորամիտք և ապստամբք ՚ի ճշմարտութենէ, մոլար հա
 մարելով զմերս ողջամիտ դաւանութիւն՝ սկսան հեր
 ձախօսել, թէ պարտ է զամենասուրբ հոգին ասել
 բղխեալ ՚ի հօրէ և յորդւոյ, և գայթակղեցուցանել
 զբազումս ՚ի պարզամիտ ժողովրդոց մերոց. ամին իրի
 պարտ յանձին համարեցաք այժմ՝ յայտ յանդիման ցու
 ցանել զուղղափառ դաւանութիւն եկեղեցւոյս հայ
 աստանեայց. որպէս զի տարապարտ գայթակղեալքն ՚ի
 մէնջ ծանուցեալ զուղիղ խոստովանութիւն մեր՝ զըր

ունխմբ առ հողին սուրբ աստուծոյ , դարձցին անդրէն
 ՚ի միաբանութիւն հայրենի ազգիս :

ԱՐԴԵՕ՛Ք ՊԱՐՏ Է ԱՍԵԼ ԶՆՈԳԻՆ ՍՈՒՐԲ ԲՂԻԵԱԼ Ի ՀՕՐԷ ԵՒ
 ՅՈՐԴԻՈՅ

Չայնս բղխումն ՚ի հայկականս մեր բարբառ նը-
 շանակէ յատկապէս զճագումն յառաջին սկզբնէ , կամ
 զերումն յանպատճառ պատճառէ . ըստ այնմ՝ « Բղխես-
 ցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ » (Եսայէայ . Ժ , 1) :
 Օ ՚ի գաւազանն՝ որ է բունն կամ հաստադիտակն ծա-
 ուոյ , անմիջապէս ծագի յարմատոյն : Լւթէ՝ « Բղխես-
 ցէ սիրտ իմ զբան բարի » (Սաղմոս . ԽԴ , 1) : Լւթ յարար-
 չութեան անդ ասացաւ՝ « Բղխեսցէ երկիր զբանջար
 խոտոյ » (Տննարկ . ա , 11) : Օ ՚ի սիրան՝ բանին , և երկիրն՝
 բանջարոյ են առաջին պատճառք , որպէս ակն՝ ջուրց
 գետոյն :

Ապա ըստ այսմ առեալ , ասելն թէ հողին սուրբ
 բղխի ՚ի հօրէ և յորդւոյ , է մոլորութիւն չար , զի է
 դնել զերկուս նախկնական սկզբունս ՚ի յաստուած ըստ
 աղանդելոյն Մանեայ . չար ևս մոլորութիւն ոմանց չա-
 բին արբանեկաց , որ սկսան մուծանել զբառս « Եւ
 յորդւոյ » ՚ի շանգանակն մեր , և յերգս Առաւօտ լու-
 սոյին , որ է ՚ի դէմս որդւոյ , և Արեւոզային , և յայլս-
 քանզի այնպէս կարծէին հերձամիտքն այնորիկ , թէ
 չէ՛ ուղիղ ասել զհողին սուրբ բղխումն ՚ի հօրէ , մինչև
 ոչ զիցի առ նմին բառս « Եւ յորդւոյ » :

Լւթ այսու թիւր դատողութեամբ՝ ոչ միայն ընդ-
 հանուր եկեղեցին բրիստոսի՝ և ամենայն հարբ և վար-
 դապետք , այլ և նա ինքն եկեղեցին լատինական հա-
 զարաւոր ամօք գտանէր սխալեալ ՚ի հաւատս . զի յե-

կեղեցական պաշտամունս իւր ջունէր կիրառութիւն ձայնիս «Եւ յորդւոյ» . զի չեւս են հինգ հարիւր ամբ՝ յորմէ հեռէ բառս «Եւ յորդւոյ» սպրդեալ մուծաւ ՚ի Հանդանակս նոցա և յեկեղեցական կարդացմունս:

ՋԻՆՐԻ ԴԱՒԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Եկեղեցի հայաստանեայց ուսեալ ՚ի քրիստոսէ և ՚ի քրիստոսագրեաց հարց և ՚ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ , խոստովանի ամենայն ողջմտութեամբ , թէ հոգին սուրբ բղիսի ՚ի հօրէ և առնու յորդւոյ . զի ասէ՝ «Նոյն և նման հօր և որդւոյ , հոգիղ անեղ և համադոյ . բրդխումն հօր անքննաբար , առօղ յորդւոյ անձառաբար» (Շարախան):

Եւ յպէս աւանդեաց և տէրն մեր յասելն՝ «Յորժամ եկեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ՚ի հօրէ , զհոգին ճմարտութեան՝ որ ՚ի հօրէ ելանէ , նա վկայեսցէ վասն իմ» (Յովհաննոս . ԺԷ , 26): «Նա զիս փառաւորեսցէ , զի յիմմէ անտի առնուցու՝ և պատմեսցէ ձեզ» (Յովհաննոս . ԺԷ , 14): «Վմենայն ինչ՝ զոր ունի հայր իմէ , վասն այնորիկ ասացի ձեզ , զի յիմմէ անտի առնու , և պատմէ ձեզ» (Յովհաննոս . ԺԷ , 15):

Սուրբ Լուսաւորիչն . «Հաւատամք և ՚ի սուրբ հոգին աստուածեղէն հոգի սուրբ աստուած կատարեալ՝ առանց առնելոյ , բղխումն մշտնջենաւոր առ ՚ի հօրէ» (Ագաթանգեղոս): Եւ թէ՛ տէրն , «Ասէ , ես երթամ և զմխիթարիչն առաքեմ առ ձեզ . որ եկեալ մխիթարեսցէ զսիրտս ձեր . զի նա ասէ զիս փառաւոր առնէ . զի յինէն առնու և պատմեսցէ ձեզ» (Ագաթանգեղոս): Եւ թէ՛ «Լոյսն զի փարի ասէ զխաչիւն . այսինքն հոգի աստուածութեան՝ որ զորդին փառաւոր

առնէ , և զի խառնեցաւ ընդ ճառագայթս նորա , այսինքն է զի յորդւոյն առնու , և պատմէ սիրելեաց իւրոց » (Ագաթանգեղոս) :

Սուրբն Աթանաս . « Որդի ասէ՛ զոր ըւայ ՚ի հօրէ , զայս և յաշխարհի խօսիմ . իսկ հոգի յորդւոյ առնու , յիմմէ անտի առնուցու և պատմեսցէ ձեզ » (Յուդա հոգւոյ Գալաթեան) :

Սուրբն Ալիւրեղ . « Հաւատամք նմանապէս և ՚ի հոգին սուրբ , ոչ օտար զնա աստուծայնոյ բնութեանն համարելով . քանզի է ՚ի հօրէ բնաւորապէս հեղեալ յառաջ որդւով ՚ի ստացուածս » (Պարապոմեոս) :

Սուրբ Ներսէս շնորհալի . « Թէ ՚ի հօրէ է յատկաբար , առնու յորդւոյ ճշմարտաբար » (Յիսուս որդի) :

Սեծն Վարդան . « Հոգին՝ որ ՚ի հօրէ ելանէ , և յորդւոյ առնու » (Ի Տէկնո-վեան Սաղմոսայ) :

Երանելին Բարսեղ Ալիւրիկեցի ճոն կոչեցեալ . « Առանձին է հօր՝ անձին և անսկիզբն գոլ . իսկ որդւոյ ծնունդ և սկսանիլ ՚ի հօրէ անժամանակաբար . և հորւոյն սրբոյ՝ բղխումն ՚ի հօրէ և երևումն յորդւոյ անհատաբար և անժամանակապէս » (Ի Տէկնո-վեան Մարկոսի) :

Սեծն Գրիգոր Տաթևացի . « Ասաց արասցուք մարդ ըստ պատկերի մերում . տե՛ս զսէր նորա ՚ի պատիւ մարդոյն , զոր ոչ ումեք արար յեղելոցս վերնոյն և ներքնոցն իմանալեացն և զգալեացս . և խորհրդակից առնումեծի խորհրդոյն ոչ զոր եղական գոյեղէն բնութիւն . բայց զբան իւր համազոյ , և անհասութեան իւր քննօղն որ յումեքէ՛ ոչ քննի՛ զհոգին ամենասուրբ , որ ՚ի հօրէ ելանէ , և առնու յորդւոյ » :

ՁԻՆՉ Ե ԱՍԵԼՆ՝ «ՀԱՒԱՏԱՄՔ Ի ՄԻ ՄԻԱՅՆ ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ»

Լկեղեցին նիւթապէս առեալ՝ նշանակի տեղին՝ ուր հաւատացեալք ժողովին ՚ի մի պաշտօն ճրչմարտին աստուծոյ . ըստ այնմ՝ «Չգիշերն ողջոյն յեկեղեցին աղօթեցին» (Յո՞ւդէի . ւ) : Լաթէ՝ «Յեկեղեցիս օրհնեցէք զաստուած» (Սաղմոս) :

Լսիկ տեսականապէս առեալ՝ նշանակի ընկերութիւնն հաւատացելոց . ըստ այնմ՝ «Հալածեցի զեկեղեցին աստուծոյ» (Սաղմոս . Գլ . 9) : Լա ըստ այսմ իմացեալ լինին առ հասարակ ժողովն հաւատացելոց՝ որ ՚ի ժամանակս բնական և գրաւորական օրինաց . և ընկերութիւնն հաւատացելոց՝ որ յօրէնս շնորհաց , Բայց որովհետև առաջիկայ բանք հանգանակիս հային միայն յեկեղեցին նորոյ օրինաց , յայս միտ բացայայտ և որոշակի ստորագրիս Լկեղեցին է ժողով մարդկան զինուորելոց՝ հաւատացելոց և մկրտելոց , միով ուղղափառ դաւանութեամբ՝ և հաղորդակցութեամբ սրբարար խորհրդոց ընդ միմեանս միաւորելոց , կառավարեալ օրինաւոր հովուօք , ունելով զմի հովուապետ և գլուխ զբրիստոս :

ա . Լսի «Ժողով մարդկան» . զի որոշեցի ՚ի ժողովոյն հրեշտակաց , որ անուամբս եկեղեցւոյ իմացեալ լինի , և ունի գլուխ զբրիստոս . ըստ այնմ՝ «Սա է՝ որ եղև յեկեղեցւոյն յանապատի ընդ հրեշտակին» (Գ՞ր . Ժոյ . է , 38) : Լաթէ՝ «Նստոյց ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս ՚ի վերայ ամենայն իշխանութեան և պետութեան . . . և զնա եղ գլուխ ՚ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ» (Եփեսոսաց . ա , 20) :

բ. Մի « Զինուորելոց » . զի որոշեսցի յեկեղեցւոյն յաղթանակողաց , այսինքն ՚ի ժողովոյն երանելեաց՝ որք են յերկինս . ըստ այնմ՝ « Եկեղեցիս անդրանկաց գրելոց յերկինս » (Եբբայեց-ոց . ԺԲ , 23) :

գ. Մի « Հաւատացելոց » . զի որոշեսցի ՚ի ժողովոյն անհաւատից , որ չէ՛ եկեղեցի . զի թէպէտ ընկերանան ՚ի պաշտօն աստուծոյ , այլ ոչ ճշմարտին աստուծոյ . զի ոչ պաշտեն զմի աստուած յերթ անձինս . ըստ այնմ՝ « Ամենայն հեթանոսք իբրև զկաթիլ մի ՚ի դուռէ՛ են . ոչինչ են . և յոչինչ համարեցան » (Եսայեայ . Խ , 15) : Եւ թէ՛ « Ճանեան զաստուած , և ոչ իբրև զաստուած փառաւորեցին կամ դոհացան » (Հոովայեց-ոց . ա , 21) :

դ. Մի « Մկրտելոց » . զի որոշեսցի յերախայից , որք թէպէտ ունին զճշմարիտ հաւատս . բայց քանզի չև ևս են առեալ զմկրտութիւնն , ոչ են տիրապէս յեկեղեցւոյ . զի դուռն մտից եկեղեցւոյն քրիստոսի է մկրտութիւնն :

ե. Մի « Միտլ ուղղափառ դաւանութեամբ » . զի որոշեսցի ՚ի հերետիկոսաց և յաղանդաւորաց , որք ընդ դէմ դարձեալ եկեղեցւոյ՝ յամուութեամբ ջատագովեն զմոլորութիւնս իւրեանց :

զ. Մի « Հաղորդակցութեամբ սրբարար խորհրդոց ընդ միմեանս միաւորելոց » . զի որոշեսցի յերեխայից , որք չև ևս ունին զհաղորդակցութիւն խորհրդոց . և ՚ի նոյնելոց , որք հատեալ են ՚ի հաղորդակցութենէ նոցին :

է. Մի « Ոչառախարեալ օրինաւոր հովուօք » . զի որոշեսցի ՚ի հերձուածողաց , որք կամաւ ՚ի բաց զատուցեալ զանձինս ՚ի հոգևոր միութենէ , և ՚ի հնազանդութենէ օրինաւոր և ուղղափառ յատուկ առաջնոր-

դաց իւրեանց , հպատակին ապօրինաւոր և հերետիկոս հովուաց , և մտադիւր անսալով նոցա՝ զչարաչար մոլորութիս նոցա յանձինս ձգեն , և զրկին ՚ի հոգեւոր կենաց :

Ը . Ա՛սի ՚ի վերջոյ , « Ունելով զմի հովուապետ և զլուս զքրիստոս » . ապաքէն մի՛ սուրբ՝ կաթուղիկէ՛ և առաքելական եկեղեցին է աստուածասահման ընկերութիւն ուղղափառաց , ՚ի զանազան ազդաց և լեզուաց միաբանելոց՝ և կառավարելոց իւրաքանչիւր սեպհական հովուօք ընդ տիրեզէրս ամենայն , ունի զմի միայն հովուապետ և զլուս ՚ի վերայ ամենայնի այնոցիկ՝ զյիսուս քրիստոս . որպէս զի եղիցի մի հօտ և մի հովիւ . ըստ այնմ՝ « Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրև զերիցակից՝ և վկայ չարչարանացն քրիստոսի , որ և հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ . արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ է աստուծոյ , մի իբրև ակամայ , այլ կամաւ ըստ աստուծոյ . մի զօչաքաղութեամբ՝ այլ յօժարութբ . մի իբրև տիրելով վիճակացն՝ այլ լինել օրինակ հօտին . զի յերեւիլ հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ » (* , Պէ֊բրո՛ի . է , 1) : Լուծէ՛ « Զի այր է զլուս կնոջ , որպէս և քրիստոս զլուս է եկեղեցւոյ » (Ե֊իսայոյ . ոյ . է , 23) :

ԶԻ՛ԱՐԴ ՊԱՏՇԱՃԻ ԲՐԻՍՏՈՒԼԻՆԵԼ ԳԼՈՒՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Պատշաճի նախ՝ ըստ արժանապատուութեան . զի գլխոյն պարտ է ունել զգերակայութիւն քան զայլ անդամս մարմնոյ . և ըստ այսմ քրիստոս ունի զգերագոյն իմն առաւելութիւն քան զայլ ամենայն անդամս մարմնոյ իւրոյ , որ է եկեղեցի սուրբ . զի է մարդ ճշմարիտ էակից մեզ . և աստուած ճշմարիտ՝ էակից հօր . ըստ այնմ՝ « Յորոց և քրիստոս ըստ մարմնոյն , որ է ՚ի

վերայ ամենեցուն աստուած օրհնեալ յաւիտեանս» (Հովհաննէս-ոց . Լ , 5) :

Երկրորդ՝ ըստ կատարելութեան . զի գլխոյն է ունել զգործարանս ճանաչման և զգայութեան , և ամուսն է հոգւոյն . և ըստ այսմ քրիստոս անդատին 'ի կէտ յղութեան իւրոյ ունէր զլրումն շնորհաց հոգւոյն աստուծոյ հեղմամբ ընկալեալ . ըստ այնմ՝ «Ո՛չ եթէ չափով տայ աստուած զհոգին» (Յովհաննէս . Գ , 35) :

Երրորդ՝ ըստ զօրութեան . զի գլխոյն է ունել ըզտէրութիւն 'ի վերայ մարմնոյ . 'ի ներքուստ ազգելով և հոսելով զշարժումն յանդամս իւր միջնորդութեամբ կենդանական ոգւոց , և արտաքուստ ուղղելով և կառավարելով զշարժումն նոցա միջնորդութեամբ զգայարանաց : Եւ ըստ այսմ քրիստոս հոսէ 'ի ներքուստ ըզպարզես շնորհաց կենդանարար հոգւովն իւրով յանդամս իւր , և արտաքուստ ուղղէ և կառավարէ 'ի ձեռն հովուաց եկեղեցւոյ . ըստ այնմ՝ «Իրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց (Յովհաննէս . Խ , 16) :

Վարձեալ՝ քրիստոսի պատշաճ էր լինել գլուխ եկեղեցւոյ . ան , զի էր ամենեին սուրբ , և ո՛չ զգածեալ անդոսնելի տկարութեամբ . վասն որոյ և կարող առ 'ի սրբել զանդամս մարմնոյ իւրոյ , զի եղիցին և նորա սուրբ . ըստ այնմ՝ «Ո՞րք 'ի ձէնջ յանդիմանեցէ զիս վասն մեղաց» (Յովհաննէս . Ը , 46) : Եւ թէ՛ «Զի զնա սրբեցէ սրբութեամբ աւագանին բանիւ , զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի , զի մի ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն» (Եփեսոս-ոց . Է , 26) : Եւ զայս սրբութիւն արար քրիստոս արեամբ իսպի իւրոյ . ըստ այնմ՝ «Սրբութիւն մեղաց մերոյ

արարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծութեանն ՚ի բարձունս
(Եբրայեցոց . 3) :

Ը . Օ ի կարգեալ էր ՚ի հօրէ միջնորդ ՚ի մէջ
աստուծոյ և մարդկան . վասն որոյ զոր ինչ և խնդրէր ՚ի
պէտս անդամոց իւրոց , կատարէր զնա աստուած . ըստ
այնմ՝ « Մի է աստուած , և մի միջնորդ աստուծոյ և
մարդկան , մարդ յիսուս քս » (3 , Տէմնիէսի . Բ , 5) :
Եւ զայս միջնորդութիւն արար քրիստոս յաւուրս
մարմնոյ իւրոյ՝ ոչ ՚ի հարկաւորութենէ , այլ ՚ի կարգադ-
րութենէն աստուծոյ . զի ինքն էր՝ որ իբրև զմարդ հայ-
ցէր . և նոյն ինքն էր՝ որ իբրև զաստուած կատարէր .
ըստ այնմ՝ « Ես գիտէի զի յամենայն ժամ լսես ինձ »
(Յովհաննոս . 7 , 42) : Եւ առնէ միշտ ՚ի բուն իսկ յեր-
կինս յանդիման երեսացն աստուծոյ . ըստ այնմ՝ « Սա՛
վասն յաւիտեան կալոյ առանց անցանելոյ ունի զքա-
հանայութիւնն . ուստի և կենդանի առնել համօրէն կա-
րող է զմատուցեալն նովաւ առ աստուած . քանզի
միշտ կենդանի է լինել բարեխօս վասն նոցա » (Եբրայե-
ցոց . 4 , 24) : Օ ի թէ աղօթիւքն Յորայ եթող աստ-
ուած զյանցանս բարեկամացն Յորայ » (Իբ . 10) : Եւ
՚ի շնորհս երեսաց Գաւթի վերակացու եղև քաղաքին
Երուսաղէմի , որպէս և ասէր՝ « Վերակացու եղէց քա-
ղաքիդ այդմիկ ապրեցուցանել զդա վասն իմ՝ և վասն
Գաւթի ծառայի իմոյ » (Եսայեայ . 12 , 25) : Լպա քանի՞
առաւել բարեխօսութեամբն քրիստոսի , որ է մի միայն
բացարձակ և ընդհանրական միջնորդ , տայէ մեզ աստ-
ուած զամենայն բարիս , որոց կարօտիմք :

Ը . Օ ի էր աստուած և մարդ , անբաժանելի և
անկորուստ միաւորութիւն բանին ընդ մարդկութեանն .
վասն որոյ և կարէր զանդամս մարմնոյ իւրոյ՝ անբաժա-

ների և անկորուստ միաւորել ընդ իւրում գլխոյ , և աստուածեղէն բնութեանն առնել հաղորդակից . և զայս ամենայն արար քրիստոս՝ ոչ ՚ի պարտեաց , այլ միայն յիւրմէ առատութենէ . ըստ այնմ՝ « Ես ՚ի հօր խնամ , և դուք յիս , և ես ՚ի ձեզ » (Յովհաննոս . ԺԴ , 20) : Լուծէ՝ « Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի » (Մատթէիոս . ԻԷ , 20) : Լուծէ՝ « Զամենայն զոր ետ ցիս հայր՝ ոչ կորուսից ՚ի նմանէ » (Յովհաննոս . Գ , 39) :

ՎԱՍՆ ԷՐ ԱՍԻ ՄԻ

Սխուծիւնն է մի ՚ի ծանօթական նշանաց ճշմարիտ եկեղեցւոյ , որով որոշի ՚ի ժողովոյն յամառ հերետիկոսաց , որք են հատեալ անդամք եկեղեցւոյ , և ՚ի հերձուածողաց անտի՝ որք տեսականապէս բաժանեալ են ՚ի հոգևոր միութենէ անդամոցն քրիստոսի : Իսկ արդ՝ ըստ Առաքելոյն՝ միութիւնն եկեղեցւոյ գլխաւորաբար կայանայ ՚ի հինգ պատճառս , որք են այսորիկէն . Սխուծիւն տեսան : չ . Սխուծիւն հաւատոյ : ք . Սխուծիւն յուսոյ : ր . Սխուծիւն մկրտութեան : ն . Սխուծիւն աստուծոյ հօր : ՚ստ այնմ՝ « Մի մարմին և մի հոգի . որպէս և կոչեցարուք ՚ի մի յոյս կոչման ձերոյ , մի է տէր , մի հաւատք , մի մկրտութի , մի աստուած և հայր ամենեցուն » (Եփեսոսացւոց . Դ , 4) :

Յայտ է առաջին պատճառն , որ է միութիւն տեսան . զի ընդհանուր հաւատացեալք՝ թէ ՚ի գոյն սփռեալ , և թէ ՚ի գոյն ժողովեալ , ունին զմի տէր կենարար , և զմի հովիւ քաջ զյիսուս քրիստոս . ապա մնան ամենեքին մի հօտ , և մի եկեղեցի . ըստ այնմ՝ « Ես եմ հովիւն քաջ . . . և եղիցին մի հօտ և մի հո-

միւս (Յո՛ւնիստո՛ւ . Ժ , 14 , և 16) :

Յայտ է երկրորդ պատճառն , որ է միութիւնն հաւատոյ , զի եկեղեցին ուղղափառաց՝ որ յորոտս տիեղերաց , ունի զմիութիւն ընդհանուր քրիստոնէական հաւատոյ և դաւանութեան , և այն իսկ է հանգանակն , զոր ընթեռնուէն յեկեղեցիս ամենայն ազգք քրիստոնէից : Եւ թէպէտ զանազան ազգք վարդապետական մեկ նութեամբ պէսպէս բացատրեն զպարագայս իմաստից բանին , բայց ամենեքին միաբանին ՚ի վերայ գլխաւոր և գոյացական մասանց հաւատոյ . ապա միութեամբ հաւատոյ՝ որ է հիմն և խարխիս ամենայն հոգեւոր շինուածոց , մնայ միշտ և եկեղեցին միւս Քանգի և քրիստոս շինեաց զեկեղեցի իւր , ո՛չ ՚ի վերայ վարդապետական մեկնութեանց , որ զանազան է առ զանազան ազգս , այլ ՚ի վերայ գոյացութեան հաւատոյ , որ մի և նոյն է առ իմ ազգս քրիստոնէից . վասն որոյ և ասաց՝ « ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ » (Մատթէոսի . ԺԷ , 18) :

Յայտ է երրորդ պատճառն , որ է միութիւնն յուսոյ . զի համօրէն ազգք և ազինք քրիստոնէից , ՚ի մի և ՚ի նոյն բարիսն յաւիտենական կենաց յուսան , և միոյ արքայութեան ակն ունին . և ամենայն խորհուրդք նորօրինացս՝ և պատուիրանք եկեղեցւոյ կարգեալ են առ նոյն վախճան . ապա և միութեամբ յուսոյ մնայ եկեղեցին մի :

Յայտ է չորրորդ պատճառն , որ է միութիւնն մրկրտութեան . քանզի խորհրդով մկրտութեան , որով դաւանին ամենեքին զմի և զնոյն հաւատս ամենասուրբ երրորդութեան , միաւորին ՚ի մի մարմին քրիստոսի . ուստի ասէ մեծն խոսրով . « Որք ՚ի քրիստոս մկրտեցան , միոյ աւագանի ճնուեղ՝ և միոյ մօր եկեղեցւոյ որ-

դիք՝ և հօրն երկնաւորի ժառանգք՝ եղբարք կոչին աւմենեքին» (Ի Տէրնութեան Ժամագրէի): Ապա միութեամբ մկրտութեան՝ ամենայն բազմութիւնն հաւատացելոց մնայ մի եկեղեցի:

§) այտ է հինգերորդ պատճառն, որ է միութիւն աստուծոյ և հօր. զի ամենայն քրիստոնեայք հաւատան և պաշտեն զմի աստուած հայր, խոստովանելով զնա ծնող որդւոյ, և բղխող հողւոյն սրբոյ, զոր և դաւանին ՚ի հանգանակին՝ ասելով «Հաւատամք ՚ի մի աստուած հայր ամենակալ» . ապա միութեամբ աստուծոյ և հօր ամենեցուն մնայ եկեղեցին մի:

1) եցերորդ ևս պատճառ յաւելու Առաքեալն, և այն է միութիւնն հաղորդութեան. քանզի ամենայն հաւատացեալք ճաշակելով ՚ի միոյ կենարար հացէ և ՚ի բաժակէ, միաւորին ընդ միմեանս և ընդ քրիստոսի. ըստ այնմ՝ «Մի հաց՝ մի մարմին եմք բազումքս, զի ամենեքին ՚ի միոցէ հացէ անտի վայելեմք» (ս, Կորնթացոց. Ժ, 17): Եւ թէ՛ «Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն քրիստոսի. հացն՝ զոր բեկանեմք, ո՞չ ապաքէն հաղորդութիւն է մարմնոյն քրիստոսի» (ս, Կորնթացոց. Ժ, 16): Ապա միութիւն խորհրդոյ հաղորդութեան մնայ եկեղեցին մի:

Եւ յոթերորդ ևս պատճառ յայտ առնէ Առաքեալն, և այն է միութիւնն հողւոյն սրբոյ. քանզի հոգին սուրբ իբրև սիրտ և հոգի ՚ի մարմնի եկեղեցւոյ, և իբրև սկիզբն գերբնական կենաց, տայ խորհրդոց եկեղեցւոյ զարբարար զօրութիւն և զազդութիւն առ ՚ի սրբել և կազդութիւն զհաւատացեալս. և ամենեքին միով հողւոյ սրբեալ և զօրացեալ լինին մի անձն, և մի հոգի. ըստ այնմ՝ «Որպէս մարմին մի է. և անդամս բաւ

զուճս ունի , և ամենայն բազում անդամք մարմնոյ մի մարմին է , նոյնպէս և քրիստոս . քանզի միով հոգւով ամենեքին ՚ի մի մարմին մկրտեցաք , եթէ հրէայք , եթէ հեթանոսք , եթէ ծառայք , եթէ ազատք , ամենեքին զմի հոգի արբաք » (* , Արմ. Եր. Եր. ԺԲ , 12) : Այս ամենայն քրիստոնեայք միութեամբ հոգւոյն սրբոյ են մի մարմին քրիստոսի , և մի եկեղեցի :

Այլ թերորդ պատճառ յարի ընդ սոսին , և այն է միաբան ընդ ունեւութիւն և կիրառութիւն խորհրդոյ . զի ամենայն ազգք քրիստոնէից ընդ ունին և ՚ի գործ ածեն զսրբազան խորհուրդս եկեղեցւոյ : Օ ի թէպէտ տարբերին յեղանակս կիրառութեան՝ և ՚ի պարագայս ինչ , բայց ամենեքին համաձայնին յընդ ունեւութեան խորհրդոյ , և ՚ի կիրառութեան այնց՝ յորս կայանայ էութիւն խորհրդոյ : Վտանէր և պէսպիսութիւն ՚ի ժամանակս առաքելոց յեկեղեցիս հրէից և հեթանոսաց . զի ոմանք յեկեղեցեաց պահէին զթրիատութիւնն , և զօրէնս Մովսէսի , և ոմանք արհամարհէին . ոմանք յառաքելոց մկրտէին յանուն սուրբ երրորդութեան , և ոմանք յանուն քրիստոսի . թէպէտ մարթ է ասել , թէ նաև ոչ զանց առնէին զանուամբ հօր և հոգւոյն սրբոյ : Աստի և տարբերութիւնք ինչ՝ որ գտանին յեկեղեցիս ուղղափառաց , և պէսպէս արարողութիւնք՝ որք ոչ վնասեն հաւատոց , այլ վերաբերին ՚ի ծէսս , ոչ եղծանեն զիսկութիւն խորհրդոյ , և ոչ բաժանեն զմիութիւն նոցա . զի այսպիսի տարբերութիւնք՝ ոչ են էականք կամ կացուցիչք խորհրդոյ , այլ ամբողջականք՝ կամ պատահականք . յորոց ոմանք մարթին իջանել և ՚ի ժամանակէ անտի առաքելոց , քանզի սկզբնաւորութիւն նոցա ոչ նշանակի ՚ի նախնի յիշատակարանս ազգին այ-

նորիկ, յորում գտանի այն արարողութիւն աննման այլոց . ապա միութեամբ ընդունելութեան խորհրդոց և կիրառութեան նոցին մնան ամենայն ազգք քրիստոնէից մի եկեղեցի:

ՎԱՍՏ ԷՐ ԱՍԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵԱՆ

Ընդհանրական ասի եկեղեցին քրիստոսի, նախ ըստ տեղւոյն . զի ընդ ոլորտս համօրէն Թինզերաց է ծաւալեալ գոնէ բարոյապէս . ըստ այնմ՝ «Պարտ է չարչարիլ քրիստոսի, և յառնել ՚ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղէմէ» (Ղուկաս . ԻԴ, 46): Եւ թէ՛ «Զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան՝ աւետարանին, որ եհասառ ձեզ, որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ և ստղաբերէ» (Սողոմոն . Գ, 5):

Թ. Ստբազմութեան ազգաց . զի ունի զհաւատացեալ ժողովուրդս ՚ի զանազան ազգաց և ՚ի լեզուաց . «Ինդրեան յինէն և տաց քեզ զհեթանոսս ՚ի ժառանգութիւն, և յիշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի» (Մարտի . Բ, 8): Եւ թէ՛ «Նման է արքայութիւն երկնից ուսկանի արկելոյ ՚ի ծով, և յամենայն ազգաց ժողովելոյ» (Մատթէոս . ԺԴ, 47):

Ճ. Ստտեղութեան . զի եկաց ցարդ անպակասելի, և մնացէ մինչև ՚ի կատարած աշխարհի . ըստ այնմ՝ «Թագաւորութեան նորա վախճան մի լիցի» (Ղուկաս . Գ, 33):

Դ. Ստ վարդապետութեան, զի ուսուցանէ ամենեցուն զամենայն կամս աստուծոյ . և պարտաւորէ ՚ի պահպանութիւն պատուիրանաց նորին . ըստ այնմ՝

«Այլ կայութիւն դնեմ ձեզ յաւուրս յայսմիկ . զի սուրբ եմ յարենէ ամենեցուն . քանզի ոչ խորշեցայ ՚ի պատմելոյ ձեզ զամենայն կամս աստուծոյ» (Գործոց . Ի , 26) :

Այս ասելովն «կաթուղիկէ կամ ընդհանրական» ՚ի մէջ բերէ զամենայն ազդս ուղղափառաց , որք ՚ի զանազան աշխարհս և ՚ի թագաւորութիւնս են բնակեալ . և ոչ զմին թողու արտաքոյ թէ և պանդխտութեամբ ցրուեալ իցէ մինչև ՚ի ծագս աշխարհի , և ընկճեալ և նուաճեալ ընդ ընդ ծառայութեան բուռն և խորիտ անբանց . ուստի ասէ մեծն խոսրով՝ «Զի՞նչ է կաթուղիկէն , տիեզերական՝ զի ամենայն եկեղեցիք ուղղափառաց , որ ընդ տիեզերս են՝ մի են . մի քրիստոս յամենայն եկեղեցիս է , որ ըստ առաքելոցն հաւատոյ շինի , զոր և առաքելական կոչեմք : Որ զի թէ բաժանին ըստ տեղեաց՝ այլ ոչ եթէ ըստ ժողովրդոց , զի ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի՝ ուր և հասանիցէ ճշմարիտ հաւատացեալն յեկեղեցիս ուղղափառաց , իւր եկեղեցի է , և ոչ որովէ՝ ոչ աշխարհն , և ոչ լեզուոյն օտարութիւն» (Ի Յինո-իեան Ժամագրէի) :

Իսկ սուրբ ժողովն կոստանդնուպօլսոյ յաւելու դնել ՚ի հանդանակի իւրում և զսրբութիւնն , յորմէ առեալ մուծին ոմանք և յօրինակս ինչ հանդանակիս մերոյ՝ այսպէս . « Հաւատամք յայս միայն ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցիս » . ըստ որոյ դնի և ՚ի քարոզս եկեղեցւոյ , « Աղաչեսցուք զամենակալն աստուած . . , վասն միայնոյ՝ սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ » (Ի Ժամագրէի) : Որով և ծանօթեալ թական նշանք ճշմարիտ եկեղեցւոյ լինին չորքս այսոքիկ , միութիւն , ընդհանրականութիւն , առաքելականութիւն , և սրբութիւն :

Սուրբ ասի եկեղեցին , նախ՝ վասն սրբութեան գլխոյն քրիստոսի , որ սուրբն է սրբոց և ամենասուրբ . ըստ այնմ՝ «Այսպիսի իսկ վայել էր մեզ քահանայապետ , սուրբ , անմեղ , անարատ , զատեալ ՚ի մեղաւորաց , և բարձրացեալ քան զերկինս» (Եփրայեցոց . է , 26) :

Դ. Ս | ասն սրբութեան անդամոցն . ըստ այնմ՝ «Այլ զուք ազգ էք ընտիրք , թագաւորութիւն , քահանայութիւն , ազգ սուրբ , ժողովուրդ սեպհական» (Ս , Պէփրոսի . Բ , 9) :

Ե. Ս | ասն սրբութեան հաւատոցն , յորս է կոչեցեալն . ըստ այնմ՝ «Որ փրկեացն զմեզ , և կոչեաց ՚ի կոչումն սուրբ» (Բ , ՏէՏնիէոսի . Ս , 9) :

Զ. Ս | ասն սրբութեան հոգւոյն , որ զսրբարար շնորհս իւր պարզէէ հաւատացելոց առ իւրաքանչիւր օգուտ . ըստ այնմ՝ «Ումնն ՚ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան . այլով բան գիտութեան ըստ նմին հոգւոյ , միւսումն հաւատք նովին հոգւով» (Ս , Սրնիւսի . ԺԲ , 8) :

Է. Ս | ասն սրբութեան խորհրդոց , որք սրբէն զմեղաւորս . զի մկրտութիւնն սրբէ յապականութենէ ըսկզբնական մեղաց , և ապաշխարութիւնն ՚ի ներգործական մահուչափ մեղաց . ըստ այնմ՝ «Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուցէ մկրտութիւնն , ոչ զմարմնոյ աղան ՚ի բաց ընկենլով , այլ զբարեոք մտացն հանդէս առ աստուած ՚ի ձեռն յարութեն յիսուսի քրիստոսի» (Ս , Պէփրոսի . Գ , 21) : Լ. Ս | «Եթէ ումեք թողուցուք զմեղս , թողեալ լիցի նոցա» (Յովհաննոս . Ի , 22) : Լ. պա եկեղեցի ո՛ր իցէ ուղղափառ ազգի՛ մեծի կամ

փոքու ծառայի, կամ ազատի, փակառուի այլոց ազգաց ուղղափառաց, է մի՛ նք՝ կաթուղիկէ և առաքելականս:

ԱՐԴԵՕ՛Ք ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԱՐԷ՞ ՍԽԱԼԻԼ Ի ՉՃԻՌՍ
ՀԱՒԱՏՈՑ

Եկեղեցին գլխաւորապէս կայանայ ՚ի հովիւս և յառաջնորդս, ըստ որում և տէրն եկեղեցի կոչեաց ըզհովիւսն եկեղեցւոյ, յասելն՝ «Ապա թէ եկեղեցւոյն ո՛չ լուիցէ (այսինքն հովուաց եկեղեցւոյ), եղիցի քեզ իբրև զհեթանոսս» (Մատթէոսի . ԺԷ, 17):

Իսկ արդ՝ բովանդակութիւն հովուաց եկեղեցւոյ, կամ որ նոյն ինքն ընդհանուր ժողովն, եթէ սխալէր կամ պակասէր ՚ի հաւատս, կործանէր իսպառ և բնաջինջ լինէր եկեղեցին քրիստոսի . սակայն զներհակն խոստացաւ տէրն մեր, յասելն՝ «Դրունք զժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն» (Մատթէոսի . ԺԷ, 18):

ԻՅԷ՞ ԵՒՍ ԱՆՍԻԱԼ Ի ԽՆԴԻՐՍ ԲԱՐՈՒՅ

Եկեղեցին ՚ի սահմանելն կամ ՚ի պատուիրելն զիր ինչ իբրև առնելի կամ խորշելի, որք հարկաւորք են ՚ի յաւիտենական վրկութիւն հաւատացելոց, ունի իւր խորհրդատու և ուսուցիչ զհոգին սուրբ աստուծոյ: Իսկ յուսուցանելն կամ յառաջադրելն զառնելին իբրև խորշելի, կամ զխորշելին իբրև զառնելի, ՚ի կործանումն հաւատացելոց, ո՛չ է վարիլ ուսմամբ և առաջնորդութեամբ հոգւոյն սրբոյ: Եսակայն և այս հակառակի անսուտ խոստմանն քրիստոսի, որ ասաց՝ «Ես աղաչեցից զհայր, և այլ միսիթարիչ տացէ ձեզ . զի ընդ ձեզ բնակեցի ՚ի յաւիտեան» (Յովհաննոս . ԺԷ, 16): Եւ թէ՛

«Միթիթարիչն հոգին սուրբ՝ զոր առաքեացէ հօյր յա-
նուն իմ, նա ուսուցէ ձեզ զամենայն» (Յովհաննոս .
ժԴ, 26): Լաթէ՝ «Յորժամ եկեացէ նա հոգին ճշմար-
տութեան, առաջնորդեացէ ձեզ ամենայն ճշմար-
տութեամբ» (Յովհաննոս . ժԷ, 13): Ապա է անսխալ և
ի կանոնս բարուց:

ԻՅԷ՝ ՆԱԵՒ ԱՆՍԻԱԼ ՅՕՐԻՆԱԴԲՈՒԹԻՒՆՍ ԻԻԲ

Արուհետեւ աստուածային հաւատով հաւատամբ,
թէ եկեղեցին է անսխալ ՚ի սահմանս հաւատոյ՝ և ՚ի
կանոնս բարուց, դո՛նեկ պարտիմք հաւատալ եկեղեցա-
կան հաւատով, թէ եկեղեցին նաև յօրինադրութիւնս
իւր իցէ անսխալ. զորօրինակ՝ թէ այս որ է սուրբ, կամ
տօնելի, կամ այն որ անսուրբ, կամ նզովելի, և այլն:
Օ ի-թէ պէտ յայտօսիկ դատաստանս իւր վարի վկայու-
թեամբ մարդոյ, որք կարեն խաբիլ և խաբել. բայց
ունի զներկայութիւն հոգւոյն աստուծոյ, որ ո՛չ խաբի,
և ո՛չ խաբէ: Ապա է անսխալ և յօրինադրութիւս իւր:

ԱՐԴԵՕ՛Ք Ո՛Ւ ԵՒ ԻՅԷ ՄԱՍՆԱԻՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՐԷ՝ ՍԻԱԼԻ
ՅՕՐԻՆԱԴԲՈՒԹԻՒՆՍ ԻԻԲ

Մասնաւոր եկեղեցին ՚ի դատաստան մասնաւոր
զորձոց, որպէս թէ այս որ տօնելի իցէ՝ կամ նզովելի,
կարէ սխալիլ. վասն զի դատէ ՚ի վկայութենէ մարդկանս:
Լա ո՛չ ևս է յայտնեալ առ ՚ի յաստուծոյ ներդրածու-
թեամբ կամ զօրութեամբ ՚ի գիրս սուրբս, թէ իցէ
անսխալելի:

ԵՒ ԶԻԱՊԻ ՈՐԲ ԱՌԱՆՁԻՆՆ ԵՆ ՍԻԱԼԱԿԱՆ , Ի ՀԱՒԱՔՄԱՆ
ԻՑԵՆ ԱՆՍԻԱԼ

Ընտանալու թիւնն՝ զոր ունին հովիւք եկեղեցւոյ
 'ի գումարիլ իւրեանց 'ի ժողով ընդհանուր , ոչ է 'ի
 բնական զօրութենէ ժողովման , որպէս թէ բազում զօ-
 րականք որք առանձինն էին յաղթելի , 'ի ժողովիլ իւրոց
 'ի միասին՝ լինիցին անյաղթելի , այլ է միայն 'ի գերբնա-
 կան զօրութենէ հոգւոյն սրբոյ , զոր տէրն մեր յետ
 յարութեան իւրոյ 'ի մեռելոց շնորհեաց առաքելոց իւ-
 րոց աստուածեղէն փչամամբ , մինչդեռ ժողովեալ նստե-
 ին 'ի միասին . և յետ վերանալոյ իւրոյ յերկինս՝ առաք-
 եաց միւսանդամ լրութեամբ պարզեաց , յորժամ մի-
 աբանեալ կային 'ի սուրբ վերնատունն . որպէս զի բնա-
 կեսցի ընդ նոսա և ընդ յաջորդս նոցա մինչև 'ի յաւիտ-
 եան . և առաջնորդեսցէ ամենայն ճշմարտութեամբ , զի
 անչարժ և անասան մնացէ եկեղեցի իւր , որպէս խոս-
 տացեալն էր յառաջագոյն : Ապա ուստի եթէ տիեզե-
 րական ժողովն չէր անսալ , ամենայն հաւատացեալք՝
 զոր ստացաւ տէրն պատուական արեամբ իւրով , լինե-
 ին արդեօք 'ի վտանգի կործանման , և ընդ դէմ խոստ-
 մանն քի՛ յաղթահարէր եկեղեցին 'ի դրանց դժոխոց :
 Սակայն եթէ կամեցեալ էր տէրն՝ որում տկա-
 րանայ և ոչինչ , իւրաքանչիւր հոգևոր հովուաց կարէր
 շնորհել զանտանալութիւնն . ոչ միայն հաւաքապէս , այլ
 և տրամաբաշխաբար . բայց յայնժամ ամենայն հաւա-
 տացեալք ոչ լինէին մի հօտ միոյ հովուի , և ոչ մի մար-
 մին միոյն գլխոյն քրիստոսի . այլ բաժանէին յիւրա-
 քանչիւր հովուս և առաջնորդս , մինչև իւրաքանչիւր
 որ 'ի նոցանէ ասել . « Ես Պօղոսեան եմ , և միւսն՝ թէ

Ես Ապօղոսեան, և միւսն՝ Եթէ ես Աբիսայեան, և միւսն՝
 Եթէ ես Քրիստոսեան» (ա, Արհմխոյ-ոյ . ա , 12): Արտի
 և լինելին հերձուածք ՚ի միում մարմնի . և ոչ նոյնք ըզ-
 միմեանց հոգային անդամք . մինչև «Ակն ասել զձեռն,
 Թէ չես ինձ պիտոյ , և դարձեալ գլուխն ցոտսն , Թէ
 չէք ինձ պիտոյ» (ա, Արհմխոյ-ոյ . թԲ , 21): Եւ Թերևս
 յափշտակեալ ՚ի կրից՝ ոչ ամէին ՚ի միտ , Թէ արդեօք
 Պօղոս ՚ի խաճ ելեալ իցէ , կամ յանուն Աբիսայի մկրր-
 տեցան . կամ «Եթէ ասիցէ ոտն , զի չեմ ձեռն , չեմ
 ՚ի մարմնոյ անտի , ոչ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի . և
 եթէ ասիցէ ունկն , վասն զի չեմ ակն՝ չեմ ՚ի մարմնոյ
 անտի . ոչ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի» (ա, Արհմխոյ-
 ոյ . թԲ , 15):

Ուստի յոյժ ճահողապէս կացոյց քրիստոս զան-
 սխալութիւնն ոչ իւրաքանչիւր անդամս մարմնոյ եւ
 կեղեցւոյ , այլ ՚ի միութեան իւրաքանչիւր անդամոցս
 Ապա հաւաքումն հովուաց եկեղեցւոյ , կամ փեղե-
 բական ժողովն է անսխալ :

ԳՈՒՅԷ ՊԵՂՈՒՅԷ ՈՒՔ , ԶԻ ԵԹԷ ՍԻԱԼԻՆ ԻՌԱՔԱՆՉԻՒՐ ՀՈՎԻՒՔ
 ԱՌԱՆՉԻՆՆ , ԱՊԱ ՍԻԱԼԻՆ ԵՒՍ Ի ՄԻԱՍԻՆ

Անսխալութիւն նոցա ոչ կայանայ ՚ի Ֆիզիզական
 հաւաքման՝ որպէս Թէ ՚ի բազմապատկութե զօրութե ,
 այլ ՚ի ներկայութե հոգւոյն սրբոյ՝ որ ոչ Թողու սխալիչ
 ՚իսկ ձեռնարկութից է իմաստակական անկանտն և
 Թիւր . զի ՚ի տրամաբաշխական առաջարկութեներէ յա-
 ոաջ բերէ զհաւաքական հետեութիւն . և նման է այնմ՝
 զօր Թէ ասէր զք , «Իւրաքանչիւր մարդ առանձինն
 ունի զմի գլուխ , ապա ամենայն մարդ ՚ի հաւաքիլն
 ունին զմի գլուխ» :

ԱՐԴԵՕ՛Ք Ո՛Ւ ԵՒ ԻՑԷ ՄԱՍՆԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԳԼԽՈՎԻՆ ՄՈՒՈՐԻՑԻ՝
Ի ՀԱՒԱՏՍ

Նաւանելի է, թէ՛ ոչ բոլորովին մոլորիցի. զի թէ
ի հին օրէնս՝ որ զստուեր հանդերձելոց բարեացս ու-
նէր, ոչ բոլորովին մոլորեցաւ հրէական եկեղեցին. զի
յաղաղակելն Եղիայի՝ թէ ես միայն մնացի, ասացաւ
նմա յաստուծոյ, եթէ «Թողի ինձ եօթն հազար այր,
որ ոչ կրկնեցին ծունր բահաղու» (Գ, Թափա-որայ. ԺԷ,
18): Ապա զիսորդ ՚ի շնորհական օրէնս՝ եկեղեցի ոյր
և իցէ ազգի քրիստոնէի մոլորիցի գլխովին. բայց յամե-
նայն ազգս և եկեղեցիս գտանին մոլորեալք, է՛ որ
շատ, և է՛ որ սակաւ, սակայն պատճառաւ մասնաւո-
րաց ոմանց՝ ոչ է արժան զազգ ինչ ողջոյն համարիլ
մոլորեալ. զի մասնաւորաց մոլորութիւնք և ՚ի ժամա-
նակս առաքելոց գտանէին յեկեղեցիս հրէից և հեթա-
նոսաց: Ուստի գրէ Առաքեալն առ Վորնթացիս. «Յոր-
ժամ ՚ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեմ եթէ հերձ-
ուածք գոն ՚ի ձեզ՝ և սակաւ ինչ հաւատացի. բայց և
հերձուածք լինելոց են ՚ի ձեզ, զի որ ընտիրքն իցեն ՚ի
ձեզ՝ երևեցին» (ա, Վորնթաց-ոյ. Ժա, 19):

ԱՐԴԵՕ՛Ք ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՑԷ՞ ԵՐԵՒԵԼԻ

Եկեղեցին է երևելի. ըստ այնմ՝ «Եղիցի յա-
ւուրս յեափնս յայտնի լեառն տեառն. և տուն աստու-
ծոյ ՚ի վերայ գլխոց լերանց. և բարձրացի ՚ի վերայ
բլրոց, և եկեցեն ՚ի նա ամենայն հեթանոսք» (Եսայ-
եայ. Բ, 2): Եւ նախ՝ ըստ նիւթական մասին, որք են
անձինք հաւատացելոց, եթէ տեսուչք՝ և եթէ ժողո-
վուրդք, որք ամենեքին են երևելիս Երկրորդ՝ ըստ տե-

տանն . և արասցես ըստ հրամանին , զոր պատմեսցեն
 քեզդ՝ (Բ , Օրինաց . Ժէ , 9) : Սոյնպէս և ՚ի նոր օրէնս
 պատուիրեաց տէրն մեր՝ ասելով այսպէս . « Եթէ մե-
 ղիցէ քեզ եղբայր քո , երթ յանդիմանեա՛ զնա , յոր-
 ժամ դու և նա միայն իցէք » (Մատթէոսի . ԺԷ , 15) :
 Այսու եցոյց զառանձին իշխանութիւն եպիսկոպոսին ,
 զոր ունի ՚ի վերայ միոյ քաղաքի՝ կամ թեմի . « Ապա
 եթէ ո՛չ լուիցէ քեզ , ա՛ռ ընդ քեզ միւս ևս կամ եր-
 կուս » (Մատթէոսի . ԺԷ , 16) : Այսու եցոյց զբացարձակ
 իշխանութիւն պատրիարքին , կամ կաթողիկոսին , կամ
 արքեպիսկոպոսին , զոր ունի ՚ի վերայ սեպհական վիճա-
 կին կամ ազգին իւրոյ . « Իսկ եթէ նոցա ո՛չ լուիցէ ,
 ասա՛ ջիր յեկեղեցւոջ » (Մատթէոսի . ԺԷ , 17) : Այսու
 եցոյց զգերագոյն իշխանութի տիեզերական ժողովոյն ,
 զոր ունի ՚ի վերայ իմ ազգաց բրիտանէից . վասն որոյ
 տայ անդէն զվերջին բացորոշութիւնն՝ ասելով , « Ապա
 թէ և եկեղեցւոյն ո՛չ լուիցէ , եղիցի քեզ իբրև զհեթա-
 նոսն և զմաքսաւոր » (Մատթէոսի . ԺԷ , 17) : Արկրորդ՝
 յայտ է և ՚ի սովորութենէ եկեղեցւոյն . զի ՚ի սկզբանե-
 անտի մինչև ցայսօր ժամանակի՝ ըստ երբեակ որոշման
 հոգևոր իշխանութե՛ն՝ երբեակ ազգ ժողովոյ եղեն յե-
 կեղեցւոջ : Առաջինն՝ թեմական , որ գումարէր յեկե-
 ղեցականաց միոյ թեմի կամ քաղաքի , և էր դատաւոր
 հակառակութեց այնր թեմի : Արկրորդն՝ Ազգային , որ
 գումարէր յեպիսկոպոսաց յատուկ ազգային կամ վիճա-
 կին , և էր դատաւոր հակառակութեց այնր ազգի կամ
 վիճակի : Արկրորդն՝ Տիեզերական , որ գումարէր ՚ի պատ-
 րիարքաց , ՚ի կաթողիկոսաց , յարքեպիսկոպոսաց , և յե-
 պիսկոպոսաց իմ ազգաց բրիտանէից , որք հաւաքէին
 ՚ի մի անձամբ կամ փոխանորդօք , կամ յայտնի կամ

ընկերայն հաւանութեամբ , և էր դատաւոր ամենայն հակառակութեանց համօրէն ազգաց քրիստոնէից : Լուզայ սովորութիւն հաստատուն կարաւ կաթողիկէ եկեղեցի , թէ ՚ի ժամանակ առաքելոց , և թէ ՚ի ժամանակ հայրապետաց : Եւ ժամանակ առաքելոց երբեակ խնդիրք ծագեցան ՚ի մէջ եկեղեցւոյ , և այնորիկ յերբեակ ընդհանուր ժողովս վճարեցան : Առաջինն էր վան ընտրութեան Մատաթիայ փոխանակ Յուդայի և զայն ոչ սուրբն Պետրոս առանձինն , այլ ժողով առաքելոցն և երիցանց վիճակաւ ընտրեաց , որպէս պատմէ աւետարանիչն Ղուկաս՝ յասելն . « Յաւուրնն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ . և էր անդ բաղմութիւն անուանց իբրև հարիւր և քսանից . . . և կացուցին երկուս՝ զՅովսէփ , որում Բարսաբայն կոչէին՝ որ անուանեցաւ Յուստոս . և զՄատաթիա . . . և ետուն վիճակս նոցա , և ելանէր վիճակն Մատաթիայ , և համարեցաւ ընդ մետասան առաքելալն » (Գործոց . 15) :

Երկրորդն էր վանն ձեռնադրութեան եօթն սարկաւադաց ՚ի վերակացութիւն որբոց և այրեաց . և զայն արարին ընդհանուր ժողովով , որպէս պատմէ սուրբն Ղուկաս՝ յասելն . « Առջեցին երկոտասանքն զբաղմութի աշակերտացն՝ և ասեն . ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն աստուծոյ , և պաշտել զսեղանս . և հաճոյ թուեցաւ բանն առաջի բաղմութեն . և ընտրեցին (զարս եօթն) , զորս կացուցին առաջի առաքելոցն , և աղօթս արարեալ՝ եղին ՚ի վերայ նոցա զձեռս » (Գործոց . 2) :

Երկրորդն էր վանն խնդրելոյ թրփատութեան և պահելոյ զօրէնս Մովսէսի . և վանն այնոցիկ ընդհանուր ժողովն առաքելոց . վճիռ . և հատ . այսինքն է զգուշանալ

միայն ՚ի զոհելոյ, ՚ի պոռնկութենէ, ՚ի յարենէ, և ՚ի հեղձուցելոյ. զոր և գրով ծանուցին ամենայն հաւատացելոց՝ ասելով. « Հաճոյ թուեցաւ հոգւոյն սրբոյ և մեզ » (Գործոց . ԺԵ, 28) : Սուտի Պօղոս և Շիղա պատուիրեցին հաւատացելոց պահել զհրամանս առաքելոց (Գործոց . ԺԵ, 41) : Սոյնպէս և ՚ի ժամանակս հայրապետաց, իբրև ճարակեցան մահաբեր մոլորութիւն Արիօսի, Մակեդոնի, Նեստորի . և խռովեցին զեկեղեցի . սուրբ հայրապետքն հետևող եղեալ առաքելոց՝ ընդհանուր ժողովոյ յանձն արարին զդատաստանս նոցա՝ իբրև գերադոյն դատաւորի կաթողիկէ եկեղեցւոյ :

Ապա եթէ գերադոյն իշխանութիւնն եկեղեցւոյ էր ՚ի ձեռս միոյ ՚ի գահերէց հայրապետաց, զոր օրինակ Աղեքսանդրիոյ՝ կամ Անտիոքաց, և այլն . որ մի միայն իւրով դաւառական կամ աղգային եպիսկոպոսօք՝ առանց գիտութեան և հաւանութեան այլոց ալքեպիսկոպոսաց կարէր դատաւոր լինել, և ինքնիշխան վճիռ հատանել, և զամենայն բրիտոնեայս յընդունելութիւն վճռոյ և սահմանադրութեան իւրոյ պարտաւորել . զի՞ է՝ զի վեց հարիւր վաթսուն և ութ հայրապետք ՚ի չորից կողմանց աշխարհիս գումարեցան յերիս ժողովս, ՚ի Նիկիա, ՚ի Վոստանդնուպօլիս, և յԵփեսոս, բազում աշխատութեամբ և ծախիւք՝ և վտանգիւ կենաց . ապա յայտ է, զի տիեզերական ժողովն է ճայրադոյն դատաւոր կաթողիկէ եկեղեցւոյ :

Ապաքէն այն ամենայն վարդապետութիւնք և սահմանք ժողովոց՝ որք եղեն ՚ի դարս դարս, և որք կարեն լինել յապագայ ժամանակս, համաձայն ողջամիտ վարդապետութեան ընդհանուր եկեղեցւոյ, և սահմանադրութեանց սրբոյ ժողովոյն Նիկիոյ, Վոստանդնու-

պօլսի, և Եփեսոսի, ընդունելի են մեզ և ամենայն ուղղափառացի

Ուստի և մեծ ժողովն Սոստանդեայ, որ եղև ՚ի Թուրն քրիստոսի 1415 ընդդէմ Վիքլէֆոսի և Յովհաննու Հուս կոչեցելոյ, ՚ի 4, գումարմանն սահմանեայսպէս. «Այս սուրբ ժողովն Սոստանդեայ . . . կարգէ, անօրինէ, սահմանէ, վճռէ, և հրատարակէ զայսօսփիկ. Նախ՝ թէ նա ինքն ժողովն հոգւով սրբով գումարեալ օրինապէս, արարեալ ժողով ընդհանուր, և յանդիման առնելով զկաթուղիկէ եկեղեցին զինուորեալ, անմիջապէս ՚ի քրիստոսէ ունի իշխանութիւն, որում իւրաքանչիւր զք զինչ և իցէ աստիճանի կամ արժանապատուութեան, ևս և որ ՚ի պապականն իցէ՝ պարտաւորի հնազանդիլ»: Եւ ՚ի 5, գումարմանն. «Իւրաքանչիւր զք զինչ և իցէ վիճակի կամ արժանապատուութեան, ևս և պապականին իցէ հասեալ. որ հրամանաց, կացուցմանց, կամ կարգաւորմանց, կամ պատուիրանաց այսր սուրբ ժողովոյ օրինօք գումարելոյ, ՚ի վերայ այնոցիկ՝ որք յառաջ ասացան, կամ վերաբերելոց առ նոսա. ՚ի վերայ այնոցիկ՝ զորս արարեալ իցէ՝ կամ զորս ունի առնել, յամառութեամբ արհամարհիցէ հնազանդիլ, եթէ ոչ զգաստացի՝ ներքոյ անկցի ըստ արժանեաց ապաշխարութեան. և ըստ պատշաճի պատուհասեցի՝ որ սահմանեալ է օրինաց»:

Եւ ՚ի վերայ այսր սահմանադրութեան ժողովոյն Սոստանդեայ՝ Յուլիոս ք, խօսի այսպէս. «Արդ՝ այս ճշմարտութիւնս է աներկբայ, և ամենայն ուղղափառք պարտաւորին խոստովանիլ զսա. և ով որ համարձակի ուրանալ, վաղվաղակի թուակից լինի հերեօթիկոսաց. և չէ՛ պարտ զարմանալ. զի նա ասի հերեօթիկոս, որ յան

դգնի ներհակիլ իշխանութեան և զօրութեան միոյ տի-
 եղերական ժողովոյ»։ Աւ Խննովիենտիոս ֆ , ՚ի վախճան
 ժք դարուն՝ առ Փիլիպպոս Օգոստոս թաղաւոր Գաղ-
 ղիոյ գրէ այսպէս . «Ո՛չ երբէք կարեմ համարձակիլ
 յատուկ իշխանութեամբ իմով առանց կամաց և վրձ-
 ոոյ տիեղերական ժողովոյ՝ խոտել զկանոնն՝ որք յա-
 ռաջագոյն սահմանեցան»։

ՈՐԳԻՍՏ օՐԻՆԱԿԱՒ ԻՑԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ
 ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ապաքէն երբեակ ազգ են կառավարութեան։

Կաթ. Ս ՚ի ապետական, որոյ գերագոյն իշխանութիւն է ՚ի
 ձեռս միոյ, այսինքն է թագաւորի . և նա միայն է բացար-
 ձակ հրամանատար, և տնօրէն, և օրինադիր ամ գաւա-
 ռաց և քաղաքաց ըստ հաճոյից կամաց իւրոց անկախ ՚ի
 հաւանութենէ այլոց , և նմա միայնոյ է ունել զհար-
 կադրիչ իշխանութիւն ուղղել և պատժել . նախարարք
 և իշխանք իբրև փոխանորդք նմին՝ կառավարեն զքա-
 ղաքս և զգաւառս յանուն նորա, և ամենեքին առ հա-
 սարակ կախեալ կան զհրամանաց և զակնարկութէ նր։

Թ . Ազնուապետական , որոյ գերակատար իշխա-
 նութիւնն ոչ ամբողջի ՚ի մի ոք , այլ է ՚ի ձեռս իշխա-
 նախումբ ժողովոյն, և ամենայն դատաստանք և վճիռք
 և օրինադրութիւնք՝ որք հային առ համօրէն հասարա-
 կութիւնն , կախի զհաւանութենէ ժողովոյն . ՚իսկ յա-
 տուկ կառավարութիւնք իւրաքանչիւր գաւառաց և
 քաղաքաց , է ՚ի ձեռս սեպհական իշխանաց իւրեանց ,
 որք և ունին աւագութիւն իրաւաբանել , հրամայել ,
 տնօրինել զհասարակապետութի իւրեանց, և նոր օրէնս
 գնել վասն օգտի հասարակաց , և ուղղել և պատժել։

Գ . Ժողովրդապետական , որոյ գերագոյն իշխանութիւնն ո՛չ կայանայ ՚ի մի ոք , այսինքն ՚ի Թագաւորն . և ո՛չ ՚ի բազումն այսինքն ՚ի Ժողովն իշխանաց . այլ ՚ի քուէս կամ ՚ի հաւանութիւնս համօրէն ժողովրդոց . ուր ամենայն քաղաքացիք յամենայն վիճակէ կարեն մտանել ՚ի պաշտօն կառավարութեան :

Յայտ է ւն . Թէ կառավարութիւնն եկեղեցւոյ ո՛չ է միապետական . զի մետրապօլիտք և եպիսկոպոսունք որ ընդ տիեզերս ամենայն՝ ո՛չ հովուեն զյատկացեալ վիճակս կամ զհասարակապետութիւնս իւրեանց իբրև փոխանորդք յանուն այլոյ , այլ իւրաքանչիւր յանուն իւրեանց . և ո՛չ կախին հասարակապետութիւնք իւրաքանչիւր քաղաքաց կամ դաւառաց կամ ազգաց ըզկառավարութենէ կամ զդատաստանէ այլոյ , այլ զիւրոյ սեպհական հովուի :

Յայտ է ք . Թէ կառավարութիւնն եկեղեցւոյ ո՛չ է ժողովրդապետական , զի ժողովրդականք չունին իրաւունս ձեռնամուխ լինել ՚ի հոգևոր կառավարութիւնս , և ո՛չ խառնիլ ՚ի դատաստանս որք ուղղակի կամ անուղղակի վերաբերին ՚ի հաւատս . և ո՛չ կախին զհաւանութենէ նոցա օրէնք կամ վճիռք՝ որք զնին յօգուտ հաւատացելոց :

Յայտ է ց . Թէ կառավարութիւնն եկեղեցւոյ է ազնուապետական , զի գերագոյն իշխանութիւնն հոգեւոր է ՚ի ձեռս տիեզերական ժողովոյն . և նա միայն է ծայրագոյն դատաւոր ամենայն հակառակութեանց եւ զելոց ՚ի բանս հաւատոյ՝ ՚ի վեր քան զամենայն հովուս և առաջնորդս , և ամենայն սահմանք և օրինադրութիւնք որք հային առ ընդհանուր եկեղեցին , կախի զհաւանութենէ և զվճռոց եպիսկոպոսաց ժողովոյն , որք ամենեւ

քին ունին իրաւաբանութիւն ազատաբար սահմանել
և վճռել :

Իսկ ՚ի վճիռս և յօրինադրութիւնս՝ որք ոչ վե-
րաբերին առ ընդհանուր հաւատացեալս , այլ առ հա-
սարակապետութիւն միոյ ազգի կամ գաւառի , իւրա-
քանչիւր մետրապօլիտ և եպիսկոպոս են ինքնիշխան դա-
տաւոր իւրոց վիճակաց . որք յատուկ իշխանութեամբ
իւրոց իրաւաբանեն , դատեն , վճռեն , անօրինեն , նոր
օրէնս հաստատեն ըստ պիտոյից , և հարկադրեն ՚ի պաշտ
պանութիւն նոցին զհպատակս իւրեանց . և այս ամե-
նայն հովիւք ըստ պաշտաման իւրեանց ունին պարտա-
ւորութիւն խնամ տանել հոգւոց . ուստի գրէ մեծ
վարդապետն շերտնիմոս ՚ի թուղթն առ Եւազր . « Եթէ
զի զիշխանութենէն խնդրես՝ մեծ է տիեզերս քան ըզ-
քաղաքն . վասն է՞ր յառաջ բերես ինձ զսովորութիւն
միոյ քաղաքի . ուր և գտցի եպիսկոպոս եթէ ՚ի Հոտլմ ,
եթէ ՚ի Ղոստանդնուպօլիս , եթէ ՚ի Հոեգիոն , եթէ
յԱղեքսանդրիայ , և եթէ ՚ի Դանիս , զնոյն արժանաւո-
րութիւն և զնոյն քահանայութիւն ունի » :

ԳՏԱՆԻՅԻ՞ ԱՐԴԵՕՔ ԵԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՑ
ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ , ԵՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՏՈՒՌԹԵԱՆ

Յայտ է ՚ի գործոց և ՚ի սահմանադրութենէ ժո-
ղովոց՝ եթէ գտանի զանազանութիւնս Օ ի որպէս
յամենայն մարմնի կան անդամք մի քան զմի նախա-
մեծար և յարգի . սոյնպէս և յամենայն կարգաւորեալ
հաւաքումն . որպիսի է ժողովն տիեզերական . գտանին
աստիճանք պատուոյ և իշխանութեան , զորս մարթ է
վերածել յերիս :

Յառաջնում կարգի համարին պատրիարզունք

Հոռվմայ , և Աստանդնուպօլսի և Աղէքսանդրիոյ , և Անտիոքայ , և կաթուղիկոսն հայոց մեծաց , և պատրիարդն Երուսաղէմի :

Յերրորդում կարգի համարին արբեպիսկոպոսք գաւառաց , և կաթուղիկոսք այլոց ազգաց , և մետրապօլիտք մայրաքաղաքաց :

Յերրորդում կարգի համարին այլ ամենայն եպիսկոպոսունք քաղաքաց և վանօրէից . բայց զոյ յամենեման ՚ի նոսա զանազանութիւն պատուոյ և իշխանութեան , ըստ նախնի սովորութեան , և ըստ սահմանադրութեան Թեոփիլոսի ժողովոց : Առքա ամենեքին՝ որովք կացուցանի գերագոյն ատեանն եկեղեցւոյ , ունին իշխանութիւն ազատաբար սահմանելոյ , և հաստատելոյ , և վճռելոյ ՚ի ժողովի անդ . զի ստորագրեն « Ես (այս անուն) արբեպիսկոպոս սահմանեալ ստորագրեցի » . կամ թէ՛ « Ես (այս անուն) եպիսկոպոս հնազանդեալ վճռոյ արբեպիսկոպոսին Աստանդնուպօլսոյ , կամ Աղէքսանդրիոյ , կամ Անտիոքայ , և այլն . ստորագրեցի » : Աւստի և առաջին սուրբ և Թեոփիլոսի ժողովքն սահմանադրեցին . զի արտօնութիւնք իւրաքանչիւր պատրիարքական և արբեպիսկոպոսական աթոռոյ մնասցեն հաստատուն և անփոփոխ . այնու կարգաւ՝ որպէս ունին ՚ի սովորութենէ նախնեաց և ՚ի սահմանադրութենէ ժողովոց . իբր զի իւրաքանչիւր տեսուչ շատասցի վարել զհոգևորական իշխանութիւն իւր ՚ի վերայ վիճակի իւրոյ , և մի իւրիք ձեռնամուխ լիցի ՚ի վէճս այլոց հովուաց : Աուրք ժողովն Նիկիոյ ՚ի վեցերորդ կանոնի իւրում ասէ այսպէս . « Նախնի սովորութիւնն անշարժ մնասցէ ՚ի յՂիլպոսոս , ՚ի Ալեքիայ , ՚ի Պենտապօլիս , զի եպիսկոպոսն Աղէքսանդրիոյ ունիցի

գիշխանութիւն ՚ի վերայ ամենեցուն սոցա. զի և եպիսկոպոսին քաղաքին Հռովմայ այս է սոլորութիւն. նոյնպէս և յԱնտիոք և յայլ վիճակս աւագութիւնը իւրաքանչիւր եկեղեցեաց անփոփոխ մնասցեն»։ Աւորպէս առ բարւոք կառավարութիւն իւրաքանչիւր աշխարհական պետութեան՝ կարևոր է զգուշաւոր պահպանութիւն օրինաց ազգաց հիմնելոց ՚ի բնութեան. սոյնպէս և առ բարւոք կառավարութիւն իւրաքանչիւր եկեղեցական հասարակապետութեան՝ պիտոյ է անփոփոխ պահպանութիւն սահմանադրութեանց ժողովոց հաստատելոց ՚ի նախնի սոլորութեան։ Աւստի՝ առաջին Աղետօխանոս պապ ՚ի Ե՛, դարուն առ եպիսկոպոսունս Լիւրիկեցւոց գրէ այսպէս . «Մեք ամենեքին պարտաւոր եմք պահել հանդերձ ամենայն զգուշութեամբ զկանոնսն, և ո՛չ իշխել ՚ի վերայ նոյն կանոնաց, որովհետև պարտական եմք անխախտ պահել զհրամանս այնոցիկ ժողովոց»։ Եւ . Վեյլախոս պապ ՚ի Ե՛, դարուն ՚ի ժի՛ թուղթն առ եպիսկոպոսունս Տարտանիոյ գրէ այսպէս . «Առաջին աթոռն (այսինքն Հռովմայ) ո՛չ պակաս քան զայլսն պարտաւորի առնել՝ որ ինչ սահմանեցաւ ՚ի ժողովոց, և յընդհանուր եկեղեցւոյ հաստատեցաւ»։ Աղաբիդոս պապ ՚ի զ՛, դարուն առ Աեսարիոս եպիսկոպոս Արլետայ գրէ այսպէս . «Հարկ է մեզ պահել անփոփոխ զայն Եւմ, որ ինչ յիշխանութենէ ժողովոցն սահմանեցան»։ Արտօնոս պապ ՚ի Ե՛, դարուն գրէ այսպէս . «Մեք եմք ճշմարիտ վերակացուք և սոյոգ պահապանք սրբազան կանոնացն, և ո՛չ թիւրութեամբ և չարաչար կերպիւ արհամարհօղք, և առ ոտն հարկանօղք զայնտիկ կանոնս . վասն զի գիտեմք՝ թէ որք զայնպիսիսն առնեն, ընդունելոց են զպատիժ ըստ արժանեաց իւրեանց»։

ԱՊԱ ԶԻՆՉ Է ԱՍԵՆՆ ՔՐԻՍՏՈՍ ԱՌ ՊԵՏՐՈՍ . «ՏԱՅ ՔԵԶ ԶՓԱ-
ԿԱՆՍ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ»

Փականքն արքայութեան զոր խոստացաւ քրիս-
տոս տալ Պետրոսի , և իշխանութիւնն կապելոյ և ար-
ձակելոյ . և այս յայտ է ՚ի հետեւեալ բանիցն՝ զոր ա-
սաց . «Տաց քեզ զփականս արքայութեան երկինից , և
զոր միանգամ կապեսցես յերկրի , եղիցի կապեալ յեր-
կինս . և զոր արձակեսցես յերկրի , եղիցի արձակեալ
յերկինս» (Մատթէոսի . ԺԷ , 19) :

Իսկ զայս իշխանութիւնն ոչ միայն Պետրոսի , այլ
և ամենայն առաքելոց խոստացաւ տալ յասելն , «Ամէն
ասեմ ձեզ , զի զոր կապիցէք յերկրի , եղիցի կապեալ
յերկինս . և զոր արձակիցէք յերկրի , եղիցի արձակեալ
յերկինս» (Մատթէոսի . ԺԷ , 19) : Օ զոր ետ լրիւ ամե-
նեցուն միանգամայն յետ ՚ի մեռելոց յարութեան իւ-
րոյ , ըստ այնմ՝ «Փշեաց ՚ի նոսա՝ և ասէ . առէք հոգի
սուրբ . եթէ ումք թողուցուք զմեզս , թողեալ լիցի
նոցա . և եթէ զուրուք ունիցիք , կալեալ լիցի» (Յոհ-
հաննոս . Ի , 22) :

Ըստի ասէ սուրբն Ապրիլանոս . «Փականքն ոչ
տուան միոյն միայնակ (այսինքն Պետրոսի) , այլ միու-
թեանն եկեղեցւոյ» : Եւ սուրբ Լուսաւորիչն ասէ ,
«Տէրն ետ առաքելոցն և զփականս արքայութեան ՚ի
ձեռս նոցա , զի ինքն իսկ աստուածորդին է դուռն մը-
տողացն (Ագաթանգեղոս) :

Ըպա ամենայն առաքելոց ետ քրիստոս զփականս
արքայութեան . եթէ փականօքն նշանակիցի իշխանու-
թիւնն թողութեան մեզաց ՚ի խորհուրդ ասպաշխարու-
թեան . և եթէ զերազոյն իշխանութիւնն դատողական

ի խնդիրս հաւատոյ: Աւստի ասէ եկեղեցի՝ «Որք առիք իշխանութիւն ՚ի վերայ ազգի մարդկան կապել և արձակել ՚ի յերկինս և ՚ի յերկրի»: Եւ դարձեալ՝ «Հազարապետք աստուածային խորհրդոցն, և բացողք դրանն արքայութեան երկնից»:

Աւստի և ամենայն յաջորդք առաքելոց՝ ունելով զփականս արքայութեան, ունին զիշխանութիւն թողութեան մեզաց՝ տրամաբանաբար. և զգերագոյն իշխանութիւն աստե՛նի եկեղեցւոյ՝ հաւաքապէս:

ԶԻ՛ՆՉ ԻՑԷ ԵՒ ԱՅՆ՝ ԶՈՐ ԱՍԱՑ ՏԷՐՆ ՑՊԵՏՐՈՍ . «ԱՐԱԾԵԱ՛ ԶՈՉԻԱՐՍ ԻՄ»

Ստոյգ իմն է, զի քրիստոս ո՛չ միայն սրբոյն Պետրոսի յանձն արար հովուել զհօտն իւր, այլ և ամենայն առաքելոց, և հետեւաբար ամենայն յաջորդաց նոցա. ըստ այնմ՝ «Երթայք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի» (Մատթէոսի. Ժ, 6): Եւ թէ՛ «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս հայր՝ և ես առաքեմ զձեզ. գնացէք սյսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս . . . ուսուցէք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ. և հաւատիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև ՚ի կատարած աշխարհի» (Մատթէոսի. ԻԷ, 18): Ասէ և սուրբ առաքեալն Պետրոս՝ «Չերիցունս այսուհետև աղաչեմ իբրև զերիցակից և վկայ չարչարանացն քրիստոսի. որ և հանդերձեալ փառացն յայտնելոյ հազորդ. արածեցէք՝ որ ՚ի ձեզ հօտդ է աստուծոյ. վերակացու լինել մի՛ իբրև ակամայ, այլ կամաւ ըստ աստուծոյ» (Ս, Պետրոսի. Ե, 1): Եւ թէ՛ «Չգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիս, յորում եղ զձեզ հողին նբ

տեսուչս, հովուել զժողովուրդ տեառն (Գործոց . 1, 28):

Ապա ո՛չ միայն սուրբն Պետրոս և յաջորդք նորա ունին իշխանութիւն հովուել և արածել զհօանքի, այլ և ամենայն առաքեալք և յաջորդք նոցա . որ և զիշխանութիւնն զայն՝ է ուրեք զի ասեն սուրբ գիրք՝ տուեալ նոցա ՚ի բրիստոսէ, և է ուրեք՝ զի ասեն տուեալ ՚ի հոգւոյն սրբոյ . զի արտաքին գործ երրորդութե է անբաժանելի: Աւստի ասէ մեծն Խոսրով . «Ասաց տէրն Պետրոսի, և նովաւ ամենայն առաջնորդաց, արածեա՛ս զոչխարս իմ, վասն որոյ զարիւնն իմ հեղի, և փրկեցի. և ձեզ յանձն արարի հովուել բարւոք . զի մի ղք կորիցէ» (1 յեմոս-իւան Ժամագրքին): Եւ սուրբն Աթաբիանոս ՚ի թուղթն առ Բիբլինիանոս՝ «Ասաց առաքելոցն, և ՚ի ձեռն նոցա ամենայն առաջակայիցն . որք առաքելոցն փոխանակաւ կարգեալք յաջորդեցին . «Որ ձեզ լսէ՛ ինձ լսէ» (Ղուիստո . 3, 16): Եւ դարձեալ՝ «Մի միայն է եկեղեցին ՚ի բազում անդամս բաժանեալ, և մի միայն հովուութիւն տուեալ բազում հովուաց, որք համաձայն են ՚ի վարդապետութիւն հաւատոյ»:

ԻՄԿ ԶԻՆՉ ԻՅԷ ԱՍԵԼՆ ԲՐԻՍՏՈՒ ԱՌ ՊԵՏՐՈՍ, «ԴՈՒ ԵՍ ՎԷՄ, ԵՒ Ի ՎԵՐԱՅ ԱՅԴԻ ՎԻՄԻ ՇԻՆԵՑԻՑ ԶԵԿԵՂԵՑԻ ԻՄ, ԵՒ ԴՐՈՒՆԲ ԴԺՈՒՈՑ ԶՆԱ ՄԻ՝ ՅԱՂԹԱՎԱՐԵՍՅԵՆ»

«Պետրոս կոչեցաւ ՚ի բրիստոսէ վէճ եկեղեցւոյ, վասն ուղիղ դաւանութեանն՝ զոր դաւանեաց զյիսուս որդի հօր աստուծոյ: Իսկ այն դաւանութիւն ո՛չ էր միայն ՚ի դիմաց իւրոց, այլ և ՚ի դիմաց ամենայն առաքելոց: Ապա ամենայն առաքեալք ՚ի միասին ընդ սրբոյն Պետրոսի՝ եղեն վէճ և հիմն եկեղեցւոյ:

Հայտ է ՚ի սրբոյ աւետարանէն, զի հարցումն քի

էր ՚ի դէմն ամենայն առաքելոց . քանզի եհարց ցառաքեալն՝ «Իսկ դուք զո՞ր առեք զինէն, թէ իցէ որդի մարդոյ» (Մատթէոսի . ԺԷ, 13): Ապա և պատասխանին Պետրոսի, թէ՛ «Դու ես քրիստոսն որդի աստուծոյ կենդանւոյ» (Մատթէոսի . ԺԷ, 13): Օ որ ետ ՚ի յայտնութենէ աստուծոյ և հօր, էր ՚ի դիմաց ամենեցուն . վասն որոյ և տէրն ամենայն առաքելոց պատուիրեաց չյայտնել ումեք . ըստ այնմ՝ «Յայնժամ սաստեաց աշակերտայն, զի մի ումեք ասիցեն, թէ նա է քրիստոսն» (Մատթէոսի . ԺԷ, 20): Լ, և ամենայն առաքեալք հաղորդակից էին այսմ վիմեղէն դաւանութեանն, հաղորդդտան և աստուածային երանութեանն, և եղէն հիմունք եկեղեցւոյ սրբոյ . ըստ այնմ՝ «Շինեալք ՚ի վերայ հիւանառաքելոց և մարդարեից, որ է գլուխ անկեանն յիսուս քրիստոս» (Եփէսոսացւոց . Բ, 20): Լ, և սուրբ առաքեալն Պետրոս ասէ վասն ճշմարիտ հաւատացելոց . «Դուք իբրև զվէմն կենդանիս շինիք տաճար հոգևոր» (Պետրոսի . Բ, 5):

ԵՒ ԶԻՆՉ ԻՑԷ ԱՅՆ, ՉՈՐ ԱՍԱՑ ՏԵՐՆ ԱՌ ՊԵՏՐՈՍ . «ԵՍ ԱՂԱԶԵՑԻ ՎԱՍՆ ԲՈ . ԶԻ ՄԻ՛ ՊԱՎԱՍԵՍՅԻՆ ՀԱՒԱՏԲ ԲՈ . ԵՒ ԴՈՒԵՐԲԵՄՆ ԴԱՐՉՑԻՍ, ԵՒ ՀԱՍՏԱՏԵՍՅԵՍ ԶԵՂԲԱՐՍ ԲՈ»

Յայտ է ՚ի բանից սրբոյ աւետարանին, թէ այս բանք ասացան ՚ի քրիստոսէ առ Պետրոս՝ ՚ի դէմն ամենայն առաքելոց . քանզի աստուածեղէն կանխադատութեամբն իւրով յառաջագոյն ասաց տէրն . «Ահա աստանայ խնդրեաց զքեզ խարբալել իբրև զցօրեան» (Ղովստոսի . ԻԲ, 31) . այսինքն՝ զձեզ . որպէս ընթեանուն այլ օրինակք, թէ՛ «Ահա աստանայ խնդրեաց զձեզ խարբալել» : Քանզի նոյն է ասելն քրիստոսի առ Պետ-

րոս՝ ՚ի դէմն ամենայն առաքելոց . « Խնդրեաց զձեզ խարբալել » : Իսկ խարբալելն է գայթակղիլ . և զայս մանկէ ասացեալ էր քրիստոս առ ամենայն աշակերտան , « Թէ ամենեքին դուք գայթակղելոց էք յինն յայսմ գիշերի . զի գրեալ է , Թէ հարից զհովիւն , և ցրուեսցին ոչխարք հօտին » (Մատթէոսի . Իւ , 31) :

Եւ յիրաւի ըստ կանխասացութեանն քրիստոսի ամենայն առաքելալք խարբալեցան իբրև զցորեան , և գայթակղեցան . վասն որոյ և ՚ի մատնութեան գիշերին՝ Թողին զտէրն և փախեան . ըստ այնմ՝ « Յայնժամ Թողին զնա աշակերտքն ամենեքին և փախեան : Եւ ոմն երիտասարդ զհետ երթայր նորա՝ արկեալ զիւրև կրտաւ մի ՚ի մերկուց . ունէին զնա երիտասարդքն . և նորա Թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ՚ի նոցանէ » (Մարտի . ԺԴ , 50) :

Ս ասն որոյ մինչդեռ իւղաբեր կանայք եկեալ պատմէին առաքելոց վասն յարութեանն քրիստոսի , ոչ հաւատային նոցա . որպէս ասէ սուրբն Ղուկաս , Թէ « Երևեցան առաջի նոցա շաղփաղփութի բանք նոցա , և չհաւատային նոցա » (Ղուկաս . ԻԴ , 11) : « Չի չև ևս գիտէին զգիրս , Թէ պարտ է նմա ՚ի մեռելոց յառնել » (Յովհաննոս . Ի , 9) :

Սպա որպէս խարբալիլն և գայթակղիլն էր ամենայն առաքելոց , այսպէս և անպակասելի մնալն ՚ի հաւատս , և զառնալն , և հաստատելն զեղբարս , վերաբերի առ ամենայն առաքելալսն : Սպապէս խօսի և մեծ վարդապետն եկեղեցւոյ երանելին Օգոստինոս՝ ՚ի մէջ 57 երորդ խնդրոյ հին և նոր կտակարանաց՝ յասելն . « Քսասաց Պետրոսի . և ես աղաչեցի վասն քո , զի մի պակասեսցին հաւատք քո . և դու երբեմն դարձցիս , և հաս-

տատեսցես զեղբարս քո . մի թէ վասն միայն Պետրոսի
աղաչեաց , 'ի բաց հանելով զՅակորոս և զՅովհաննէս և
զայլ առաքեալսն . և յայտնի է , որ դիման Պետրոսի՝
'ի միասին իմացեալ լինին բովանդակ առաքեալքն .
վասն այսորիկ ընդ աղաչելն վասն Պետրոսի , առանց երկ-
բայութեան աղաչեաց վասն ամենեցուն :

ԱՐԴԵՕ՛Ք ՎՃԻՌՔ ԵՒ ՍԱՀՄԱՆՔ ԳԱՀԵՐԷՑ ՊԱՏՐԻԱՐԳԱՅ , ՈՐՊԵՍ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՈՌՎՄԱՅ , ԿԱՄ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈԼՄԻ , ԿԱՄ ԱԼԵԲՔ
ՍԱՆԴՐԻՈՅ , ԿԱՄ ԱՆՏԻՈՒԲԱՅ , ԵՒ ԱՅԼՆ , ԻՑԵՆ ԱՆՈՐՈՒԳԵԼԻ

Լինիլն աննորոգելի՝ կայանայ յանխալութեան .
իսկ ոչ որ մասնաւոր աթոռաժառանգ , կամ մասնաւոր
եկեղեցի է անխալ . ապա յատուկ և առանձին սահ-
մանք և վճիռք ո՛ր և իցէ հայրապետի մասնաւոր եկե-
ղեցւոյ մեծի կամ փոքու . արտաքոյ հաւանութեան
ընդհանուր եկեղեցւոյ , կամ տիեզերական ժողովոյ ,
ոչ է աննորոգելի :

Լ՛հնա՛ն , Աղեմէս պապ յամի 1305 , կոնդակաւ
իւրով ունայնացոյց զամենայն սահմանս և վճիռս . զորս
ը , Պանխակիոս պապ արարեալ էր , որոց բովանդակու-
թիւնն կոչէր Տէֆիլէդաուէ . զի էր մոլորական և սխալ
Լու ուխտ մեծի եկեղեցւոյն Գաղղիոյ յայտարարու-
թեամբն՝ զոր արար յամի 1682 բացածանոց այսպէս .
«Վճիռք պապին ոչ են աննորոգելի . այլ յայնժամ ոչ
նորոգին , յորժամ հաստատեալ է հաւանութեամբ ընդ
հանուր եկեղեցւոյ . ուստի մեծն Գրիգոր Տաթևացի
յարացոյց բերեալ զսուրբն Պետրոս՝ ազդ առնէ իւրա-
քանչիւր հովուաց չլինել յանձնապատան յասելն .
«Որ գլուխն էր առաքելոց՝ ուրացաւ , ամենայն առաջ»

նորդք և սուրբք զգուշացին, և մի թուլացին» (Ի հաշ-
ուսն Մարկէոսի աւետարանին):

ՎԱՍՆ Է՞Ր ՀԱՆԳԱՆԱԿՆ ԱՌԱՋԱԳՐԻ ՄԵՋ ՀԱՒԱՏԱԼ «Ի ՄԻ
ՄԿՐՏՈՒԹԻՒՆ, ՅԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ»

Արկին եղև վիճակ մարդկային բնութե: Առա-
ջինն՝ վիճակ սկզբնական արդարութեան. որպիսի էր
վիճակ առաջին մարդոյն յառաջ քան զմեղանչելն
Արկրորդ՝ վիճակ անկեալ բնութեան, և այս եռակի
ա. Վ) իճակ բնական օրինաց. որ սկսաւ ՚ի մեղան-
չելոյն Ադամայ, և տեւաց մինչև ՚ի Մովսէս: Հայսմ
վիճակի մի միայն խորհուրդ եղան յաստուծոյ, և այն էր
Թրիատութիւնն իբրև զգալի նշան հաւատոցն քրիս-
տոսի՝ որ գալոց էր, կամ իբրև դեղ առողջարար սկզբ-
նական մեղաց:

բ. Վ) իճակ դրական օրինաց, որ սկսաւ ՚ի Մովսի-
սէ, և տեւաց մինչև ՚ի մահն քրիստոսի: Հայսմ վիճակի
հաստատեցաւ խորհուրդն Թրիատութեան, և եղան
խորհուրդք. դառն զատկական. օրհնութի կամ օծումն
քահանայից. քառասնօրեայ սրբութիւնն ծննդակա-
նաց. և պէսպէս խորհրդական արարողութիւնք, այսինքն
է լուացմունք մարմնոյ, օծումն աստացեալ անդամոց,
զօհք և ողջակէզք քաւութեան և սև ձեռնադրութիւն
յաջորդութեան ՚ի զօրալարութիւն Իսրայելի, և այլն:

գ. Վ) իճակ աւետարանական օրինաց, որ սկսաւ ՚ի
մահուանէն քրիստոսի, և տեւէ մինչև ՚ի կատարած աշ-
խարհի: Հայսմ վիճակի եղան եօթն խորհուրդք:
Վրանդի խորհուրդք հնոյ եկեղեցւոյն՝ էին իւրի, ան-
շօր, և սրբաւոր. և ոչ կարելին տալ զարդարացուցիչ
չնորհս՝ ՚ի Ժառանգութիւն յաւիտենական կենաց. վասն

նորեայ՝ խորհրդոյ ապաշխարութեան . ձեռնադրու-
թիւնն զօրախարաց՝ խորհրդոյ դրոշմին . օծութիւնք
ախտացեալ անդամոց՝ խորհրդոյ օծման հիւանդաց .
պսակն ո՛չ էր ՚ի հնումն խորհուրդ , այլ միայն ստիճու-
թիւն բնութեան ՚ի պահպանութիւն տեսակի . իսկ ՚ի
նորումն ամբարձաւ ՚ի պատիւ խորհրդոյ , զի է նշանակ
միաւորութեան բանին ընդ մարդկութեանս . ըստ այնմ՝
« խորհուրդս այս մեծ է , բայց ես ասեմ ՚ի քրիստոս և
յեկեղեցի » (Եփեսացոց . է , 32) :

ԷՍԿ ԸՆԴԷ՞Ր ՄԻԱՅՆ ՁԵՐԿՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՍ ԵՒԷԷ

Կրկին է մահն հոգւոյ . մի՛ ըստ տեսակին , որ եղև
սկզբնական մահաբեր մեղօք : Կրկրորդ՝ ըստ անհատին ,
որ լինի ներգործական մահացու մեղօք : Իսկ առ ՚ի կեն-
դանացուցանել զհոգին ՚ի մեռելութեանցս յայսցանէ ,
սահմանեցան ՚ի քրիստոսէ կրկին խորհուրդքս . մկրտու-
թիւնն՝ իբրև դեղ կենդանութեան տեսակին , հարկա-
ւոր բոլոր ծննդոց մարդկութեանս . և ապաշխարու-
թիւնն՝ իբրև դեղ կենդանութեան անհատին , հար-
կաւոր իւրաքանչիւր չափահաս անձանց . վասն որոյ զեր-
կուս զայսոսիկ միայն յիշէ : Եւ դարձեալ՝ որովհետև
հանդերձեալ էր առաջնորդել մեզ հաւատալ , « Ի քա-
ւութիւն և ՚ի թողութիւն մեղաց » . սմին իրի յիշատա-
կէ միայն զմկրտութիւնն և զապաշխարութիւնն . զի
սոքա միայն տան զառաջին սրբութիւնն , և զառաջին
արդարացուցիչ շնորհսն . իսկ այլ ամենայն խորհուրդք
ենթադրեն զընդունօղն ՚ի շնորհս , և ՚ի սրբութիւն , և
տան զերկրորդական շնորհսն :

ԶԻԱՐԴ ԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՄ ԵՐԿՐՈՐԴ ԸՆՈՐԷ

Ապաքէն երկու ազգ են խորհրդոց , ոմանք ասին հարկաւորք հարկաւորութեամբ միջնորդի . զի առանց այսոցիկ երկուց խորհրդոցս՝ ըստ կարգաւորեալ օրինացքն աստուծոյ , ոչ որ կարէ արդարանալ : Աւ ոմանք՝ հարկաւոր հարկաւորութեամբ պատուիրանի :

Հարկաւորք հարկաւորութեամբ միջնորդի՝ են մկրտութիւնն և ապաշխարութիւնն . իսկ այլ խորհուրդք են հարկաւորք հարկաւորութեամբ հրամանի :

Մկրտութիւնն ենթադրէ կամ նշանակէ զընդունողն ՚ի սկզբնական մեղս՝ ամենեկին զուրկ ՚ի սրբութենէ և ՚ի շնորհաց . և տայ մկրտելոց զսրբութիւն ՚ի մեղաց , կամ զարդարացուցիչ շնորհս . և այն կոչի առաջին սրբութիւն կամ առաջին շնորհ . որով և արժանաւոր առնէ զմկրտեալն ընդունիլ զդրոշմն՝ և զհաղորդութիւնն , զի որ չէ՛ մկրտեալ՝ ոչ կարէ ընդունիլ զայլ խորհուրդ , թէ և ունիցի զճշմարիտ հաւատս : Իսկ դրոշմն և հաղորդութիւնն յաւելուն ՚ի վերայ առաջին սրբութեան և շնորհաց՝ զոր ընկալան մկրտութեամբ , զառաւելութիւն իմն և զգերագոյն սրբութիւն և ըզշնորհ . և այն կոչի երկրորդական սրբութիւն , կամ երկրորդական շնորհ :

Ապա ասելովն՝ « ՚ի մի մկրտութիւնն » ընդ մկրտութեան իմացեալ լինի և դրոշմն և հաղորդութիւնն . զի այս երեքին խորհուրդք ՚ի միասին տուեալ լինին , և ոչ բաժանին ՚ի միմեանց . զի մկրտութիւնն տայ զառաջին սրբարար շնորհն . և դրոշմն և հաղորդութիւնն աճեցուցանեն զնոյն և կատարելագործեն :

Դարձեալ՝ մկրտութիւնն է խորհուրդ հաւատոյ ,

զի խոստովանիմք զսուրբ երրորդութիւնն . դրոշմն՝ յուսոյ , զի ապաւինիմք ՚ի զօրութիւն սուրբ հոգւոյն , և արիանամք ՚ի հոգևոր պատերազմին . հաղորդութիւնն խորհուրդ սիրոյ , զի միաւորիմք ՚ի դլուխն մեր քրիստոս : Լւ զի հեղական աստուածային առաքինութիւնքս անբաժանելի են ՚ի միմեանց , ապա յոյժ վայելարար ՚ի միասին տուեալ լինին երեքին խորհուրդքս :

Ուստի մկրտութիւն է խորհուրդ հարկաւոր հարկաւորութեամբ միջնորդի . զի առանց նորա ոչ որ ՚ի մարդկանէ կարէ դտանել զփրկութիւն , և զկեանս յաւիտենից . քստ այնմ՝ « Եթէ ոչ որ ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ , ոչ կարէ մտանել յարքայութիւնն աստուծոյ » (Յովնանոս . 4 , 5) : « Եթէ ոչ կերթիք զմարմին որդւոյ մարդոյ , և արբջիք զարիւն նորա , ոչ ունիք կեանս յանձինս » (Յովնանոս . 6 , 54) : Լւ թէ՛ « Որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ ՚ի քրիստոս , և օժ զմեզ , աստուած է , որ և կնքեաց զմեզ , և ետ զառհաւատչեաց հոգւոյն ՚ի սիրտս մեր » (Բ , կորնթացոց . ա , 21) :

Հարկաւոր է հարկաւորութիւն միջնորդի և խորհուրդն ապաշխարութեան , զի ենթագրէ զընդունողն ՚ի ներդործական մահացու մեղս , և զլստիլն զուրկ ՚ի սրբարար շնորհաց : Ուստի և ապաշխարութիւնն տայ ընդունողաց զառաջին սրբութիւն կամ զառաջին շքնորհս . և առնէ յարմար ընդունելոյ զխորհուրդ կարգին և պատկին , և այլն . զի առանց ապաշխարութեան՝ ոչ որ ՚ի չափահասից՝ որ ՚ի մահացու մեղս իցէ , ունի արժանաւորութիւն ընդունելոյ զայլ խորհուրդս եկեղեցւոյ , կամ գտանել զփրկութիւն և զկեանս յաւիտենից . « Եթէ ոչ ապաշխարիցէք , ամենեքեան նոյնպէս կորնչիցիք » (Ղուկասոս . 13 , 5) : Լւ թէ՛ « Եթէ ումեք թու

զուցութիւնս զմեզս , թողեալ լիցի նոցա» (Յովհաննէս .
 Ի , 23) : Ուստի այլ խորհուրդք՝ որք տան զերկրորդա-
 կան սրբութիւն կամ զշնորհս , այսինքն աճեցուցանեն
 և կատարելագործեն զառաջինն , ասին հարկաւորք հար-
 կաւորութեամբ պատուիրանի :

ԱՐԴԵՕ՛Ք ԶԷ՛Ր ՀԵՆՐ ԱՌԱՆՑ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ
 ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՌԱՐԱՑ

Վկատմամբ բացարձակ կարողութե՛ն աստուծոյ ,
 որ ո՛չ անկանի ընդ օրինօք , էր հնարաւոր և կարելի .
 բայց նկատմամբ կարգաւորեալ կարողութեանն աս-
 տուծոյ՝ որ իմաստութեամբ տնօրինէ զամենայն գործս
 իւր , հարկաւոր եղեն խորհուրդք եկեղեցւոյ յարդա-
 րութիւն և՛ ի փրկութիւն մեղուցեւոցն . ոմանք հարկա-
 ւորութեամբ միջնորդի . և ոմանք հարկաւորութեամբ
 պատուիրանի : Ի՛նչ խորհուրդք՝ որք են հարկաւորու-
 թեամբ պատուիրանի , ո՛չ են այնպիսի նկատմամբ բո-
 լոր եկեղեցւոյն , այլ նկատմամբ իւրաքանչիւր անհա-
 տի , զի նկատմամբ բոլոր եկեղեցւոյն՝ են ևս հարկա-
 ւորք հարկաւորութեամբ միջնորդի :

ԶԻ՛ՆՉ Է՛Ր ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆ ԵՌԱՆՆՈՒ

Խորհրդական մկրտութիւնք երբակի եղեն ՚ի հին
 և՛ ՚ի նոր օրէնս . ա՛ն , մկրտութիւնն Մովսէսի . ՚բ , մկրտու-
 թիւնն Յովհաննէս . ՚գ , մկրտութիւնն Գրիստոսի :

Արդ մկրտութիւնն՝ զոր հրամանաւն աստուծոյ
 օրինադրեաց Մովսէս , էր անկատար . զի սրբէր միայն
 զպղծութիւնն մարմնոյ , որք պղծեալ էին իւրք . որպիսի
 ոմանք էին բորոտք՝ տեստեպք՝ սերմնակաթք՝ և այլք .

որք ողողեալ զհանդերձ իւրեանց , և լուացեալ զմարմինս ջրով կենդանեաւ , սրբեալք լինէին ըստ օրինաց . (Ղևապոյ . 7) : Սոյնպէս պարտ էր առնել՝ որ կերեալն էր զմեռելոտի կամ զգազանաբեկ , զորմէ ասէ գիր՝ « Եթէ ոչ ողողեսցէ զհանդերձս իւր , և ոչ լուացէ զմարմին իւր ջրով , ընկալցի զանօրէնութիւն յանձն իւր » (Ղևապոյ . 7 , 16) : Լւ վասն այսոցիկ կային աւազանք ջուրց առ դրան խորանին վկայութեան՝ և առ տաճարին , գուցէ և ՚ի տունս բազմաց . ըստ այնմ՝ « Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ սրբութեանն Հրէից » (Յովնանոս . Բ , 6) :

Սկրտութիւնն՝ զոր ազդեցութեամբ հոգւոյն սրբոյ առնէր Յովհաննէս , էր կատարեալ ըստ խմբ , այլ ոչ բոլորովին . զի քաւէր զներդործական մեղս մկրտելոց , զորս խտտովան լինէին ՚ի մկրտութեան իւրեանց . բայց տակաւին մնայր ՚ի նոսա ունակութիւն ներդործական մեղաց , այսինքն զրկումն ՚ի սրբարար շնորհաց հոգւոյն աստուծոյ , վասն ներդործական յանցաւորութեանն Ադամայ , յորում մեղաւ բոլոր բնութիւնս մարդկայինս . Վանզի մկրտութիւնն Յովհաննու՝ ոչ էր խորհուրդ ըստ ինքեան , կամ զօրութեամբ իւրով արդարացուցիչ , այլ էր պատրաստութիւն ինչ մկրտութեն քրիստոսի . որպէս զի մկրտութեամբն իւրով ընտելացուցէ զժողովուրդն՝ մկրտութեանն քրիստոսի , և պաշխարութեամբն կազմ և պատրաստ արացէ արժանապէս մկրտիլ . ըստ այնմ՝ « Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն , բայց որ զկնի իմ գայ , հզօրագոյն է քան զիս . . . նա մկրտեսցէ զձեզ ՚ի հոգին սուրբ և ՚ի հուր » (Մատթէոսի . 3 , 11) : Աւտի և մկրտեալքն ՚ի նմանէ՝ վերստին մկրտեցան յանուն տեառն յիսուսի .

զի՛ն ո՛չ էին առեալ զհոգի սուրբ . ըստ այնմ՝ «Պօղոս
 ասէ ցնոսա , եթէ հոգի սուրբ ընկալար՞ուք ՚ի հաւա-
 տայն . նորա ասեն ցնա . այլ և ո՛չ թէ հոգի սը գուցէ
 լուեալ է մեր : Եւ ասէ՝ իսկ յի՛նչ մկրտեցարուք : Նոքա
 ասեն . ՚ի Յովհաննու մկրտութիւնն և մկրտեցան
 յանուն տեառն յիսուսի : Եւ ՚ի դնել ՚ի վերայ նոցա
 Պօղոսի զձեռն , եկն հոգին սուրբ ՚ի վերայ նոցա »
 (Գործոյ . ԺԷ , 2) :

Սկրտութիւնն՝ զոր սահմանեաց քրիստոս՝ էր
 ամենակատար . զի ո՛չ եկն լուծանել զօրէնս , այլ ընու-
 վանս որոյ և զթերութիւնս մկրտութեանն Մովսէսի և
 Յովհաննու ելից և կատարելագործեաց հոգւով սրբուի :
 Ուստի մկրտութիւնն նորոյ օրինիս զօրութեամբն իւ-
 րով տայ զսրբարար շնորհս հոգւոյն . կամ որ նոյն է ա-
 սել , արդարացուցանէ ՚ի գործոյ մեղուցելոյ . ՚ի տղայս
 ջնջէ զսկզբնական մեղսն . և ՚ի չափահասսն՝ զսկզբնա-
 կանն և զներգործականն միանգամայն :

Արդ՝ մկրտութիւնն քրիստոսի էր զաղափարա-
 կան պատճառ մկրտութեան նորոյ օրինիս :

Է՛ . Եւ այ զդրունս արքայուն , ընդ որ մկրտեալք
 ճանապարհորդեն ՚ի վեր յերկինս մտանել առ Է՛ժ . ըստ
 այնմ՝ « Ահա՛ բացան նմա երկինք » (Մատթէոսի . Գ , 16) :

Ը՛ . Պարզեաց մկրտելոց զհոգին սուրբ . քանզի
 քրիստոս ո՛չ էթէ կարօտ ինչ որ էր հոգւոյն , զի ան-
 դատին ՚ի յղութեան լցեալ էր ամենայն շնորհօք նորա .
 այլ առ ՚ի ցուցանել , թէ տայ մկրտելոց զհոգին սուրբ .
 ըստ այնմ՝ « Հոգին աստուծոյ իջանէր իբրև զաղաւնի ,
 և գայր ՚ի վերայ նորա » (Մատթէոսի . Գ , 16) : Ուստի
 ասէ սուրբն Արևելի՝ « Ո՛չ զայլոյ հոգի տուեալ մկրտե-
 լոցն ծառայաբար , և որպէս պաշտօնեայ , այլ որպէս »

աստուած ըստ բնութեան՝ իշխանութեամբ վերնով
ինքն և իւրովքն» (Պարսպ) :

Գ. Օ ի զմկրտեալսն հոգւով սրբով՝ արասցէ որ-
դիս աստուծոյ, և ժառանգս արքայութեան. ըստ այնմ՝
«Դա է որդի իմ սիրելի» (Մատթէոս . Գ , 17) : Ուստի
ասէ Պօղոս՝ «Ո՛չ առէք զհոգին ծառայութեան միւ-
սանդամ յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրութեան,
որով ազազակեմք բբբա՛, հայր» (Հռովմայեցոյ . Ը , 16) :
Եւ թէպէտ շնորհօք որդի եմք աստուծոյ , այսինքն որ-
դեգիր , սակայն իբրև զբնական որդիս ծնեալ ասինք
վասն ծննդեան նք աւազանին . ըստ այնմ՝ «Սամեցեալ
ծնաւ զմեզ բանիւն ճմարտութե» (Յովնէոս . Գ , 18) :

Երբ՝ մկրտութիւնն առնէ զմեզ որդի աստուծոյ
ըստ երկուց , այսինքն ըստ վիճակին շնորհաց , և ըստ վի-
ճակի փառաց :

Կ. Իստ վիճակի շնորհաց , զի ծննդեամբ սուրբ
աւազանան արժանաւորիմք լինել որդի աստուծոյ շը-
նորհօք հոգւոյն սրբոյ . ըստ այնմ՝ «Եւ նոցա իշխա-
նութիւն որդիս աստուծոյ լինել , որոց հաւատասցեն
յանուն նորա . ոյք ո՛չ յարենէ . . . այլ յաստուծոյ
ծնան» (Յովննանոս . Գ , 12) : Ո՛ր ասն որոյ և հանապազօր
հայր կոչեմք մեզ զաստուած՝ ասելով , «Հայր մեր՝ որ
յերկինս ես , սուրբ եղիցի անուն քո» (Մատթէոս . Ը , 9) :

Զ. Իստ վիճակի փառաց , զի ՚ի հանդերձեալ յա-
ւիտենին՝ նորոգ ծննդեամբ անապական յարութեան
լինիմք որդի և ժառանգ նոյ պարզեօք փառաց . ըստ
այնմ՝ «Ո՛չ մեռանիլ ևս կարեն , զի հաւասար հրեշ-
տակաց են՝ և որդիք աստուծոյ . քանզի յարութեան
որդիք են» (Ղուկասոս . Ի , 36) :

Մի է մկրտութիւնն յամենայն եկեղեցիս քրիստոնէից . ա, ըստ միութեան նիւթոյն, որ է ջուրն բնական . ի, ըստ տեսակին, որ է դաւանութիւն ամենասուրբ երրորդութեան . հ, ըստ դիտաւորութեան, զի պաշտօնեայն խորհրդոյն այնու դիտաւորութեամբ մըկրտէ, որպէս առնէ՝ բնդհանրական եկեղեցին քրիստոսի լուստի և պէսպիսութիւնն պատահական ոչ կարէ բաժանել զգոյացական միութիւն խորհրդոյն . զորօրինակ՝ եթէ պէսպիսութիւն իցէ՝ ՚ի նիւթն, որպէս եթէ ջուրն իցէ ջերմ, կամ ցուրտ . քաղցր, կամ աղի . պարզ, կամ պղտոր, և այլն : Եւ եթէ ՚ի տեսակն, որպէս եթէ ասիցի՝ «Մկրտի ծառայս աստուծոյ ՚ի ձեռս իմ յանուն հօր, և որդւոյ, և սոյն» . կամ եթէ՝ «Ես մկրտեմ զքեզ յանուն հօր, և որդւոյ, և սոյն» : Եւ եթէ ՚ի դիտաւորութիւնն, որպէս եթէ պաշտօնեայն ունիցի ներգործական դիտաւորութիւն, կամ ունակական, կամ զօրութեամբ ներգործական :

Յայս ամենայն՝ և յոր ՚ի սոցուն են սակի տարբերութիւնս՝ իսկութիւն խորհրդոյ մկրտութեանն մնայ մի և նոյն . վասն որոյ և հաւատամբ «Ի մի մկրտութիւն» :

Իարձեալ՝ մի է մկրտութիւնն, զի է անկրկնելի . արդ պէսպէս մտրութի՝ գործոյ եղեն յառաջին դարս վասն ժամանակի մկրտութեան . զի «Ոմանք մինչ երեսուն ամն յապաղէին, զի ըստ նմանութեան քրիստոսի մկրտեսցին : Եւ ոմանք մինչև ՚ի ծերութիւն յապաղէին, զի զամենայն մեղս գործեսցեն, և ապա մկրտեալք արդարասցին և սրբեսցին : Եւ այլք զժամանակ որոշէին զչարաթ զատկին, եթէ ընդ քրիստոսի թաղմբ ՚ի ջուրն,

որպէս նա 'ի հողն» (Դ Լ՝ժՏան Բարսղի)։ Բայց Մարկիոն աղանդապետ իբ, դարուն, և կրկնակնունք հերետիկոսք մոլորութեամբ հաւատոյ ուսուցանէին, թէ պարտ է զմեզուցեալսն կրկին մկրտել։

Ստոյգ իմն է նախ՝ զի մկրտութիւնն է վերստին և հողևոր ծնունդ . իսկ մարմնաւոր ծնունդն է միանգամ . ապա միանգամ պարտ է լինել և հողևոր ծնունդ աւազանին ք . Սկրտութիւնն է դեղ սկզբնական մեղաց . իսկ սկզբնական մեղքն է մի . ապա մի է և դեղ նորա մկրտութիւնն ք . Սկրտութիւնն է նշանակ մահուանն քրիստոսի . իսկ քրիստոս միանգամ մեռաւ . ապա միանգամ պարտ է լինել մկրտութեանն : Ստոի ստէ Առաքեալն՝ «Անհնար է միանգամ մկրտելոցն, որք . . . կործանեացին, միւսանգամ նորոգել յապաշխարութի, (այսինքն վերստին մկրտել)» (Եբբրայեց. ց. 4)։

ԵՐԲ ԿԱՅՈՅՑ ԲՐԻՍՏՈՍ ԶԻՈՐՀՈՒՐԴՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Օ սրբարար խորհուրդն մկրտութեան՝ նիւթականապէս կացոյց տէրն, յորժամ մկրտեցաւ 'ի Յորդանան, ուր նիւթն սրբեցաւ լուացմամբ մարմնոյն քրիստոսի, և տեսակ բանիցն ծանուցաւ . հայր՝ վկայելովն յերկնից, որդի՝ առաջիկայ լինելով 'ի ջուբան, և հողին սուրբ՝ աղանակերպ երևմամբն . ուստի ստէ սուրբ Լուսաւորիչն՝ «Որդին աստուծոյ նմին իրի եկեալ մկրտի, հաստատել զմկրտութիւնն ամենայնի՝ որ մկրտելոցն են 'ի նա» (Ագալանգիլոս)։ Իսկ տեսականապէս կացոյց, յորժամ պատուիրեաց առաքելոցն՝ ասելով, «Մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ, և հողւոյն սրբոյ» (Մատթէոսի . ԷԸ, 19)։

ՎԱՍՆ Ե՛Ր ԱՌԱՋԱԳՐԻ ԵՄԵՋ ՀԱՒԱՏԱԼ “ԵՒ ՅԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆՆՅ

Վոյատեան հերետիկոսք ՚ի ք, դարուն ուրանային զխորհուրդն սպաշխարութեան. և պնդէին՝ թէ միւսնգամ սահմանեալքն մեղօք, ոչ կարեն արդարանալ սպաշխարութեամբ: Վպա կարի վայելապէս առաջադրէ հանդանակս, հաւատալ և յայս սուրբ խորհուրդ:

ԶԻՆՉ Է ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆՆ

Վսպաշխարութիւն է խորհուրդ նոր օրինաց սահմանեալ ՚ի բրիստոսէ, յորում քահանայն դուրսեամբ ձեռաց, և բանիւ արձակման, արձակէ ՚ի մեղաց և դարձուցանէ ՚ի շնորհս աստուծոյ զմեղաւորն, որ ցաւօք սրաի, և ճշմարիտ զղջմամբ, և կատարեալ խոստովանութեամբ պատմէ զմեղս իւր՝ զոր գործեաց յետ մկրտութեան, հանդերձ առաջադրութեամբ վճարման, և ուղղութեան:

Վսի “խորհուրդ” . զի է նշան սուրբ իրի, այսինքն աներևոյթ շնորհացն աստուծոյ:

Վսի “Նոր օրինաց” . զի որոշեսցի ՚ի հնոյն . զի և թրիատութիւնն, և գառն զատկական, և այլք, էին խորհուրդք հնոյ օրինաց:

Վսի “Սահմանեալ ՚ի բրիստոսէ” . զի ցուցցէ թէ՛ հեղինակ խորհրդոյս է յիսուս բրիստոս, որ հաստատեաց յասելն՝ “Զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս” (Մատթէոսի . ԺԷ, 18): Եւ դարձեալ՝ “Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա” (Յովհաննոսի . Ի, 22):

Վսի “Քահանայն” . զի ցուցցէ զպաշտօնեայն խորհրդոյս:

Ասի «Դրուժեամբ ձեռաց» . զի նիւթ , այսինքն երևելի նշան խորհրդոյ ապաշխարութե , է դրուժիւն ձեռաց քահանային 'ի վերայ գլխոյ խոստովանողին . զի որպէս ջուրն տարրական՝ է նիւթ խորհրդոյ մկրտութեան . և մեռնին սուրբ , կամ դրուժիւն ձեռաց քահանային՝ խորհրդոյ գրոշմին . և հացն , և գինին՝ խորհրդոյ հաղորդութեան . այսպէս և դրուժիւնն ձեռաց՝ խորհրդոյ ապաշխարութեան . զի նիւթ խորհրդոյ այն է , զոր քահանայն երևելի նշանօք 'ի կիր արկանէ :

Ասի «Բանիւ արձակման» . զի տեսակ և էսպէս կատարիչ խորհրդոյս է բանն , զոր արտաբերէ քահանայն . որ այն ինքն է «Արձակեմ զքեզ յամ մասնակցութենէ մեղաց» :

Ասի «Արձակէ 'ի մեղաց» . զի խորհուրդք նոր օրինացս ոչ միայն նշանակեն , այլ և առնեն . ուստի յասելն՝ «Արձակեմ զքեզ» . ոչ միայն նշանակէ , այսինքն յայտ առնէ և ծանուցանէ զլինելն նորա արձակեալ , այլ և իսկապէս և գործադրաբար արձակէ 'ի մեղաց :

Ասի «Դարձուցանէ 'ի շնորհս աստուծոյ» . քանզի կապեալն 'ի մեղս է զուրի 'ի սրբարար շնորհաց , և թրշնամի աստուծոյ . ապա յարձակել զնա քահանայն թողութեամբ մեղաց , տայ նմա գտանել զկորուսեալ շնորհն , և դառնալ 'ի բարեկամութիւն աստուծոյ :

Ասի «Յաւօք սրտի» . զի որոշեսցի յարտաբին և 'ի կեղծեալ ցաւոց , որք առ ամօթոյ մարդկան , կամ 'ի բռնութենէ տերանց կամ յերկիւղէ առաջնորդաց երևեցուցանեն ցաւիլ . սմին իրի ասէ աստուած՝ «Դարձարուք առ իս յամ սրտէ ձերմէ» (Յովէլէայ . Բ , 12) :

Ասի «Ճշմարիտ զղջմամբ» . այսինքն ցաւօք հոգւոյ վասն գործեցեալ մեղաց ընդ գէմ աստուածային

օրինաց , և ներքին թախծութեամբ վասն բարկացուցանելոյն զաստուած :

Ըսի « Ուտարեալ խոստովանութեամբ » . այս է՝ ամբաստան իննելով զամենայն մեղացն ամբողջապէս , և ոչ եթէ թագուցանելով կամ թերի պատմելով , եթէ ըստ գործոց , և եթէ ըստ պարագայից . բայց առ ամբողջութիւն խոստովանութեան՝ ոչ հարկաւ պահանջի ֆիզիզականն , այլ բաւական համարի ամբողջութիւնն բարոյական : Եւ երկոքին սոքա , զզջումն՝ և խոստովանութիւնն են էական մասունք ապաշխարութեւն . յորոց եթէ մին պակասեցի , ոչ ևս է այնուհետեւ խորհուրդ :

Ըսի « Զմեղս իւր » . զի պարտ է ապաշխարողին զիւրոց մեղաց համարս տալ . և ոչ եթէ զմեղս այլոց պատմել վասն արդարացուցանելոյ զանձն իւր :

Ըսի « Զոր գործեաց յետ մկրտութեան » . զի ապաշխարութիւնն է մի միայն միջնորդ թողութեւն մեղաց , որք գործին յետ մկրտութեան :

Ըսի « Առաջնորդութեամբ վճարման » . առ ամբողջութիւն խորհրդոյ ապաշխարութեան պիտոյ է վճարումն . որ է փոխարինական հատուցումն բարի գործովք և ժուժկալութեամբ՝ արհամարհութեանն եղեալ աստուծոյ մեղօք , օրինադրեալ ի խոստովանահօրէ : Ըպա երեքին սոքա են հարկաւորք , զզջումն սրտի , խոստովանութի բերանոյ , և վճարումն գործոյ : Վանզի ոչ միայն ողորմած է աստուած , այլ և արդար . ապա որպէս ողորմութեամբն իւրով թողու զմեղս , նոյնպէս և արդարութի պահանջէ զվճարումն : Աւստի պահք , աղօթք , և ողորմութիւնք , և այլ աստուածահաճոյ և արդիւնարոր գործք , զորս առաջադրէ քահանայն առ լրումն ապաշխարութեան , պարտի խոստովանողն յօժար

կամօք յանձն առնուլ: Եւ թէպէտ այնու ամենայնիւ
 ոչ կարէ ըստ արդարութեան վճարել վասն մեղացն՝
 որով անարդեաց զաստուած . բայց արդեամբք շնոր-
 հացն քրիստոսի , կարէ առնել զբաւական հատուցու-
 մին . ուստի ասէ սուրբն Աբելի՛ « Իւրաքանչիւր որ
 իւրոյ յանցանացն շահի զթողութիւն քրիստոսիւ հոգ-
 ւով սրբով » (Պարսպմանց) :

Այս « Ուղղութեան » կարօղն ՚ի խոստովանութե
 պարտի առաջադրել ինքեան ուղղիլ , և ոչ այլ ևս գոր-
 ծել , իբր զի հաստատութեամբ դնել ՚ի մտի , թէ առա-
 ւել կամի մեռանիլ , քան թէ անդրէն ՚ի մեղս անկա-
 նիլ : Բանզի մեղքն կայանայ յանկարգութեան կա-
 մաց , և մինչև ոչ ուղղեսցին կամք , ոչ կարէ արդա-
 բանալ մարդ :

ԱՐԻԵՕ՛Ք ԱՄԵՆԱՅՆ ՔԱՀԱՆԱՅՔ ՈՒՆԻՅԻՆ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ
 ԿԱԳԵԼՈՅ ԵՒ ԱՐՁԱԿԵԼՈՅ

Որովհետև տէրն մեր ետ ամենայն առաքելոց ,
 և հետևաբար ամենայն յաջորդաց նոցին իշխանութիւն
 միականաց , կապել և արձակել , թողուլ զմեղս և ու-
 նիլ , որպէս ցուցաւ : Իսկ նորա տան զնոյն իշխանու-
 թիւն քահանայից ՚ի ձեռնադրութեան նոցա ասելով ,
 « Ա՛ռ քեզ իշխանութի կապելոյ և արձակելոյ » : Այս
 ամենայն քահանայք ունին իշխանութիւն կապել զան-
 դարձ մեղաւորն , և արձակել զղջացեալն :

Այս զի՛ ոչ միայն ըստ աստուածային իրաւանց են
 օրինաւոր պաշտօնեայք խոստովանութե գորութեամբ
 կարգին , որով վաւերաբար կարեն կապել և արձակել ,
 այլ և ըստ եկեղեցական կանոնադրութեան են օրինա-
 ւոր պաշտօնեայք . զի առեալ ունին իրաւաբանութիւն

յարքեպիսկոպոսէ վիճակին, որով օրինապէս կարեն կապել և արձակել . ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն՝ « Զառաջնորդս եկեղեցւոյ ՚ի տեղի առաքելոց կարգեաց քրիստոս քարոզս, և ասաց . որ զձեզ ընդունի, զիս ընդունի . և որ զձեզ անարգէ, զիս անարգէ: Եւ դարձեալ ասէ, զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս . զի իշխանութիւն՝ որ յաստուծոյ է, զօրութիւն ունի մեղաց թողութեան . . . զի զոր աստուած կարգէ, զգործ նյ գործէ շնորհօքն քրիստոսի» (Յաճախակապոս-Տ): Եւ Ռահեբերան՝ քահանայք, « Որք յերկրի աստ բնականան, և ՚ի տօսին քաղաքաւարին, յերկնայնոցն սպասաւորութիւն կարգեցան . և իշխանութիւն իմն առին ընկալան, զոր և ոչ հրեշտակացն, և հրեշտակապետացն ետ աստուած: Քանզի նոցա ոչ ասաց, զոր միանգամ կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս . և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս: Ապաքէն և որք յերկրի տեաքք են, ունին և նոքա իշխանութիւն կապելոյ, սյլ զմարմինս միայն . իսկ այս կապանք մերձին ՚ի նոցն ինքն ՚ի հոգին, և զերկնիւք ՚ի վեր անցանեն . և զոր միանգամ աստ ՚ի խոնարհ գործեն քահանայք, նոցին ՚ի բարձունս վճիռ հատանէ աստուած, և զճառայիցն դատակնիք տէրն ինքնին հաստատէ: Քանզի զինչ սյլ, բայց թէ բովանդակ զիշխանութիւն երկնաւորացն ետ նոցա . զի որոց թողուցուք զմեղս, թողեալ լիցի ասէ . և զորոց ունիցիք, կալեալ լիցի: Եւ արդ՝ զինչ քան զայս իշխանութիւն բարձրագոյն: Զամենայն դատաստան ետ հայր որդւոյ իւրոյ . սյլ ես տեսանեմ՝ զի զամենայն ետ ՚ի ձեռս նոցա որդին» (Գիլք, Գ . յաշափս քահանայո-լեան):

ԱՐԴԵՕ՝Բ ԱԳԱՇԻԱՐՕՂՆ ԿԱՐԷ՝ ԼԻՆԵԼ ՔԱԶԱՅՈՅՍ ՎԱՍՆ
ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՅ

Մայաբէն երկու են ազգ մեղաց սկզբնական և ներգործական . և որպէս դեղ սկզբնական մեղաց է մը կրտութիւնն , սոյնպէս և ներգործական մեղաց՝ է ապաշխարութիւնն : Մայա որպէս ՚ի մկրտութեան պիտոյ է հաւատալ , թէ թողեալ եղեն մեղքն սկզբնական արդեամբ չարչարանացն քրիստոսի , սոյնպէս և յապաշխարութեան պիտոյ է քաջայոյս և վստահ լինել , թէ թողեալ եղեն մեղք ներգործական շնորհօքն քրիստոսի : Եւ սովին վստահութեամբ հաստատիլ ՚ի միտս , թէ տայ աստուած զարքայութիւնն երկնից . « Է յայն սակս՝ զի ունի արդիւնս արժանի յաւիտենական կենաց , այլ յայն՝ զի յանպարտական բարերարութենէ իւրմէ խոստացաւ տալ . ըստ այնմ՝ « Ես ուխտեմ ձեզ՝ որպէս և հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւնն » (Ղուկաս . ԻԲ , 29) : Որպէս և հաւաստի արար և հաւատարմացոյց զմեզ օրինակաւ գործողացն ՚ի յայդին . զի և նոցա՝ որք ՚ի յերտին ժամու գնացին , և սակաւ ինչ եղեն աշխատ , ետ հաւասար վարձս ընդ մշակացն , որք զօրն ողջոյն աշխատեցան վասն խոստմանն զոր յառատութենէ իւրմէ խոստացեալ էր նոցա :

ԱՐԴԵՕ՝Բ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՋԻ ՔԱՎԱՆԱՅԻՆ ԻՑԷ՝
ՅԱՍՏՈՒԱՑԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅ

Միլատեան հերետիկոսք յերրորդ դարուն՝ յուրաստ եղեն . բայց ՚ի հաստատուն կիրառութենէ ընդհանուր եկեղեցւոյ , զոր ՚ի սկզբանէ անտի միշտ պահեաց , և պահէ , հաւաստի լինի մեզ՝ թէ իցէ սահման

եալ ՚ի բրիտտոսէ , և հրատարակեալ յառաքելոյն Յակոբայ , ապա և յաստուածային իրաւանց : Քանզի ասէ՝ « խոստովան եղերուք միմեանց զմեզս » (Յալոբայ . Ե , 16) : Ուր այսպէս խօսի Սարգիս շնորհալին . « Տե՛ս զիջանելոյն օրինակն , միմեանց ասէ խոստովան լերուք . ո՛չ ՚ի հրապարակի , և ո՛չ ՚ի փողոցամիջի , և ո՛չ առաջի բազում վկայից , այլ միմեանց ասէ . զոր օրինակ յանկեան միոջ զանխուլ ՚ի լողաց և ՚ի տեսանողաց՝ առ ոտս միոջ քահանայի , և ո՛չ վայրապար քահանայի այլ յոյժ երկիրազածի և զխոնականի , որ գիտիցէ հմտաբար և բժշկապէս սպեղանիս կազմել վիրացն , և բժշկել զցաւս ողւոյն » (Ի Լէնո-լեան Կաթողիկոսի) : Լա սուրբ Լուսաւորիչն . « Չաւետարանին գործակիցսն զքահանայս սուրբս , և զպաշտօնեայս եկեղեցւոյ , որք սպասաւորեն սրբութեանցն՝ հրեշտակային կարգաւորութեամբն . մի վարկպարազի համարեցուք , այլ որպէս յաստուծոյ կարգեալք , ՚ի փրկութիւն հաւատացելոց ժողովրդեանն աստուծոյ . . . և երախտիք՝ որ ՚ի նոցանէն յառաջադայի՝ պարգև է , որ զլուսահատն ՚ի յոյս կենդանի ասէ » (Յաճախապարտ-Տ) :

Ի այց նա ինքն սուրբ հայրն մեր՝ զխորհական խոստովանութիւնն զոր հաստատեաց յեկեղեցիս հայաստանեայց , կանոնական սահմանադրութեամբ ամրացոյց , զի մի գուցէ յայտարարութեամբ գաղտնեաց ուրուք արհամարհեցի . ասէ՝ « Եթէ որ ՚ի քահանայից զձածուկ խոստովանութիւն ուրուք յայտնեաց , անկցի ՚ի յաստիճանէն , և ՚ի կարգէ պաշտօնից մերժեցցի , և մեղք չխոստովանողացն անկցի ՚ի վերայ նորա » (Ի Կանոն Գիր) :

ԱՐԻՅՕ՛Ք ԱՄԵՆԱՅՆ ԱՊԱՀԽԱՐՕՂՔ ՄԻԱՊԷՍ ԱՌՆՈ՞ՒՆ
ԶՄԻՐԱՐԱՐ ԸՆՈՐՀԱՍ

Որպէս ՚ի միում մարմնի են անդամք՝ որք ոչ միապէս ընդունին զկենսական և զկենդանական ոգիս յազբերէ սրտի և ուղղոյ, այլ իւրաքանչիւր ըստ իւրում պայմանի և տրամադրութեան, որպէս այլ օրինակ ընդունի սրունքն հաշմ, և այլ օրինակ՝ առողջն: Ըստ ամին օրինակի և յապաշխարոզս է իմաստասիրել. զի որովհետեւ ոչ յամենեւին ՚ի նոսա է միօրինակ տրամադրութիւն ըստ հաւատոյ՝ ըստ յուսոյ՝ ըստ սիրոյ՝ և ըստ այլ բարեգործութեան. այլ է որ յաւետ՝ և է որ նուազ. ամին իրի ոչ ամենեքին հաւասարապէս առնուն զարդարացուցիչ շնորհսն. այլ անհաւասար ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան. ըստ այսմ է և յայլ ամենայն խորհուրդս եկեղեցւոյ. բայց այս անհաւասարութիւն ոչ է նկատմամբ աստուծոյ, որ տայ ամենայնի առատապէս, այլ նկատմամբ ընդունողաց: Ուստի ասէ սուրբ Լուսաւորիչն. «Աղբիւր է աստուած ամենայն բարեաց, և արբուցանէ զհաւատացեալս ըստ իւրաքանչիւր բարւոյ ցանկութե՛ն՝ նք շնորհօք» (Յաճախապարտ-ժ):

ԱՐԻՅՕ՛Ք ԱՄԵՆԱՅՆ ՔԱՀԱՆԱՅՔ ՈՒՆՅԻ՞Ն ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ
Ի ԽՈՐՀԻՐԵԱԿԱՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՂՈՒԼ ԶԱՄԵՆԱՅՆ ՄԵՂՍ

Ամենայն քահանայ զօրութեամբ կարգին ընկալեալ ունի ՚ի բրիստոսէ զիշխանութիւնդ զայդ. որով և վաւերաբար կարէ արձակել զղջացեալն յամենայն մեղաց. և զօրութեամբ իրաւաբանութեանն զոր առեալ ունի յարբեպիսկոպոսէ վիճակին կամ աղգին, կարէ արձակել օրինապէս: Ուստի և ապաշխարողն որ զըզ-

ջացեալ յամ սրտէ . և քննեալ զխիղճ մտաց իւրոց՝ եկն և խոստովան եղև զամենայն մեղս իւր , և պատ-
րաստեաց զանձն հնազանդիլ ամենայն պատուիրանաց
քահանային , թէ առ ՚ի վճարել զխոխարէնն մեղաց
գործովք բարութեան , և թէ զգուշանալ ՚ի մեղաց՝
և ուղղիլ . այնպիսին պարտ է լինել քաջայոյս և վստահ՝
թէ գրութեամբ ձեռաց քահանային՝ և բանիւ ար-
ձակման՝ թողան ամենայն մեղք իւր ՚ի շնորհաց հոգ-
ւոյն սրբոյ . Վանդի նախապէս հեղանի սրբարար շը-
նորհ հոգւոյն աստուծոյ յապաշխարօղն , և ապա լինի
թողութիւն մեղաց : Ուստի և տէրն մեր ՚ի կացուցա-
նելն զայս խորհուրդ , նախ փչեաց յառաքեալսն ասե-
լով՝ «Սուէք հոգի սբ . և ապա ետ իշխանութիւն ար-
ձակել , և թողուլ զմեղս՝ ասելով «Եթէ ումեք թո-
ղուցուք զմեղս , թողեալ լիցի նց՝» (Յովհանն . Ի , 22) :

Յայտ է թէ ամենայն մեղք նորա , և ոչ եթէ
կէսք ՚ի մեղացն թողցին , և կէսք պահեսցին . զի ուր
ներգործէ հոգին աստուծոյ , անդ ոչ մնան վերապահ-
եալ ինչ յանցանք , այլ ամենայն կնճիռք մեղաց ար-
ձակին , և ամենայն կապանք հերետիկոսութեան , սիմո-
նականութեան , սպանութեան , հարուածոց , աւերման ,
խախանման , և այլն , որք առ աչս մարդկան անլուծա-
նելի կարծին , քաւին և արձակին՝ ոչ միայն ՚ի ժամու
վերջին հարկաւորութեան , այլ և յամենայն ժամանա-
կի . ապա թէ ոչ՝ ոչ երբէք հնար էր արձակիլ :

ՁԻՆՁ Է ԱՍԵԼՆ ՀԱՆԳԱՆԱԿԻՍ «Ի ՀԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ Ի
ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՅ»

Քառքս քաւութիւն և թողութիւն , բազում
անգամ ՚ի նոյն միտս վարին ՚ի սուրբ գիրս . բայց զա-

նազանին ևս՝ որպէս ձայնիւ , նոյնպէս և խմացմամբս :
Ուստի մասնաւորապէս առեալ , քաւութիւնն
է բարձումն մեղաց փոխարինութեամբ ինչ ՚ի կողմաւ
նէ յանցաւորին : Թողութիւնն է բարձումն մեղաց յա
ռատաձիր ողորմութենէ յաստուծոյ :

Ապաքէն յօրէնան Մովսէսի քաւութիւն մեղաց
լինէր արեամբ ցլուց և նոխաղաց , որք մատուցեալ
լինէին ՚ի կողմանէ յանցաւորին իբրև փոխարինական
հատուցումն ինչ յանցանաց :

Եւ զի այս փոխարինութիւնք՝ ոչ ըստ արժանւ
եաց , և ոչ գոնէ ըստ պատշաճի կարէր հատուցանել
այն ամենայն վնասուն՝ կամ անարդանացն զոր հա
տուցեալ էին աստուծոյ մեղօք . ապա Թողութիւնն՝ զոր
առնուին նոքա յաստուծոյ , ոչ էր ըստ արդարութեան՝
այլ ըստ շնորհաց . զի Թողոյր՝ այսինքն ներէր և անտես
առնէր աստուած զմեղս նոցա միայն յիւրմէ առա
տուութենէ . ապա քաւութիւնն մեղաց լինէր արեամբ
անբանից . իսկ Թողութիւնն մեղաց ձրի ողորմու
թեամբն աստուծոյ :

Ըստ ասացելոցս խմացեալ լինին և բանք գրոյն՝ որ
ասէ՝ « Եթէ Ժողովուրդ որդւոցն Իսրայէլի տգիտանայցէ
ակամայ և յանցանիցէ , մատուցէ Ժողովուրդն զուա
րակ յանարատ յանդւոյ վասն մեղաց , և սպանցեն ըզ
զուարակն , և Թացցէ քահանայն զմատն իւր յարեան
զուարակին , և ցանեցէ եօթն անգամ առաջի տեսուն ,
և զամենայն արիւնն հեղցէ առ յատակաւ սեղանոյն
ողջակիզաց . « Եւ քաւեցէ վասն նոցա քահանայն , և
Թողցին նոցա մեղքն » (ՂԿապ. 17 . Գ , 20) : Ըստ այսմ
խօսի և ՚ի բազում տեղիս :

Ուստի ամ Թողութեան անուանէր յորէլեանն .

զի 'ի նմին ամի ամենայն ծառայք և պարտատեարք ազատէին ձրի , և առանց ինչ հատուցման փոխանակ պարտուց կամ վնասուն :

Եւ Մովսէս պաղատանս մատուցանէր աստուծոյ , զմեղան՝ որով որդիքն Իսրայէլի ամբարշտեցան յան պաշտելով զորթն 'ի ֆորեբ , ոչ փոխարինութիւն պատժոց քաւել , այլ ձրի գթութիւն թողուլ , առէ՝ « Եթէ թողուս նոյ զմեղս իւրեանց՝ թող . ապա թէ ոչ՝ ջնջեան և զիս 'ի դպրութիւն քումմէ յոր գրեցեր » (Եւէյ . ԼԲ , 32) : Իսպց որովհետեւ մահ և արիւն անբանից ոչ էին բաւական փոխարինութիւնիք առ 'ի քաւել զպարտս մեղաց , և ոչ ևս յանցաւորք՝ այնու տկար միջնորդօք կարէին առնուլ զբաւական թողութիւն յաստուծոյ . այլ որպէս առէ Առաքեալն՝ « Անդէն 'ի նմին 'ի յիշատակս մեղացն կային ամի ամի » (Եֆրայէյ-ոյ . Ժ , 3) :

Ու ասն այսորիկ տէրն մեր մատոյց զմահ իւր և զարիւն՝ որ անսահման է արժողութեամբ , և հատոյց զպարտս մեղաց մարդկան՝ ոչ միայն ըստ արժանեաց , այլ և 'ի վեր քան զարժանն . սովին մտօք ասի զբրիստոսէ քահանայապետ և քաւիչ մեղաց . ըստ այնմ՝ « Որովհետեւ մանկունք հաղորդեցին մարմնոյ և արեան , և ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ եղև նոցունց , զի մահուն իւրով խափանեցէ զայն , որ զիշխանութի մահուն ունէր , այսինքն է՝ զսատանայ , և ապրեցուցէ զայնոսիկ , որ մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք 'ի ծառայութիւն . . . ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանել , զի ողորմած լինիցի , և հաւատարիմ քահանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի , առ 'ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն » (Եֆրայէյ-ոյ . Բ , 14) :

Ի այց քանզի խորհուրդն մկրտութեան է պատկեր մահուն քրիստոսի . զի երիցս ընկղմելն և վերառնունն , նշանակէ զերեքօրեայ մահն և զԹաղումն փրկչին . ըստ այնմ՝ «Թաղեալք ընդ նմին ՚ի մկրտունն , որով և ընդ նմին յարեայք հաւատովք (Սողոմոն . Բ , 12) :

Ու ասն որոյ և ասելն «Ի քաւութիւն» . պատշաճապէս վերաբերի առ այն՝ զոր ասաց «Հաւատովք ՚ի մի մկրտութիւն» . զի խորհուրդն մկրտութեան քաւէ զմեզս սկզբնական փոխարինութեամբ վնասուն . և այն փոխարինութիւն եղև մահն քրիստոսի , զոր հատոյց աստուծոյ ՚ի կողմանէ յանցաւոր բնութեանս մարդկան . ըստ այնմ՝ «Քրիստոս մեռաւ վասն մեզաց մերոց» (Ս , Սողոմոն . ԺԵ , 3) : Եւ թէ՛ «Ունիմք բարեխօս առ աստուած զխիսուս քրիստոս , զարդարն և զանարատ , և նա է քաւութիւն մեզաց մերոց» (Ս , 3^{րդ} Հաննո . Բ , 1) :

ԶԻՆՉ Է ԱՍԵԼՆ «Ի ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ»

Թողութիւնն է բարձումն մեղաց յառատ ողորմութենէն յաստուծոյ . և այս վերաբերի առ խորհուրդն ապաշխարութեան . յորում ձրի շնորհօք և ողորմութիւն աստուծոյ առնումք զԹողութիւն . և ոչ եթէ հատուցմամբ վնասու մեղացն , որով անարգեցաք զաստուած . քանզի հառաչանք , արտասուք , բեկումն սրտի , պահք , աղօթք , ողորմութիւն , ժուժկալութիւն , և այլք , ըստ այնմ զի յառաջ դան յանձնիշխան կամաց մարդոյ , ոչ են արդիւնաւորք , և ոչ կարեն հատուցանել զպարտս մեղաց մերոց արարելոց յարհամարհանս նոյ . ուստի և զԹողութիւնն մեղաց՝ զոր խորհրդով ապաշխարութե

առնումք յաստուծոյ , է ձրի . զի ամենայն բարեգործութիւնք մեր ՚ի ձրի շնորհացն աստուծոյ ունին լինել արդիւնաւոր . և ոչ եթէ ՚ի մէնջ . ըստ այնմ՝ « Չի՛նչ ունիս՝ զոր ոչ իցես առեալ . և եթէ առեր՝ զի՛ պարծիս իբրև զչառօղ » (* , Արն՛ւթոյ . Գ , 7) :

Վարձեալ՝ քաւութիւնն է մահու չափ մեղաց , որպիսի է մեղքն սկզբնական . և այս լինի ՚ի խորհուրդն մկրտութեան : Թողութիւնն է ներելի մեղաց . և այս լինի ՚ի խորհուրդն ասպաշխարութե՛ն . այնու զի կատարեալ զըմամբ , և ճշմարիտ խոստովանութեամբ մահու չափ մեղք փոխին ՚ի ներելի , և յասելն քահանային՝ « Արձակեմ զքեզ յամ մասնակցութենէ մեղաց » . յայնժամ և նորին թողեալ լինին :

Վարձեալ՝ քաւութիւնն է բարձումն մեղաց և պատժոյ , և ըստ այսմ է մկրտութիւնն . վասն որոյ եկեղեցի սուրբ ոչ օրինադրեաց մկրտելոց՝ վասն սկզբնական մեղաց վճարումն ինչ՝ կամ բաւարարութի : Սկ թողութիւնն է բարձումն մեղաց միայն , և ըստ այսմ է ասպաշխարութիւնն . վասն որոյ եկեղեցի սուրբ սահմանեաց վասն ասպաշխարողաց զձանր ծանր պահեցողութիւնս , զաղօթս , և զողորմութիւնս , և զայլ գործս բարիս խիստս և տարժանելիս , զորս յանձն արար խոհեմութեան խոստովանահարց անօրինել ըստ հանգամանաց և վիճակի իւրաքանչիւրոց : Ուստի և յասպաշխարելն Ղաւթի , և մեղայ դռելն , եթող աստուած զմեզս նորա . որպէս ասաց նմա Նաթան մարգարէ , թէ՛՝ « Տէր անցոյց զքեզ զմեզս քո » (Բ , Թագաորաց . ԺԲ , 13) : Բայց տակաւին մնաց պատիժ մեղացն , զի պատժեցաւ յետ այնորիկ մահուամբ որդւոյն , զոր ծնաւ նմա Բերսաբէ :

Վարձեալ՝ քաւութիւնն է ջնջումն մեղաց , և թո՛ւ

ղութիւնն՝ ջնջումն պատժոց . զորս ներդործէ մկրտութիւնն միանգամայն . և ապաշխարութիւնն յաջորդաբար՝ զի զղջումն և խոստովանութիւնն քաւէ զմեղան , և վճարումն թողու զպատիժն : Իսկ ըստ այլում տեսութեան մարթ է ասելն , թէ որովհետև առ քաւութիւնն մեղաց պահանջի փոխարինութիւն ինչ ՚ի վճար պարտուց ըստ կարողութե մարդկան . և այս երևի յապաշխարութեան , որպիսի է հառաչանք հոգւոյ , լաց , արտասուք , աղօթք , և ողորմութիւնք , և այլ բարեգործութիւնք կրօնի : Իսկ առ թողութիւնն մեղաց փոխարինութիւնք հատուցման պարտուց . և այս երևի ՚ի մկրտութե . զի յայնմ բաւական է ճշմարիտ հաւատքն . և ըստ այսմ խորհրդածութե՝ քաւութիւնն վերաբերի առ ապաշխարութիւնն , և թողութիւնն առ մկրտութիւնն : Ի սոյն միտս իմանի և ասելն սուրբ Լուսաւորչին . « Փութացեալք ՚ի կոչումն աւետեացն՝ առցուք պարզես ՚ի շնորհողէն ապաշխարութեամբն զքաւութիւն , որ յաներեւոյթս զհոգիսն բժշկէ , և նախ յաւազանէն է թողութիւն հաւատացելոց յամենասուրբ երրորդութին ճշմարիտ խոստովանութե » (Յաճախապարոմ) :

Ի այց քանզի քաւութիւն և թողութիւն , բազում անգամ նոյնանիշ վարին ՚ի գիրս , վայելչապէս ապա վերաբերին առ երկոսին խորհուրդս միանգամայն . զի երկոքին ևս՝ այսինքն մկրտութիւնն և ապաշխարութիւնն շնորհն զքաւութիւն և զթողութիւն . իբր զի բառնան , ջնջեն և ներեն զմեղս մեր , ոչ միայն ՚ի գործոց գործողին , այսինքն արդեամբք կամ արժանաւորութեամբ մատակարարողին կամ ընդունողին խորհրդոց . որպիսի էին խորհուրդք հնոց օրինաց . այլ և ՚ի գործոց գործեցելոյ , այսինքն արդեամբքն քի սահմա-

նողին խորհրդոցս . որ յատուկ խորհրդոցս նորոյ օրինաց . վասն որոյ և որ ընդունի զայստօիկ խորհուրդս , ընդունի զարդարացուցիչ շնորհս ՚ի վեր քան զարժանին իւր :

Այս նախկին և գլխաւոր պատճառ այսմ շնորհաց՝ են արդիւնք չարչարանացն քրիստոսի , յորմէ ունին խորհուրդք զգօրութիւն իւրեանց , և զգործունէութիւնս . իսկ խորհուրդք են իբրև գործիքական պատճառք շնորհաց :

ՁԻՆՉ Է ԱՍԵԼՆ “Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՄՄՆՈՑ”

Ա վերայ յարութեան կրկին եղեն մոլորութիւնք ՚ի նոր օրէնս . ոմանք զյարութիւն հոգւոց և մարմնոց միանգամայն ուրանան . որոց առաջինն եղև Սիմոն մոգ ՚ի նա , դարուն . զոր դատապարտեաց սուրբ առաքեալն Պետրոս . (Գործոց . Է ,) : Աւ ոմանք զյարութիւն մարմնոց ուրանան , և ասէին գոլ միայն յարութիւն հոգւոց . այսպիսի ոմանք էին Մարկիոն պոնտացի յերկրորդ դարուն . և Մանի աղանդապետ յերրորդ դարուն , զորս իրաւամբ կշտամբէ երանելին Եզնակ . (Ճառ , 56) :

Աղեն և այլ բազում աղանդաւորք ՚ի դարս դարս , որք մոլորաբար ուսուցանէին շուրջ զյարութեամբ մեռելոց , զորս յիշատակէ մեծն Յովհան որոտնեցի՝ յասելն . “Առաջին մոլորութիւնն է վաղենտիանոսի , որ ունէր սերմն ՚ի սաղուկեցւոցն , որ բնաւ ուրացաւ ըզյարութիւն մարմնոց : Երկրորդ մոլորութիւնն Հիմէնի և Ֆիլէտի , որք մոլորեցան ՚ի ճշմարտութենէն . և վրիպեալ ասացին , արդէն իսկ եղեալ զյարութիւն . կամ ոչ հաւատացին մարմնաւոր յարութեան , այլ հոգւորական . կամ ոչ ասէին զայլ որ յառնել , այլ միայն զայնու

սիկ՝ որք ընդ քրիստոսի յարեան: Երրորդ մտորութիւնն է, յիք ասեն լինել զհանդերձեալ յարութիւնն, բայց ոչ նոյնում մարմնոց, այլ հոգիքն առցեն երկնային մարմին: Չորրորդ մտորութիւնն Եւտիքոսի Աստանդնուպօլսի եպիսկոպոսին, որ ասաց, թէ մարմինք մեր լինելոց են ՚ի յարութեանն, որպէս օդոյ և հողմոյ նմանք: Հինգերորդ մտորութիւնն է Աերինթոսի, որ հազար ամ յետ յարութե երկրաւոր արքայութի առասպելաբանէ՝ (Ի Վերայ Բանին՝ ՚ի սիլ Բանէ էր Բանն): Լա թէ ոմանք ասացին ոչ գոլ հասարակաց բնութեան ընդհանուր, այլ արդարոցն միայն. օժանդակ ունելով զբան մարդարէին Դաւթի, որ ասէ՝ «Ո՛չ հարկցեն ամբարշտոյք ՚ի դատաստանն» (Ի Վերայ Բանին՝ Տարդով էլէ Տահ), և այլն:

Իսկ վասն անմահութեան հոգւոց վկայեն աստուածաշունչ գիրք հնոյն և նորոյս. ըստ այնմ՝ «Եւ դարձցի հողն յերկիր, որպէս և էրն. և հոգին դարձցի առ աստուած՝ որ ետ զնա» (Ժողովուր. ԺԲ, 7): Լա թէ՛ «Հոգիք արդարոց ՚ի ձեռին աստուծոյ են, և ոչ մերձեացի ՚ի նոսա մահ. թուեցան յաչս անդգամաց թէ մեռան. . . . այլ յոյս նոցա լի է անմահութեամբն» (Ի Տասարութեան. Գ, 1):

Աւելորդ է մեզ աստանօր յառաջ բերել զայլ վկայութիւնս. շատ լիցի մեզ պատասխանին քրիստոսի առ սարուկեցիսն. «Վասն յարութեան մեռելոց չիցէ՞ ընթերցեալ ձեր զասացեալն ձեզ յաստուծոյ. ես եմ աստուած Աբրահամու. աստուած Իսահակայ և Իսակորայ, և չէ՛ աստուած՝ աստուած մեռելոց, այլ կենդանեաց» (Մատթէոսի. ԻԲ, 32):

Յայտնի լինի մեզ և ՚ի բնական բանէ. ՚ի մարդկային հոգին կրկին կատարելութիւնք են, որք զանցա-

նեն զկարողութեամբ զգայական հոգւոյ: Առաջինն է միտքն, որով ձգի ՚ի ճանաչումն ճշմարտութեան, որոշէ զչարն և զբարին . ոչ միայն ըստ այնմ զի են օգտակար կամ մեասակօր ֆիզիոլոգապէս, այլ և ըստ այնմ զի ունին զչարութիւն կամ զբարութիւն բարոյապէս. որում չեն բաւական զգայական կենդանիք: Արկրորդն է կամքն, որով ոչ ՚ի հարկէ, այլ ազատաբար բերի առ բարին: Իսկ այսպիսի կատարելութիւնք կարողութեանց մարդկային հոգւոյ են գերազանց յոյժ քան զկատարելութիւնս զգայական հոգւոյ կենդանեաց, և տարբեր բընութեամբ և յատկութեամբ:

Ապա և ոչ ըստ նմանութեան հոգւոյ զգայնոց մեռանի ընդ մարմնոյ: Գարձեալ՝ գոյացութիւնք, որք ունին զնեքքին զմնացող գործողութիւնս՝ որք ոչ կախին զմարմնոյ, նոքին և ՚ի գոյ իւրեանց ոչ կախին զմարմնոյ, զի գործելն զհետ երթայ գոյոյ: Իսկ հոգին մարդկային ունի զնեքքին և զմնացող գործողութիւնս իմանալ և կամիլ. զի իմանայ ՚ի ձեռն մտաց, և կամի ՚ի ձեռն կամաց անկախ ՚ի մարմնոյ: Ապա հոգին մարդկային ունի ևս զգոյն իւր յինքեան անկախ ՚ի մարմնոյ, և հետեւապէս մնայ անմահ յետ մահու նորա:

Գարձեալ՝ մարդս ունի անձնիշխան կարողութիւն առնել զբարի կամ զչար . սակայն յորդորեալ ՚ի խղճէ մտաց՝ զհետ կրթի բարւոյն, թէ և դժուարին իցէ. և խորշի ՚ի չարէն, թէ և հեշտալի իցէ: Աթէ յարեցի ՚ի չարն ընդ դէմ դատաստանի մտաց իւրոց, խայթն խղճի տանջէ զնա չարաչար . և բազում անգամ ածէ զմարդն ՚ի զեղջ և յապաշաւ:

Արդ՝ ոչ տուեալ լինէր մարդկային հոգւոյ այս խիղճ մտաց, որպէս և ոչ տուան զգայնոց, եթէ հոգին

մարմնոյ շիջանէր ընդ մարմնոյ ըստ նմանութեան հոգւոց զդայնոց: Ապա մնայ անմահ և յետ մահուան մարմնոյն:

Վարձեալ՝ ՚ի մարդկային հոգւոջ կրկին են կարողութիւնք՝ իմացական մտք և ազատ կամք: Ախոքն ունի անյագ իղձ գիտելոյ զամենայն ինչ ըստ որում է իմանալի: Կամքն ունի անյագ բաղձանս հետամուտ լինել անհուն բարւոյ ըստ որում է վայելելի, որք և այնչափ առաւել անձկանօք բերին ՚ի գիտել և ՚ի վայելել, որչափ առաւելուն ՚ի գիտութեան և ՚ի վայելման: Իսկ այնորիկ ցանկութիւնք՝ ոչ կարեն լինել ՚ի մարդկային հոգւոջ գիպուածական պատահմունք, այլ պատճառաւ վախճանի բնաւորեալք: Այլ զի ոչ կարէ յաստի կեանս, և հասանիլ առ իւրաքանչիւր վախճան. ապա մնայ հոգին և յետ մահու անմահ. յորում յաղեցցին լիով, և հասանիցեն իւրեանց վախճանի:

Վարձեալ՝ բազում անգամ տեսանեմք զչարագործս, որք մինչև ցմահ վարեն հեշտութեամբ զկեանս իւրեանց, և ոչ կրեն զպատիժ: Տեսանեմք և զբարիս, որք նեղին և տառապին մինչև ցմահ, և ոչ վայելեն զաւուրս բարութեան. և ՚ի վերայ այսր ամենայնի՝ մարդկայինս հոգի տակաւին իւրովի ըղձանայ գործել զբարիս, և հարեալ ՚ի խղճէ պատկառ կայ ՚ի գործոց չարեաց:

Արդ՝ եթէ եղձանէր ընդ մարմնոյ և հոգին, վայրապար տուեալ լինէր նմա այս բաղձանք. բայց բնութիւնն ոչինչ առնէ վայրապար, այլ ամենայն ինչ վասն վախճանի: Ապա հոգին մնայ անմահ և յետ մահու, յորում ընկալցի զհատուցումն վարձուց ըստ գործոց իւրոց:

Վարձեալ՝ գոյ ՚ի հողին բաղձանք գործելոյ զայն-
պիսի բարխս, որ մնասցէ ՚ի մշտնջենաւորս՝ հաստատուն
և անեղծ: Իսկ արդ՝ ոչ էր այս անմահ բաղձանք եթէ
հողին մեռանէր ընդ մարմնոյ: Ապա հողին մնայ ա-
նեղծ և անմահ ՚ի մշտնջենաւորս յետ վախճանի մարդոյ:

Վարձեալ՝ ոչինչ է մարթ անիրաւիլ կամ եղ-
ծանիլ յաւիտենական օրինաց արդարութեան: Բայց
տեսանեմք զօրհանապազ բազում անիրաւութիւնք և
եղծմունք, և ոչ ըստ իրաւանց հատուցմունք: Ա՛ զի
չարք մնան անպատիժ, և առաքինիք անվարձ. և է՛ զի
չարք վարձատրին, և առաքինիք պատուհասին: Ա՛ եր-
բէք՝ զի տուեալ լինին հատուցմունք, այլ ոչ արժա-
նապէս ըստ իւրաքանչիւր գործոց արդար իրաւամբք:
Ա՛ւ այս կամ առ տղիտութեան իրաւանց, կամ գոր-
ծոց, կամ երկոցունց միանդամսյն. և բազում այն է՛
որ անիրաւի առ տկարութեան:

Ճ ի ո՞րք ՚ի մարդկանէ՛ որ իրաւագէտն իցէ և
իրաւասէր, կարէ հատուցանել ըստ արդարութե՛ վարձս
այնմ՝ որ զհազարաւորս մարդկան ՚ի վտանգէ մահուան
զերծուցեալ իցէ. որպէս մարդասէր բժշկի ումեք, որ
զդեղ մանկակոտոր ծաղկի, կամ զանդեղայ չարաչուկ
ժանտախտի հնարեալ իցէ: Այամ զի՛նչ պատիժ այնմ՝
որ զհազարաւորս տարապարտուց կորուսեալ իցէ. որնչ
զօրապետի ումեք՝ որ մատնիչ հայրենեաց լեալ իցէ:

Ա՛յս օրէնք են արդարութեան, զի որ զհազարա-
ւորս մեռոյց տարապարտ, և ինքն հազարիցս մեռանիցի:
Ա՛ւ որովհետե յաստի կենցաղս ոչ տուեալ լինի իւրա-
քանչիւր ումեք արժանաւոր հատուցմունք ըստ գոր-
ծոց իւրոց՝ մինչև ցվախճան կենացն, ապա ոչ վախ-
ճանի հողին ընդ մարմնոյն. զի արդար իրաւամբք ՚ի

Հանդերձեալ կեանս տացի իւրաքանչիւր ումեք վարձ կամ պատուհասս Սոյնպէս և վասն յարութի մարմնոց վկայեն աստուածաշունչ գիրք . ըստ այնմ՝ «Յարիցեն մեռեալք , և կանգնեացին . որք իցեն ՚ի դերեզմանս» (Եսայեայ . ԻԷ, 19): Եւ թէ՛ «Ամենեքին՝ որք ՚ի դերեզմանս կայցեն , լուիցեն ձայնի նի՛ր , և եկեցցեն արտաքս» (Յովհաննոս . Է, 28): Իսկ ՚ի դերեզմանի եղև ըն մարմինն է , և ոչ եթէ հոգին . ապա մարմինք յառնեն ՚ի կատարածի :

Ասեն աղանդաւորք , գրէ Առաքեալն՝ թէ՛ «Մարմին և արիւն զարքայութիւնն աստուծոյ ժառանգել ոչ կարեն , և ոչ ապականութիւն զանապականութիւն ժառանգէ » (Ս , Արնիւթացոց . ԺԵ , 50): Ապա միայն հոգիքն յառնեն . իսկ մարմինն վասն զի է տարրական , ապականի և լուծանի ՚ի տարերս : Բայց պարտ էր նոցա ըսել և զոր ասէ Առաքեալն ՚ի նմին վայրի , թէ՛ «Պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն , և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն » (Ս , Արնիւթացոց . ԺԵ , 54):

Քանզի խառնուած չորից հիւթոց՝ յորոց է մարմինս , ոչ ևս մնան ապականացու և անտաւոր , այլ նորոգին անապականութեամբ . զի ոչ կարիք քաղցու և ծարաւոյ բռնադատէ , և ոչ հիւանդութի և ցաւ տեղի գտանէ , և ընկզմի մահ ՚ի պարտութիւն , և անմահ և անապական կենօք ժառանգէ զարքայութիւնն . հաւատարմացուցանէ զմեզ և բանն . զի արդարութիւնն պահանջէ , եթէ երկուք ՚ի միասին գործեցին զբարի կամ զչար , ՚ի միասին ընկալցին զպսակ կամ զպատուհասս : Արդ՝ հոգի և մարմին ՚ի միասին գործեն զառաքինութիւն կամ զմոլութի , ապա երկոքին ևս յարիցեն անուլ զպսակ կամ զպատիժ :

Յայտ է յաստուածախօս վարդապետութենէ առաքելոցն, թէ այնու մարմնով որով մեռան, յառնեն ՚ի կատարածի. զի յարութիւնն է վերստին կանգնումն անկերպն՝ անմահ կենդանութիւն. ըստ այնմ՝ «Գիտեմ՝ զի մշտնջենաւոր է, որ լուծանելոցն է զիս յերկրի. յարուցանել զմորթն իմ՝ որ կրեաց զայս ամենայն» (Յ՛Բ՛այ. ԺԷ, 25): Եւ թէ՛ «Ամենցուն մեզ յանդիման լինել կայ առաջի ատենին քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմնով, զոր ինչ գործեաց յառաջ» (Բ, ՍրբնԷօցոց. Է, 10):

ԲԱՆԻ՞ ՁԻՔ ԿԱՄ ՕԺԻՏՔ ՏՈՒՆԱԼ ԼԻՆԻՆ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ
ՄԱՐՄՆՈՅ

Վրառեակ կատարելութիւնք կամ ձիրք նշանակին յառաքելական բանից, այսինքն՝ Անախտութիւն. Պայծառութիւն. Զօրեղութիւն. և Թափանցութիւն:

ա. Սարմինք սրբոց լինիցին անախտակիր, անապական, անչարչարելի. ըստ այնմ՝ «Սերմանի ապականութեամբ, և յառնէ առանց ապականութեան»:

բ. Պայծառ. զի լինիցին լուսափայլ, փայլեղագեղ, զուարթ, և փառահեղ. ըստ այնմ՝ «Սերմանի անարդութեամբ, և յառնէ փառօք»:

գ. Չօրեղ. զի լինիցին առոյգ, կորովի, և ուժեղակ. ըստ այնմ՝ «Սերմանի տկարութեամբ, և յառնէ զօրութեամբ»:

դ. Թափանցիկ. զի լինիցին նուրբ, թեթեւ, և աբաղ. ըստ այնմ՝ «Սերմանի մարմն շնչաւոր, և յառնէ մարմն հոգևոր» (Ս, ՍրբնԷօցոց. ԺԷ, 42): Իսկ այս

ձիրք կամ օժիտք ոչ են հաւասար առ նմ արդարս ,
այլ յոմանս են յաւէտ , և յոմանս նուազ՝ ըստ առաւ-
ելլութեան և նուազութեան արդեանց նոցա . ըստ
այնմ՝ « Աստղ քան զաստղ առաւել է փառօք , նոյն-
պէս և յարութիւն մեռելոց » (* , Լիւրնի-այ-ոյ . Ժէ , 41) :

Իսկ մարմինք մեղաւորաց ընդ հակառակն են . զի
լինին չարչարելի , խաւարին , տկար , և թանձր Վախ զի
այս կատարելութիւնք՝ ոչ են ներքին և էական յատ-
կութիւնք փառաւորեալ մարմնոց , այլ են արտաքին
օժիտք շնորհեալ նմա ՚ի քրիստոսէ . զի յարութիւնն
քրիստոսի է գաղափարական պատճառ յարութիւն մե-
լոց . ըստ այնմ՝ « Նորոգեսցէ զմարմին խոնարհութեան
մերոց , կերպարանակից լինել մարմնոց փառաց նորա »
(Փիլիպի-ոյ . Գ , 21) :

ԶԱՐԴ ԻՏԷ ՆՈՅՆ ՄԱՐՄԻՆ Ի ՅԱՐՈՒԹԵԱՆ , ՈՐ ՏԱՐԵԲԷ
ԳԼՈՒԿԻՆ Ի ՄԱՐՄՆՈՅ ԱՍԻ

Նոյն մարմին է ըստ գոյացութեան այժմուցս և
հանդերձելոց . և տարբերութիւնն է ըստ պատահական
յատկութեանց . և զայն ունի սքանչելեօք յաստուծոյ ,
և ոչ եթէ յեութենէ իւրմէ . զի թափանցեալ այսինքն
՚ի միում տեղւոյ երկուց մարմնոց լինել բնականաբար
է անկարելի . իսկ այն յատկութիւնք ոչ փնասեն գոյա-
ցական նոյնութեան մարմնոց , այլ միայն տարբերին
ըստ արտաքին պատահմանց :

Եւստի և Առաքեալն յարացոյց ՚ի մէջ բերեալ
զսերմանիս , քաջ պատասխանի առնէ այնոցիկ՝ ոյք ա-
սեն , թէ որով մարմնով գայցեն մեռեալք , ասէ՝ « Զոր
սերմանեան , ոչ զնոյն մարմին որ ծնանելոցն իցէ՝ սեր-
մանես , այլ հատ մերկ , եթէ ցորենոյ իցէ , և եթէ այլոց

սերմանեաց . և աստուած տայ նմա մարմին՝ որպէս և կամի» (Ս, Արևելացոց . ԺԷ, 37):

Ապարէն նոյն է ըստ գոյացութեան սերմանեալն և բուսեալն , զի ո՛չ սերմն է գարի , և բուսեալն ցորեան . և ո՛չ սերմն կորեակ , և բուսեալն հաճար . այլ՝ զի զոր ինչ սերմանէ որ զնոյն և հնձէ :

Ասկայն ո՛չ է նոյն ըստ պատահական յատկութեան . զի սերմն էր հատ մերկ , այլ բուսեալ ունի ոճ , ծիղ , քիստ , և այլն : Իստ ամին օրինակի՝ նոյն է ըստ գոյացութեան մարմինն մեռեալ և յարուցեալ . այլ ո՛չ նոյն ըստ յատկութեան . զի տարբերի ըստ քանակութեան և ըստ որակութեան :

Տարբերի ըստ քանակութենն , զի որ ՚ի մեռանիլն էր փոքրահասակ տղայ , կամ մեծամարմին սկայ . կամ որ ունէր զանդամս ինչ պակաս՝ կամ աւելորդ , յառնէ երեսնամեայ հասակաւ առանց յաւելլուածոյ և պակասութեան անդամոց , ըստ նմանութեան մարմնոյ՝ որով յարեաւ ք՞ս գլուխն մարդկութեանս . ըստ այնմ՝ «Մինչև հասցուք ամենեքին . . . յայր կատարել ՚ի չափ հասակի կատարմանն քրիստոսի» (Ե՛՛Է՝սացոց . Դ , 13):

Տարբերի ըստ որակութեան , զի որ ՚ի մեռանիլն էր տկար , տգեղ , ցաւագար , և գանդաղ . ՚ի յարութեան լինի զօրաւոր , վայելչագեղ , անախտակիր , և երազ . ըստ այնմ՝ «Փող հարկանի , և մեռեալք յարիցեն առանց ապականութեան» (Ս , Արևելացոց . ԺԷ , 52):

Աւստի և մարմին մեր աստուոր՝ նկատմամբ փառաւոր մարմնոյ՝ է մարմին շնչաւոր . և մարմինն փառաւոր՝ նկատմամբ աստուոր մարմնոյ՝ է մարմին հոգևոր . և բազդատին առ միմեանս , որպէս խաղող և գինի , կամ չամիչ և օղի . զի խաղողն է գինի մարմնաւոր , և գինին՝

խաղող հոգևոր . չամիչն՝ օղի մարմնաւոր , և օղին՝ չամիչ հոգևոր :

Եւ զի որպէս խաղողն և դինին նոյն են ըստ գոյացութեան , և տարբեր ըստ յատկութեան . այսպէս և մարմինն աստևոր նոյն է ըստ գոյացութեան ընդ փառաւոր մարմնոյ , և տարբեր ըստ յատկութեան . քանզի մարմինն զոր ունիմք այժմ , է մարմին մարմնաւոր . և մարմինն զոր ունիցիմք ՚ի հանդերձեալն , է մարմին հոգևոր : Եւս ըստ Առաքելոյն՝ « Եթէ զոյ մարմին շնչաւոր , գոյ և հոգևոր » (« Կորնթացոյ . ԺԷ , 44 ») :

ՈՒՍՏԻ՞ ՊԱՏՃԱՌԻՑԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԷՔ ՓԱՌԱՒՈՐԵԱԼ ՄԱՐՄՆՈՅ

Աստարելութիւնք կամ օժիտք փառաւորեալ մարմնոց՝ պատճառին ՚ի փառաւոր յարուէք թի : Օ ի ուղ յարուցանելովն զմարմին իւր ներդորձեաց զյարութի մանայն մարդկան . ըստ այնմ՝ « Բրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց առաջին պտուղն ննջեցելոց . զի մարդով եղև մահ , և մարդով յարութիւն մեռելոց » (« Կորնթացոյ . ԺԷ , 20 ») : Այնպէս և օրինակօք մարմնոյ փառաց իւրոց , ներդորձեաց զկատարելութիւնս փառաւորեալ մարմնոց . ըստ այնմ՝ « Որպէս յարեալք բրիստոս ՚ի մեռելոց փառօքն հօր . նոյնպէս և մեք ՚ի նորոգումն կենաց շրջեցուք » (Հովնայեցոյ . Գ , 4) :

Եւրդ՝ մարմինք սրբոց եղիցին անախտակիր . քանզի և բրիստոս որ նախ քան զյարութիւնն յորժամ կամէր՝ քաղցնոյր և ծարաւէր , ախտակիր լինէր ցաւոց և տրտմութեան , չարչարանաց և մահու . յետ յարութեան իւրոյ եղև անախտակիր , անչարչարելի , և անմահ . ըստ այնմ՝ « Բրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց ,

այսուհետեւ ո՛չ մեռանի , և մահ նմա ո՛չ ևս տիրէ »
(Հոովմայեցոց . 2 , 9) :

Եղիցին պայծառ . զի որ ՚ի խաչին « Ո՛չ գոյր նորա տեսիլ և ո՛չ փառք . . . այլ տեսիլ նորա անարդ նուազեալ քան զամ որդւոց մարդկան » (Եսայեայ . 54 , 2) :
Յետ յարութեան իւրոյ եղև լուսափայլ և գեղապայծառ . բայց ո՛չ կամեցաւ յայնժամ զփառս պայծառութեան մարմնոյ իւրոյ ցուցանել աշակերտաց իւրոց . այլ զայն միայն կամէր զի գիտացնեն , թէ նոյն ինքն է՝ որ մեռան , և յարեաւ . վասն որոյ և ցուցանէր նոցա զվէրս մարմնոյն , որք « Համարէին ոգի ինչ տեսանել » (Ղովստոս . 17 , 36) : Եւ ասէր ևս ցթովմաս . « Բէ՛ր ըզմատունս քո և արկ այսր , և տես զձեռս իմ , և բէ՛ր զձեռն քո , և մտնա՛ ՚ի կողս իմ » (Յովհաննոս . 1 , 27) :

Սակայն զփառս մարմնոյն՝ զոր ունելոց էր ՚ի յարութեան իւրում , եցոյց յառաջագոյն ՚ի թափօր լեբինն . ըստ այնմ՝ « Լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն , և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զընյս » (Մատթէոս . 17 , 2) : Եւ ցուցցէ ևս սիրելեաց իւրոց ՚ի կատարածի աշխարհիս . զի « Յայնժամ տեսցեն զորդի մարդոյ եկեալ անպովք , և զօրութեամբ՝ և փառօք բազմօք » (Մատթէոս . 17 , 26) :

Եղիցին զօրեղ . զի որ յառաջ քան զյարութիւնն մինչդեռ յաշխարհի էր՝ վաստակէր ՚ի ճանապարհին , և տկարանայր ՚ի բառնալ զփայտ խաչի , և պահակի կարօտանայր . յետ յարութեան իւրոյ ո՛չ ևս էր տկարութի ՚ի մարմինն տէրունական , այլ ինքնիշխան զօրութեամբ վերհամբառնայր ՚ի վերոյ քան զամենայն երկինս :

Եղիցին թափանցիկ . զի առաջին պտուղն յարութեան բնութեանս մերոյ քրիստոս , որ կամովին խոնար-

Հեցուցեալ էր զանձն՝ ըստ ծառայական կերպին ըմբռնիլ, և կապիլ, և զանածեծն լինել, և վիրաւորիլ, յետ յարութեան իւրոյ եղև արագ, նուրբ, թեթև, մինչև թափանցել ընդ մարմինս. ուստի և «Դրօք փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին հրէից, եկն յիսուս, և եկաց ՚ի միջի նոցա» (Յովհաննոս . Է, 19):

ԱՐԴԵՕ՛Ք ՄԱՐՄԻՆՔ ՍՐԲՈՑ ԱՍՏ ՆՄԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՌԱԽՈՐԵԱԼ ՄԱՐՄՆՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԼԻՆԻՑԻՆ ԵՐԲԵՄՆ ԱՆԵՐԵՒՈՅԹ, ԵՒ ԵՐԲԵՄՆ ԱՅԼԱԿԵՐՊԱՐԱՆ

Ապարէն փառաւորեալ մարմինն քրիստոսի է նախատիպ մարմնոցն սրբոց. ուստի և մարմինք սրբոց ունիցին ՚ի հանդերձեալն զնորին նմանութիւն. ըստ այնմ՝ «Յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք» (ս, Յովհաննոս . Գ, 2): Իսկ թէ մարմինն տէրունական երբեմն աներևոյթ լինէր յաչաց տեսողաց, որպէս գրէ Ղուկաս. (ԻԴ, 39): Եւ երբեմն այլ կերպարանս երևէր, որպէս նշանակէ Մարկոս. (ԺԷ, 12):

Այնպիսի ոչ էին ՚ի կողմանէ մարմնոյն քրիստոսի. զի ոչ փոփոխութիւն ինչ էր ՚ի նմա ըստ տեղւոյ՝ կամ ըստ կերպարանաց, այլ էր միայն ՚ի կողմանէ տեսողաց:

Օ ի մինչ աներևոյթ լինել համարէին, անդ էր. և մինչ յայլ կերպարանս տեսանէին, էր ՚ի նոյն կերպարանս: Իայց որպէս կամէր քրիստոս այնպէս առնէր. վասն որոյ էր երբեմն ոչ կարէին տեսանել. և էր՝ զի ոչ զօրէին ճանաչել. քանզի ՚ի ձեռս քի էր երևիլ, և ոչ երևիլ, ճանաչիլ, և ոչ ճանաչիլ: Օ ի ոչ եթէ զիւր մարմինն միայն, այլ և զամենայն զոր կամի՝ կարող է աներևոյթ առնել, որ զառաջեաւ կայցէ:

Ուստի առաւել հաւանելի է ասել, թէ տէրն

մեր փոփոխէր զերևակայութիւնս տեսողաց , քան և թէ զիւրն մարմին . և այն խակ էր ՚ի դէպ . զի փոփոխութիւնն լինիցի ՚ի տեսողսն՝ քան ՚ի քրիստոսս :

Ըյս օրինակ անտեսութեան բազում անգամ պատահի և մեզ . զի անկեալ մէզ զբոցք՝ աներևոյթ առնէ զիւրն որ առաջի կայ , կամ այլ ընդ այլոյ երևեցուցանէ՝ որ յինքեան է անփոփոխ . զսոյն և տէրն յայտարար յասելն՝ “Տեսէք զձեռս իմ և զոտս , զի ես նոյն եմ” (Ըն-իստո . ԻԴ , 39) :

ԶԻԱՐԴ ՆՈՎԻՆ ՄԱՐՄԻՆՈՎ ԿԱՐԵ ՅԱՌՆԵԼ . ՈՐ ՄԱՐԴԱԿՈՒՐ՝ ԿԱՄ ԳԱԶԱՆԱԲԵԿ՝ ԿԱՄ ՉԿՆԱԿԵՐ ԵՂԵԱԼ ԻՑԷ :

Որովհետև սահմանեալ է աստուած նովին մարմն նով յարուցանել զմեռեալն , զպակասութիւն մարմնոյ՝ այնմ որ կերակուր եղեալ վայրենի մարդկան , փոխեցաւ ՚ի դոյացութիւնս մարմնոց նոցա , ընու ըստ պիտոյից ՚ի մասանց անտի մարմնոց կերակուր եղելոցն , զոր յընթացս կենաց իւրոց ծախեալ էր արտաշնչութիւն . զի ըստ հաւաստի փորձոյ բնազնից , բազում ինչ ՚ի մասանց մարմնոց զօրութեամբ բնական ջերմութեան անընդհատ արտաշնչեալ ցնդի ընդ ծակտիս մարմնոյ :

Իսկ մարմինք նոցա գազանաբեկ կամ ձկնակեր եղեն , լուծեալ ՚ի տարերս , գան ժողովին անդրէն ՚ի մարմինն՝ յորմէ առան . զի ըստ ասելոյ հրեշտակապետին առ կոյսն Մարիամ . “Ո՛չ տկարացի առ յաստուծոյ ամենայն բան” (Ըն-իստո . ս , 37) : Օ ի որ կարաց յանդոյից ՚ի դոյ ածել , կարող է ևս զպակասեալն նորոգել . զի յարուցանել զմեռեալն՝ է գործ ամենակարողութեանն աստուծոյ . ուստի ասէ սուրբն Գրիգոր Նարեկացի . “Ամենաստեղծ աներկբայելի , որ զհուրբ

(Ագաթանգեղոս)։ Բայց յատկապէս պատշաճի առ որդինս
 ւն . Օ ի է բանն աստուծոյ . ըստ այնմ՝ «Իշխա-
 նութիւն ետ նմա դատաստան առնել . և զի որդի մար-
 դոյ է , ընդ այն զի՞ զարմանայք» (Յովնանն . Է , 27)։
 Իբր զի տեսեալ զնա մարդ , և որդի մարդոյ , մի ինչ
 զարմանայք , եթէ զիարդ ունիցի իշխանութիւն դա-
 տելոյ . այլ զի նոյն ինքն է աստուած՝ և որդի աստու-
 ծոյ . որում ՚ի յաւիտենական ծննդեան իւրում ետ
 հայր զիշխանութի դատողական , ոչ եթէ նախ ծնաւ ,
 և ապա ետ . այլ զի դատաւոր ծնաւ զնա , որպէս ասէ
 Ռսկեբերանս

Իսկ առ անկրէպ դատողութիւնն կարևոր է գի-
 տութիւնն զաղտնեաց . իսկ քրիստոս ըստ որում աստ-
 ուած՝ գիտէր զգաղտնիս սրտից մարդկան . ըստ այնմ՝
 «Մի յառաջ քան զժամանակն դատիք , մինչև եկեսցէ
 տէր . որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի» (Ս .
 Սրնիսայոց . Գ , 5)։

Գիտէր և ըստ որում մարդ՝ վասն անձնաւորական
 միաւորութեան բանին ընդ մարդկութեանս . ըստ այնմ՝
 «Յաւուրն յորում դատիցի զգաղտնիս մարդկան՝ ըստ
 աւետարանիս իմում ՚ի ձեռն յիսուսի քրիստոսի» (Հովն-
 սայեցոց . Բ , 16)։

Ընդ դատաստանն կարևոր է ևս իմաստութեան .
 իսկ քրիստոս ըստ որում աստուած բանն՝ է իմաստու-
 թիւն հօր . ըստ այնմ՝ «Աստուած իմաստութեամբ հի-
 մունս էարկ երկրի (Ագաթանգեղոս . Գ , 19)։ Այսինքն որդւով
 իւրով . զի ամենայն ինչ նովաւ եղև : Իւր ըստ որում
 մարդ՝ է թանգարան ամենայն իմաստութե . ըստ այնմ՝
 «Յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտու-
 թեան ծածկեալ կան» (Սրնիսայոց . Բ , 3)։

բ. Վրիստոսի պատշաճի դատել . զի է գլուխ մարդկութեանս . ըստ այնմ՝ «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի» (Մատթէոսի . ԻԷ, 18):

Իսկ արդիւնական պատճառ դատողական իշխանութեան քրիստոսի է մահն նորին և արդար հատուցմունքն . ըստ այնմ՝ «Վրիստոս մեռաւ և կեեաց, զի մեռելոց և կենդանեաց առ հասարակ տիրեցէ . . . քանզի ամենեքին կալոց եմք առաջի ատենին քրիստոսի» (Հովհաննէսի . ԺԴ, 9): Լսելով՝ ցորդին ասէ , «Ըթող քո աստուած յաւիտեանս յաւիտենից . գաւազան ուղղութեան , գաւազան արքայութեան քո . սիրեցեր զարդարութիւն , և ատեցեր զանօրէնութիւն» (Եփրայեցոց . ա , 8):

ԶԻՆՐԴ Է ԴԱՏԱՍՏԱՆՆ ԵԱՒԻՏԵՆԱԿԱՆ

ն. **Յ**աւիտենական կոչի տեղութիւնն , որ յառաջէ քան զարարչութիւնն աշխարհի . ըստ այնմ՝ «Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես» (Սաղմոսի . ԵԷ, 2):

բ. **Յ**աւիտեան կոչի տեղութիւնն , որ սկսաւ յարարչութենէ աշխարհի և ձգի մինչև ցօր դատաստանին . ըստ այնմ՝ «Լուսատու ես դու սքանչելապէս լեւրանցն յաւիտենից» (Սաղմոսի . ԿԷ, 5):

գ. **Յ**աւիտեան կոչի տեղութիւնն , որ սկսանի յօրէ դատաստանին , և չունի եզր կամ վախճան . ըստ այնմ՝ «Եթէ որ ուտիցէ ՚ի հացէ յայսմանէ , կեցցէ յաւիտեան» (Յովհաննէսի . Զ, 52): Սովին մտօք ասի ՚ի հանդանակիս՝ «Ի դատաստանն յաւիտենականն»:

Ըստ արդէն ուր չիք շարժումն լուսաւորաց , չիք և ժամանակաւոր ինչ . զի ժամանակն կայանայ ՚ի շարժման լուսաւորացն երկնից: Իսկ ՚ի հանդերձեալն ո՛չ և ս շար-

ժին լուսաւորք , այլ դադարին 'ի տեղիս իւրեանց . զի չունին այնուհետե հարկ արբանեկել մարդկան , վասն որոց հաստատեցան . զի մարդիկ չունին պէտս ինչ ըստ պատ հարկանելոյ նոցին . և ոչ ևս սատարել լինելութե և ապականութեան կենդանեաց և բուսոց , զի յայնժամ լուծանին նորա 'ի տարերս և առնուն զվախճանս Վաս 'ի հանդերձեալն չիք ժամանակաւոր ինչ , այլ ամենեւ յին են յաւիտենական , եթէ փառք , եթէ տանջանք :

ԵՒ ԶԻԱՐԴՒ ՎԱՍՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՐ ԳՈՐԾՈՅ ՏԱՅԻՆ ՅԱՒԻՏԵՆԱՎԱՆ ԷԱՏՈՒՑՄՈՒՆԲ

Որովհետե աստուած է անժամանակ և յաւիտենական , զի է ամենեւին անփոփոխելի . վասն որոյ որք միանգամ գործեցին զբարի կամ զչար , արդարացան կամ մեղան 'ի յաւիտենականութեանն աստուծոյ . ապա արժանապէս առնուն զհատուցումն վարձուց կամ պատժոց յաւիտենական . ըստ այնմ՝ « Երթիցեն նորա 'ի տանջանն յաւիտենականս , և արդարքն 'ի կեանն յաւիտենականս » (Մատթէոսի . ԻԷ , 46) :

'Իարձեալ գործք բարիք՝ որք յառաջ դան 'ի շքնորհացն աստուծոյ են արժանի յաւիտենական վարձուց . զի շնորհն աստուծոյ է անհուն արժողութիւն , և բաւական առ 'ի արդիւնաւորել զկեանս յաւիտենականս : Եւ գործք չարք՝ որք գործին ընդ դէմ դնելով շնորհացն աստուծոյ , արժանի են յաւիտենական պատժոց . զի ընդ դէմ կալն շնորհաց , է ընդ դէմ կալ և արհամարհել զաստուած զտուիչն շնորհաց . և այս արհամարհանք է բաւական առ բերել զչարն պատժոց յաւիտենական դատապարտութեան :

Վանզի ամենայն առաքինութիւնք եթէ գերբ-

նական և եթէ բարոյական, որք արժանաւոր առնեն յաւիտենիցն կենաց, գործին յաջողութեամբ շնորհաց զի իմացական լոյս շնորհացն աստուծոյ միաւորեալ ընդ լուսոյ մարդկեղէն մտաց, առնէ զի հաւատասցուք ՚ի ճշմարիտն աստուած. և հաստատեսցուք ՚ի յոյս և ՚ի սէր նորա. ըստ այնմ՝ «Յայսմ է սէրն, ո՛չ զի մեք սիրեսցուք զմե՛ծ, այլ զի նա սիրեաց զմեզ» (Ս, Յովհաննոս. Գ, 10):

Օ ի միտք մարդկան վասն այնորիկ անասն բարձրագոյն խորհրդոցն հաւատոյ, որք զանցանեն զկարողութեամբ նորա. զի ունին հպատակ ինքեանց զկամեն՝ ՚ի գործունէութենէ աստուածային շնորհաց. ըստ այնմ՝ «Շնորհօք այ եմ՝ զի՛նչ և իցեմ, և շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ո՛չ եղեն» (Ս, Կորնթացոց. ԺԵ, 10):

Իսկ արիութիւն՝ արդարութիւն՝ բարեխառնութիւն և այլ ամենայն գործք բարիք որով հաճոյանամք աստուծոյ, ունին զգործունէութիւն իւրոց առ ՚ի շահիլ զկենան յաւիտենական, յաստուածային հաւատոց, և ո՛չ յայնմանէ, զի են համաձայն ուղիղ բանի. ըստ այնմ՝ «Չի շնորհօք նորա էք փրկեալք ՚ի ձեռն հաւատոցն. և այս՝ ո՛չ ՚ի ձէնջ, այլ աստուծոյ պարգև է, ո՛չ ՚ի գործոց, զի մի դք պարծեսցի (Եփեսացոց. Բ, 8):

Իււամենայն գործք չարք՝ որք արժանի առնեն յաւիտենական դատապարտութեան, գործին ընդ դէմ զներլով շնորհացն աստուծոյ. քանզի աստուած տուեալ յառատութէ իւրմէ իւրաքանչիւր բանական ստեղծուածոյ զբաւական շնորհս, որք միշտ թելադրեն և շարժեն զամենեպէս ՚ի պահպանութիւն օրինաց և պատուիրանաց իւրոց. ուստի որ հակառակ կայ շնորհաց, որ շարժէ ՚ի բարին և ստունգանէ պատուիրանացն աստուծոյ, անարդէ այնպիսին զտուիչն շնորհաց և զօրէնադիրն

այսինքն՝ զտանջանս ըստ մարմնոյ յարարածական տարե-
րաց . զի յաւուրն դատաստանի ամենայն մարմնաւոր
արարածք որք յերկրի աստ են , հրով սպառեցին և
մնասցեն միայն բուն տարերք : Իսկ ՚ի մէջ տարերաց
հուրն է առաւել սաստիկ և զգալի . վասն այսորիկ նա
է գլխաւորն ՚ի տանջանս մարմնոյ :

Արդ՝ հուրն դժոխոց եղիցի անծախելի այրեցող ,
այլ ոչ լուսաւոր . զի մի ուստեք ունիցին մեղաւորք ըզ-
մխիթարութիւն ինչ . ուստի ասէ Ոսկերեբան՝ « Որպէս
չէ՛ ծախիչ հուրն այն , այսպէս և ոչ լուսաւոր . ասպ
թէ ոչ՛ խաւար ոչ էր » :

() Գն եղիցի խաւարին , այլ ոչ նուրբ . յորում
մեղաւորք իբրև կաշկանդեալք ՚ի մթին բանտի՛ առ
խարխտի դեղերեացին . ըստ այնմ՝ « Կապեցէ՛ք զգորա
ղոտս և զձեռս . և հանէ՛ք զգա ՚ի խաւարն արտաբին »
(Մատթէոսի . ԻԲ , 13) : Եւ թէ՛ « Շօշափեացեն զորս
իբրև կոյրք , և իբրև զաչացուս խարխաբեացեն » (Եսայ-
եայ . ԺԷ , 10) :

Սուրն եղիցի ցրտասառոյց , այլ ոչ զովացուցիչ
՚ի տապոյ . ըստ այնմ՝ « Որք ծառայենն ինձ՝ արբցեն ,
և դուք ծարաւեսցէք » (Եսայեայ . ԿԷ , 13) : Որպէս յայտ
առնէ տէրն յառակ մեծատանն . (Ղուկասոս . ԺԷ , 24) :
Եւ այցեն մեղաւորք զթշուաութիւնս իւրեանց՝ այլ
անարտօս , զի մի թեթեասցին ՚ի դառնութենէ ցա-
ւոյ . ըստ այնմ՝ « Անդ եղիցի լալ , և կրճել ատամանց »
(Մատթէոսի . ԺԳ , 42) :

Հողն եղիցի ծանր , այլ անհաստատ . զի տացէ ան-
տանելի ծանրութի մեղաւորաց , և անդադար շարժմամբ
սասանեցուցանէ զնս . ըստ այնմ՝ « Անօրէնք իբրև զծով
ծփեացին , և հանդիստ մի գտցեն » (Եսայեայ . ԺԷ , 20) :

Թեան իւրոյ, որով այրէ անսպառ զհոգիս մեղաւորաց, և զանմարմին դևս, և տանջէ զնոսա կիզողական բոցովն:

ՈՒՐ ԻՑԵՆ ԱՅՅԻՄ ՀՈԳԻՔ ՆՆՋԵՑԵԼՈՅ

Հոգիք կատարեալ սրբոց հանգուցեալ են ՚ի վերինն սիօն ՚ի դասս հրեշտակաց՝ մերձ քրիստոսի . իսկ հոգիք միջակ արդարոց՝ կան միան ՚ի ներքոյ երկնից ակն ունելով հանդերձեալ դատաստանին . զի օժանդակութեամբ եկեղեցւոյ, և աղօթիւք և ողորմութեամբ քաւեսցին, և երկնաւոր օթեանացն արքայութեան արժանացին:

Անձն Գրիգոր Տաթևացին յետ ՚ի մէջ բերելոյ զպէսպէս դատումն բազմաց, ասէ՝ «Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն Յովհաննու . որպէս մեծն Անդրէաս, և համախոհք նմին սուրբն Եբննոս, Եպիփան, և Յասիլիոս . այլ և ՚ի մերոց վարդապետաց Սկևռացին Գրիգոր ՚ի փոխումն աստուածածին կուսին . և հայրապետն Ներսէս ՚ի ճառս հրեշտակապետաց . և միւս Ներսէս ՚ի հանգիստն Յօհաննու . և սուրբն Ղալիստրատոս վկայն ՚ի ճառս իւր:

Արկին ասեն զչաւիղս ընթացից հոգւոց, այսինքն՝ մին ՚ի վեր յերկինս, և միւսն ՚ի ներքոյ երկնից: Նորա որք թողին զամենայն, և գնացին զհետ քրիստոսի, որոց խոստացաւ զհարիւրապատիկն աստ՝ և զկեսնս յաւիտենից . սոցա համաձայնին ընդհանուր ամենայն վարդապետք գոլ ՚ի յերկնային խորանս անմարմնոց ՚ի զանազան օթեանս լուոյ:

Իսկ հոգիք հաւատացելոց, որք ոչ գնացին այսպէս զհետ նորա, այլ ընկալան ՚ի ներքործութեանցն սատանայի և ՚ի կրից աշխարհի, ոչ թողու արդար իրա-

ունքն աստուծոյ ելանել յերկինս . այլ կան և մնան ՚ի ներքոյ երկնից , ակն ունելով հանդերձեալ դատաստանին , որ զթով ողորմութեամբ դիւրապէս քաւեսցին , և ողորմութեան արժանասցին :

Իսկ ուր իցեն սոքա երկոքեանս , տեսիլն Յօհաննու յայտնապէս ցուցանէ . սրբոց խորանս ասէ զվերինն սիօն՝ և զհրեշտակացն դասս , ուր ետես զքսան և չորս երիցունան շուրջ զաթոռովն աստուծոյ , և զբազմութիւն հոգւոց սրբոց յամենայն ազգաց ժողովեալ անդ . և այն է եկեղեցիք անդրանկաց հաւատացելոց յերկինս , որնք ասէ Պօղոս : Եւ ՚ի հանդիսան Յովհաննու ասի , որ հայրըդ ես որոց ՚ի վեր քան զերկինս , այսինքն հոգւոց սրբոց կատարելոցն՝ որ ՚ի վեր են քան զդասս հրեշտակաց մերձ քրիստոսի որնք քահանայք առ քահանայապետ , և անդամք առ դուռնն , և որդիք առ հայր . որպէս աղօթէր « Կամիմ՝ զի ուր ենն եմ , և սոքա ընդ իս իցեն » . և կատարեալ է կամքն քրիստոսի : Օ ի այժմ հոգւով են առ նա . և յետ յարութեանն հոգւով և մարմնով . և այն է քաղաք աստուծոյ և վերին սիօն , և եկեղեցիք անդրանկաց ըստ Պօղոսի » (Հարցմանց) :

ՀՈԳԻՔ ԱՐԴԱՐՈՑ ԿԱՄ ՄԵՂԱՒՈՐԱՅ ՈՒՆԻՑԻՆ ԱՏԺՄ ԶՓԱՌՍ
ԿԱՄ ԶՏԱՆԶԱՆՍ

Կրկին են փառք : Խ . Փառք գործոց ըստ ինքեան , և զայս ունին այժմ հոգիք սրբոց : Է . Փառք հատուցման , և զայն առնուն ՚ի յարութեան :

Կրկին են և տանջանք : Խ . Տանջանք գործոց ըստ ինքեան , և զայս ունին այժմ հոգիք մեղաւորաց : Է . Տանջանք հատուցման , և զայս առնուն յաւուրն դատաստանի : Քանզի փառքն հատուցման՝ կամ տանջանք

Հատուցման , եւն փոխարինութիւնք այնոցիկ գործոց , զորս գործեցին մարդիկ 'ի կեանս իւրեանց . ապաստու-
րութեամբ մարմնոյ՝ եթէ իցեն բարիք՝ որպէս պահք ,
ուղորմութիւն , ժուժկալութիւն . և եթէ չարք՝ որպէս
պանութիւն , յախշտակութիւն , որկորստութիւն ,
և այլն : Իսկ հոգիք մեռելոց 'ի կատարածի ունիցին ըզ-
մարմնն իւրեանց , ապա յաւուր կատարածի առնուն
զհատուցումն փառաց կամ տանջանաց :

Օ այս ամ գեղեցիկ վարդապետէ մեծն Գրիգոր
Տաթևացի յասելն՝ « Եւտ աստեացս փառք երանել-
եացն կրկին է . փառք գործոց ըստ ինքեան , և փառք
հատուցմանց . և այժմ հոգիք սրբոց առնուն զփառս ըստ
ինքեան , զի հանդէին և ուրախանան 'ի գործս իւրեանց .
և 'ի յարութեանն առնուն զփառս հատուցմանց հոգ-
ւով և մարմնով , և այնպէս փառաց 'ի փառս բարձրա-
նան , որպէս ասի յերգս : Եւ այսպէս ամենայն առա-
քինութիւն աստ հանգուցանէ զմիտս , և յետ մահու
զհոգիս . և յետ յարութեանն զհոգի և զմարմին . բայց
այժմ ըստ ինքեան , և անդ ըստ հատուցման :

Վ մանապէս կրկին է և տանջանք չարաց . այսինքն՝
տանջանք գործոց ըստ ինքեան , և տանջանք հատուց-
ման . զի տանջանք գործոցն կրեն յետ մահու , և զտան-
ջանք հատուցման 'ի յարութեանն հոգւով և մարմնով .
զի գործք չարութեան այժմ դատէ խղճիւ զմիտս , և
յետ մահու զհոգիս , և յետ յարութեանն զհոգի և
զմարմին » (Հարցմանց) :

ՀՈԳԻՔ ՍՐԲՈՑ ՈՒՆԻՅԻՆ ԱՅՅԻՄ ՉՏԵՍՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Տեսութիւնն աստուծոյ է հատուցումն կամ
վարձք ճշմարիտ և ուղիւ հաւատոց , իսկ ներգործու-

Թիւն հաւատոյ է ՚ի հոգին և ո՛չ մարմինն . ապա հոգիք սրբոց՝ որք են յերկինս , ունին զտեսութիւնն աստուծոյ : Քանզի որպէս այժմ՝ նոյնպէս և ՚ի յարութեան մարմնոց , ահն հոգւոյ այսինքն լոյսն իմացական մտաց միաւորեալ ընդ լուսոյ փառաց՝ տեսանէ զաստուած . և ո՛չ եթէ աչք մարմնոյն , որոյ առարկայ է մարմինն երևելի . իսկ աստուածային էութիւնն ո՛չ է երևելի , որպէս զի տեսանիցի աչօք , այլ է իմանալի . ապա տեսանի մտօք :

Օ ի որպէս տեսողական կարողութիւնն ո՛չ բերի առ ձայնն կամ առ հոտ . և ո՛չ լսողականն՝ առ գոյն կամ առ համ . զի այսոքիկ կարողութիւնք չունին համեմատութիւն առ այսպիսի առարկայս . այսպէս և ո՛չ մարմնաւոր աչք սրբոց ՚ի հանդերձեալ յաւիտենին կարեն տեսանել զանմարմին էութիւնն աստուծոյ . զի չիք բնաւին համեմատութիւն ՚ի մէջ մարմնաւորին և անմարմնոյն . ապա տեսութիւնն աստուծոյ ըստ որում է իմանալի , պատշաճ ի մացական հոգւոյն օժանդակելոյ ՚ի լուսոյն փառաց . ըստ այնմ՝ « Այժմ տեսանեմք ընդ հայելի օրինակաւ , այլ յայնժամ դէմ յանդիման . այժմ իսելամուտ եղաք փոքր ՚ի շատէ , այլ յայնժամ դիտացից՝ որպէս և նայն ծանեաւ զիս » (« , Լիբնիւսոյ . ոյ . թ 4 , 12) :

ՉԻՆՉ Է ՓԱՌՔՆ ԿԱՄ ՊՍԱԿՆ ՍՐԲՈՅ . ԵՒ ՉԻՆՉ ՏԵՍՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒՅՈՅ

Փառքն կամ պսակն է վարձքն գործոց արդարութեան . և տեսութիւնն աստուծոյ է վարձք հաւատոցն ճմարտութեւ : Ըսէ մեծն Գրիգոր Տաթևացի՝ « Եթէ ո՛չ զիտես զի՛նչ է . երթ առ Առաքեալն , և ուսուսցէ :

քեզ . (ցանկամ ելանել ՚ի մարմնոց , և մտանել առ աստուած) . այս տեսութիւնն է և հանգիստն . (կայ և մնայ ինձ արդարութեան պսակն , զոր հատուցէ յաւուր յայնմիկ արդար դատաւորն) . այս է փառք և պսակ սրբոցն : Աւ զի այլ է այս , և այլ է այն . յայտ է յերկուց . նախ՝ զի Առաքեալն զանազանեաց զտեսանելն յետ մահու , և զպսակն ՚ի յարութեան : Արկրորդ՝ զի տեսութիւնն հաւատոց է փոխարէնն , զոր հոգին ընկալաւ . և պսակն գործոցն է , զոր մարմնով առնու . իսկ այս կատարելոցն են , որ են յերկինս : Ասկ միջակ արդարքն , որ են ՚ի կայանս հոգւոցն՝ և զտեսանելն պայծառապէս ընկալցին ՚ի յարութեանն դէմ յանդիման , որպէս և էն » (Հարցմանց) :

ԱՄՍԵ Է՞Ր ՈՒՐՈՅՆ ՅԻՇԷ ԶՆՈԳԻՆ ԵՒ ԶՄԱՐՄԻՆՆ , ՅԱՍԵԼՆ « Ի ԴԱՏԱՍՏԱՆ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՀՈԳԻՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ »

Որպէս այլ է հոգի , և այլ մարմին , նոյնպէս այլ են բարի կամ չար ներդործութիւնք երկաքանչիւր նոցա , որովք արժանաւորին մարդիկ փառաց կամ տանջանաց :

Հոգւոյն է ունել ուղիղ հաւատք առ աստուած . ըստ այնմ՝ « Հաւատալ արժան է այնմ , որ մերձենայ առ աստուած՝ թէ է աստուած . և որ խնդրէն զնա՝ ընի պարգևատու » (Եֆրայեցոց . Ժ , 6) : Կամ ընդ հակառակն նորին մնալ յանհաւատութեան , անկանիլ յուրաջութիւն , մոլորիլ ՚ի հերձուածս կորստեան :

Հոգւոյն է ունել հաստատուն յոյս առ խոստացեալ բարիս երկնաւոր . ըստ այնմ՝ « Որք ապաստան եղաք բուռն հարկանել զհանդերձեալ յուսոյն , զոր իբ-

րև զխարիսխ հաստատուն և անչարժ ունիցիմք անձանց մերոց» (Եբրայեցոց . Է, 18) : Կամ ընդ հակառակն լքանիլ յուսահատութեամբ յողորմութենէն աստուծոյ , կամ չարաչար յանդգնիլ :

Հոգւոյն է ունել ճմարիտ սէր առ աստուած և առ մարդիկ . ըստ այնմ՝ « Որ սիրէ զաստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր » (* , Յովհաննոս . Գ , 21) : Կամ ընդ հակառակն գործել զմահուչափ մեղս , որք կատարին հոգւոր բերկրութեամբ , որպէս հպարտութիւն , նախանձ , ատելութիւն , և այլն :

Մարմնական առսքինութիւնք են աղօթք , պահք , ողորմութիւն . և ընդ հակառակն՝ մարմնական մոլութիւնք են անժուժկալութիւն , հայհոյութիւն , գողութիւն , հարուածք , և այլն :

Ապա ըստ այլ և այլ եղելոյ բարի կամ չար ներգործութեանց հոգւոյ և մարմնոյ . այլ վարձք կամ պատիժք հատուցանին հոգւոյ , և այլ՝ մարմնոյ :

Երանական տեսութիւնն աստուծոյ՝ է վարձք առսքինութեան հոգւոյ արդարոյն . իսկ անկրականութիւն , պայծառութիւն , երազութիւն , զօրութիւն , է օժիտք բարեգործութեան մարմնոյ :

Յաւիտենական զրկումն ՚ի տեսութենէ աստուծոյ՝ է պատիժ հոգւոյ մեղաւորին , վասն մեղաց որ սեպհական են հոգւոյ . իսկ տանջանքն զգայութեան է բաժին մարմնոյն , վասն մեղաց որք գործին մարմնով : Բայց պատիժն զրկման յերանական տեսութենէն աստուծոյ՝ է ՚ի փառաց արքայութեան . է մեծ և դժնդակ քան զամենայն տանջանս զգայութեան , զոր կրեն դատապարտեալք ՚ի դժոխս . ուստի ասէ Ռակեբերան՝ « Ո՛չ այնպէս արժան է սուգ առնուլ յաղագս դժոխոցն կը-

րից , որպէս վն երկնից անկանելոյն . քանզի այս միայն առաւել դժօրնմբեր է ՚ի կարգի տանջանացն » :

Իսկ զօրինակ և զպատկեր ընդհանուր դատաստանին՝ որ լինելոց է ՚ի կատարածի , մասնաւոր յարացուցիւ եցոյց աստուած ՚ի դարս դարս , և ցուցանէ սուէպ : Վնզի զամբարշտեալ հսկայս սահանաբաց անձրեօք ջուրց յերեսաց երկրի ջնջեաց . և զարդարն . զՆոյ իւրովքն հանդերձ չնչին փայտիւն ապրեցոյց . (Տննդոյ . է , 23) : Օ եղեռնագործ մարդիկ քաղաքացն Սողոմոն երկնատեղաց հրով տոչորեաց . և զաստուածապաշտն զՂովտ դատեօքն իւրովք ՚ի ձեռն հրեշտակի սրբոյ ողջանդամ ապրեցոյց . (Տննդոյ . ԺԷ , 23) : Օ անօրէնն զՓարաւօն և զամենայն զօրս թօթափեաց ՚ի մէջ ծովուն , և զազգն Խորայէլի հզօր բազկաւ փրկեաց ՚ի ծառայու թենէ մահու . (Եւլի . ԺԴ , 27) : Օ ապստամբ խուժանըն Դաթանայ և Աբիրոնի անդնդասոյզ կորոյս ՚ի միջոյ . և զանմեղս ժողովրդեան՝ ՚ի նորանչան արկածիցն պահեաց անվնաս . (Թոմոյ . ԺԷ , 1) :

Իսկ այտօքիկ և որ սցոուն սակի մասնաւոր դատաստանք , որք եղեն յառաջագոյն՝ և լինին և ևս , եթէ ըստ վարձուց բարեաց՝ և եթէ ըստ պատժոց չարաց , են ժամանակաւորք : Օ ի ահա՛ Նոյ , Ղովտ , և այլք՝ ընկալան վարձս արդարութեան իւրեանց՝ զժամանակաւոր բարիս , այսինքն՝ զկեանս , զհանգիստ , և զմեծութիւն աշխարհի . և Դաթան , և Աբիրոն , և այլք՝ ընկալան զպատիժ մեղաց իւրոց՝ զժամանակաւոր չարիս , այսինքն՝ զմահ մարմնոյ :

Իսկ դատաստանն վերջին է ընդհանուր . զի անդանօր դատին ամենայն բանաւոր արարածք . է կատարեալ՝ զի հատուցանին հոգւոց և մարմնոց փառք

կամ տանջանք ըստ իւրաքանչիւր գործոց . և յաւիտեանական՝ զի ոչ փառք արդարոց , և ոչ տանջանք մեղաւորաց ունին զվախճան . և որպէս գոյ զանազանութիւն փառաց ՚ի սուրբս . ըստ այնմ՝ « Իտան հօր իմոյ օթեւանք բազում են » (Յովհաննոս . ԺԴ , 2) : Այսպէս գոյ և զանազանութիւն տանջանաց ՚ի դատապարտեալս . ըստ այնմ՝ « Ճառաց որ գիտիցէ զկամս տն իւրոյ , և ոչ պատրաստեցի ըստ կամաց նորա , արբցէ՛ դան բազում . և որ ոչ գիտիցէ՛ և արժանի գանի ինչ գործիցէ , արբցէ՛ դան սակաւ » (Ղուիստոս . ԺԲ , 47) :

ԶԻՆՉ Է ԱՍԵՆ « ՅԱՐՔԱՅՈՒԹԻՒՆՆ ԵՐԿՆԻՑ »

ա . Արքայութիւն երկնից է երանական տեսութիւնըն , որ է վերջին վախճան բանաւոր ստեղծուածոյ . ըստ այնմ՝ « Յայնժամ արդարքն ծագեացին իբրև զարեգակն յարքայութեան երկնից » (Մատթէոսի . ԺԳ , 43) :

բ . Արքայութիւնն երկնից է նոյն ինքն յսքրիստոս , զի նովաւ ունիմք հասանել տեսութեանն աստուծոյ . ըստ այնմ՝ « Արքայութիւնն աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ է » (Ղուիստոս . ԺԷ , 21) :

գ . Արքայութիւնն երկնից է եկեղեցինքի . զի է ժողովարան ճանապարհորդելոց յարքայութիւնն աստուծոյ . ըստ այնմ՝ « Նման է արքայութիւն երկնից ուսկանի արկելոյ ՚ի ծով , և յամենայն ազգաց ժողովելոյ » (Մատթէոսի . ԺԳ , 47) :

դ . Արքայութիւն երկնից է աւետարաննքի . զի է միջնորդ , որով յորդորիմք ընել անդամ եկեղեցւոյ , և խառնիլ ՚ի դուռնդս ճանապարհորդելոց յարքայութիւնն աստուծոյ . ըստ այնմ՝ « Բարձցի ՚ի ձէնջ արքայութիւն աստուծոյ , և տացի ազդի , որ առնիցէ ըզ

պտուղս նորա » (Մատթէոսի . Իա , 43) :

Եւ Մարքայուի երկնից է և օթեվանն ընտրելոց , զի անդ վայելեն զարքայուին , այսինքն զերանական տեսութիւնն նոյ . ըստ այնմ՝ « Երանի որ կերիցէ ճաշ յարքայութեանն աստուծոյ » (Ղուկասոս . ԺԴ , 15) :

Իսկ աստանօր ասելն հանգանակիս՝ « Յարքայութիւն երկնից » . նախ՝ իմանի տեսութիւնն ամենասուրբ երրորդութեանն ՚ի միում ընութեան և աստուածութեան , յոր վայելեսցեն հոգւոյ աչօք . որպէս զի սուրբք և հաւատացեալք ժառանգեսցեն զարքայութիւնն երկնից ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ . և ուրախութիւնն նոցա կատարեալ լիցի . ըստ այնմ՝ « Որ սիրէն զիս՝ սիրեսցի ՚ի հօրէ իմմէ . և ես սիրեցից զսա , և երևեցուցից նմա զիս » (Յովհաննոս . ԺԴ , 21) :

Չի՛նչ է՝ ՈՐ ԱՍԷ . « ԵՒ ԻԿԵԱՆՍԵ ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆՍ »

Երանքն յաւիտենական է կրկին , էական՝ և հաղորդական : Եւկանն է ինքնագոյ երանութիւն անակից բըն և անխախտ անուղութեամբ . իսկ այսպիսի երանութեամբ երանեալ է միայն աստուած . ըստ այնմ՝ « Զոր յիւր ժամանակին ցուցցէ երանելին , և միայն հզօր , թագաւոր թագաւորաց՝ և տէր տերանց » (* , Տիմոթէոսի . Դ , 15) : Եւպա իսկապէս յաւիտենական կեանք է աստուած միայն . ըստ այնմ՝ « Անդանի եմ ես յաւիտեան » (Բ , Օրինաց . ԼԲ , 40) : Եւյսպէս և բրիստոս ըստ որում բանն աստուծոյ՝ է էապէս կեանք յաւիտենական . ըստ այնմ՝ « Պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն , որ էրն առ հօր՝ և երևեցաւ մեզ » (* , Յովհաննոս . ա , 2) :

Հաղորդականն է աստուածապարզ և երանութիւն

սկզբնաւոր , բայց անվախճան տեղորոթեամբ . ուստի երանական տեսութիւնն աստուծոյ , զոր մշտնջենաւորապէս ժառանգեն սուրբք յերկինս , է կեանք յաւիտեանական . ըստ այնմ՝ « Այս են յաւիտեանական կեանք , զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած » (Յ՛ւհաննոս . Ժէ , 3) :

Հաւիտեանական կեանք կոչին և նմ միջնորդք , որք վերածեն զմարդիկ ՚ի ժառանգութիւն երանական կենացն յաւիտեանից , որպէս վարդապետութիւնն քրիստոսի . ըստ այնմ՝ « Գիտեմ , եթէ պատուէրն այն՝ կեանք են յաւիտեանականք » (Յ՛ւհաննոս . ԺԲ , 50) : Գերբնական առաքինութիւնք . ըստ այնմ՝ « Ամենայն որ ատեայ զեղբայր իւր , մարդասպան է . և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ո՛չ ունի զկեանս յաւիտեանականըս յանձին հաստատեալ » (* , Յ՛ւհաննոս . Գ , 15) :

Ատոյգ իմն է , զի արքայութիւն երկնից և կեանքն յաւիտեանական՝ իբրև նոյնանիշ վարեալք նշանակեն աստանօր զերանական տեսութիւն աստուածային մեծ վայելչութեան . բայց կեանքն յաւիտեանական ունի զայս առաւելութիւն . զի ըստ տեսութեանն աստուծոյ՝ զոր երանեալք ունին ըստ հոգւոյ , յաւելու նշանակել ևս զանմահ կենդանութիւնն , և զայլ կատարելութիւնս՝ զոր ՚ի հանդերձեայն ունիցին ըստ մարմնոյ :

Քանզի և անմահութիւնն ո՛չ է նկատմամբ հոգւոյն՝ այլ մարմնոյն . զի այնմ պատշաճի լինել անմահ , որ յառաջն է մահկանացու , որպիսի է մարմինն . վասն զի հոգին ո՛չ եթէ նորոգ շահելոց է զարդիւնս անմահութեան , այլ անդատին ՚ի ստեղծանիլ իւրում ընկալեալ ունի յինքեան յաստուածային բարութեանէն :

Իսկ անմահութիւնն՝ զոր ունին մեղաւորք ՚ի դըժ

ժոխս , ոչ է ճշմարիտ անմահութիւն , այլ հանապազոր-
դական մահ . զի գրեթէ յամենայն վայրկենի մեռանին
և կենդանանան . ապա անմահութիւն մեղաւորին է մահ
անմահ . ըստ այնմ՝ « Ճուլացն և անհաւատից՝ սպանո
ղաց և պոռնկաց՝ կախարդաց և կռապաշտից , և դե-
ղատուաց , և ամենայն ստոց ամբարշտաց , որոց բա-
ժինն իւրեանց ՚ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով , որ է
մահն երկրորդ » (Յայփն-ի-ան . Իս , 8) :

Աստի կեանքն յաւիտենական՝ մասնաւորապէս
առեալ , նշանակէ զերկուս գերադոյն ձիրս միանգա-
մայն . մի՛ զյաւիտենական տեսութիւնն աստուածային
մեծվայելութեան՝ որ պարզեի հոգւոց երանելեաց իբ-
րև վարձք հոգւոր առաքինութեանց . և միւս՝ ստակն
արդարութեան , այսինքն՝ անմահութիւն , անսխտու-
թիւն , պայծառութիւն , զօրեղութիւն , և թափանցու-
թիւն , որ պարզեի մարմնոց արդարոց իբրև վարձք
մարմնաւոր բարեգործութեց նոցա . ըստ այնմ՝ « Ամե-
նայն որ փեսանիցէ զօրդի , և հաւատայցէ ՚ի նա , ըն-
կալցի զկեանս յաւիտենականս . և ես յարուցից զնա
յաւուրն յետում » (Յովհաննոս . Գ , 40) :

Լուկոյի յաւիտենական՝ ոչ ըստ վախճանին մի-
այն , զի է մշտնջենաւոր և անսպառ , այլ և ըստ սկզբանն .
զի էր ՚ի յաւիտենից յաստուածական միտս . ըստ այնմ՝
« Եկայք օրհնեալք հօր իմոյ , ժառանգեցէք զպատ-
րաստեալ ձեզ արքայութիւնն ՚ի սկզբանէ աշխարհի »
(Մատթէի . Ի , 34) :

Ըրդ՝ յաւիտենական կեանքն՝ կամ ստակն ար-
դարութեան , կրկնակի մտածի . մի՛ իբրև վարձք , և
միւս՝ իբրև շնորհք : Ստածի իբրև վարձք՝ այնու , զի
է փոխարինութիւն գործոց բարութեան . այսինքն է

պահոց, աղօթից, ողորմութեանց՝ այլովքն հանդերձ, զորս ՚ի կեանս իւրեանց անձնիշխան կամօք գործեցին արդարք . ըստ այնմ՝ «Որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց . որ համբերութեամբ են ՚ի գործս բարութեան, և զփառս, և զպատիւ, և զանեղծութիւն խնդրեն, զկեանսն յաւիտենից» (Հոովմայեցոց. Բ, 7)։

Վպա կեանքն յաւիտենական հատուցանի այնոցիկ՝ որք համբերեն իսպառ զբարիս, իբրև վարձք ըստ գործոց։

Ստածի ևս իբրև շնորհք . զի ամենայն գործք բարիք՝ զոր արարին արդարք յընթացս կենաց, այնու զի տեսակաւորին ՚ի գերբնական առաքինութեանցս հաւատոյ՝ յուսոյ՝ և սիրոյ, են արդիւնաւորք և արժանի վարձուց։ Իսկ այս գերբնական առաքինութիւնք ձրի հեղանին յաստուծոյ ՚ի հոգիս մարդկան . ապա կեանքն յաւիտենական՝ կամ պսակն արդարութեան պարգևեալ սրբոց ՚ի հանդերձեալն է շնորհք աստուծոյ . ըստ այնմ՝ «Թողակն մեղաց մահ է . այլ շնորհք աստուծոյ՝ կեանք յաւիտենից» (Հոովմայեցոց. Է, 23)։

ԱՐԴԵՕՔ ՍՏԵՂԺԵԱԼ ՄԻՏՔ ԿԱՐԷ՝ ՏԵՍԱՆԵԼ ԶԱՍՏՈՒԱԾ ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ ԻԻՐՈՒՄ

Ստեղծեալ միտք ոչ կարէ բնականաբար տեսանել զաստուած ըստ էութեան, այլ գերբնաբար միայն . քանզի ոչինչ կարողութիւն արտաքոյ ձգի քան զիւր հաւասարեալ առարկայն . ապա թէ ոչ՝ ձգէր արտաքոյ տեսակի և զինչութեան իւրոյ, որպէս ունին ոչ բերի առ գունաւորն, և ոչ ակն՝ առ ձայն։

Իսկ արդ՝ տեսողական կարողութիւնն՝ այսինքն միտքն ստեղծեալ, է ՚ի բնական կարգի . և առարկայն տեսանելի, այսինքն էութիւնն աստուծոյ, է ՚ի գերաւ-

դոյն դերբնական կարգի . զի է պարզ ամենեկն և մա-
քուր ներդարձութիւն . ապա ստեղծեալ միտք երանե-
լոց ոչ կարէ բնականաբար տեսանել զէութիւնն նոյն :

ԱՐԴԵՕՔ ԵՐԱՆԵԱԼ ՄՏԱՅ ԶՈՒԳԸՆԹԱՅ ԼԻՆՒՑԻ՞ ԱՌ ՀԱՅԵ-
ՑՈՂԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆ ԸՍՏՈՒՑՈՅ ՍՏԵՂՃԱԿԱՆ ԻՆՉ ՏԵՍԱԿ՝
ՏՊԱՒՈՐԵԱԼ ԿԱՄ ՆԿԱՐԵԱԼ

Ապաքէն տպաւորեալ տեսակն երևեցուցիչ ա-
ռարկային՝ պարտ է զի լինիցի աննիւթականագոյն քան
զառարկայն , կամ գոնէ հաւասար նմին . քանզի և
ամենայն տպաւորեալ տեսակք նիւթական առարկայից՝
ի միտս մեր են աննիւթական . ապա թէ ոչ՝ ոչ կարէին
երևեցուցանել զիրան , զի ամենայն ճանաչեալ՝ ճանաչի
ըստ կերպի ճանաչողին . վասն որոյ և առած է , թէ մարմ-
նաւոր առարկայք ազնուագոյն են ՚ի միտս , քան թէ
յինքեանս . զի որչափ հրաժարեցի ՚ի նիւթականու-
թենէ , այնքան կատարելագոյն դտանին :

Իսկ արդ՝ ոչինչ ստեղծական տպաւորեալ տե-
սակ կարէ հաւասարիլ էութեանն աստուծոյ ՚ի բանի
աննիւթականութեան . զի էութիւնն աստուծոյ է վե-
րացեալ յամենայն բնական և համաբնաբանական կա-
րողութենէ : Ապա ոչինչ ստեղծական տպաւորեալ տե-
սակ կարէ դտանել յերանեալ միտս ՚ի տեսութեն նոյն :

Այս պահանջի և ստեղծական նկարեալ տեսակ .
քանզի և նա է նմանութիւն առարկային . մանաւանդ
զի երևեցուցանէ զառարկայն առաւել բացայայտ քան
զտպաւորեալ տեսակն : Ապա որպէս երանեալ միտք
ոչ կարեն ունել յինքեանս զտպաւորեալ տեսակ էութե-
անն աստուծոյ , նոյնպէս և ոչ կարեն արտադրել զըս-
տեղծական նկարեալ տեսակ . կամ որ նոյն է , զբան

մտաց երևեցուցիչ էութեանն աստուծոյ . զի էութիւնն
աստուծոյ միաւորեալ ընդ մտաց՝ լիու զտեղի նկար-
եալ տեսակի:

ԱՊԱ ՎԱՍԵ Է՛Ր ԱՄԻ . ԱՍՏՈՒԱԾ . ԱՆՏԵՍԱՆԵԼԻ

Քաղուժ ինչ իրք են յաշխարհի աստ նիւթա-
կանք , զորոց ըստ կերպի հակասութեան ասի տեսանելի
և անտես . բայց երկաքանչիւր ստորոգելիք ևս են ճշմա-
րիտ . զի այլ և այլ եղանակաւ ասին զէնթակայէ : Օ զր
օրինակ՝ հեռաւոր առարկայք են տեսանելի՝ և անտես :
Սերմունք ամենամանր կենդանեաց են տեսանելի և
անտես : Լրկիմք՝ ծով՝ են տեսանելի՝ և անտես , և այլք
բազումք : Վանդի հեռաւոր առարկայք տեսանելի են
դիտակամբ , և սերմունք ամենամանր կենդանեաց տե-
սանելի են մանրացուցիւ , և անտեսանելի պարզ աչօք :
Լրկիմք՝ կամ ծով՝ տեսանելի են ըստ մասին , և ան-
տես բոլորովին :

Իստ սոցուն սարասի ճշմարիտ է ասել զաստուծոյ
տեսանելի և անտես , այլ և այլ եղանակաւ :

ա . Ընտես է աստուած յաստի կեանս :

բ . Ընտես է աստուած ՚ի մարմնաւոր աչաց , եթէ
յաստի կեանս և եթէ ՚ի հանդերձեալն :

գ . Ընտես է անձ ՚ի ստեղծական մտաց բնապէս :

դ . Ընտես է աստուած յմբանողական տեսու-
թենէ մտաց գերբնապէս :

ե . Ընտես է անձ ՚ի բովանդակեալ տեսութենէ :

Օ այս ամենայն միով բանիւ նշանակեաց Առաք-
եալն յասելն՝ « Որ միայն ունի զանմահութիւն բնակ-
եալ ՚ի լոյս անմատոյց . զոր ոչ որ ետես ՚ի մարդկանէ ,
և ոչ տեսանել կարօղէ » (ա , Տէ՛մբիւնի . շ , 16) :

ն. Տեսանելի է աստուած ՚ի հանդերձեալն:

բ. Տեսանելի է աստուած մտաց աչօք:

գ. Տեսանելի է աստուած դերբնապէս:

դ. Տեսանելի է աստուած հայեցողական, այսինքն
դէմ յանդիման տեսութեամբ:

ե. Տեսանելի է աստուած անբովանդակելի տեսութեամբ. ըստ այնմ՝ «Յորժամ նա յայանեացի, նման նմա լինելոց եմբ. զի տեսանելոց եմբ զնա՝ որնց կէն» (Պ, Յովնաննո. 4, 2): Լ. Շնորհալին՝ «Լոյսն անտես իմանալի, մաքուր հոգւոց՝ տեսանելի»:

ԱՊԱ ԶԻԱՐԴ ՄԱՐԳԱՐԷՆ ՄՈՎՍԷՍ ԵՒ ԱՌԱՔԵԱԼԱՆ ՊՕՂՈՍ ԵԱՍՏԻ ԿԵԱՆՍ ՄԱՐԲՆԱՒՈՐ ԱԶՕՔ ՏԵՍԻՆ ԶԱՍՏՈՒԱԾ

Ընհնար է հայեցողապէս տեսանել զաստուած յաստի մարմնաւոր աչօք. ըստ այնմ՝ «Զաստուած ոչ ոք կտես երբէք, բայց միամինն որդի՝ որ ՚ի ծոց հօր, նա պատմեաց» (Յովնաննո. 1, 18): Լ. թէ՛ «Զանուրուք երբէք չիք տեսեալ» (Պ, Յովնաննո. 7, 12):

Աւստի և Մովսէս ոչ կտես զաստուած ըստ էութեան, քանզի ասաց նմա աստուած՝ «Ո՛չ կարես տեսանել զերեսս իմ. զի ոչ տեսանէ մարդ զերեսս իմ, և սպրի. . . տեսցես զյետոյսն իմ, բայց երեսք իմ քեզ մի երևեցին» (Եւէյ. 14, 20): Լ. և կտես Մովսէս զարասբին փառսն աստուծոյ. յայս միտս ասի ՚ի Շարականին. «Որ ՚ի նախնու մն զմարդարէն Մովսէս լուսաւորեցեր աստուածային փառօք տեսլեամբ աստուածութեան քո»:

Սոյնպէս և աւաբեալն Պօղոս՝ ոչ կտես զաստուած հայեցողապէս, որպէս տեսանեն երանեալք, այլ ընդ աղօս, կամ զանէ անցողաբար. յայս միտս ասի ՚ի

Շարականին՝ «Որ գերագոյն քերովբէից վերհամբարձեալ ՚ի յերրակի խորանս երկնից . . . երրորդութեանն արժանաւորելով տեսեան սուրբն Պօղոս» :

Այս ոչ Մովսէս և ոչ Պօղոս եղևն պարզաբար երանեալք . մի՛ զի ունին հաւատս, որ յերանեալն փոխի ՚ի պայծառ տեսութիւնն աստուծոյ . և միւս՝ զի և ոչ կատարելութիւնք կամ օժիտք փառաւորեալ մարմնոյ շնորհեցաւ նոցա : Ուստի ասէ երանելին Եզնակ . «Ասեն , Պօղոս ասաց , թէ յախշտակեցաւ այնպիսին մինչև յերրորդ յերկնս : Եւ զայն ոչ զիտեն , թէ չեւս յայտ է , թէ մինչև ցերրորդ երկնս ասիցէ , կամ թէ մինչև ցերրորդ ինչ մասն ՚ի բազում մասանց միոյ երկնիս ասիցէ . զի բանն ՚ի Յոյն լեզու՝ յերկոսին հարկանէ . . . վասն որոյ ամէ զնորին զկնի , թէ յախշտակեցաւ այնպիսին ՚ի դրաստն . և դրաստն ոչ եթէ յերրորդ երկնս իցէ , և կամ բնաւ ՚ի յերկնս ուրեք , այլ յերկրի . . . բայց թէ և կոչի բարձրութիւն ինչ երկինք , որպէս յորժամ ասիցէ զիր . թռչունք երկնից » կամ ցօղք երկնից , և անգք , և հողմք երկնից՝ ոչ եթէ յերկնս իցեն , այլ զի ՚ի բարձրութեան են՝ երկնից կոչին . . . բստ սմին օրինակի և Պօղոսի զերրորդ յերկնսն ասել՝ խմանալի է . . . Եւ լուսւ զբանս անձառս , զոր ոչ է պարտ ումեք խօսել . թէպէտ և առաքեալ անօթ ընտրութեան էր , սակայն էր ընկեր Պետրոսի , լծակից որդւոյն որոտման , և քարոզակից Բառնարայ . զիպոք էր , զի նմա պարտ էր լսել և խօսել զբանսն անձառս՝ և իւրոց ընկերացն ոչ , ոչ աղաքէն մի շնորհք էին յամենեւին , և մի և նոյն հոգի ՚ի նոսա . . . է և զայս խմանալ , թէ ոչ զի ես միայն արժանի եղէ խորհրդոյն , որ տրուպսեմ առաքելոց . այլ թէ և Պետրոս որ զլսաւ

ւորն է առարկելոց՝ տեսանիցէ, չկարէ ճառել. և թէ լուիցէ, չկարէ պատմել. քանզի անպատում է, և ՚ի վեր քան զմիտս և զլեզու մարդկան» (ՃԽԻ, 5):

ԶԻՆՉ ԼՈՅՍ ՓԱՌԱՑ

Լոյսն փառաց է գերբնական որակութիւն հեղեակ յաստուծոյ ՚ի ստեղծական միտս երանելոց՝ մնացապէս. առ ՚ի վերացուցանել ՚ի հայեցողական տեսութիւնն աստուծոյ:

Արովհետեւ ստեղծական միտք ոչ կարէ ըստ ինքեան տեսանել զաստուած հայեցողապէս. զի ինքն է կարողութիւն բնական. և էութիւն աստուծոյ վերամբարձեալ քան զամենայն կարգ բնութեան. ապա պէտս ունի լուսոյ փառաց վերանալ ՚ի կարգ գերբնական առ ՚ի միաւորիլ ընդ աստուծոյ իբրև ըստ իմանալի տեսակի. ըստ այնմ՝ «Լուսով երեսաց քոց տեսաննեմք զլոյս» (Սարճոսի. 17, 10):

ԱՐԻԵՕՔ ԲԱՑԱՐՉԱԿ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲԵ ՆՍՏՈՒԾՈՅ ԷՆԱՐԷ ՍՏԵՂԵԱԿԱՆ ՄՏԱՑ ԻՄԵՆԱԼ՝ ԿԱՄ ՏԵՍԱՆԵԼ ԶԱՍՏՈՒԱԾ ԸՄԲՈՒՆՈՂԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԵԱՄԲ

Քմբռնողական տեսութիւնն է՝ հաւասարեալ ճանաչումն առարկային՝ որչափ է ճանաչելի. իսկ արդ՝ անկարելի է ստեղծական մտաց երանելոց ունել հաւասարեալ ճանաչումն աստուծոյ, կամ իմանալ զնա՝ որպէս և որչափ է իմանալի, զի աստուած է անհուն ՚ի ներդործութեան, և անհնապէս ճանաչելի. ապա ստեղծական միտք երանելոց և ոչ բացարձակ կարողութիւն աստուծոյ կարեն իմանալ կամ տեսանել զամ ըմբռնողապէս. ըստ այնմ՝ «Ար անիմանալիդ ես» և այլն:

ՋԻԱՐԴ ՀՈՒՆԱՒՈՐ ՄԻՏՔ ԵՐԱՆԵԼՈՅ ԿԱՐԵՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԵՍ
ՏԵՍԱՆԵԼ ԶԱՆՀՈՒՆ ԷՈՒԹԻՒՆՆ ԸՍՏՈՒԾՈՅ

Այլ է ասելն , թէ հունաւոր միտք երանելոց տեսանեն զանհուն էութիւնն աստուծոյ հայեցողական տեսութեամբ , կամ որ նոյն հունաւորապէս . և այլ է ասելն , թէ տեսանեն զանհուն էութիւնն աստուծոյ ըմբռնողական տեսութիւն , կամ որ նոյն է անհնապէս :

Արդ՝ տեսանեն երանելալ միտք զաստուած հայեցողաբար , կամ որ նոյն է՝ հունաւորապէս , և ոչ եթէ ըմբռնողաբար , կամ որ նոյն է անհնապէս :

Բանցի և լոյսն փառաց , զոր ընկալեալ ունին իբրև տրամադրութիւն առ ՚ի միաւորիլ ընդ աստուծոյ , և իբրև որակութիւն առ ՚ի վերանալ ՚ի տեսութիւն նորա , ոչ է անհուն . զի հեղանի ըստ չափու արժանաւորութեան իւրաքանչիւրոց :

Ապա հունաւոր միտք երանելոց՝ անկարող ըստ ինքեան , յաւելեալ զօրութեամբ ինչ , այսինքն լուսովն փառաց՝ վերանայ ՚ի հայեցողական տեսութիւն անհուն էութեանն աստուծոյ ըստ կարողութեան իւրոյ . ըստ այնմ՝ « Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ , այլ յայնժամ դէմ յանդիմանն » (« , իրնիւսց-
-ոց . ԺԳ , 12) :

ՅՈՒ ՅԱԿ

ՀԱՐՑՄԱՆՅ ՄԱՏԵՆԻՍ

	<i>երև</i>
Օ ի՞նչ հարկաւոր է չափահաս քրիստոնէին:	1
Օ ի՞նչ են հաւատք:	1
Քանի՞ են գլխաւոր մասունք հաւատոյ:	1
Որո՞վ բանիւք աւանդին մեզ մասունք հաւատոյ:	2
Ո՞ւր էր ՚ի սկիզբն հանդանակին դնի « Հաւա- տամք ՚ի մի աստուած »:	3
Ո՞ւր էր զհօրէ միայն ասէ Հայր ամենակալ:	6
Օ ի՞նչ նշանակէ Ամենակալն:	10
Ո՞ւր էր դնի յարարողն երկնի և երկրի:	10
Ս՞որժ է ասել, թէ աշխարհս է յաւետակից անյ:	11
Ի՞նչ էր ան յառաջին յաւիտեանս ո՞չ արար զաշխարհս:	12
Ո՞ւր էր դնի « Երևելաց և աներևութից »:	12
Ս՞որժ է ցուցանել բանիւ զգոյութի հրեշտակաց:	13
Ո՞ւր էր արար աստուած զաշխարհս:	14
Օ ի՞նչ միտս ասի զաստուծոյ ամենակարող:	16
Օ ի՞նչ է՞ որ ասէ « Եւ ՚ի մի տէր յիսուս քրիստոս »:	16
Օ ի՞նչ միտս ասի Տէր:	22
Օ ի՞նչ նշանակէ Յիսուան:	22
Օ ի՞նչ նշանակէ Քրիստան:	23
Ո՞ւր էր յաւելու « Յորդին աստուծոյ »:	24
Օ ի՞նչ է ասելն « Ծնեալ յանջ հօրէ միածին »:	24
Ս՞ի թէ չունի՞ հայր զկարողութիւն ծնանելոյ զայլ ևս որդիս:	26
Ո՞ւր էր ասէ « Այսինքն յեութենէ հօր »:	27
Օ ի՞նչ է՞ որ ասէ « Այն ինքն ՚ի բնութենէ հօր »:	27

- 1. Թիւնն անային իցէ՞ սկիզբն ճննդեան որդւոյ: 28
- Օ ի՞նչ է՞ որ ասէ՛ «Աստուած յնոյ, լոյս ՚ի լուսոյ»: 30
- Օ ի՞նչ է՞ որ ասէ՛ «Աստուած ճշմարտ յաստուածոյ ճշմարտէ, ճնունդ, և ոչ արարած»: 31
- Օ ի՞նչ է՛ ասելն «Որով ամենայն ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի՝ երևելիք և աներևոյթք»: 32
- 1| ասն է՛ր յառաջագոյն դասի հայր քան զորդի և զհոգին սուրբ: 33
- Օ ի՞նչ է՛ր շարժառիթ և պատճառ մարդեղութեան բանին: 35
- Ըրդե՛օք ոչ կարէր աստուած առանց մարդեղութեան որդւոյն այլազգ փրկել զմարդն: 36
- 1| ասն է՛ր պիտոյ եղև մարդեղութիւնն: 36
- 1| ասն է՛ր քրիստոս ոչ վաղվաղակի յետ անկման մարդոյն մարմնացաւ: 38
- 1| ասն է՛ր որդին մարմնացաւ: 42
- Օ ի՞նչ է՛ որ ասէ՛ «Իջեալ յերկնից մարմնացաւ մարդացաւ»: 43
- Օ ի՞նչ է՛ որ ասէ՛ «Ճնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն, հոգւով սրբով»: 47
- Ըրդե՛օք արժանաւորութիւն սրբոյ կուսին եղև պատճառ աստուածամայրութեան իւրոյ: 48
- Օ ի՞նչ է՛ ասելն «Հոգւով սրբով»: 50
- Օ ի՞նչ է՛ որ ասէ՛ «Որով էառ զմարմին, զհոգի» և այլն: 50
- Օ ի՞նչ է՛ որ ասէ՛ «Եւ զամենայն որ ինչ է՛ մարդ»: 52
- Օ ի՞նչ է՛ ասելն «Ճշմարտապէս և ոչ կարծեօք»: 53
- 1| ասն է՛ր հոգին սուրբ՝ որ ելից զտեղի հօր, ոչ ասի հայր քրիստոսի: 55
- Օ ի՞նչ է՛ ասելն «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»: 56

- Արդեօք ուղղութեամբ ասիցի՞ աստուած չարչարեալ , խաչեալ , մեռեալ 58
- Ինդէր ոչ ասեմք աստուածութի՞ն չարչարեցաւ , խաչեցաւ , մեռաւ , այլ թէ՛ աստուած չարչարեցաւ , խաչեցաւ , և այլն 61
- Արդեօք մարթ է յուղիղ միտս ասել , թէ՛ աստուածութիւնն բանին ծնաւ , սնաւ , չարչարեցաւ , խաչեցաւ , մեռաւ 62
- Արդեօք դործողութիւնք անձին քրիստոսի՞ ասիցի՞ն ևս յուղիղ միտս զաստուածային բնութէն կամ զմարմնոյն 63
- Ո՞ր ան էր յաւելու ասել «Թաղեալ» 67
- Արդեօք հարկաւոր եղև իջանել քրիստոսի ՚ի դժոխս առ ՚ի փրկել զհոգիս 67
- Արդեօք զամենայն հոգիան փրկեաց ՚ի դժոխոց , եթէ զարդարան միայն 69
- Օ՞րն է՛ որ ասէ , «Յերբորդ առուր յարուցեալ» 70
- Օ՞րն է շահեցաւ քո՞ վասն մեր յարութի՞ք իւրով 71
- Ո՞ր ան էր քրիստոս յետ երկից առուրց յարեալ 73
- Օ՞րն էր ասի քրիստոս անդրանիկ մեռելոց 75
- Օ՞րն է ասելն «Ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ հօր» 76
- Օ՞րն է ասելն «Նստաւ ընդ աջմէ հօր» 82
- Օ՞րն է՛ որ ասէ , «Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս» 83
- Ինդէր ՚ի կատարածի աշխարհիս միայն որդին նոյն նստիցի զատաւոր , և ոչ հայր կամ հոգին սուրբ 84
- Օ՞րն է ասելն «Փառօք հօր» 86
- Օ՞րն է՛ որ ասէ , «Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան» 88


	<i>Էրես</i>
Օ ի՞նչ նշանակէ ձայնս Բնութիւնս	90
Օ ի՞նչ էր մոլորութիւնն Նեստորիս	93
Օ ի՞նչ մոլորութիւնն Եւտիքեայ:	94
Ո՞րք եղեն աղանդապետք նեստորական մոլորութիւնն:	96
Ո՞րք եղեն աղանդապետք եւտիքական մոլորութեանն:	98
Օ խորդ դաւանի եկեղեցի հայաստանեայց զբնութիւն քրիստոսի	99
Օ ի՞նչ է՝ որ ասէ, «Հաւատամք և ՚ի սուրբ հոգին յանեղն և ՚ի կատարեալն»:	107
Վ անն է՞ր սուրբ կոչի հոգին:	110
Օ ի՞նչ նշանակէ Ընեղն:	111
Օ խորդ ասի կատարեալ:	113
Օ ի՞նչ է՝ որ ասէ, «Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս»:	117
Օ ի՞նչ է ասելն «Որ խօսեցաւ ՚ի մարգարէս»:	120
Վ անն է՞ր յաւելու «Եւ յաւետարանս»:	121
Օ ի՞նչ է՝ որ ասէ, «Որ էջն ՚ի յորդանան»:	123
Վ անն է՞ր աղանակերպ երևեցաւ հոգին սուրբ:	124
Օ ի՞նչ է՝ որ ասէ, «Քարոզեաց զառաքեալն»:	125
Ըրդեօք պարտ է ասել զհոգին սուրբ բղխեալ ՚ի հօրէ և յորդուոյ:	130
Օ խորդ դաւանի եկեղեցիս հայաստանեայց ըզբղխումն հոգւոյն սրբոյ:	131
Օ ի՞նչ է ասելն «Հաւատամք ՚ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի»:	133
Օ խորդ պատշաճի քի ընել զլուխ եկեղեցւոյ:	135
Վ անն է՞ր ասի Մի:	138
Վ անն է՞ր ասի Ընդհանրական:	142
Վ անն է՞ր ասի Սուրբ:	144

- Արդեօք ընդհանուր եկեղեցին կարէ՞ սխալիլ ՚ի
վճիռս հաւատոյ: 145
- Եկեղեցին իցէ՞ ևս անսխալ ՚ի խնդիրս բարուց: 145
- Եկեղեցին իցէ՞ նաև անսխալ յօրինադրութիս իւր: 146
- Արդեօք ո՞ր և իցէ մասնաւոր եկեղեցի կարէ՞ սը-
խալիլ յօրինադրութիւնս իւր: 146
- Օ իմօրդ որք առանձինն են սխալական , ՚ի հա-
ւաքման իցեն անսխալ: 147
- Արդեօք ո՞ր և իցէ մասնաւոր եկեղեցի գլխովին
մոլորիցի՞ ՚ի հաւատոս: 149
- Արդեօք կաթուղիկէ եկեղեցին իցէ՞ երևելի: 149
- Ո՞վ իցէ գերագոյն դատաւոր կաթուղիկէ եկե-
ղեցւոյ: 150
- Ո՞րպիտի օրինակաւ իցէ կառավարութիւնն կա-
թուղիկէ եկեղեցւոյ: 155
- Գտանիցի՞ արդեօք յընդհանուր ժողովս եպիսկո-
պոսաց զանազանութիւն իշխանութեան և ար-
ժանապատուութեան: 157
- Օ ի՞նչ է ասելն քրիստոսի առ Պետրոս , «Տաց քեզ
զփականս արքայութեան երկնից» : 160
- Օ ի՞նչ իցէ և այն՝ զոր ասաց տէրն ցՊետրոս ,
«Արածեա՛ զոչխարս իմ» : 161
- Օ ի՞նչ իցէ ասելն քրիստոսի առ Պետրոս , «Դու
ես վե՛մ , և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկե-
ղեցի իմ , և դրունք դժոխոց զնա մի յաղթա-
հարեացեն» : 162
- Օ ի՞նչ իցէ այն , զոր ասաց տէրն առ Պետրոս ,
«Ես աղաչեցի վասն քո . զի մի՛ պակասեցին
հաւատք քո . և դու երբեմն դարձցիս , և հաս-
տատեցես զեզրարս քո» : 163

- Մրդեօք վճիռք և սահմանք գահերէց պատրիար-
գաց, որպէս հայրապետին Հռովմայ, կամ Սու-
տանդնուպօլսի, կամ Աղէքսանդրիոյ, կամ Ան-
տիոքայ և այլն, իցե՞ն աննորոգելիս 165
- Ս) ասն էր հանդանակն առաջադրէ մեզ հաւատալ
՚ի մի մկրտութիւն՝ յապաշխարութիւնս 166
- Բնդէր միայն զերկուս խորհուրդս յիշէ: 168
- Օ իմրդ ասի առաջին կամ երկրորդ շնորհ: 169
- Մրդեօք չէր հնար առանց խորհրդոց արդարու-
թիւն և փրկութիւն մեղաւորաց: 171
- Օ ի՛նչ էր մկրտութիւնն Յովհաննու: 171
- Օ իմրդ մի է մկրտութիւն: 175
- Երբ կացոյց քրիստոս զխորհուրդն մկրտութեան: 176
- Ս) ասն էր առաջադրէ մեզ հաւատալ «Եւ յա-
պաշխարութիւնս»: 177
- Օ ի՛նչ է ապաշխարութիւնն: 177
- Մրդեօք ամենայն քահանայք ունիցի՞ն իշխանու-
թիւն կապելոյ և արձակելոյ: 180
- Մրդեօք ապաշխարողն կարէ՞ ընենլ քաջայոյս վան-
թողութեան մեղաց: 182
- Մրդեօք խոստովանութիւնն առաջի քահանային
իցէ՞ յաստուածային իրաւանց: 182
- Մրդեօք ամենայն ապաշխարողք միասպէս առնու-
ն զքրքարար շնորհս: 184
- Մրդեօք ամենայն քահանայք ունիցի՞ն իշխանու-
թիւն ՚ի խորհրդական խոստովանութեան թո-
ղուլ զամենայն մեղս: 184
- Օ ի՛նչ է ասելն «Ի քաւութիւն և ՚ի թողութիւն
մեղաց»: 185
- Օ ի՛նչ է ասելն «Ի թողութիւն մեղաց»: 188

Օ ի՞նչ է ասելն «Ի յարութիւն մարմնոց»:	Երև 191
Մրդեօք որով մարմնով յառնեն մեռեալք:	197
Քանի՛ ձիւք կամ օժիտք տուեալ լինին փառաւորեալ մարմնոց:	197
Օ իմրդ իցէ նոյն մարմին ՚ի յարութեան, որ տարբեր է գլխովին ՚ի մարմնոց աստի:	198
Ուստի՞ պատճառիցին կատարելութիւնք փառաւորեալ մարմնոց:	200
Մրդեօք մարմինք սրբոց ըստ նմանութեան փառաւորեալ մարմնոցն քրիստոսի լինիցի՞ն երբեմն աներևոյթ, և երբեմն այլակերպարան:	202
Օ իմրդ նովին մարմնով կարէ յառնել, որ մարդակուր՝ կամ դազանաբեկ՝ կամ ձկնակեր եղեալ իցէ:	203
Օ ի՞նչ է՝ որ ասէ «Ի դատաստանն յախտենից հոգւոց և մարմնոց»:	204
Օ իմրդ է դատաստանն յախտենական:	206
Օ իմրդ վանն ժամանակաւոր դործոց տացին յախտենական հատուցմունք:	207
Հուրն դժոխոց իցէ՞ զգալի:	209
Օ իմրդ հուրն մարմնաւոր այրեսցէ զհոգիս մեղաւորաց և գիւաց:	211
Ուր իցեն այժմ հոգիք ննջեցելոց:	212
Հոգիք արդարոց կամ մեղաւորաց ունիցի՞ն այժմ զփառս կամ զտանջանս:	213
Հոգիք սրբոց ունիցի՞ն այժմ զտեսութիւնն նոյ:	214
Օ ի՞նչ է փառքն կամ սրակն սրբոց, և զի՞նչ տեսութիւնն աստուծոյ:	215
Որ ան էր ուրոյն յիշէ զհոգին և զմարմինն:	216
Օ ի՞նչ է ասելն, «Յարբայութիւնն երկնից»:	219

- Թ ԲՆԷ Է՝ որ ասէ՝ «Եւ ՚ի կեանան յաւիտենականս» Երև 220
 Երդեօք ստեղծեալ միտք կարէ՞ տեսանել զաստուած ըստ էութեան իւրումս 223
 Երդեօք երանեալ մտաց զուզընթաց լինիցի՞ սահայեցողական տեսութիւնն աստուծոյ ստեղծական ինչ տեսակ՝ տպաւորեալ կամ նկարեալ 224
 Ս ան էր ասի աստուած անտեսանելի 225
 Օ իմրդ մարգարէն Մովսէս և առաքեալն Պօղոս յաստի կեանս մարմնաւոր աչօք տեսին զնձս 226
 Օ ԲՆԷ Է ըոյս փառաց 228
 Երդեօք բացարձակ կարողութեամբն աստուծոյ հնար է ստեղծական մտաց իմանալ կամ տեսանել զնձ ըմբռնողական տեսութեամբս 228
 Օ իմրդ հունաւոր միտք երանելոց կարեն հայեցողապէս տեսանել զանհուն էութիւնն նոյ 229



Այսպէս շարահանի գրագրութեան:

Ստալ	Ուղղ	Երես	Տող
Կի յերկինկս	Կի յերկինա	3	6
ձե	ձեղ	109	19
որ	ուր	128	15
արժանապատու թէ	արժանապատու է	135	23
արդիւնարոր	արդիւնարար	179	29
խոստովանողն	խոստովանողն	179	29
խորհական	խորհրդական	183	21
հարիցեն	յարիցեն	192	12
այլ	յայլ	202	16
մարմինն	Կի մարմինն	215	1



Խնդրի Կի Բարեթիւ ընկերոջ շնորհիւ իմ ան ընկերանու
 ընկ՝ ուղղել գրչա- յերով յի-բախանչի-բ գեղիս ի-բեանց
 ըստսոսի շարահանի գրագրութեան և այնպէս ըն-
 թեանուլ:



ՅԵՐԱԸ ԵՐԵՎԱՆԻ Է ԱՐԽԱՆՏՆԵՐԱՆ

- 11/11 42 8.

